

HOVHANNES CILINGIRYAN

ÉCRITURE DANS

NAIRI

2006 À 2010

2010

NAIRI


ՆԱԻՐԻ

15

ՆԱՅԻՐԱԲԱՆ

ԱԳՆԱՅԻՐԱԲԱՆ
 ԱԳՆԱՅԻՐԱԲԱՆ
 ՆԱՅԻՐՈԲԱՆ
 ՆԱՅԻՐՈԲԱՆ
 ՆԱՅԻՐԻ
 ՆԱՅԻՐԻ
 ՆԱՅԻՐԻ
 ԱՐԵՎ
 ԱՐԵՎ
 ԱՐԵՎ
 ԱՐԵՎ

2010



19-12-2009

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԳԻՆՆՎԻՐԵԱՆ
[ԿՐԷԺ ՈՌԻՔԵՆԵԱՆ]

CAGNES SUR MER



« ԿԵՐԱԴԱՐՁ ՀԱՅԱՍՏԱՆ »

Այս կարճ նախադասութիւնը, բոլոր հայրենասէր հայերուն համար, սուրբ տեսլական ու խորհրդանիշ է: Եւ այս սուրբ խորհրդանիշ-պատգամը կու գար Սուրբ Վայրէ մը՝ Սուրբ Էջմիածիճէն:


Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ ի բարձր տնօրինութեամբ որոշուած էր, որ իր Սուրբ Հաւատքին հաւատարիմ մնալուն համար թրջանալու առաջարկը մերժած նահատակ -բանաստեղծ Ռուբէն Սեւակի անուան Նիս-ի մէջ գտնուող Յիշատակի Տունը...

«Հայաստան Պիտի Վերադառնար»...:

... Այս կերպով՝ երկար տարիներէ ի վեր մեր փայփայած ծրագիրը պիտի իրականանար:

Այս ձեւով՝ հերոս-նահատակ Ռուբէն Սեւակ իր արժանի տեղը, իր երազած հայրենի հողը պիտի վերադառնար:





Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն
 Հայոց Կաթողիկոս Գա-
 րեգին Բ.ի բարձր տնօրի-
 նութեամբ, 8 Մայիս 2009-
 ին, Ս. Էջմիածնի «Շողա-
 կաթ» հեռուստատեսային
 կայանի շէնքին մէջ, կա-
 յանի տնօրէն՝ Հայկ Համ-
 բարձումեան մեզի հետ
 հարցազրոյց մը կատա-
 րեց: Եւ այս հարցազրոյ-
 ցը 27 Յունիս 2009-թ.ին,
 Հայաստանի հեռատեսիլի
 «Զանալ 1»-էն ցուցադր-
 ւեցաւ հետեւեալ սխրալի
 վերտառութեամբ՝

«ՎԵՐԱԴԱՐՁ
 ՀԱՅԱՍՏԱՆ»:



Յ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
ՌՈՒՔԷՆ ՍԵՆԱԿԻ
ԿԻՍԱՆՂՐԻԻՆ ԾԱՂԿԵՓԻՈՆԸ
ՄԱՏՈՒՆԵՂՈՒ ՍԿՐԻՆ:




4 Մայիս 2009-թ.ին, առաջին անգամ ըլլալով, այցելեցինք Ռուբէն Սենակի անուան դպրոցը: Եւ ծանօթանալու ուրախութիւնը ունեցանք դպրոցի տնօրէնութեան և վարչական կազմին հետ: Եւ աւելի եւրջ ալ՝ ուսուցիչներուն հետ: Մեզի համար բացառիկ և նաեւ յուզիչ օր մըն էր: Եւ մեր երախտագիտութիւնը և անկեղծ հիացումը յայտնեցինք իրենց... ուսուցիչներուն հետ մեր կատարած տեսակցութեան ընթացքին, և մեր խոր մտահոգութիւնը մատնանշեցինք շեշտելով՝ Հայաստան այսօր ենթարկուած է մեծ վըտանգի մը՝ Եւրոպականացման սա Վտանգին, որ հայութեան վեր «ոգի»ն կը բնաջնջէ:



Ռուբեն Սեւակի յիշատակին նուիրուած հանդիսութեան բացումը կատարեց Հ.Թ.Մ.Մ.-ի Նախագահ. Պատմագէտ Դոկտ. Ռուբեն Միրզախանեան: Մեծ գոհունակութեամբ հետեւեցանք իր բանախօսութեան: Ան բացառիկ հմտութեամբ ներկայացուց Ռուբեն Սեւակը իբր հայրենասէր, բանաստեղծ և նահատակ:




Պետական Սանկվարժական Համալսարանի ժողովրդական գործիքներու նուագախումբը՝ երկսեռ երիտասարդ համալսարանականներէ կազմուած այս նուագախումբը, պատմական մեղեդիներու իր կատարմամբ, բոլորովին նոր շունչ տուաւ:



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիանապետ Գերաշ. Արշակ Եպիսկ. Խաչատրեան, օրհնութեան իր խօսքը տուաւ... և Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ին յաջողութեան մաղթանքները փոխանցեց օրուան հանդիսութեան ներկաներուն:

Մենք սքանչացանք, Արշակ Եպիսկ.ին կատարած ելոյթին:



Հայաստանի Մշակոյթի Փոխ -Նախարար Դաւիթ Մուրատեան:

Պիտի խոստովանիմք, որ մեզի համար, անակնկալ մը եղաւ Մշակոյթի Փոխ-Նարարար Դաւիթ Մուրատեանի ելոյթը:




Հայաստանի Գրողներու Միութեան Նախագահ
Լեւոն Անանեան:

Հայաստանի Գրողներու Միութեան Նախագահ
Լեւոն Անանեան-Ռուբէն Սեւակի անձնագրհութեան
ոգին մատնանշելէ յետոյ. մասնաւորապէս կեդրո-
նացաւ 2010-թ.ին կատարուելիք Ռուբէն Սեւակի
ծննդեան 125-ամեակի հանդիսաւոր յիշատակման
ծրագիրներուն վրայ:



Ալեքսանդր Թօփչեան-
Բնական է՝ հանդիսութեան ամենէն ցայտուն բա-
նախօսը՝ իբր առաջնակարգ Սեւակագէտ՝ Ալեք-
սանդր Թօփչեանն էր:




Բանասիրական Գիտութիւններու Դոկտոր՝ Սերժ
Սրապիոնեան-
Պիտի խոստովանիցք, որ Ս. Սրապիոնեանի այս
հանդիսութեան օրը Ռուբէն Սեւակի մասին ունեցած
ելոյթը, մեզի համար յայտնութիւն մը եղաւ:



Աամունքող՝ ԱՆՆա Հէքէքեան-
Մեզի համար անակնկալ մըն էր ԱՆՆա Հէքէքեանը, որ նախ՝ Ռուբէն Սեւակ բանաստեղծը ներկայացուց: Յետոյ՝ Ռ. Սեւակէն քերթուածներ արտասանեց:




Անահիտ Թօփչեան- Վաստակաւոր ժողովրդական արտիստ Անահիտ Թօփչեան... միշտ եղածին պէս՝ Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւնները մեկնաբանեց արտիստական բացառիկ կարողութեամբ:



Հայաստանի Ազգային Ակադեմիայի Արտասահմանեան անդամ-գրականագէտ Երուանդ Ազատեան:
– Ռ. Սեւակի յիշատակի հանդիսութեան օրը, ելոյթ ունեցող միակ սփիւռքահայ մտաւորականը՝ մեր վաղեմի բարեկամ Երուանդ Ազատեանն էր:



Ռուբէն Սեւակի անուան դպրոցի Տնօրէնուհի
Ճուլիա Ղազարեան...
որ վերջին ելոյթ ունեցողը եղաւ:



Յովհաննէս Չիլիցկիրեան կը կատարէ
« Հուսկ Բանք »



Շամիրամ Սեւակ իր հօր անուանակիր դպրոցի
ցուցասրահին մէջ նկարուած- Երեւան, Հայաստան:



« Ռուբէն Սեւակ »ի անուան դպրոցի ուսուցչուհիներ:



Յովհաննէս Չիլինկիրեան «Ռուբէն Սեւակ»ի
անուան դպրոցի տեսչարանին մէջ:



Յովհաննէս Չիլինկիրեան նախակրթարանի
աշակերտներու հետ:



Յ. Չիլինկիրեան Տնօրէնուհի Ճուլիա Ղազարեանի հետ:



Ռ. Սեւակի անուան դպրոցին մէջ:




Յ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ ԿՐ պատասխանէ լրագրողներու հարցումներուն:



Յ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ ԿՐ խօսի ոււանողութեան:



Յ. Չիլինկիրեան ցոյց կու տայ թուրքերու կողմէ 1917-թ.ին Պոլիս լոյս տեսած գիրքը. որ կը խօսի հայ կուսակցութիւններու մասին և ուր թարգմանուած է Ռ. Սեւակի «Օրօր» քերթուածը:



Յով. Չիլինկիրեան «Շողակաթ» հեռուստակայանին մէջ. հարցազրոյցի ընթացքին:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ ՄԵՐ ԿԱՏԱՐԱԾ ՈՒՒՏԱԳՆԱՑՈՒԹԵՆԷՆ ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ...

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԲԱՐՁՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՄԲ, 8 ՄԱՅԻՍ 2009-Թ.ԻՆ, Ս. ԷԶՄԻԱԾԻՆ «ՇՈՂԱԿԱԹ» ՀԵՌՈՒՏԱՏԵՍԻԼԻ ՇԷՆՔԻՆ ՄԷՋ, ԿԱՅԱՆԻ ՏՆՕՐԷՆ՝ ՀԱՅԿ ՀԱՄԲԱՐՉՈՒՄԵԱՆ ՄԵՋ ՀԵՏ ԿԱՏԱՐԵՅ ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՄԸ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ «Հ.1»-ԷՆ ՍՓՈՒԿԵՑԱԻ 27 ՅՈՒՆԻՍ 2009-ԻՆ, ՀԵՏԵԻԵԱԼ ՍԽՐԱԼԻ ՎԵՐՏԱՌՈՒԹԵԱՄԲ՝

«ՎԵՐԱԴԱՐՉ ՀԱՅԱՍՏԱՆ»

4 ՄԱՅԻՍ 2009-Թ.ԻՆ, ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈԿ, ԱՅՅԵԼԵՑԻՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՌՈՒԲԷՆ ՍԵԻԱԿԻ ԱՆՈՒԱՆ ԴՊՐՈՅԸ: ԵՒ ՈՒՆԵՑԱՆԸ ԾԱՆՕԹԱՆԱԼՈՒ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆԸ ԴՊՐՈՅԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ ՈՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ ՀԵՏ... ԵՒ ԱԻԵԼԻ ԵՏԶ ԱԼ՝ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ:

ՄԵՋԻ ՀԱՄԱՐ ԲԱՅԱՌԻԿ ԵՒ ՆԱԵԻ ՅՈՒՋԻՉ ՕՐ ՄԸՆ ԷՐ: ՈՒ ՄԵՐ ԵՐԱՄՏԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԻԱՅՈՒՄԸ ՅԱՅՏՆԵՑԻՆԸ ԻՐԵՆՑ: ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ՏԵՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ, ՄԵՐ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆԸ ՉԾԱԾԿԵՑԻՆԸ...-

«ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՍՕՐ ԵՆԹԱՐԿՈՒԱԾ Է ՇԱՏ ԼՈՒՐՉ ՎՏԱՆԳԻ ՄԸ՝ ԵՒՐՈՊԱԿԱՆԱՅՄԱՆ ՎՏԱՆԳԻՆ, ՈՐ ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ «ՈԳԻ»Ն Կ'ԱՅԼԱՍԵՐԷ»:

5 ՄԱՅԻՍ 2009-Թ.ԻՆ, ԵՐԵՒԱՆԻ «ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ»Ի ԱՆՈՒԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄՐԱՀԻՆ ՄԷՋ, ՌՈՒԲԷՆ ՍԵԻԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԲԱՅԱՌԻԿ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԱՏԱՐՈՒԵՑԱԻ... ԵՒ ՄԵՆԸ ՅԱՓՇՏԱԿՈՒԹԵԱՄԲ ՀԵՏԵԻԵՑԱՆԸ ՅԱՐԳԵԼԻ ԱՆՁՆԱԻՐՈՒԹԵԱՆՑ ԲՈԼՈՐ ԵԼՈՅԹՆԵՐՈՒՆ, ՈՐՈՆՑ ՄԻՏԶ ԲԱՆԻՆ ՀԵՏԵԻԵԱԼՆ ԷՐ՝ «ՆԱՀԱՏԱԿ ՌՈՒԲԷՆ ՍԵԻԱԿԻ ԱՆՁՆԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՈԳԻՆ ՕՐԻՆԱԿ ԸԼԼԱԼՈՒ Է ՀԱՅՈՒԹԵԱՆ»:

ՄԵՐ

ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՉՕՆԵՆՔ՝ ՄԵՐ ՀՈԳԵՂԱՅՐ ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻՒՆ ՈՒ ԻՐ ԱԶՆՈՒԱՓԱՅԼ ՏԻԿՆՈՋ ՈՐՈՆՔ, 15 ՏԱՐԻՆԵՐԷ Ի ՎԵՐ, ՄԵՐ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՎԵՐԾԱՆԵՆ ԵՒ ԿԸ ՆՄԲԱԳՐԵՆ:

ԱՅՍԵՂ Կ՝ՈՒՋԵՆԸ ԿՐԿԻՆ ՄԵՐ ԵՐԱՄՏԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆԵԼ՝ ԺԻՐԱՅՐ ԵՒ ՄԱՐԻ ՆԱՅԻՐԻՆԵՐՈՒՆ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ [ՎՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]

«ՎԵՐԱԴԱՐՉ ՀԱՅԱՍՏԱՆ»

Երբ 27 Յունիս 2009-թ.ին Երեւանի «Հ.1» և Ս. Էջմիածնի «Շողակաթ» կայաններէն սփռուած յայտագիրները դիտեցինք, և մանաւանդ՝ «Վերադարձ Հայաստան» շատ խօսուն վերնագիրը կարդացինք, բառին իսկական իմաստով՝ ցնցուեցանք:

Հայութեան համար «Վերադարձ Հայաստան»էն աւելի խորհրդանշական ու սրտաբուխ նպատակ մը չէր կրնար ըլլալ...

Այս մասին մեր գրութիւններով, երկար տարիներ ի վեր, կը հառաչեցնք՝ «...Հայր՝ թրքական հալածանքներու հետեւանքով, տեւական փախչիլ տորվեցաւ, և պարպեց հայրենի, մայր հողը, և հաստատուեցաւ աւելի ապահով և «Շահաբեր» տեղեր, մանաւանդ՝ Պոլիս և շրջակայքը:

Այս ձեւով Հայր կորսնցուց իր հողին վրայ միասնաբար, ազգովին ու համախումբ ապրելու առաւելութիւնը, և շուտով մեռածուեցաւ հոս ու հոն տառտոնուած և իրառու

➔ հետ կապ չունեցող մանր, կղզեակ-գաղութներու:

Հայր՝ Օսմանեան գրաւման շրջանին, Արեւմտեան Հայաստանի հողերուն վրայ, բառիս բուն իմաստով՝ մէկ հատիկ հայկական քաղաք չկրցաւ հիմնել, Անի քաղաք մը չկրցաւ վերակառուցել:

Որովհետեւ հաւաքաբար ապրելու, իրարու զօրավիգ ըլլալու և թշնամիին դէմ համատեղ պայքարելու կարողութիւնը չունէր...: Ոչ ալ իմաստութիւնը... դժբախտաբար:

... Թէեւ 1885-թ.ին կարգ մը հայրենասէր հայեր, Վանի մէջ ստեղծեցին՝ «Վերադարձ դէպի հայրենիք» Արմէնական շարժումը, բայց շատ ուշ էր... Հայերը փախցուցած էին առիթը՝ 1876-թ.ին:

Ռուսերուն Արեւմտեան Հայաստանը ազատագրած տարիներուն՝ հայերը միացան Արեւմտեան Մասոնա-Սիոնական (և իբր թէ Ընկերվար) խմբակներուն, և այս ձեւով կորսնցուցին ռուսական թիկունքը...

... Եւ [իբր թէ] ազգայնասէր որոշ հայերուն մինչեւ 1920-թ. Արեւմտեան պետութիւններուն հետ զինակցիլը՝ մեր հայրենիքին ութսուն առ հարիւրին կորուստին պատճառ եղաւ...: Բանի որ այդ Արեւմուտքը մեզ խաբեց:

Բարեբախտաբար 1920-թ.ին, Ռուսերուն թիկունքով, ունեցանք փոքր հայրենիք մը՝ բարգաւաճ Խորհրդային Հայաստանը, որ բոլոր հայրենասէր հայերուն համար՝ Սուրբ հող մը, Յոյսի աղբիւր մըն էր:

Բայց մեր ծանօթ Փանջունի «Ազգայնական» ղեկավարները, Արեւմտեան պետութիւններէն մոլորուելով, 1920-թ.էն մինչեւ 1991-թ.ը, պայքարեցան Խորհրդային Հայաստանի դէմ և, 1991-թ.էն ետք՝ կրցան զայն քանդել...:

Բայց այսօր, երբ Հայաստան որպէս թէ «Ազատ և Անկախ» է, կրկին՝ այդ ծանօթ, կարծեցեալ հայրենասէրները իրենց աւելի շատ շրթնային ու միամիտ արտայայտութիւններով, «իբր թէ» կ'օգնեն Հայաստանին:

Նոյնիսկ՝ 1989-թ.ի Հայաստանի երկրաշարժի օրերուն, այս Փանջունիներուն Սփիւռքի մէջ երկրաշարժի զոհերուն համար հաւաքած մեծ գումարներուն մէկ մասը, յատկացուցին տարբեր նպատակներու:

* * *

«Միայն Մայր հայրենիքին հողն է իրականը և յաւիտենականը»...

... Հայաստան և Սփիւռք, փոխադարձաբար իրարու զօրավիգ ըլլալով լո՛կ, պիտի կրնանք լուծել մեր բոլոր խնդիրները:

Մեր ապրած երկիրներուն օրէնքներուն [կարելիութեան սահմաններուն մէջ] հնազանդ մնալով հանդերձ՝ ոչ մէկը արգելք կրնայ ըլլալ որ մենք, մեր պարտականութիւնը չկատարենք մեր Մայր Հայրենիքին հանդէպ»...:

...«Այսօրուան Հայաստանը՝ մեր վերջին յոյսն է... Եթէ հիմա չօգնենք մեր Մայր Հայրենիքին՝ յետոյ շատ ուշ պիտի ըլլայ»... գրած էինք դեռ անցեալին:

* * *

«ՎԵՐԱԴԱՐՁ ՀԱՅԱՍՏԱՆ»

Այս մէկ կարճ նախադասութիւնը, բոլոր հայրենասէր հայերուն համար, Սուրբ տեսլական ու խորհրդանիշ է:

Եւ այս սուրբ խորհրդանիշ-պատգամը կու գար Սուրբ վայրէ մը՝ Սուրբ Էջմիածինէն:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ.ի բարձր տնօրինութեամբ որոշուած է, որ իր Սուրբ Հաւատքին հաւատարիմ մնալուն համար թրքանալու առաջարկը մերժած նահատակ -բանաստեղծ Ռուբէն Սեւակի անուան Նիս-ի մէջ գտնուող Յիշատակի Տունը «Հայաստան Պիտի Վերադառնար»...

... Այս կերպով՝ երկար տարիներէ ի վեր մեր փայ-

փայած ծրագիրը պիտի իրականանար:

Այս ձեռով հերոս-նահատակ Ռուբէն Սեւակ, իր արժանի տեղը, իր երազած հայրենի հողը պիտի վերադառնար:

* * *

Այստեղ կը հրատարակենք 8 Մայիս 2009-թ.ին, Սուրբ Էջմիածնի «Շողակաթ» հեռուստատեսիլի կեդրոնին մէջ, «Շողակաթ» կայանի Տնօրէն Հայկ Համբարձումեանի հետ կատարուած մեր հարցազրոյցը:

Հաղորդավարը. — Բարեւ Ձեզ.

Այսօր «Շողակաթ» հեռուստաընկերութեան տաղալարում հիւրընկալել ենք վերջին օրերին Մայր Աթոռ, Սրբ. Էջմիածին գտնուող Ազգային գործիչ, իր բազմաթիւ բարեգործութիւններով յայտնի Պրն. Յովհաննէս Զիլինկիրեանին: Այստեղ նշենք նաեւ, որ Պրն. Յովհաննէս Զիլինկիրեանը մեր մեծ բանաստեղծ, 1915 թուականին նահատակուած Ռուբէն Սեւակի եղբօրորդին է:

«Ռուբէն Սեւակ-Արեւմտահայ բանաստեղծ, արձակագիր, բժիշկ, հայոց Մեծ Եղեռնի զոհ ու գործիչ, որ ցեղասպանութիւնից շատ առաջ, դեռեւս Ատանայում, 1909-թ.ին Երիտթուրքերին կազմակերպած ջարդերից յետոյ, տեսաւ ու հասկացաւ թուրքական պետութեան իրական դէմքը: Ռ. Սեւակի առաջին բանաստեղծութիւնը, արարման խօսքերը գրուել են 1905 թուականին: 1910 թուականին հրատարակուել է նրա «Կարմիր Գիրք»ը, բանաստեղծութիւնների այս ժողովածուն: Սեւակ բանաստեղծը, նպատակ է ունեցել ի մի հաւաքել տարբեր շրջաններում գրած իր բանաստեղծութիւնները և հրատարակել «Սիրոյ Գիրք»ը, «Քառուս»ը և «Վերջին Հայեր»ը խորագրերով ժողովածուներ: Սակայն ուղբերգական մահն անկատար է թողել նրա այդ և շատ ուրիշ մտայղացումներ:

Սեւակի գործերը ցրուած են մնացել պարբերականների շատ էջերում: Ռ. Սեւակի գրական ժառանգութեան հաւաքման, պահպանութեան ու հրատարակութեան, բանաստեղծի կենսագրութեան լուսաբանման գործում անգնահատելի է եղբորորդու՝ Յովհաննէս Չիլինկիրեանի դերը: Յովհաննէս Չիլինկիրեանը բանաստեղծին նուիրուած բազմաթիւ յայտնի գրքերի հեղինակ է: Եւ նաեւ՝ նրա սրամադրած շատ նիւթերի աջակցութեամբ են լոյս տեսել Ռուբէն Սեւակի հատորները:

Յովհ. Չիլինկիրեան.— Կ'ուզեմ ջերմ շնորհակալութիւն յայտնել Վեհափառ Հայրապետին, յետոյ՝ ձեզի և ձեր ընկերներուն: Յայտնեմ նաեւ, որ Մայիսի սեփօքն ի վեր Երեւան կը գտնուիմ ինծի համար սուրբ օրագիրով մը, և ուրախութիւնը ունիմ ձեզի ըսելու, թէ այս ծրագիրը Վեհափառ Հայրապետին որոշումով պիտի մօտերս իրագործուի: Իմ 50 տարիէ ի վեր երազած ծրագիրս:

Հ.— Գիտենք, թէ ձեր ամբողջ գիտակցական կեանքը նուիրել էք Ռուբէն Սեւակի գրական ժառանգութեան ուսումնասիրութեանը:

Պ.— Շատ ճիշդ:

Հ.— Ինչի՞ց սկսուեց ամէն ինչ:

Պ.— Ռուբէն Սեւակի եղբոր զաւակն եմ: Անկարելի էր որ չխօսէինք, մեր տան մէջ, Ռ. Սեւակի մասին: Սա եւս ըսեմ, որ օրին, թրքական շատ դաժան լուծին ենթարկուած ընտանիքներուն մէջ, կար վախ... նոյնիսկ իրենց զաւակներուն իրականութիւնը, Եղեռնը պատմելու վախը կար... միշտ կը խուսափէին... թերեւս ուրիշ լուրջ պատճառ մըն ալ կար՝ չէին ուզեր այդ օրերը ապրիլ, որովհետեւ հոգեկան տառապանք կու տար այդ խօսակցութիւնը: Բայց, այնուամենայնիւ, շատ խօսողներ կային: Բնական է, անկարելի է որ մեր տան մէջ, գոնէ քիչ չափերով չխօսուէր այդ բոլորի մասին: Այո: Խօսուեցաւ... ամէն բան շուտ յստակացաւ: Եւ

➔ Երբ, իբր երիտասարդ ես տեղեկացայ Ռ. Սեւակի՝ հօրեղբորս ողբալի ճակատագրին մասին, անոր համար ամէն ջանք ու ճիգ թափեցի որ իր վաստակը, իր նահատակութիւնը արժեւորուի և հետեւանք ըլլալով, նսպատակ ըլլալով՝ մտածեցի անոր բոլոր արժէքները Հայաստան փոխադրել: Հայաստանի մէջ «Ռ. Սեւակի Յիշատակի Տուն» մը ստեղծել: Այս մտածումով դիմումներ կատարեցի Խորհրդային շրջանին, բայց՝ չիրականացաւ: Մինչ այդ՝ իշխանափոխութեան ժամանակաշրջանին, շատ փոթորկալից շրջաններ անցան, և խոստումներ ալ եղան. մենք չհամաձայնեցանք... և վերջապէս հիմա, շնորհիւ Վեհափառ Հայրապետին, այս ծրագիրը, իմ երազը՝ Հայաստանի մէջ «Ռ. Սեւակի Յիշատակի Տուն» մը ստեղծելու իմ ծրագիրը, իրագործուելու ճամբուն մէջ է:

Հ.— Նաեւ շատ լաւ գիտենք, թէ այդպիսի մի «Յիշատակի Տուն» ստեղծուել է Նիսում:

Պ.— Երբ որ մերժուեցաւ... մենք, ստիպողաբար, իմ կարելիութեանս չափերով, Նիսի մէջ յարկաբաժին մը յատկացուցի Ռուբէն Սեւակի յիշատակին: Անունը՝ «Ռուբէն Սեւակի Յիշատակի Տուն»ը: 1986-թ.ին բացումը կատարուեցաւ անոր, Նիսի մէջ:

Հ.— Մեր՝ հայաստանեան արդի իրականութեան, Հայաստանեան գրականութեան սիրահարներին, շրջանակներին գրեթէ անծանօթ էր Ռ. Սեւակի կեանքի շատ էջեր: Կը խնդրենք՝ ներկայացնել:

Պ.— Այո: Նախ կ'ուզեմ ըսել, թէ Սովետական շրջանին նոյնիսկ, Ռուբէն Սեւակի մասին, 1955-էն յետոյ, գիրքեր հրատարակուեցան: 1985-ին Ալեքսանդր Թօփչեանի կողմէ «Երկեր» անունով բացառիկ հատոր մը հրատարակուեցաւ: Ճիշդ այդ տարիներուն, այդ ամիսներուն, Անթիլիասի մէջ եւս, իբեցնց ջանքերով, նոյն անունով՝ «Ռուբէն Սեւակ-Երկեր» անունով հրատարակութիւն մը լոյս տեսաւ, որ նոյն մակար-

դակի է գրեթէ, Ալեքսանդր Թօփչեանի հրատարակած գիրքն է: Եւ այդ գիրքը կրկին, երբ Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոս Մայր Աթոռի Կաթողիկոս եղաւ Գարեգին Ա. ըլլալով, այդ գիրքը վերահրատարակուեցաւ Ս. Էջմիածնի մէջ:

Մինչ այդ՝ շատ մը գիրքեր հրատարակուեցան Սփիւռքի և Հայաստանի մէջ, Ալեքսանդր Թօփչեանի և այլոց կողմէ նաեւ... չորս-հինգ հատ մեծարժէք վէսլեր կան Ռուբէն Սեւակի կեանքին վերաբերեալ:

Հ.— Այսինքն՝ հայ իրականութեան միշտ հետաքրքրած է Ռուբէն Սեւակի կնոջ՝ ազգութեամբ Գերմանուհի Եաննի Արէլի պահուածքը և հետագայ ճակատագիրը: Եաննին ու Սեւակը ծանօթացել են Լոզանում 1907 թուականին, ուր իրենց սիրավէպը, յաղթահարելով բոլոր դժուարութիւնները, աւարտուում է ամուսնութեամբ 1910-թ.ին:

Սեւակն ու Եաննին երկու զաւակ են ունենում:

Ռուբէն Սեւակի ձերբակալութիւնից յետոյ, Եաննին և նրա մայրը ամէն ինչ անում են բանաստեղծին իրկելու համար: Սակայն՝ ասպարդիւն:

Բանաստեղծի եղբրական սպանութիւնից յետոյ, Եաննի Սեւակը հրաժարուեց գերմանական հպատակութիւնից: Դադարեց խօսել գերմաներէն: Նա իր երախաներին տուեց հայկական կրթութիւն: Իսկ աւելի ուշ՝ 1925-30-ական թ.ներուն, դժբախտ կիներ խաղում է Փարիզի բեմերում: Հրատարակել է բանաստեղծութիւնների մի քանի ժողովածուներ, ֆրանսերէն լեզուով:

Պ.— Ռուբէն Սեւակի կնոջ մայրը որ Զուլցերիա կը բնակէր՝ Գերմանացի էր: Զինք Պոլիս կը հրաւիրեն: Կու գայ մայրը: Մայր ու աղջիկ կը դիմեն այդ շրջանին, այն ատենուան Պոլսոյ դեսպան-նկատելով, որ Պոլիսը այն ատեն մայրաքաղաք էր— Գերման. կայսրութեան դեսպան

Վանկէնհայմին— հրէշին մէկը—, ճիշդ եղեռնի օրերուն, և Վանկէնհայմը երբ կը տեսնէ իր դէմ Գերմանացի այրի կին մը, կը պոռայ անոր երեսին

— Դուն, Գերմանուհի մը... լքեցիր ազգութիւնդ և եկած ես ինձմէ ինդրելու որ ազատե՞մ ամուսինդ: Անոնք մեռնելու գացին և ետ պիտի չգան:

Գերմանուհի աղջիկը, Ռուբէն Սեւակի կինը, կը սլա-տասխանէ բարկաճայթ.

— Երկու զաւակ ունիմ. և այդ երկու զաւակներս իբր հայ պիտի մեծցնեմ... և անոնք վրէժը պիտի լուծեն իրենց Հօր»:

Շատ հետաքրքրական է այս աղջկան կեցուածքը: Որովհետեւ, անկէ ետք, իր ամբողջ կեանքի ընթացքին գերմաներէն չէ խօսած, ինքը՝ Գերմանուհին: Երկրորդ՝ իր զաւակներուն մէկ բառ իսկ գերմաներէն չէ սորվեցուցած. Վանկէնհայմին երեսին կը նետէ գերմանական անձնագիրը և Զուիցերիոյ մէջ կը ստանայ այն ատենուան Հայկական Հանրապետութեան անձնագիրը: Իր զաւակներուն անուններն ալ նշուած են իրենց մօր անձնագրին մէջ: Եւ «Օրիկինալ»ն, բնօրինակն ալ մօտս է այդ անձնագրին, Ֆրանսա: Եւ այդ իսկ սլաւոճառաւ ալ, Ռուբէն Սեւակի զաւակները հայերէն չէին գիտեր: Եւ ուրիշ սլարագայ մը կայ. ասիկա շատերը չեն գիտեր, որովհետեւ շատ կարեւոր նամակ մըն է, Ռուբէն Սեւակի կնոջ կողմէ 1915-թ.ի վերջաւորութեան ուղղուած Պոլսոյ Գերմանական դեսպանութեան, որուն մէջ ան կը գրէ.— Խնդրեմ, փրկեցէք մնացող հայերը... եթէ չազատէք՝ ամբողջ աշխարհի անէծքը ձեր վրայ պիտի տեղայ»:

Հ.— Սեւակի ազգային-հայրենասիրական բանաստեղծութիւնները և պոէմները գլուխը են 1909-թ.ին, Կիլիկիան ջարդերի անմիջական տպաւորութեան տակ: «Զանգակներ, Զանգակներ», «Ո՛վ Իմ Հայրենիք», «Հայաստան», «Կիլիկ-

իան Երգեր» և... դեռ՝ մի շարք այլ բանաստեղծութիւններ, որոնք նախապատրաստեցին նրա եղբրական վախճանը:

Պ.— Նամակ մը կայ... գրուած այն ատենուան գերմանական դեսպանատան պատասխանատուներէն մէկուն կողմէ, որուն անունը Ֆրայհէր Ֆոն Նոյրաթ էր: Ո՞վ էր Ֆրայհէր Ֆոն Նոյրաթ: Ան Հիթլէրի [Ֆիւհրեր] շրջանի Չեխոսլովաքիոյ Պոհէմիայի մարզի Կառլալաթըր— Կուսակալ—նախարար եղող անձնաւորութիւնն էր, որ Նիւրէնպէրկի մէջ 20 տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ:

Այս անձը գաղտնի նամակ մը կը գրէ Պոլիսէն՝ Պերլին, Ռայֆ Բանցլերին— վարչապետութեան: Այդ նամակին մէջ, հետաքրքրականը սա մէկն է. Ան կ'ըսէ, թէ՛ ինք դիմած է Պոլսոյ ոստիկանապետին [որ իսկական հրէշ մըն էր, Պետրի անունով, որուն հայերը սպաննել փորձեցին բայց չյաջողեցան... կարծեմ]: Ան սապէս կ'ըսէ, իր նամակին մէջ, Ռուբէն Սեւակի համար.

—Տօքթ. Չիլինսկիւրեան կը նկատուի այն մտաւորականներէն, որոնց ժողովուրդին վրայ ունեցած ազդեցութենէն կը վախցուի»:

1917-թ.ին, թուրքերը, նախ արաբատառ թրքերէնով, յետոյ ալ, տարի մը ետք, Փրանսերէն լեզուով գիրք մը կը հրատարակեն: Անոր անունը՝ «Հայկական Գոմիթաճիներուն Գործունէութիւնը»: Այս գիրքը լոյս կ'ընծայեն ինքզինքնին արդարացնելու համար, Եղեռնին կատարած ողբերգութիւնը թեթեւցնելու նպատակաւ, և համոզելու, լուրջելու համար աշխարհը: Նպատակը, միտք բանին համոզել էր՝ որ հայե՛րը շարժած են թուրքերը: Հոն կան մեր հերոսներուն, Փետայիներուն նկարները, իրենց զէնքերով ամբողջ: Ուրեմն՝ փլատակ մզկիթներուն, ճամիներուն նկարները, բռնուած զէնքերը ամբողջ, 600 էջ գրեթէ: Եւ մեր ամբողջ սպատմութիւնը, հայկական կուսակցութիւններուն գործունէութիւնը:



➔ Եւ ամէնէն կարեւորը ինծի համար՝ կա՛յ բանաստեղծութիւն մը, միակ, միակ բանաստեղծութիւն մը՝ ոչ մէկ ուրիշ բանաստեղծութիւն և բանաստեղծի անուն կայ այնտեղ, այլ՝ հոն տեղ գտած է Ռուբէն Սեւակի «Օրօր» բանաստեղծութիւնը:

[Հաղորդավարը այստեղ կ'արտասանէ «Օրօր» քերթուածը]:

Թուրք ծանօթ սլաւոմաբան մը, 10 տարիներէ ի վեր Սփիւռ.ք հաստատուած թուրք սլաւոմաբան և բանաստեղծ մը կայ, անունը՝ Թանէր Աքչամ: Անիկա անցեալ տարի՝ 2008-թ.ին նոր գիրք մը հրատարակեց: Անունը՝ «Հայկական Հարցը Լուծուած է»: Այդ գիրքին մէջ 20 էջնոց հատուած մը կայ.— Տօքթ. Չիլինկիրեան Ճինայէթի»-ցցուն վերնագրով: [Տօքթ. Չիլինկիրեանի ոճիրը], ուր յստակ կը նշուի, թէ Թալաաթ անձնասպէս կը հետաքրքրուի այդ մարդասպաններով: Ինքն է այդ մարդասպանութիւնը կազմակերպողը: Եւ ան ազատ կ'արձակէ ոճրագործները, և ոչ թէ մահուան կը դատապարտէ զանոնք:

Հայերը չէին հասկցած Ռուբէն Սեւակի արժէքը: Յուսամ, որ ասկէ ետք, շատ աւելի սլիտի արժեւորուի Ռ. Սեւակը: Ուրիշ պարագայ մը՝ կրկին — 24 Ասրիլին աքսորուածներուն, նահատակուածներուն մէջ չէ Ռուբէն Սեւակ: Ինչպէս որ Գրիգոր Զօհրապն և Վարդգէսը անոնց մէջ չէին: Որովհետեւ երեսփոխաններ էին, վտանգաւոր էր: Ծածկուեցան անոնք: Նոյնպէս՝ Ռ. Սեւակը, որուն աքսորը ուշացուցին երկու ամիս: Որովհետեւ անոր կինը Գերմանուհի էր: Յաւելուած՝ Սեւակ հարիւրապետ սպայ-բժիշկ էր: Եւ թուրք շատ մօտիկ բարեկամներ ունէր: Նկատելով, որ Ռ. Սեւակի Լոզան բժիշկ եղած շրջանին, շատ մը թուրք անձնաւորութիւններ, փաշաներ ու նախարարներ կու գան եղեր օգտուելու Ռ. Սեւակին աջակցութենէն, տեղի հիւանդանոցներուն մէջ անգամ: Եւ այդ փաշաները կ'ըսեն Սեւակին որ գայ և սլաշտօնավարէ թրքական հիւանդանոցներուն մէջ: Եւ օր մը Սեւակ, Պոլիս, կեդրոնական մեծ

հրապարակէն անցած միջոցին, հայ մտաւորական Ջիթու-նին հետ դէմ-դիմացը կ'ելլէ: Սեւակ անոր սասչես կ'արտայայտուի.— Մեզի մեծ ամօթ չէ՞, որ դեռ հոս ենք»: Նայեցէք, ուշադրութիւն: Այդ աքսորեալներուն հետ... չաքսորուելուն ամօթը ունի Ռ. Սեւակ:

Հ.— Հետաքրքրական է, յատկապէս, Սեւակ-Կոմիտաս մտերմութիւնը, որ սկսում է դեռեւս ուսանողութեան տարիներին և շարունակւում մինչեւ բանաստեղծի մահը: Սեւակի և Կոմիտասի այս բարեկամութիւնը սերտանում է յատկապէս բանաստեղծի ձերբակալութիւնից առաջ, երբ Կոմիտաս գտնւում էր Կոստանդնուպոլսում:

Պ.— Այդ միջոցին Կոմիտաս վարդապետ որ աքսորուած էր, զանազան միջամտութիւններով-կարծեմ՝ Սուլթանի ազգականներէն մէկուն շնորհիւ ալ-ազան՝ կ'արձակուի և կու գայ Պոլիս: Եւ Ռուբէն Սեւակի երկու զաւակները կը մկրտուին Պոլսոյ եկեղեցիին մէջ, որ իրենց բնակավայրին շատ մօտ է- երկու զաւակներէն մէկուն ևնքահայրը Կոմիտաս վարդապետը կ'ըլլայ: Երկու կամ երեք գիշեր յետոյ՝ 22 Յունիսի գիշերը՝ Ռ. Սեւակի բնակարանը կու գան.— Տօքթ. Պէյ, ձեզի հիւանդի մը սլիտի տանինք»— ըսելով զինք կը տանին երկու գաղտնի ոստիկաններ: Անկէ ետք կը սկսի Ռուբէնին ուղիսականը, իր ողբերգական կեանքը, հերոսական կեանքը, մահը... ինչպէս կ'ուզէք մակագրեցէք:

Ես, տարիներ առաջ, իմացած էի հօրաքրոջմէս, որ ըսած էր ինծի, թէ՛ Ռ. Սեւակ մերժած է թրքանալը և ըսած է հօրաքրոջս՝ Հայկանուշ Ջիլինկիրեանին.— Իմ անունիս սլես սլիտի չսեւցնեմ իմ հոգիս»:

Ռուբէն Սեւակ կ'ասարի հոն շուրջ երկու ամիս: Յունիսէն մինչեւ Օգոստոսի 25-թ.ը: Իբր Եւրոպա ուսանած բժիշկ [սա իմ խօսքը չէ՛ այլ Անտոնեանին] «Աստուածացուցած» են զինք իր կատարած բուժումներուն համար: Այդ գնահա-

տուժիւնը տրուած է իրեն ծանօթ թուրքերու կողմէ: Ռուբէն Սեւակ յաճախ ըսած է իր շուրջիններուն.— Մենք, այս մարդոց լաւութիւն սիրտի ընենք, որ հասկնան, թէ ինչ է մարդկայնութիւնը»: Եւ այս տեսակ արտայայտութիւններ...:

Եւ այդ նոյն միջոցին [ամենէն կենսականը հոս է], Ռ. Սեւակ կը դարմանէ թուրք ծանօթ անձնաւորութեան մը աղջիկը: Եւ հոս է, որ կը սլափափան անսպասելին: Աղջիկը կը սիրահարի Ռուբէն Սեւակին: Եւ այն մարդը, որ դահիճ մըն էր, ստիպողաբար կը դիմէ Ռ. Սեւակին ըսելով.

— Տղաս, դուք, բոլորդ ալ, մեռնելու դատապարտուած էք: Ոեւէ մէկը չի կրնար ազատել ձեզ: Բայց եթէ ես ուզեմ՝ կրնամ քեզ իրկել: Պայմանաւ, որ իսլամանաս և ամուսնանաս աղջկանս հետ:

Սեւակ կը սլափափանէ.— Ես ամուսնացած եմ: «Վնաս չունի: Իսլամական մեր կրօնքով մէկը կրնայ նոյնիսկ չորս կին առնել» — կը պնդէ թուրքը:

Սեւակ կը վերադառնայ ընկերներուն մօտ: Կը սլափանէ եղբուժիւնը իր մտերիմներուն, թէ... ասանկ սարագայ մը կայ:

Բոլորն ալ, առանց բացառութեան կ'ըսեն.— Առժամաբար ընդունէ, իրկէ կեանքդ»:

Ռուբէն Սեւակին հակադարձութիւնը կ'ըլլայ.— Թրքանալը նուաստանալ է: Եթէ մենք դաւաճանենք մեր դատին, հայ ժողովուրդը սիրտի ընդմիջու կորսնցնէ հայկականութեան ոգին, կամքը: Մենք սիրտի մեռնինք... որ հայ ժողովուրդը ապրի»:

Ռուբէն Սեւակի սա վերջին գրութիւնը հեռագիր մըն է, կրկին գրուած թրքերէն լեզուով: Ուր ըսուած է.— Վաղը, մենք Այաչ սիրտի մեկնինք, Դանիէլ Վարուժանին հետ: Ուստի, նամակնիդ հոն ղրկեցէք:

Հաղորդավարը.— 1915-թ.ի Օգոստոսի 26-ի վաղ լու-

սաղէմին, հինգ հոգուց բաղկացած խումբը ուղարկւում է Այաշ, մօտակայ փոքրիկ քաղաքը: Եւ Այաշի ճանապարհին, Թիւնէյ կոչուող վայրում, ձերբակալուածները գազանաբար սպանւում են քրդերի կողմից:

[Այստեղ ալ կ'արտասանուի հէք Ռուբէն Սեւակի շատ ծանօթ «Երթալ, Երթալ...» քերթուածը:

Հ.— Ասուածները կարեւորագոյն փաստեր են և առնչւում են ինչպէս մեր ժողովրդի պատմութեան, այնպէս էլ՝ Թուրքիայի պատմութեան: Բայց ինչպէս էք դուք կարողացել դժուարութիւնները յաղթահարել և Պոլսոյ միջավայրում էդ փաստերը հաւաքել ու հրատարակել:

Պ.— Հիմա... սիտի թոյլատրէք որ... ես... այդ մասին ըսելու ջանամ հետեւեալը, քանի մը ամիս ետք, չենք գիտեր ինչ ձեւով, Ռուբէնի մեծ եղբայրը կը յաջողի Պոլիս երթալ և տէր դառնալ այդ տան, Ռ. Սեւակի բնակարանին: Ինչ որ կարելի է՝ կը փրկէ և իր տունը կը տանի: Եւ այդ նոյն տան մէջէն ալ յետոյ, տարիներ յետոյ, իրերը ուրիշ տեղ փոխադրուած էին... և այդ տան մէջ սնտուկ մը կար: Սնտուկին մէջ ինչ որ կար [ասիկա կը սլափահի 1946-թ.ին] հաւաքեցի, մինչեւ անգամ փոքրագոյն թուղթի կտորը, Սեւակի նամակները, նկարները... ինչ որ կար, մնացած էր... և ատոնք վերցուցի և տունս բերի: Շատ ու շատ տարիներ յետոյ ալ, 1970-թ.ներուն, ինքնաշարժովս փոխադրեցի զանոնք բնակարանս և ասլա՝ վերջնական հանգրուան ըլլալով՝ Փրանսայի Նիս քաղաքը, ուր հիմնուեցաւ «Ռուբէն Սեւակի Յիշատակի Տուն»ը, ուր կը գտնուին այժմ, ինչ որ մնացած է Ռուբէն Սեւակէն:

Մինչ այդ, շատ բնականաբար՝ կարելիութեանս սահմաններուն մէջ, ջանացի փրկել Ռուբէն Սեւակի ժառանգութենէն ինչ որ կրնայի:

Հ.— Հարց տալով դա նկատի ունէի... որ դուք շատ



➔ մեծ դժուարութիւններ յաղթահարելով, տարբեր ճանապարհներով, էդ ամբողջը ձեռք էք բերել, և էսօր հայ ժողովուրդը Հայաստանում շատ ուրախ կը լինի, եթէ այդ ամէնը փոխադրուեն Հայաստան և այստեղ, Մայր հողի վրայ, հնարաւոր լինի էդ բոլորը ցուցադրել և ուսումնասիրել:

Պ.— Ուրեմն, չալերտի մէջ սա եւս ըսեմ, որ ձեզի այս ըսածներուս 99 առ հարիւրը արդէն հրատարակուած են: Իսկ շատ բաներ որ տակաւին չեն հրատարակուած, անոնք ալ, իմ ուղջութեանս, հրատարակելու առիթը կ'ունենամ:

Հ.— Շնորհակալութիւն՝ հետաքրքիր այս բոլոր փաստերի ներկայացման համար: Պրն. Զիլինկիրեան՝ Մայր Աթոռ Սրբ. Էջմիածնի հետ համագործակցութիւնը շարունակուելու է: Ինչ որ միասնական ծրագիրներ կարող են լինել:

Յովհ. Զիլինկիրեան.— Ըսի, որ ունիմ այն մեծ ուրախութիւնը, որ այս իմ երազը սլիտի իրականանայ: Միջոց մը յետոյ, մէկ ամիս, մէկ տարի՝ չեմ գիտեր:

Հաղորդավար.— Զերմ շնորհակալութիւններ: Այսօր, մեր՝ «Շողակաթ» հեռուստաընկերութեան տաղաւարում, զրուցում էինք Ազգային ծանօթ գործիչ, հրապարակագիր և հատորներու հեղինակ՝ Յովհաննէս Զիլինկիրեանի հետ:

* * *

Յ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ.— 15 ՏԱՐԻՆԵՐ ՅԵՏՈՅ,
ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՍ ԸԼԼԱԼՈՎ,
ԱՅՅԵԼԵՅԻՆԶ ԵՐԵՒԱՆԻ
«ՈՌԻԲԷՆ ՍԵՒԱԿ» ԱՆՈՒՆԸ ԿՐՈՂ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՅԸ

1994-թ.ին այս կրթարանին Ռուբեն Սեւակի անունով մկրտուելէն ի վեր, տնօրէնուհի Ճուլիա Ղազարեանին ուղարկած Video-ներուն շնորհիւ, կը հետեւէինք դպրոցի մէջ կատարուած հանդիսութիւններուն:

... Եւ վերջապէս՝ 4 Մայիս 2009-ին, մեր հարազատին՝ Յակոբ Աւագեանի ընկերակցութեամբ, այցելեցինք Երեւանի Ռուբեն Սեւակի անուան դպրոցը:

... Մեզ դիմաւորեցին՝ Տնօրէնուհին և տնօրէնութեան ու վարչութեան կազմը...:

... Եւ առաջին դասարանի փոքրիկ աշակերտներն անգամ մեզի բարի գալուստ մաղթեցին... Շատ յուզիչ էր այդ վայրկեանը:

Ռուբեն Սեւակի կիսանդրիին առջեւ խոնարհելէ յետոյ, դպրոցի թանգարանի սրահին մէջ, ունեցանք զրոյց տնօրէնութեան և հաստատութեան վարչական կազմին հետ: Եւ շնորհաւորեցինք զիրենք:

Ապա՝ դասարաններ այցելելէ յետոյ, հանդիսասրահին մէջ, դպրոցի «Զանգակներ» երգչախումբը ելոյթ ունեցաւ՝ հայրենասիրական երգերով...

... Փոքր աշակերտներ և յետոյ, ակելի բարձր դասարաններու աշակերտուհիներ, շատ տպաւորիչ առոգանութեամբ՝ Ռուբեն Սեւակի բանաստեղծութիւններէն արտասանեցին:

Այս բոլոր հայաշունչ ելոյթներուն հպարտութեամբ հետեւեցանք: Որովհետեւ տեսանք, թէ Ռուբեն Սեւակի ոգին կ'ապրէր ու կը գոյատեւէր նոր սերունդներուն մէջ:

*
*
*

Զանի մը օր յետոյ, կրկին այցելեցինք Ռուբեն Սեւակի անուան Միջնակարգ դպրոցը...

Այս անգամուան այցելութեան նպատակը՝ ծանօթանալ էր ուսուցչական կազմին հետ...

... Դպրոցի թանգարանի սրահը հաւաքուած էինք

բոլորս՝

Ռուբէն Սեւակի յիշատակներով լեցուն թանգարանին մէջ...

50-է աւելի ուսուցիչներ... կրնաք երեւակայել՝ 50 հայ ուսուցիչներ...

Այս «Հարստութիւնը» միայն Հայաստանի մէջ կրնանք տեսնել:

Եւ այս ուսուցիչները Ռուբէն Սեւակի անուան կրթարանի աշակերտներուն հայերէն լեզու և գիտութիւն, ու մանաւանդ՝ Ռուբէն Սեւակեան «Ոգի» կը ջամբէին՝ այսօրուան Հայաստանի դժուարին պայմաններուն մէջ...

Շատ տպաւորիչ էր այս հանդիպումը, մեզի համար:

Այդ վայրկեանին մտածեցինք և երազեցինք՝ ամենակարող անձ մը ըլլալ, և հայկական ոգի-ով սերունդներ հասցնող ուսուցիչներուն ամէն ինչ տալ, ինչ բանի կարիքը որ ունէին անոնք:

Աւա՛ղ... շատ սահմանափակ էին մեր կարելիութիւնները...

... Եւ խօսեցանք ուսուցիչներուն հետ: Եւ իրենց՝ մեր գաղափարները, մեր մտահոգութիւնները բացատրելու ջանացինք:

Եւ մասնաւորապէս ըսինք թէ՛ «Հայաստան այսօր ենթարկուած է շատ մեծ վտանգի մը... Այդ վտանգը՝ կեղծ Եւրոպականացման վտանգն է, որ հայութեան «ոգի»ն գրեթէ կը բնաջնջէ, Ռ. Սեւակի երբեմնի ըրած ախտաճանաչում-բնորոշումով՝ «Կ'այլասերէ»:

... Այստեղ տալու պիտի ջանանք՝ Մայիս 2009-ին և այնուհետեւ Ռուբէն Սեւակի անուան դպրոց ու այլուր տրուած այցերուն, եղելութեանց ու կատարուած զրոյցներուն նկարագրութիւնները:

5 Մայիս 2009-թ.ին, Երևանի «Թեքեան Մշակութային Միութիւն»ի սրահին մէջ, Ռուբէն Սեւակի յիշատակին նուիրուած բացառիկ հանդիսութիւն մը տեղի ունեցաւ:

Այս հանդիսութիւնը կազմակերպողը՝ Հայաստանի Թեքեան Մշակութային Միութեան նախագահ, սլաւմական գիտութիւններու դոկտոր Ռուբէն Միրզախանեանն էր, որուն կ'ուզենք սրտանց շնորհակալութիւն յայտնել Ռուբէն Սեւակեան հայրենասիրական ոգին հայութեան մէջ տարածելու ծառայող այս ձեռնարկը կազմակերպելուն համար:

Պատմութեան համար՝ նշենք հոս, հանդիսութեան ներկայ եղած մեզի ծանօթ անձնաւորութիւններէն գոնէ մէկ քանի անուններ... Հայաստանի առաջնակարգ դէկալարներէն եղած Վլատիմիր Մովսիսեան, Ալեք Մանուկեան հիմնարկի նախագահ՝ Գրականագէտ և Ակադեմիայի անդամ՝ Երուանդ Ազատեան, Հայաստանի ճարտարարուեստականներէն՝ Գագիկ Աբրահամեան, «Ազգ» թերթի խմբագրապետ Յակոբ Աւետիքեան, Հ.Բ. Ը.Մ.ի ֆրանսայի պատասխանատուներէն՝ Լեւոն Բեպապճեան, Գրականագէտ Փրօֆ. Վլատիմիր Կիրակոսեան, Պատմագէտ Փրօֆ. Վլատիմիր Պետրոսեան:

Ներկայ էին մանաւանդ՝ դպրոցի մեծ թիւով ուսուցիչներ և բարձր կարգերու աշակերտներ:

Ու նաեւ՝ շատ ու շատ երիտասարդներ... մեզի անծանօթ:

**

Ռուբէն Սեւակի յիշատակի հանդիսութեան բացումը կատարեց Հ.Թ.Մ.Ս. Նախագահ Դոկտ. Ռուբէն Միրզախանեան:

Մեծ գոհունակութեամբ հետեւեցանք իր բանախօսութեան՝ որ ներկայացուց Ռուբէն Սեւակը՝ իբր հայրենասէր բանաստեղծ և նահատակ:



ՌՈՒԲԷՆ ՄԻՐՉԱԽԱՆԵԱՆԻ ԽՕՍԲԸ

Գերշ. Սրբազան հայր, Յարգելի ներկայներ,

Գիշերը Տէր Զօրում, մինչ այսօր, խորհրդաւոր լոյս կայ: Նա, մեր նահատակներու ոսկորներն են: Եւ կարծես, այդ սարսափելի լոյսի մէջ, մի խորհուրդ կայ, խորհուրդ՝ ուղղուած բոլորին՝ «Մի մոռացէք»: Միշտ յիշէք, հաւատարիմ եղէք հայ Դատին: Չմոռանաք մեզ: Երբ թրքական իշխանութիւնը ուզեց իրականացնել 20-րդ դարի մեծագոյն յանցագործութիւնը, եղեռնը, նա իր համար կատարեց տրամաբանական որոշում: Նախ և առաջ գլխատել Ազգի մեծերի: Նրանց կարգին էր Ռուբէն Սեւակը՝ մտաւորական-բանաստեղծ, որի իրական արժէքը ցաւօք սրտի՝ առ այսօր մենք չունենք: Յաճախ մենք փնտռում ենք և աւելի յաճախ չենք գտնում այն անձերին, ում օրինակով պէտք է կրթուեն և դաստիարակուեն հայորդիները: Եւ այդ խնդիրը, իրապէս կարեւորագոյն խնդիրը իր լուծումը չի ստանում, քանի չենք կարողանում ներկայացնել մեր անցեալի և նաեւ ներկայի ազգային մեծութիւնները: Այդպիսի մեծութիւն էր Ռուբէն Սեւակը, որ ժամանակի համար ստացաւ փայլուն կրթութիւն Լոզանի համալսարանի մէջ, որ նշանաւորեց Նէօ-ռէալիզմը Արեւմտահայ գրականութեան մէջ և որին բանաստեղծական իւրաքանչիւր տողը մեծ լիրիկա է: Եւ որի յիշատակը մենք բոլոր միջոցներով հասցնելու ենք մեր երիտասարդութեան:

Թէքէեան Մշակութային Միութիւնը կազմակերպելով այս ձեռնարկը, իր առջեւ նաեւ նպատակ է դրել, որոշակի չափով, միայն որոշակի չափով լրացնելու այն բացը որ կայ, իրականութեան մէջ, որ անշուշտ զգացւում է մեր իրականութեան մէջ:

Ես հաճոյքով ուզում եմ բեմ հրաւիրել Մայր Աթոռ Սրբ. Էջմիածնի դիւանապետ Գերշ. Արշակ Եպսկ. Խաչատրեանին, օրհնութեան խօսք ասելու համար:

Ուզում եմ նաեւ շնորհակալութիւն յայտնել Պրն. Յովհաննէս Չիլիկկիրեանին, մեծ բանաստեղծի, մեծ հայորդու եղբօր որդուն, որ իր կեանքի տասնեակ տարիներ նուիրել է Ռուբէն Սեւակի յիշատակի, նրա ստեղծագործութիւնների և կեանքին մէջ մասնակից դարձրնելու համար և որի ջանքերով այսօր գործում է Ռուբէն Սեւակի անունը կրող թանգարանը, և որը այսօր մեր մէջ է: Ուզում եմ յատուկ ողջունել նրան, որ գտնուում է Հայաստան, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի անձնական հրաւերով:

★ ★ ★

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Դիւանապետ Գերշ. Արշակ Եպիսկոպոս Խաչատրեան ներկաներուն փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջոյնի խօսքն ու յաջողութեան մաղթանքները:

... Մեզ տպաւորեց Արշակ Եպս.ի սա նկատողութիւնը. —

«Ռուբէն Սեւակ նահատակուեցաւ, որովհետեւ հաւատարիմ մնալ ուզեց իր սուրբ հաւատքին:

Բայց ներկայիս ի՞նչ կը տեսնենք: Այսօր չկայ թրքական եղեռնը: Բայց հայերը իրենց ազատ կամքով կը լքեն իրենց հաւատքը»:

Այստեղ հիացումով կը հրատարակենք

ԳԵՐԱՇ. Տ. ԱՐՇԱԿ ԵՊՍ. ԽԱՉԱՏՐԵԱՆԻ խօսքը

Յարգելի Պրն. Չիլիկկիրեան,

Սիրելի ներկաներ՝

Օրեր առաջ յիշում եմ, քննարկումներ էին կատարում մեր հասարակութեան մէջ, պարզաբանելու համար այն խնդիրը, թէ հասարակութեան մէջ ովքեր էին ընտրանիին, էլիտային պատկանում:

Այսօրուան միջոցառումը ինձի համար պատասխանն է այդ հարցադրումին: Այսօր թեքեան Մշակութային Միութիւնը նախաձեռնել է մի հանդիսութիւն, որին իր յարգարժան մասնակցութիւնն է բերում նաեւ յարգարժան, եղերական մահով ի Տէր հանգեալ Ռուբէն Սեւակի ազգականը՝ Պրն. Յովհաննէս Չիլինկիրեան: Եւ Ռուբէն Սեւակի կեանքի և գործի մտածման մեր ուշադրութեան բերումը, իմ մտածումների մէջ, պատասխանն է այդ քննարկումին, թէ ով է Ազգին ընդհանուր պատկանը:

Ռուբէն Սեւակը ինքը մասնագիտութեամբ բժիշկ էր, և իւրաքանչիւր հայորդի իրերի բերումով իր պատկանելիութիւնը հռչակելով որեւէ մասնագիտութեամբ, դրանով չէ որ իր վերնախաւին պատկանելիութիւնը հաստատում է, այլ հոգեւոր-բարոյական, մշակութային արժէքների նկատմամբ իր վերաբերմունքովը, որ այդ վերնախաւին պատկանելիութիւնը հաստատում է:

Չափազանց վիպական և չափազանց օրինակելի մի դրուագ՝ ընդամէնը Ռուբէն Սեւակի կեանքից, որ մասնակի ընթերցանումների արդիւնքում չէ, որ իւրաքանչիւրի աչքին կարող է զարնել:

Ասում են, որ 15 թուականին եղերական դէպքերի ընթացքին, իրեն խոստացուեց կեանքը խնայել եթէ խլամութիւնը ընդունի և ամուսնանայ մահմետական կնոջ հետ: Եւ տաղանդաւոր բանաստեղծը-արձակագիրը ինքը հրաժարուել է: Այդպէս կոչուած առանձնաշնորհումից: Նախընտրելով իր հայրենիքի, իր ազգի հոգեւոր-բարոյական մշակութային միջավայրից ու մթնոլորտից չհեռանալ անգամ կեանքը կորսնցընելու գնով:

Եւ սա՛ այսօրուայ ժամանակներում շատ, չափազանց վիպական և խրախուսելի մի օրինակ է: Երբ չկայ նման մի վտանգ ֆիզաքական ոչնչացման և չկայ նման մի վտանգ՝ կեանքի գնով հատուցել սեփական հաւատքի համար: Եւ անգամս, երբեմն-երբեմն կամաւոր կերպով մեր ազգի շատ զաւակներ հեռանում են իրենց ազգային հոգեւոր միջավայրից և մթնոլորտից: Եւ Ռուբէն Սեւակի կերպարի վերականգնումը և վերարժեւորումը մեծապէս նպաստելու է որպէսզի մէկ անգամ եւս մենք անդրադառնանք մեր ազգային ակունքներին: Անդրադառնանք, թէ ինչն է կապում մեզ հայութեան հետ, որն է մեր ազգային ինքնութեան բաղադրիչը:

Ահա, այս զգացումներով է որ, ես ուրախ եմ, որպէս խոնարհ սպասաւոր մեր եկեղեցու, փոխանցելու այստեղ ներկայ ամէնքիդ, Ազգիս Վեհափառ Հայրապետ Նորին Ս. Օծութիւն Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութիւններն և բարեմաղթանքները:

Վեհափառ Հայրապետը չափազանց մխիթարական է գտնում նման միջոցառումների կազմակերպումը՝ Թէքէեան Մշակութային Միութեան կողմից յատկապէս, նաեւ այս անգամ, երբ Նորին Սրբութեան հրաւերով Մայր Հայաստան գտնուում է Ռուբէն Սեւակի ազգականը՝ Տիար Յովհաննէս Չիլինկիրեանը:

Շնորհաւորում եմ բոլոր ներկաներին այս առիթով. երբ վերստին մեր մտքերն ու մտածումները հնարաւորութիւն ունենք սեւեռելու մեր ազգի մեծերի կեանքին և ճակատագրին: Եւ նաեւ շնորհակալութիւն եմ յայտնում Թէքէեան Մշակութային Միութեանը, յաջողութեան իմ մաղթանքով, որպէսզի նման միջոցառումներ և հանդիսութիւններ շարունակուեն, այս նուիրական և հայրենասիրական գերազանց աւանդութիւններով շատ յագեցած հանդիսութիւնները:

*
*
*

Պ.Մ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲԸ

Երեւանի Պետական Մանկավարժական Համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի ժողովրդական



➔ գործիքներու նուագախումբը, երկսեռ երիտասարդ համալսարանականներէ կազմուած... իր կատարած մեղեդիներով՝ նոր շունչ մը տուին ձեռնարկին:

*
*
*

Պիտի խոստովանինք, որ մեզի համար շատ տպաւորիչ եղաւ Հայաստանի Մշակոյթի Փոխ Նախարար՝ Դաւիթ Մուրատեանի ելոյթը. իր սա գնահատութիւնը մանաւանդ թէ՛ «Ռուբէն Սեւակի բարոյական արժէքներու հանդէպ ցուցաբերած հաւատարմութիւնը և անձնագրհութեան ոգին, օրինակ պէտք է ըլլայ ներկայ հայ սերունդներուն»:

Իր խօսքերը անակնկալ մ'եղան նաեւ այն պատճառով, որ նախարարութեան ենթակայ Հայաստանի «Հ-1» հեռատեսիլի կայանէն շատ անգամ ներկայացուած յայտագիրները՝ հայկական աւանդութիւնները... խաթարելու կը ծառայեն:

ԴԱՒԻԹ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ ելոյթը

Սիրելի բարեկամներ, Յարգարժան ներկաներ...

Ամէն անգամ երբ մենք հաւաքուում ենք մեր մեծ բանաստեղծների անուան շուրջ, իրականում հաւաքուում ենք մեր շուրջ, իրականում հանդիպում ենք ինքներս մեր շուրջ, հայկական, մարդկային և մշակութային էութեան հետ: Ամէն անգամ նրանք օգնում են ճանաչելու վերստին ինքներս մեզ, մեր պատմութեան խորհուրդը: Ամէն անգամ նրանց շնորհիւ մենք նորից կարողանում ենք հաւասարուել մեր ժառանգութեանը: Ես կարծում եմ որ այս խնդիրը սեփական ժառանգութեան հաւասարուելու խնդիրը, չափազանց կարեւոր է մանաւանդ մեր ժամանակներում, որովհետեւ այդ ժառանգութիւնը,

մանաւանդ մեր այս ժամանակներում մեզ, հնարաւորութիւն է տալիս քայլելու աւելի շիտակ, ճիշդ կողմնորոշուելու այս յարափոփոխ և դժուար աշխարհի բաւիղներում: Եւ աւելի խորը կապերով կապուելու մեր հոգեւոր խորհուրդի հետ մեր ժողովրդին, մեր սլատմութեան և մեր մշակոյթին:

Ռուբէն Սեւակը Արեւմտահայ այդ հրաշալի սերնդի, այդ նահատակ, մարտիրոս սերնդի հզօրագոյն պայծառ անուններից մէկը, իսկապէս թողնում է մեզ դասեր որոնց մասին հենց նոր այստեղ խօսեցին ինձանից առաջ ելոյթ ունեցողները, հռետորները:

Բայց կ'ուզե՞նայի որ այսօր նրա յիշատակը ոգեկոչելիս, հասկանայինք, վերստին անգամ, իմաստաւորէինք մեզ համար բանաստեղծի դերը մեր ժողովուրդի կեանքում:

Բանաստեղծ՝ որը կարողանում է ճակատագրական պահերին իր մասնաւոր կեանքի վրայ վերցնել համազգային կեանքի բեռը: Ուրեմն կարողանում է իր մասնաւոր ճակատագրի վրայ պահել համազգային կեանքի բեռը: Կարողանում է այդ բեռը տանել բարոյական խիզախութեամբ, կարող է տանել այդ բեռը ազնուօրէն. բայց որպէսզի կարողանայ տանել այդ բեռը, նա պէտք է որ լինի վաւերական բանաստեղծ, իսկական գրող, որը գիրը համարում է մի խորհուրդ, յատուկ խորհուրդ որը կապուած է ամենավերին իմաստների հետ:

Ռուբէն Սեւակ այսօր կարօտ է որպէսզի նրա բանաստեղծութիւնները, նրա գործը, նրա անունը վերըստին վերադարձուի այս նոր սերունդին: Եւ այս իմաստով ես պիտի գնահատեմ Ալեքսանդր Թօփչեանին դերը: Ես պիտի գնահատեմ այն վէպը, որը արդէն Ալեքսանդր Թօփչեանը սրանից երկու տարի առաջ հրատարակեց, նուիրելով բաւական երկար իր ժամանակից, իր ստեղծագործական կեանքից զայն նուիրելով բաւական երկար ժամանակ իր ստեղծագործական կեանքից՝ Ռուբէն Սեւակի ճակատագրին:

Նա ընտրեց հենց այդ կերպարին և կարծում եմ, որ վեպը Ալեքսանդր Թօփչեանի իսկապես մեր լաւագոյն խոնարհումն է Ռուբէն Սեւակի յիշատակին, և նրան մեր օրերում վերակենդանացնող, մեր օրին բնակիչը դարձնող ստեղծագործութիւն է: Այդ վեպը այսօր ընթերցողը, կարողանում է արդէն մտովի սուզուել այդ ժամանակի մէջ որ այնքան ճակատագրական էր մեր ժողովուրդի համար, վերապրել այդ ժամանակը, հասկանալ այդ ժամանակի իրողութիւնները և հասկանալ գրող մտաւորականի առաքելութիւնը այդ ժամանակներում:

Ուստի կարծում եմ որ այսպէս, հենց մեր ժամանակների մէջ ասուած խօսքով, մենք պիտի վերադարձնենք և մեր ժամանակի մասնակիցը դարձնենք նրան ովքեր թւում է, որ անցեալումն են: Վստահ եմ, որ հնարաւոր է այս վեպի հիման վրայ հեռուստատեսային սերիալ հանել, և սա խնդիր է, որ գուցէ մենք փորձենք համատեղ ուժերով իրականացնել: Որովհետեւ, մանաւանդ այսօր, երբ հայկական հեռուստատեսային էկրանները հեղեղուած են զանգան սերիալներով որոնք ըստ էութեան չեն կապում հայ մարդուն իր իսկական արժէքների հետ, և հակառակը՝ նաեւ յաճախ խորթացնում և օտարացնում են մեզ այդ արժէքներից, ահա այսպիսի կերպարը, Ռուբէն Սեւակի նման կերպարը, իրօք կարող է դառնալ մագնիսական ոյժ որը կարող է փոխարինել, լցնել այդ «վակում»ը, այն վակումը, պարասյը որ յառաջացել է մեր հեռուստասերիալային այս ամբողջ ծրագիրսփռումներով, որոնցմով լեցուն են մեր «էկրան»ները:

Սա՛ այսպիսի գործը յիշում էք, թե՛ ասեճք վերջերս ռուսները Եսենինի նուիրուած սերիալ նկարահանելով ինչպիսի մեծ հոգեբանական արդիւնքի հասան, և իմ բարեկամներն և ընկերները ինձ ասում էին, թէ գրադարաններում կտրուկ աճել է Եսենինի հատորեակները պահանջողների թիւը, և ժամանակակից ռուս հրատարակիչները այդ պահանջի ալիքի վրայ սկսել են Եսենինի նոր հրատարակութիւններ փլանաւորել: Որովհետեւ այդ ֆիլմը յանկարծ, Ռուսաստանի նոր սերունդին դէմքը շրջել է դէպի Ռուսաստանի ազգային պոէտը:

Կարծում եմ, որ ահա, այսպիսի նախաձեռնութիւններով և այսպիսի նպատակներով, այսպիսի երեկոներով մենք կը կարողանանք վերականգնել այն ընդհանուր ժառանգականութիւնը, որը այնքան բնորոշ է եղել մեր ժողովուրդի ամենատարբեր սերունդների սեփական մշակոյթի հետ հաշտ և սեփական մշակոյթի հետ սնուելով ապրելու այդ գիտակցութիւնը, և ի հարկէ ունենալով այնպիսի պայծառ ուղեղներ, ինչպիսին հենց Ռուբէն Սեւակն է:

Կարծում եմ, որ, չգիտեմ ինձանից յետոյ հիմա ով ելոյթ է ունենալու՝ բայց ես անգամ հետաքրքրութեամբ կը լսէի Ալեքսանդր Թօփչեանինը:

*
*
*

Բնական է՝ հանդիսութեան ամէնէն աւելի ուշադիր ունկնդրուած բանախօսը, իբր առաջնակարգ Սեւակագետ՝ Ալեքսան Թօփչեանն էր:

Ան կրկին Ռուբէն Սեւակը ներկայացուց իբր մեծատաղանդ և նախագուշակ բանաստեղծ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՕՓՉԵԱՆԻ ելոյթը

Ինձ մի դժուար առաքելութիւն է ընկել այստեղ՝ խօսիլ մի մարդու մասին, որին կենսագրութիւնը, չափազանց սերտ կերպարը, էութիւնը անչափ դժուար է ամփոփել մի քանի տառերի մէջ, և առաւել դժուար է, եթէ դու լաւ գիտես նրան: Քանզի որքան աւելի խորանում ես նրան էութեան և կեանքի մանրամասներին մէջ, այնքան աւելի ես զգում, թէ ինչպիսի նոր մօտեցում է



➔ պէտք, ինչպիսի նոր հայեացք հասկանալու համար այդ մարդու վաստակը և ժառանգութիւնը մեր ժողովուրդին: Եթէ խօսենք որպէս բանաստեղծ՝ նախ և առաջ նա՝ մեզ համար, բանաստեղծ է, նա եզակի է իր էութեամբ, այնքան եզակի՝ որ մեր քաջահմուտ գրագէտները սկսած Օջականից որ իրօք, մեծ երեւոյթ է, և շատ բան կռահեց, չեն կարողացել խորանալ նրա էութեան մէջ: Մինչեւ մեր վերջին ակադեմիկոսները որոնք ենթադրելով, որ արժանին են մատուցում այդ բանաստեղծին, նրան դրեցին իր ժամանակի մեծերին այդպէս ասաց՝ ուշիմ աշակերտների շարքում: Վստահ լինելով որ իրօք, բարձր գնահատում են նրան արժանութիւնը: Մինչդեռ ես չէի ուզի ասել, թէ մեծ էր միւսներից կամ փոքր է՝ նա ինքն իրեն հաստատել է պոէզիայի մէջ, գրականութեան, և կարողացաւ հաստատել: Նա նման չէր ոչ մէկին իր ժամանակակիցներից: Լինելով ընդհանուր այդ գեղագիտութեան մէջ, նա եզակի էր: Եւ իրօք նա եզակի էր ոչ միայն հայկական առումով. նա իր ժամանակի [ամենայն վստահութեամբ եմ սա ասում] եւրոպական պոէզիայի խոշոր դէմքերից մէկն էր: Որը կտրուկ պիտի փոխէր իր ճակատագիրը ինքն իր՝ այսպէս ասաց՝ այդ բեկումնը անուանելով Կիլիկեան երգերի մէջ, ասում էր որ հիմա, այն ցաւով, ուսով պիտի հրենք մեր ցաւին անիւր դարագլոր: Այս բառերի մէջ արդէն ողբերգականութիւն կայ որ նորից ստիպուած են մեր արուեստը թողնել իր մեծ առաքելութիւնը, գեղեցկութիւն, սէր և մարդերգութիւն երգելու ցաւ մինչեւ հիմա մնում է մեր գրականութեան մայրուղիներից մէկը՝ ցաւոք սրտի: Կարելի է առանձին խօսել գիտնական մտածողութեան տէր Սեւակի

մասին, որը դարձեալ եզակի է իր տեսակի մէջ: Վկայ նրա «Բժշկի Գիրքէն փրցուած էջեր»ը, որը մի ամբողջ գաղափարախօսութիւն էր, դրա էութիւնն էր՝ ազգը, ժողովուրդը, ցեղը պատրաստել, նախապատրաստել արհաւիրքի, որ կանխազգած իր բանաստեղծութիւնների և յօդուածների մէջ:

Եւ վերջապէս՝ պէտք է խօսեմ այսօրուայ մեր ազգային քաղաքական համատեքստին մէջ, հեռատես, մարգարէացած մտաւորականի կերպարի մասին:

Ես չեմ ասում որ նրա գրչակից ընկերները չկարողացան, ինչպէս հարկն է, որ դեռես դարասկիզբին ճիշդ որակեց Երիտթուրքերու էութիւնը: Նրանք բանաստեղծներ էին, գրողներ էին, կարող էին շատ բաներ չնկատել: Բայց որ նա աւելի հեռատես եղաւ քան իր ժամանակի քաղաքական գործիչները, դա ուղղակի աններելի է այդ գործիչների համար: Եւ դա խօսում է Սեւակի բացառիկ տաղանդի, նոյնիսկ դժուար է ասել-ժամանակից առաջ անցնելու կարողութեան մասին: Սեւեկան ասում էր, որ Պատմութիւնը ցանկացողների անունը իր հետ չցանկացողին քարշ էր տալիս իր ետեւից: Սեւակի պարագայում նա առաջ անցաւ իր ժամանակից, բայց ժամանակը դա չներեց: Ջարմանալի է նրա կեանքը. նա փաստօրէն վերջին ութ-իւնը տարին կարողացաւ ամբողջութեամբ նուիրուել գրականութեան: Եւ դրանք եղան խտացած տարիներ, և որքան լաւ ես ճանաչում նրա տողերը, այնտեղ մշտապէս կայ մահուան ներկայութիւն. դա ոչ միայն դարասկիզբի գեղագիտութիւնը սէրն ու արտադրութիւնը և կանխազգացումը մեծ նախճիրի որ որ սլիտի տեսներ որպէս Ա. Աշխարհամարտին պատերազմ, դա նաեւ իր մահուան կանխազգացումն էր: Նա անընդհատ ծեր էր անուանում, նա անընդհատ իրեն ասում է, որ կեանքից յոգնած եմ: Պիտի մեկնեմ: Սա միայն ռոմանթիկ կեցուածք չէր բանաստեղծների յատուկ այդ ժամանակուան՝ 25,26,27 տարեկան երիտասարդ որ ասում է. սա իրօք իր կանխազգացումն էր:

Դա յատուկ էր. իր ժամանակի շատ արուեստագետներ ունեցել են այդ համոզումները, Ափոլիները և միւսները... այդ կանխազգացումը ունեցել են, և Սեւակը դրանից մէկն էր, և իր մահուան կանխազգացումը նա, դեռեւս որսյէս պարտաւորութիւն ունէր հնարաւորին չափ շատ բան ասելու և տեսնելու: Ես առաւել կերպով կ'ուզեմայի ձեր ուշադրութիւնը հրաւիրել մի հանգամանքի վրայ, որ արտայայտուած է նրա «Այլասերում» յօդուածի մէջ: Ես դա կը դնէի բոլոր դասագրքերում և խորհուրդ կը տայի մանաւանդ այսօր, մեր քաղաքական գործիչներուն որ կարդան այդ յօդուածը, այդ մտորումները:

Ուղղակի ապշեցնող կանխատեսումներ կան այնտեղ որ թւում է թէ, յատկապէս այսօրուա համար է գրուած: Բայց եթէ տաս տարով ետ գնանք կը պարզուի, որ այդ ժամանակների համար է գրուած, և չէի ուզի որ տասը տարի յետոյ կարդաք և ասէք նաեւ, որ 2019 թուականի համար է գրուած:

Սա գրուել է 1912 թուականին, լոյս է տեսել 1913 թուականին «Ազատամարտում»: Եւ դա արդէն կանխատեսում էր, բաւական յստակ՝ Մեծ Եղեռնը:

Սեւակը դեռեւս միակն էր, ո՛ր շատ ճիշդ հետեւութիւն արեց Ատանայի կոտորածի մասին, այն կոտորածին որին մենք մէկ ամիս առաջ վերջապէս, հարիւր տարուան ուշացումով կարողացանք քաղաքական գնահատութիւն տալ: Չեմ ասում թէ անտեսուել է: Բայց քաղաքական գնահատութիւնը ճշգրիտ հիմա եղաւ: Իր ժամանակին էլ Արշակունհի Թէոդիկը հոյակապ գիրք մը գրեց, Սուրէն Պարթեւեանը՝ գրեց, Ջապէլ Եսայեանը գրեց: Միւս բանաստեղծները անդրադարձան՝ Սիամանթօն, Վարու-

ժամը՝ եղան, անդրադարձներ եղան. բայց հետեւութիւնները ճիշդ՝ միայն Սեւակը կարողացաւ անել, վկայ նրա ամբողջ գրականութիւնը, որը արդէն գրեթէ մնում էր որ նա ասէր օրն ու ժամը, թէ երբ է լինելու յաջորդ եղեռնը:

Զարմանալի է՝ հարիւր տարի առաջ եղած այդ նախազգուշացումը Երիտթուրքերի բացարձակապէս անցաւ աննկատ: Եւ ես հասկանում եմ այդ «էֆօրիա»ն՝ թէ՛ ահա, վերջապէս, բարբարոսը քաղաքակրթութիւն է և թւում էր՝ ցանկալին իրականի տեղ անցկացնել, շատերին էր նա կուրացրել, անգամ Զօհրապի նման մարդուն որ ասում էր՝ ինչի՞ց էք բողոքում, տասը հոգու... ահա թուրքերը կախաղան են հանել, և յետոյ պարզուեց, որ այդ տասից հինգը հայեր են: Ատանայի մեղաւորներ իբր թէ: Մի խօսքով՝ ես ուզում եմ նաեւ ուշադրութիւն հրաւիրել այդ մարգարէացող մտաւորականին:

Եւ վերջապէս ուզում եմ ակարտել իմ խօսքը երկու հետաքրքիր, ուրեմն փաստով՝ կապուած իմ վէպին: Ես քանի որ հանգամանալից ուսումնասիրել էի նրա ձեռագրերը, նրա կեանքը, նրա կենսագրութիւնը, ամբողջ նրա ժամանակը, և թւում էր թէ իմ նախասիրած ժամը ինձ պիտի ստիպէր գիտական ուսումնասիրութիւն գրել Ռուբէն Սեւակի մասին, չնայած ինձնից առաջ արդէն գրել էին յուշագրքեր և հեղինակներից մէկը ներկայ է այստեղ, այնուամենայնիւ, ինչ որ բան պակսում էր... Պրն. Չիլինկիրեան դուք կը յիշէք անշուշտ, թէ ինչպէս Պրն. Անդրանիկ Ծառուկեանի մօտ հիւր էինք 1988 թուականի Յունուարի 21-ին, ես, Անահիտը և դուք, և նա նուիրեց իր վէպը՝ «Սերը Եղեռնի Մէջ» և ասաց. — Յուսամ կարդաս և շաբաթ մը ետք կը հանդիպենք և կը խօսենք»: Ասի՝ վարպետ չեմ խոստանում: «Կը հասկնամ. Փարիզի հմայքները չպիտի ձգեն հոս գիրքեր կարդալու»: Ասի «Փարիզի հմայքները մեղաւոր չեն»: «Հասա ինչո՞ւ, պիտի չկարդաս: Ասի «Չեմ խոստանում, վարպետ ինչո՞ւ, ի՞նչ պատահեց քեզ»: Ասի ինքս էլ պիտի գրեմ: Դա ուղղակի իմ բերանիցս դուրս եկաւ, և ես

➔ հիմա եմ հասկանում, որ Սեւակի կերպարը ներկայացրնելու համար ժողովուրդին, պետք էր իսկապես նրան ներկայացնել գեղարուեստական ժանրի սահմաններում: Դա ինքնին վիպական կերպար է, նրա կենսագրութիւնը նրա ժամանակը, բաւական չէր միայն գիտականօրէն վերլուծել: Դա կարելոր է, բայց իսկապէս մատուցելու համար նրան, պետք էր անպայման այդ ներկայացնել գեղարուեստական իր շրջանակներում: Եւ ուրեմն, ես հիմա եմ հասկանում՝ իսկապէս այդ ներքին մղումը որ իմ ձեռքն բռնում է որ ես չանեմ ակնարկութիւններ և բերեմ ձեզ որ շնորհակալ եմ այստեղ եղած ջերմ խօսքերի համար, որ ասաւ իմ կրտսեր գրչեղաբայրը Դաւիթ Մուրատեանը՝ մենք խօսել ենք, նա ուրիշ առիթներով է ասել, և երեւի ես կարող եմ բաց ճակատով ասել որ կարողացայ իսկապէս ներկայացնել այդ կերպարը: Եւ այդ առիթի կ'ուզէի, աւարտելով յիշել եւս մէկ այլ հանդիպում դարձեալ ոչ նուազ յարգելի և վաստակաշատ մի մարդու հետ, խօսքը վերաբերում է Կարլէն Դալլաքեանի որի հանդէպ կարծում եմ, բոլոր ներկաներս տածում ենք յարգանք: Ես գիրքը լոյս տեսնելուց յետոյ, նուիրեցի նրան, միշտ նուիրել եմ, և խնդրեցի որ նա հնարաւորին չափ շուտ կարդայ որպէսզի գրուցենք՝ նրա կարծիքը ինձի համար շատ կարելոր էր: Նա իսկապէս մէկ շաբաթ յետոյ զանգեց. չնայած ինչ որ ծաւալուն մենագրութեան վրայ աշխատում էր, և խօսեցինք բաւական, մօտ մէկ ժամ, յիշում եմ, հեռախօսով ենք խօսել, շատ հետաքրքիր բաներ ասաց, բայց մի՛ դիտողութիւն չէ, ուղղակի մի դիտարկում կատարեց: Ասաց՝ ես չեմ հասկանում... ասաց... քո վէպում Սեւակը նախայարձակ չէ,

միշտ կանայք, նախայարձակը կանայք են... ինչպես հասկանալ սա: Ասի.— կը ներէք, ես հիմա նկատեցի դա», բայց ինքնին բնական ստացուեց... և հարցը այն չէր, որ ինք գեղեցկադէմ տղամարդ է եղել, պիտի որ հելվեցուհիներ և հիւսիսային կանայք այսպէս ասաց՝ խլիլէին, դա բնական է. բայց դրա մէջ ուրիշ անելի մեծ կարելորութիւն ունէր: Նա մարմնաւորում էր անհետացող ասպետութիւնը, և կանայք կարօտ էին այդպիսի տղամարդու, և բնական է, որ կանայք պիտի գնային դէպի այդ ասպետը: Դրա մէջ գեղագիտական իմաստ կայ: Ինձնից անկախ է ստացուել: Սա իրօք գրողական տարերքի, աշխատանքի հետեւանք է: Թէ որ մենք խօսեցինք Դալլաքեանը ասաց.— Այդ համատեքստում դա ակնկալելի է: Այդպէս է ստացում»: Եւ պատահական չէ՝ Սեւակը ունի մեղաւոր, հեռացող ասպետի կերպարը իր բանաստեղծութիւններում: Նա իրեն համարում էր ոգեծին մի թրուպատուր, ուշ ծնած: Թրուպատուրը միայն թարգմանում է որպէս աշուղ, բայց միայն աշուղ չէ. թրուպատուրները միջնադարի ասպետ քնաերգակներն են: Նրանք ասպետական ուխտ են կատարում, իրենց տիկնոջը նուիրելու իրենց կեանքը և քնարը: Նրա մէջ խորհուրդ կայ: Եւ պատահական չէ նաեւ որ, մեծ փիլիսոփայ Տենի Ռուշօն ասում էր.— Առաջին Համաշխարհային Պատերազմին ծնունդ տուող պատճառներից մէկը կարելորդնա ընդունում էր որ կար այստեղ տնտեսական, քաղաքական և այլ պատճառների բայց կարելորդ պատճառների թում դնում էր նաեւ ասպետականութեան կորուստը: Ասում էր միայն ասպետականութեան կորուստը թոյլ կտայ այսպիսի նախնի: Եւ նա իրաւացի է: Սեւակը դարձեալ իր մեծ արուեստագէտի բնագոյով կարողացել էր դա արտայայտել իր ստեղծագործութիւններում: Եւ ես կ'ուզէի որ հիմա իսկապէս, ճիշդ ասել այստեղ, որ Սեւակը պիտի լինի այն իտէալներից մէկը, որ կրթի մեր սերունդներին: Բայց եկէք շիտակ լինենք մանաւանդ ինք՝ Սեւակն է մեզ պարտադ-

րում, նա չէր ընդունում կեղծ խօսքեր երբեք: Եւ չէր ուզի որ այստեղ կեղծ խօսքեր հնչի, նրա ոգեկոչումի օրը: Եկէք անկեղծօրէն հարց տանք մեր երիտասարդներին նստած այստեղ, թէ ովքեր են նրանց կուռքերը այսօր Հայաստանում: Ես հասկանում եմ, որ ունենք կարիքներ և դժուարութիւններ, ունենք շատ ու շատ խնդիրներ: Հին սերունդներն յետ պատերազմի անցել են շատ դժուար օրերի միջով, բայց ես չեմ յիշում որ հարստութիւնը, դիրքը, եւայլն, եւայլն... մեզ համար լինէին կեանքի ուղեմիջներ, այսպէս ասաց՝ տեղափոխութիւններ:

Հարցում պէտք չէ անել այդ բաները իրօք հաստատելու համար, թէ՛ որոնք են մեր այս օրուայ երիտասարդութեան իտեալները: Ասում է, թէ Սեւակը քիչ է ծանօթ այսօր: Ոչ, Սեւակը ծանօթ է. և ես ուրիշ կերպ կ'ասէի: Ոչ, Սեւակը անջատուած չէ այսօրուայ իտեալների շրջանակում - իտեալ բառն էլ չի սազում այդ ձգտումների հետ: Իտեալը ենթադրում է վսեմ բաներ: Արդեօ՞ք Սեւակի կարիքը ունի այն երիտասարդութիւնը որը այսօր [չէի ուզի ասել որ ունի] բայց կարծում եմ որ գոնէ մեծամասնութիւնը ունի: Ես նրանց չեմ մեղադրում: Նրանք չեն հասկանում: Այսպէս ասաց՝ Յիսուսի պէս՝ չեն գիտեր թէ ինչ են ասում և ինչ են անում: Բայց նրանց պէտք է ուղղել, նրանց պէտք է կրթել, ձեռքը պէտք է բռնել-տանել և ասել- Այս ուղիով դու քայլիր, և ոչ թէ միւսով: Եւ ահա, այն ուղեմիջները որոնց որ գիտեն, լինեն, որոնցից մէկը կարելորագոյններից մէկը պէտք է լինի Ռ. Սեւակը:

Եւ թոյլ տուէք մի վերջին նախադասութիւն- այստեղ մեզ հետ ներկայ է ուրեմն Սեւակի ընտանիքից նրա եղբորորդին, զարմիկը, Յովհաննէս Չիլիկիրեանը որը իր էութեամբ, իր գործով, իր բարոյականով կենդանի մարմնաւորումն է Ռուբէն Սեւակի:

Եւ նա շատ-շատ գործեր է առել և՛ մշակութային և՛ կազմակերպչական [ինչպէս ասուեց] բանաստեղծ Ռուբէն Սեւակի Յիշատակի Տան մասին: Նա նիւթապէս խրախուսել է բազմաթիւ ծանրակշիռ գիրքերի հրատարակութեանը, մշակութային միջոցառումների, շատ-շատ բաներ կան [ես չէի ուզեր թուարկել... ժամանակը խնայելու առումով], բայց կ'ուզէի վերջացընել միայն երկու-երեք բառով- եթէ տա՛ր Աստուած՝ Ռուբէն Սեւակ յարութիւն առնէր ու գար այստեղ, ապա, առանց վարանելու ասում եմ՝ նա կը համբուրէր Պրն. Յովհաննէս Չիլիկիրեանի ճակատը:

*
*
*

Հայաստանի Գրողներու Միութեան Նախագահ՝ Լեւոն Անանեան նոյնիմաստ ելոյթով մը, Ռուբէն Սեւակի անձնագրհութեան ոգին մատնանշելէ յետոյ, մասնաւորապէս կեդրոնացաւ 2010-թ.ին Ռուբէն Սեւակի ծնընդեան 125-ամեակի նշման ծրագրին վրայ:

*Հայաստանի Գրողներու Միութեան Նախագահ՝
ԼԵՒՈՆ ԱՆԱՆԵԱՆԻ խօսքը*

Այսօրուան մեր հանդիպումը, հանդիսութիւնը յրբեւեմական չի, և լաւ է որ յրբեւեմական չի, որովհետեւ մի տեսակ վարժուել ենք մեր մեծերի առիթով հաւաքուել յրբեւեանից յրբեւեան:

Ռուբէն Սեւակ կրկնեց իւրովի իր ժողովուրդի ճակատագիրը և էն ինչ որ նա ստեղծել է, պատկանում է սերունդներին, պատկանում է մեր անցնելիք ճանապարհին եւ կ'ուզեմայի որ յիշենք հետեւեալ փաստը որ եկող տարի Փետրուարի 15-ին լրանում է մեծ բանաստեղծի, Ռուբէն Սեւակի 125-ամեակը:

Օգտուելով Սեւակագէտների, Սեւակասէրների՝ շատ գեղեցիկ լսարանի ներկայութիւնից՝ ես ուզում եմ շատ

➔ համառօտ ներկայացնել էն ծրագիրը որ Գրողների Միութիւնը ներկայացրել է կառավարութիւն օրերս, ի հարկէ խորհրդակցելով նաեւ Ալեքսանդր Թօփչեանի հետ որը եւրոպայում է, Գրողների Միութեան ներկայացուցիչն է. և ես կ'ուզենայի որ դուք նաեւ, համառօտ ծրագրին տեղեկանալով, նաե՛ւ ձեր յաւելումները անէք յետագայում:

Ուրեմն, անշուշտ պիտի անցկացուի Ռուբէն Սեւակի ստեղծագործութեանը նուիրուած մեծ գիտաժողով, տրանսպորտի և փօսթի նախարարութեանը յանձնարարում է յորելեանական դրոշմանիշ տպագրել Ռուբէն Սեւակի դիմանկարով: Այնուհետեւ հանրային հեռուստատեսութեանը կ'առաջարկուի պատրաստել վաւերագրական ֆիլմ Ռ. Սեւակի կեանքի ու գործունէութեան մասին: Այնուհետեւ այստեղ շատ ճիշտ և տեղին խօսուեց Ալեքսանդր Թօփչեանի վէպի մասին՝ «Եւ Անգամ Մահից Յետոյ» որը մեծ ներդրում էր Սեւակագիտութեան ոլորտում և որը ուղղակի բացառիկ իր տեսակով. ոչ միայն Ռուբէն Սեւակի կերպարն է մեզի մատուցում, այլեւ էն ժամանակուայ գեղագիտութիւնը որը տիրում էր եւրոպայում էդ թուականներին, ժողովուրդի ողբերգութիւնը մի այլ չափանիշով, և սովորաբար մենք ասում ենք թէ՛ եղեռնի թեման [որոշ հիմքեր ունենք] մեր գրողներին չի յաջողում ներկայացնել այնպէս ինչպէս որ օտարներին է յաջողում: Ալեքսանդր Թօփչեանը կարծես նաեւ էս դէպքում կոտրեց էդ գաղափարը, և ես կարծում եմ, որ Սեւակի 125-ամեակի առթիւ պիտի կարողանանք թարգմանաբար ներկայացնել վէպը Ալեքսանդր Թօփչեանի վէպը, ֆրանսերէն, Ռուսերէն, և արդէն պիտի նայենք ըստ թարգմանական հնարաւորութիւններին:

Առաջարկում է նաև Սեւակի Պոէզիան ասմունքով ներկայացնող խտասալիկի թողարկում, ինչպես նաև Սեւակի անունը կրող 151 դպրոցին յարող փողոցներից մեկը կոչել բանաստեղծին անունով: Եւ ամենակարեւորը՝ նույն տարածքում կառավարութեան միջոցներով կառուցել առանձնատուն ուր կը գետեղուեն Ֆրանսայի -Նիս- Կայն-Սիւր Մէր քաղաքում Ռուբէն Սեւակի Յիշատակի Տան մէջ պահուող բանաստեղծի ձեռագրերը, լուսանկարները, գրքերը և այն մեծարժէք իրերը: Եւ ի հարկէ Յանձնաժողովի մէջ պիտի անպայման խնդրուի որպէսզի իր ներկայութիւնը ապահովուի Ռուբէն Սեւակի Յիշատակի Տան տնօրէն Պրն. Յովհաննէս Չիլինկիրեանին:

Այնուհետև առաջարկում է 125-ամեայ Յոբելեանական միջոցառումների շրջանակում հաստատուի Ռ. Սեւակի անուան կրթաթոշակ Երեւանի համալսարանի բանասիրական ֆակուլտետում, ինչպէս նաև բանասիրական ֆակուլտետի լսարաններից մեկը անուանել Ռուբէն Սեւակի անունով:

Ի հարկէ՝ արդէն հասունացնել է բանաստեղծի եռահատոր ակադեմիական հրատարակութեան ստեղծման գաղափարը, և ես կարծում եմ՝ մենք պիտի կարողանանք Գրականութեան ինստիտուտի և նաև Չարենցի անուան գրականութեան և Արուեստի թանգարանի համատեղ ջանքերով, իրականացնել նաև Ա. հատորի տպագրութիւնը:

Վերջապէս՝ առաջարկում է՝ Յոբելեանի օրերին կազմակերպել Յոբելեանական ցուցահանդէս «Ռուբէն Սեւակը և նրա ժամանակը» վերնագրով, և նաև կազմակերպելով յոբելեանական տարբեր միջոցառումներ և եզրափակիչ Յոբելեանական արարողութիւնը:

Ռուբէն Սեւակը մեր մեծ արժէքներից է, որոնք թերեւս պէտք չունեն յոբելեաններով նշուելու, որովհետև

Արանք իրենց ներկայութեամբ միշտ կան մեր կեանքում և պիտի լինեն իրերայաջորդ սերունդների կեանքում: Բայց մենք նշելով Ռուբէն Սեւակի Յոբելեանը, մենք պանծացնում ենք մեր ժողովրդին որ ծնել է Ռուբէն Սեւակը: Մենք պանծացնում ենք մեր ժողովրդին որ ծնել է Ռուբէն Սեւակը:

Եւ ես կարծում եմ էսօր, յետ պանծացումի և յետ ժառանգութեան մի շարք սիրուն դրոագներ էս ջահելների ներկայութիւնը հրաշալի, էս երիտասարդութիւնը ովքեր եկել են հաղորդակցուելու Ռուբէն Սեւակի գրականութեանը և իրենց ուսերի վրայ էդ առաքելութիւնն են տանելու յաւերժաբար, հայեցի արժէքներ, ազգային արժէքներ, գրական արժէքներ փոխանցել սերունդէ սերունդ:

Շնորհակալութիւն

* * *

ԱՆԱՀԻՏ ԹՕՓՉԵԱՆ Կ'ԱՍՍՈՒՆՔԷ

Յետոյ բեմ հրաւիրուեցաւ վաստակաւոր ժողովրդական Արտիստ Անահիտ Թօփչեանը:

Եւ ինչպէս միշտ՝ արուեստագիտունին Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւններէն մեկնաբանեց՝ իր տաղանդաւոր ասմունքողի շնորհներով:

Այստեղ կը նշենք՝ ասմունքած բանաստեղծութիւններուն անունները՝

1.- Երազներ, 2.- Վաղը 3.- Ինչո՞ւ 4.- Ո՛չ:

* * *

Այստեղ պիտի խոստովանինք, որ բանասիրական գիտութիւններու Դոկտ. Սերժ Սրապիոնեանի այս հանդիսութեան ունեցած ելոյթը, Ռուբէն Սեւակի մասին, մեզի յայտնութիւն մը եղաւ:

ՍԵՐՇ ՍՐԱՊԻՈՆԵԱՆԻ խօսքը

Անկեղծ ասաց մի քիչ դժուար է այսքան մեծ վաստակ ունեցող սեւակագետներից յետոյ ելոյթ ունենալ: Բայց ես ուզում եմ իմ խօսքը սկսել քառորդ դարի հեռաւորութիւնից՝ 1984 թուականին, երբ Եղիշէ Չարենցի անուան արուեստի և գրականութեան թանգարանին ես փորձում էի ճարել Ռուբէն Սեւակի ձեռագրերը, թէզ էի պատրաստում Արեւմտահայ քաղաքացիական պոէզիայի մասին, այնտեղ առաջին անգամ հանդիպեցի յարգարժան Ալեքսան Թօփչեանին, զարմանալի մանրակրկիտութեամբ, սիրով և արտասովոր նուիրուածութեամբ հանել էր արդէն այդ ամբողջ նիւթը ինչ գոյութիւն ունէր Գրականութեան և Արուեստի թանգարանում և որ ամենակարեւորն է՝ ես խօսքս անպայման մասնաւորեցնում եմ՝ գտնում էր արդէն Ռուբէն Սեւակի տիրական ազդեցութեան տակ: Ռուբէն Սեւակի երգը, Ռուբէն Սեւակի միտքը, Ռուբէն Սեւակի անձը մարդուն մղում է ազնուութեան: Ես ի հարկէ Թօփչեանների գերդաստանը լաւ գիտեմ: Եւ գիտեմ որ դա նուիրեալների գերդաստան է և շատ չափով նպաստել են հայ արուեստի և մշակոյթի զարգացման ու բարձրացմանը: Բայց նաեւ չեմ բացառում այն բանը, որ Ալեքսանդր Թօփչեանը նոր, ազնուացման ուղի է յայտնաբերել իր համար, որի ապացոյցն այսօր այս վէպն է, և նաեւ այն որ նա, առանց որ մեր գրական շրջանակներին երբեմն դժբախտաբա հանդիպող նախանձի, առանց որեւէ ցաւի, իր իսկ աշխատանքի արդիւնքը տուեց ինձ-ինք կ'երելի հիմա չի էլ յիշում- մի ամբողջ ձեռագիր և մեքենագիր օրինակներ որի հիմքի վրայ եղաւ նաեւ իմ թեկնածուական թէզը: Շնորհակալութիւն ձեզ, և այն նուիրումի համար որ դուք բացում էք մեր ազգի դժբախտաբար երկար ժամանակ փակ մնացած էջերից մէկը: Այո. Ռուբէն Սեւակը գրական ասպարէզ եկաւ իր համար չափազանց աննպաստ պայմաններում: Հրապարակի վրայ արդէն գրքեր կային, դրանց հեղինակները՝



➔ Դանիել Վարուժան ու Սիամանթոն էին, ճանաչուած շոնթալից մուտքով գրականութիւն էր մտել Միսաք Մեծարեցը, և այս հսկաների կողքին, առանց ճշմարիտ-իրական տաղանդի, առանց Աստուածային օժտուածութեան շատ դժուար էր բանաստեղծի դերը գրաւել: Մանաւանդ, որ բժիշկի ճանապարհն էր ընտրել, ինչ որ չխանգարեց, այլ և շատ չափով օգնեց այդ տարօրինակ, զարմանալի, առեղծուածային բանաստեղծին յայտնաբերել իր Ազգի ուղին որ ոչ Մեծարեցիցն էր, ոչ Սիամանթոյիցն էր և ոչ էլ Վարուժանիցն էր լինելու: Մարմինի գիտութիւնը օգնեց Ռուբէն Սեւակին թափանցելու հոգու գիտութեան մէջ, մտա-հոգեբանութեան մէջ, կերտեց սիրային քնարերգութիւն որ չես համեմատի սիրերգութեամբ հարուստ հայ գրականութեան մէջ, ոեւէ մէկի սիրերգութեան հետ: Դա ապրուած սիրերգութիւնն էր: Դա գերմանուհի Եաննի Աբելի հետ ապրուած անզուգական օրերն էին որոնք, դժբախտաբար, լինելու էին գրողի համար չափազանց կարճ և չափազանց եղերականօրէն վերջացած: Բայց կարո՞ղ ենք մենք մեր կեանքում ցոյց տալ մի ուրիշ հայ բանաստեղծի որի կինը այլազգի էր և որի կինը կարող էր գերմանական Հիւպատոսի երեսին շարտել բառերը թէ՛ անհկա երկու զաւակ ձգած է, մէկը պիտի մեծցնեմ թուրքիոյ դէմ, մէկը՝ Գերմանիոյ դէմ: Այդ տարօրինակ ու զարմանալի բանաստեղծի ազդեցութիւնն էր որ հիւսում էր երգեր «Սէր Աստուծոյ» ու «Ծեր Արծուի» ու բանտուելու մասին: Որ կրում է իր երկրային փիլիսոփայութիւնը: Որ հիւսում էր թրուբատուրների ծանր երգը, երբ արուեստը արտաքնապէս տանում էր կախա-

ղան: Երբ հիստում էր կարմիր կարօտի երգերուն համանուն բանաստեղծութեան մէջ: Երբ խօսում էր «Զանգակներ, Զանգակներ» ի մասին որտեղ առաջին անգամ էր բանաստեղծութեան մէջ. մեռելոց ողբն էր, ապրողաց կոչն էր, շանթեր բեկանելու կառուցուածքներ: Սա այդ բանաստեղծն էր:

Անշուշտ ունեցեր է էջեր որոնք շատ ազդեցիկ չեն: Բայց պոռթկումները արդէն անչափելի էին: Գլուխ գործոցները արդէն անհամեմատելի էին: Եւ երբ խտացնում էր ամբողջ հայ ժողուրդի ճակատագիրը իր վեցտողեայ բանաստեղծութեան մէջ որ վերցրել և ստեղծափոխել է մէկ ուրիշ բանաստեղծութեան մէջ, որին թարգմանիչը նոյն յարգարժան Ալեքսանդր Թօփչեանն է, և հիստում էր բացառապէս Հայաստանի ճակատագրի խտացուած արտայայտութիւնը - դա արդէն որեւէ մէկին տրուած չէ:

Նրա կեանքի մանրամասները դժբախտաբար այսօր յայտնի են: Բայց այս գրողը իր ժողովուրդի կեանքից յիսուն տարի բացակայեց. գուցէ և անելի: Միայն վաթսունական թուականների սկզբում - գրող՝ Գեորգ Հատիտեանին նկատի ունեմ, ապա մի քիչ անելի համարձակ բայց զուտ բանուորական երգերի մեկնաբանութեամբ՝ Եդուարդ Զրբաշեանին նկատի ունեմ, անելի շատ անելի ամբողջական և կերպարը ամբողջացնելու միտում ունեցող ֆունտամենտալ գիրք՝ Վլատիմիր Կիրակոսեանի գիրքը նկատի ունեմ, և նաեւ այս վերջին տասնամեակի արտասովոր հետաքրքրութիւնը ցոյց են տալիս որ Ռուբէն Սեւակը ուշ է գալիս, բայց ուշացած չի գալիս: Արդէն վէպեր են գրում, արդէն գրում են ծաւալուն գիտական աշխատութիւններ, և անսպաժան Ռուբէն Սեւակ Չիլինկիրեանի ծառայութիւնը, Ռուբէն Սեւակ Չիլինկիրեանի հայկականութիւնը և հայեցիութիւնը իր ուրոյն տեղը ունենալու է, արժանաւոր տեղը հայոց միւս մեծերի կողքին:

Եւ այսօր վստահաբար կարելի է ասել՝ Ռուբէն Սե-

լակը հայոց ազգի մեծագույն վկայագիրներից մեկն է, և զուտ Սեւակեան վկայագիրն է: Եւ սա՛ արդէն անուրանալի ճշմարտութիւնն է:

* * *

Ռուբէն Սեւակի Յիշատակի այդ օր՝ ելոյթ ունեցող միակ Սփիւռքահայ մտաւորականը՝ մեր վաղեմի բարեկամ, Հայաստանի Ազգային Ակադեմիայի արտասահմանեան անդամ, գրականագէտ Երուանդ Ազատեանն էր:

Ան ներկայացուց Ռուբէն Սեւակ Մարդը, Բանաստեղծը և Նահատակը:

Եւ Երուանդ Ազատեան սլառմեց Նիս-ի «Ռուբէն Սեւակի Յիշատակի Տուն» այցելութեան և Սեւակի դստեր՝ Շամիրամի հետ ունեցած հանդիպման մասին:

[Հայաստանի հանրապետութեան Ազգային

Ակադեմիայի արտասահմանեան անդամ

գրականագէտ ԵՐՈՒԱՆԴ ԱԶԱՏԵԱՆԻ ելոյթը

Ռուբէն Սեւակի յիշատակով յագեցած այս երեկոյին դժուար է խօսք ըսել, որ ըլլայ նորութիւն կամ ինքնուրոյն:

Հաւանաբար միակ ձայնը որ ես պիտի բերեմ կ'երեւի Սփիւռքի ձայնն է, որուն ժառանգորդն է, ուղղակիօրէն Ռուբէն Սեւակի գրականութեան:

Ռուբէն Սեւակ՝ բժիշկ, մարդասէր, գրող, մեր արեւմրտահայ իրապաշտ գրականութեան ռահվիրաներէն է. իր նպաստը մեր արձակին և բանաստեղծութեան բոլորովին ինքնուրոյն է: Իր արձակը բեղմնաւորուած է իր բանաստեղծական երեւակայութեամբ, և իր բժշկական ասպարէզը հաւանաբար խորքն է այն մարդկայնականութեան զոր մենք կը գտնենք իր արձակին և բանաստեղծութեան մէջ:

Իր կեանքը ամբողջ եղած է առասպել մը, թէեւ՝ կիսաւարտ առասպել մը, և լի է բարոյական խորհուրդներով և ազգասիրական անբեկանելի հաւատքով:

Ես կը յիշեմ՝ նոյնիսկ մեր դպրոցական դասագիրքերուն մէջ կարդացած ըլլալ, «Բժիշկի Գիրքէն Փրցուած Էջեր», ուր մտքիս մէջ թելաւոր, յաւիտենականութեամբ դրոշմուած է իր բացատրութիւններէն մէկը՝ երբ ինք Լոզանի մէջ ուսանող էր, և իր պանդուխտի կեանքին ու ճակատագրին մասին միշտ կը խորհրդածէ այնտեղ, իր խօսքը կռունկին ուղղելով կ'ըսէր. «Կռունկ թելաւոր հառաչ» ինչպիսի՛ բանաստեղծական պատկեր: Տարիներ, աւելի քան քառասուն տարիներ, մտքիս մէջ կը թելածեն Սեւակի շունչով և խօսքերով:

Ըսի, թէ Սեւակի գործը ինքնին առասպելական էր, և զարմանալի չէ որ իր կեանքը նիւթ դարձած է երկու յատկանշական վէպերու. մէկը Սփիւռքի մէջ՝ Անդրանիկ Ծառուկեանի «Սէրը Եղեռնին Մէջ», և կորթոյային վէպը Ալեքսանդր Թօփչեանին՝ «Եւ Անգամ Մահից Յետոյ»ն:

Հաւանաբար Պրն. Ա. Թօփչեան բնագոյով ճիշդ զգացած է որ չկարդար Ա. Ծառուկեանին վէպը: Որովհետեւ նոյն կարծիքի են նաեւ նոյնինքն իր հարազատը՝ Ծամիրամը որուն հանդիպելու առիթը ունեցայ, Սեւակի տուած դասերէն մէկը, որ Պրն. Թօփչեանի նաեւ վէպին վերջընթեր էջերուն վրայ է՝ երբ Սեւակին կ'առաջարկուի ամուսնանալ թրքուհիի հետ և կեանքը փրկել, մոռնալով իր ընտանիքը, հակառակ որ իր կինն ալ Գերմանուհի էր, բայց խոր սիրով կապուած էր ոչ միայն Սեւակին, այլ՝ Սեւակի հայկական ժառանգութեան, Սեւակ կը սլատասխանէ. «Երբեմն մեռնիլ կայ, որ ձեր առաջարկած կեանքէն աւելի լաւ է: Եւ այսօրուան մեր բարոյական չափանիշները բաղդատելով կրնանք անդրադառնալ, թէ՛ հայկական բարոյականը ինչպիսի ճանապարհ կտրած է



➔ Սեւակի օրէն մինչեւ այսօր:

Ռուբէն Սեւակ, Սիամանթօ, Երովսան, Զօհրապ՝ դամբան չունեցան, և Տէր Զօրի մահատանը դարձաւ իրենց դամբանը: Դամբան չունեցաւ նաեւ Ռուբէն Սեւակը. բարեբախտաբար, գոնէ ունեցաւ թանգարան, իր ժառանգութիւնը պահպանող:

Ինծի համար ամէնէն հոգեխռով, ազնիւ ուխտագրուացութիւններէն մէկն էր որ անմոռանալի պիտի մնայ իմ կեանքիս մէջ, երբ իր պատմական ժառանգորդ Պրն. Յովհաննէս Չիլիկկիրեան օր մը հանդիպեցաւ ինծի Մարսէլի մէջ և իմ ձեռքս բռնելով ուխտի առաջնորդեց Ռուբէն Սեւակի թանգարան, ուր այդտեղ ծանօթացանք Ռուբէն Սեւակի ժառանգութեան և մասունքներուն, ինչպէս նաեւ առիթը ունեցանք հոգեշահ գրոյց ունենալ իր հարազատ դստեր՝ Ծամիրամի հետ:

Եւ ինչպէս այստեղ յիշուեցաւ, որ Ռուբէն Սեւակի կինը վրէժխնդրութեամբ լեցուած գերմանական դեսպանատան և անոր ետին կանգնող պետութեան, որ մասնակից էր Օսմանեան կայսրութեան գործած եղեռնին, այդտեղ ինծի վկայութիւնը տրուեցաւ այն ինչ որ մեր սիրելի բարեկամը յայտարարեց՝ Ռուբէն Սեւակի որդին զինուորագրուելով ֆրանսական բանակին մէջ, իր հօր վրէժը լուծած է Գերմանացիներէն Բ. Համաշխարհային պատերազմին:

Նոյն վրէժի ազնիւ զգացումով ապրած և մահացած է իր կինը, շատ թանկագին և հարազատ կինը:

Ես չեմ ուզեր երկարել որովհետեւ այնքան մասնագիտական ներկայացումներ կատարուեցան Ռուբէն Սեւակի կեանքի մասին, միայն պիտի ուզէի որ կարդացուէր և տարածուէր Ալեքսանդր Թօփչեանի կոթողային վէպը որ կերպով մը լրացումն է Ռուբէն Սեւակի կէս

մնացած կեանքին, ուր նաեւ այդտեղ ահաւոր կերպով կը նկարագրուի նահատակութեան այդ իրապաշտ պատկերները: Թուրքերը այնպիսի բարբարոսութեամբ, քստմնելի կերպով, տանջահար սպաննած են, նոյն վայրին մէջ, Չանղըրըի մէջ Դ. Վարուժանը և Ռ. Սեւակը, որ կարծես թէ գրողին, արուեստագէտին երեւակայութեան տեղ չեն ձգած:

Եւ ես, վերադառնալով Պրն. Չիլիակիրեանին կազմած թանարանին, այդտեղ մտքիս մէջ քանդակուած է ուրիշ պատկեր մը: Այդ դարակներէն մէկուն մէջ, կար չբացուած նամակ մը: Պրն. Թօփչեանի վէպին վերջին էջին վրայ ալ կը գտնեք յիշատակութիւնը այդ նամակին, որ գրուած էր Ռուբէն Սեւակի տիկնոջ կողմէ և իր ամուսնոյն ղրկուած Չանղըրը, և թուրքական-Օսմանեան փոստատարութիւնը կնքած է վրան ըսելով «Մեկնած է՝ առանց հասցէ թողելու»:

Շատ բնական է, որ թուրքերը պիտի չգիտնային Ռուբէն Սեւակի երկրային հասցէն, որովհետեւ անոր հասցէն հայ գրականութեան անմահ գանձարանն է:

**

Մեզի համար անակնկալ մ'եղաւ ասմունքող ԱՆՆԱ ՀԷՔԷՔԵԱՆԻ կատարումը:

Ան ներկայացուց նախ՝ բանաստեղծ Ռուբէն Սեւակը, իսկ յետոյ՝ շատ յաջող մեկնաբանութեամբ ասմունքեց Ռ. Սեւակի հետեւեալ բանաստեղծութիւնները՝

1.-ՊԻՏԻ ՍՊԱՍԵՄ, 2.- ՀՈԳԻՍ, 3.-ՊՋՏԻԿ ՍԻՐՏԴ:

Այստեղ կը հրատարակենք ԱճՆԱ ՀԷՔԷՔԵԱՆԻ նախքան ասմունքելը՝ Ռուբէն Սեւակը ներկայացնող իր ելոյթը:

ԱՆՆԱ ՀԷՔԷՔԵԱՆԻ խօսքը

Բարի երեկոյ:

Ռուբէն Սեւակէ երեք փոքրիկ բանաստեղծութիւններ ներկայացնելով, ուզում եմ իմ համակարծութիւնը [եթէ

կարելի է այդպէս ասել] յայտնել Պրն. Թօփչեանի ասածին վերաբերեալ, որ երիտասարդները այսօր քիչ գիտեն, բաւարար չեն սիրում, ճանաչում պարզապէս Ռ. Սեւակին, և դրա համար չեն էլ ուղորդում իրենով: Դրանում մեծ մեղք ունեն իմ կարծիքով, հանրային բոլոր տեսակի հեռուստատեսութիւն և ռատիօ, որոնք քիչ են հաղորդում այդ տեսակի բանաստեղծութիւններ մեր մեծերի ստեղծագործութիւններից:

Ի տարբերութիւն դրան՝ մեր ռատիոյի ֆոնդում պահպանուած են և ժամանակ առ ժամանակ հեռարձակում են շատ գեղեցիկ կատարումներ ե՛լ Խաչիկ Նազարեթեանի ե՛լ Վերա Յակոբեանի: Եւ մենք ունենք 30 րոպէ Անահիտ Թօփչեանի կատարմամբ մեր ֆոնդում, և ժամանակ առ ժամանակ հեռարձակում ենք այդ բանաստեղծութիւնները: Եւ կարծում եմ, որ նրանք, ովքեր լսել են այդ հաղորդումները՝ նրանք իսկապէս չեն կարող չսիրել Ռ. Սեւակին:

Կը կարդամ Յ փոքրիկ բանաստեղծութիւններ, որոնց ժամանակին իրենց քննութիւնների համար ընտրել էին իմ ուսանողները, որոնք իսկապէս այդ բանաստեղծութիւնները շատ սիրում են»:

* * *

Վերջին ելոյթը՝ Ռ. Սեւակի անուան դպրոցի տնօրէնուհի՝ Ճուլիա Նազարեանինն էր:

Ան խօսեցաւ Ռուբէն Սեւակի անունը կրող կրթարանին առաքելութեան մասին: Եւ պատմեց Ռուբէն Սեւակի յիշատակը վառ պահելու համար տարուած աշխատանքները, որոնք ուշագրաւ են:

ՋՈՒԼԻԱ ՂԱԶԱՐԵԱՆԻ ելոյթը

Յարգարժան Տիկնայք և Պարոնայք.

Ողջունում եմ բոլորիդ. և յայտնում խորին շնորհակալութիւն, այս շատ կարեւոր միջոցառմանը գտնուելու համար, և ներկայացնելով Ռուբէն Սեւակի անուան դպրոցը:

Ռուբէն Սեւակի՝ մեծ մտածողի ու հերոս բանաստեղծի կերպարը իր վերածնունդը ապրեց մեր՝ հայոց հանրապետութեան մայրաքաղաքում, ուր նա ունեցաւ իր Տունը: Նրա անունով կոչուեց մեր Կրթօճախը, և յաւերժական Մասիսների դիմաց յառնեց Ռուբէն Սեւակի կիսանդրին:

Դպրոցի մանկավարժական խորհուրդի և յատկապէս հայոց լեզուի և գրականութեան յանձնախումբի փութաջան և ստեղծագործական աշխատանքի շնորհիւ, սկսուեց Ռուբէն Սեւակի յաղթարշաւը:

15 տարիների ընթացքում, Ռուբէն Սեւակը ուսումնասիրուել է բազմակողմանիօրէն: Այս դահլիճում ներկայ եղողներէն շատերը կարող են փաստել այդ մեծաթիւ, բովանդակալից միջոցառումների մասին, որոնք տեղի են ունեցել մեր դպրոցում- Գրական ու երաժշտական ցերեկոյթներ, բեմականացումներ, ստեղծագործական մրցոյթներ, ասմունքի, շարադրութիւնների, գեղանկարչական ձեռնարկներ, գրքերի շնորհահանդէս, համերգներ, Սփիւռքի և հայրենի գրողների հրատարակութիւններու նուիրուած հանդէսներ:

Նշենք, որ այդ միջոցառումներին մասնակցել են մայրաքաղաքի տարբեր դպրոցների աշակերտներ: Ծատեր արժանացել են մրցանակների: Ժիւրիի կազմում ընդգրկուել են գրականութեան և արուեստի նշանաւոր գործիչներ:

Կիսանդրու բացման արարողութեան ժամանակ մեզ հետ էր բանաստեղծի դուստրը՝ ութսունամեայ Ծամիրամ Սեւակը որը անհաւատալիօրէն գեղեցիկ է ու հմայիչ այդ հասակում, և այդքան տարուայ բաժանումից յետոյ, հայրենի հողում գրկախառնուեցին երեսնամեայ գեղեցկադէմ հայրը և ալեզարդ դարձած ութսունամեայ

➔ դուստրը:

Շամիրամը որ այսօր էլ կենսունակ է և բացառիկ, իր մեջ է կրում հօրը չապրած տարիները: Նա յաճախ է այցելում մեր դպրոցը, որին անուանում է՝ իր հայրական օճախը:

2000 թուականին՝ Ռուբէն Սեւակի ծննդեան այդ օրը նշուեց նաեւ Գրողների Միութեան դահլիճում, որտեղ ներկայ էին ՏԻԿ. Շամիրամը և բազմաթիւ գրողներ:

Աւանդոյթ է դարձել՝ Ապրիլեան օրերին կազմակերպել Սեւակեան Շաբաթներ և այցելութիւն՝ Ծիծեռնակաբերդ:

Մենք խնդիր ենք դրել ոչ միայն մեր սաների առջեւ բացել Ռուբէն Սեւակի պոէզիայի աշխարհը, ոչ միայն ծանօթացնել նրան նամակներին, ուր երեւում է հզօր անհատի մտածողութեան խորութիւնը, այլ նաեւ մեծ մտածողին, որ հերոսական իր կեցուածքով եղել է արժանապատիւ հայ: Մենք խնդիր ենք դրել նաեւ՝ ապրող սերունդին ծանօթացնել Հերոս Պոէտը, ազգայնականը, դաստիարակել նոր սերունդները ճշմարիտ հայրենասիրութեամբ և հայասիրութեամբ:

Ամէն տարի, մեր դպրոցը ակարտող 65-70 շրջանակարտներ, կեանք են մտնում, ուսանող դառնում, իրենց հետ տանելով Սեւակեան հայրենասիրական ոգին և գաղափարները: Եւ տարեց տարի, Ռուբէն Սեւակի յաղթարշաւը տարածւում է ու տարածւում:

Բայց, խօսելով Ռուբէն Սեւակի մասին, ես չեմ կարող չնշել որ այս 15 տարիների ընթացքում, հեռուից-հեռու մեր գործերին հետեւեց, մեզ սատարեց, մեր յաջողութիւններով ուրախացել է ամենամեծ Սեւակագէտ, Սեւակապաշտ, հրապարակախօս, պատմաբան, քաղաքագէտ, մեր շատ սիրելի Յովհաննէս Չիլինկիրեանը որ երէկ,

առաջին անգամ եղաւ մեր կրթօճախում, և որին ներկայութիւնը վայելում ենք այս պահին բոլորս:

Յովհաննէս Չիլինկիրեանի շնորհիւ, մեր դպրոցը այսօր գտնուում է բարեկարգ վիճակում: Մենք միշտ վայելել ենք նրա աջակցութիւնը և, օգտուելով առիթից, ուզում ենք, մանկավարժական կոլլեկտիւի, աշակերտութեան և ծնողական համայնքի անունից, մեր խորին շնորհակալութիւնը յայտնել Պրն. Չիլինկիրեանին:

Մեծարգոյ Պրն. Յովհաննէս Չիլինկիրեան. այսօր դուք Սփիւռքի ամենաճանաչուած մտաւորականներից էք, որի խօսքն ու գործը միշտ միաձոյլ են եղել: Դուք, Ռուբէն Սեւակի ազգային և հայրենասիրական գաղափարների, նաեւ մեր պատմական յիշողութեան կրողն էք:

Նորովի ոգեկոչեցիք Ռուբէն Սեւակի անմահ հոգին: Այդ ոգին արդէն յաւերժ ապրելու է իր հայրենիքում: Ուր կայ և գործում է իր անունը կրող կրթօճախը:

Դուք, Սփիւռքում, հայ մնացիք, և հարազատ ժողովուրդի ցաւն կրեցիք ձեր հոգում: Հաւատարիմ մնացիք ձեր արմատներին: Մնացիք և կաք Մայր Հայաստանի Մեծ Զաւակը: Հաւատացիք, որ վաղ թէ ուշ, պիտի յաղթանակեն Արդարն ու Ճշմարիտը:

Մենք այն երջանիկներից ենք, որ բախտը ունեցանք վայելելու ձեր բարեկամութիւնն ու հովանաւորութիւնը: Դուք ձեր ազգային-հայրենասիրական բուռն գործունէութեամբ, շատերի համար Ազգին ծառայելու օրինակ էք, որ միշտ կանխատեսում է իրադարձութիւնները և ճիշդ եզրայանգումներ անում: Դուք, ձեր մէջ կրեցիք, Ռուբէն Սեւակի Երազը, և այդ երազը աւանդում էք սերունդներին:

Անհանգիստ, որոնող և պրպտող էք եղել ողջ կեանքում: Ապրել էք այրուելով ու լոյս տալով, կատարելով հայրենասէր ձեր մտաւորականի ամենօրեայ ձեր աշխատանքը, որի համար մեր մեծագոյն խոնարհումը ձեզ:

Ապրեց, միշտ յիշելով Ռուբէն Սեւակի, սովորելով նրանից, նրանով իսկ ապրեցնելով նրան, Մեծ Նահատակին: Ընդհանրապէս մեծագոյն մխիթարութիւնն է սա, որ կեանք են առնում մեր մեծերի երազները: Վկան՝ մեր նորանկախ հայրենիքը և դրա կանանց շիւտը որ հնչեցնում են ընկածների խօսքը՝ թող յաւերժ ապրի Հայաստան Աշխարհ, և դրա հովանու տակ կեանք առնեն մեր յոյսերն ու երազները:

* * *

«ՀՈՒՍԿ ԲԱՆՔ»

Հանդիսութեան աւարտին՝ խօսնակը բեմ հրաւիրեց մեզ, որ մենք ալ արտայայտուինք «Օրուան» մասին:

... Նախ՝ շնորհակալութիւն յայտնեցինք ներկաներուն:

Յետոյ, մեզի սրտի ցաւ եղած ու մնացող հարցի մը մասին արտայայտուեցանք:

Դառնութեամբ ըսինք՝ Հայերը չէին հասկցած Ռուբէն Սեւակին արժէք: Մինչդէռ Ռուբէնին այսպէս կոչուած՝ ներկայացուցած «Վտան»ը շատ լաւ ըմբռնած ոճրապարտ Ազգ մը կար՝ թուրքերը:

Այստեղ կը հրատարակենք՝ 5 Մայիս 2009-թ.ին, Երեւանի Թէքէեան Մշակութային Միութեան սրահին մէջ, Ռուբէն Սեւակի յիշատակին նուիրուած հանդիսութեան «Իբրեզրափակիչ խօսք»՝ մեր ունեցած ելոյթը: Խօսնակը՝

ԻՍԿ ԱՅԺՄ, ՍԻՐԵԼԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ՝
ԽՕՍՔԸ ՏՐԻՈՒՄ Է ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ
ԵՂՔՕՐՈՐԴԻՈՅՆ՝
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆԻՆ

Ուրեմն նախ՝ կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել Վահան Թէքէեան Մշակութային Միութեան Ատենապետ՝ Ռուբէն Միրզախանեանին: Նաեւ, սա պահուս, այստեղ, բացառիկ ներկայութեանը համար մեր՝ Հայաստանի առաջնակարգ ղեկավարներէն Պրն. Վլատիմիր Մովսիսեանին:

Կ'ուզեմ մեր շնորհակալութիւնը յայտնել մեր բարեկամ Երուանդ Ազատեանին և բոլոր ներկաներուն, Պրն. Գագիկ Աբրահամեանին... Երիտասարդներուն՝ մանաւանդ, որ մեր ասպագան են, յոյսն են ամբողջ հայութեան:

Ես պիտի չկրնամ անելի արտայայտուիլ Ռուբէն Սեւակի մասին, և սա՛ հասկնալի պատճառներով... միայն բան մը կ'ուզէի ըսել... եթէ թոյլատրէք...

Հասկցողներ կային իր կարողութիւնը, և դեռ՝ 1915 թուականին, երբ որ իր Գերմանացի կինը՝ Եաննի Սեւակ կը դիմէ օրուան թուրք ղեկավարներուն որ ազատեն իր ամուսինը, նաեւ՝ Վանկէնհայմին և մնացեալներուն որոնք այդ շրջանին տէրն էին Օսման. Կայսրութեան, թուրքերը և մանաւանդ այնատենուան ճիւղաղ ոստիկանապետը՝ Պետրի Պէյը կ'ըսէ [Այս վկայութիւնը նշուած է Յովհաննէս Լեփսիուսի գիրքին մէջ, առնուած՝ Գերմանական աղբիւրներէ, և ստորագրուած՝ Ֆրայհէր Վօն Նէոյրաթի կողմէ, որ այն ատեն Պոլսոյ Գերմանական դեսպանատան – նկատել՝ որ այդ ատեն Պոլիսն էր Թուրքիոյ մայրաքաղաքը – առաջնակարգ սյաշուօնեաներէն էր. ուրեմն՝ Ի՞նչ կ'ըսէր Պետլին, վարչապետութեան յղուած հեռագիրը:

Անոր մէջ կը խօսուի դիմումին մասին Ռուբէն Սեւակի կնոջ, և այս նամակին մէջ որ ստորագրուած էր Նէոյրաթի կողմէ, կար սա հռչակաւոր նախադասութիւնը. «Ռուբէն Սեւակ կը նկատուի մէկը այն մտաւորականներէն, որոնց համայնքներու վրայ ունեցած մեծ ազդեցութենէն կը վախցուի»: Եւ այս տեսակէտով ես կ'ըսեմ, որ Ռուբէն Սեւակը ամենաշատ գնահատողը և հասկցողը ո՛չ թէ հայերը, այլ՝ թուրքերն էին:



➔ Ուրեմն... այստեղ ուրիշ գիրք մը կայ... չեմ գիտեր, շատերուն ծանօթ է թէ անծանօթ... այս գիրքը ինձի նուիրեց, ակելի ճիշդ՝ սլատճէնը ունեցայ Պրն. Ալեքսանդր Թօփչեանի շնորհիւ, որ ատենօք ժիրայր Պետրոսեանի կողմէ յայտնուած էր. չէի գիտեր մինչ այդ...

Այս գիրքը, չեմ գիտեր... ինչպէս պիտի կրնամ բացատրել... թրքական գիրք է ասիկա... թրքական «Կապոյտ գիրք»ն է. ինչպէս կ'ըսեն՝ չակերտի մէջ... «Թրքական Կապոյտ գիրք» մը: Ասիկա՝ Թուրքերը, արդարացնելու համար իրենց կատարած մեծ ոճիրը... հրատարակած են 1917-թ.ին, Կոստանդնուպոլսոյ մէջ: Նախ՝ արաբատառ թրքերէնով. իսկ ժամանակ մը յետոյ՝ ֆրանսերէն լեզուով: Եւ այս գիրքը ֆրանսերէն է, դուք կրնաք նայիլ: Ուրեմն, այս գիրքին մէջ կան այն խօսքերը, այն վկայութիւնները որ մինչեւ հիմա կը կրկնեն թուրքերը թէ՛ մենք՝ հայերս ջարդած ենք թուրքերը, և ոչ թէ ասոր հակառակն է ճիշդը:

Ուրեմն՝ այստեղ, [այս գիրքը գրեթէ 600 էջ է] գիրքին մէջ կան նկարներ՝ հնչակեաններու, դաշնակցականներու, ուրիշ շատ հերոսներու շատ նկարներ... կան նաեւ... գրութիւններ, հայերէնէ թարգմանուած ֆրանսերէնի: Բայց կայ միակ բանաստեղծութիւն մը, և այս բանաստեղծութիւնը ո՛չ Դանիէլ Վարուժանէն է՝ աստուածացուած հայոց կողմէ... և ո՛չ ալ Սիամանթոյէն է՝ պաշտուած կրկին հայոց կողմէ... այս՝ թէպէտ անանուն քերթուած մը՝ բայց որուն Ռուբէն Սեւակի պատկանելուն դոյզն կասկած չկայ, որովհետեւ այդ՝ Ռուբէն Սեւակի «Վերջին Օրօր» բանաստեղծութիւնն է: Կը խնդրեմ, որ Տիկ. Թօփչեան կարդայ այս բանաստեղծութիւնը, եթէ կարելի է... թէ ոչ՝ խնդիր չէ...»:

Եւ ասիկա... Ռուբէն Սեւակի առաջին քերթուածն է,
որ թարգմանուած է ֆրանսերէնի, թուրքերուն կողմէ...
հայ քերթողի մը օտար լեզուի թարգմանուած մէկ բան-
աստեղծութիւնը... այո՛ թուրքերուն կողմէ:

[Տիկ. Թօփչեան կ'արտասանէ]

Վ Ե Ր Ջ Ի Ն Օ Ր Օ Ր

Օրօ՛ր, օրօ՛ր...: Օրօ՛ր ըսեմ ֆնանաս,
Վիրաւոր հօ՛րդ նիչերն ա՛լ չ'իմանաս:
Ծիծէս ծըծա՛ծըդ թոյն է, կաթ չի գիտնաս...
Օրօ՛ր ըսեմ ֆնանաս:

Արի՛ւն-հեղեղ, յորդեց այս սուրբ ձորերէ,
Բայց չի փախի՛ս, փարէ՛ երկրիդ, զայն սիրէ՛,
Հողիդ վրայ գերի մի՛ ըլլար, այլ՝ տիրէ՛...:
Օրօ՛ր ըսեմ ֆնանաս:

Հօրդ վըրայ եթէ անշո՛ւնչ չի նկայ ես,
Ջի ուխտե՛ցի Հըռոմի է՛գ գայլին պէս,
Նոր Ռոմուլոս մը դիեցնել ստինքէս...:
Օրօ՛ր ըսեմ ֆնանաս:

Բազուկներու՛ պարա՛ն, ոտքիս ալ՛ կացի՛ն,
Ստինքիս զո՛յգ պտուկներն, ա՛հ, կտրեցին:
Վէրքէս՛ արիւնըս ծծէ, որդեակ միաձին...:
Օրօ՛ր ըսեմ ֆնանաս:

Ահա՛ կ'իյնա՛մ...: Հայաստանը մա՛յր քեզի:

Կտակ կուտամ այս կուտրած Սուրն երկսայրի՝
 Ուր Հայրիկիդ լեռ տաք արիւնը կ'այրի...:
 Օրօ՛ր ըսեմ քնանաս:

... Ուրեմն այս բանատեղծութիւնն է որ գնահատած են: Հասկցած են Ռուբէն Սեւակին այսպէս կոչուած՝ ներկայացուցած «Վտանգ»ը: Թուրքերուն համար ներկայացուցած գաղափարական վտանգը: Ասոր համար է, որ գնահատակեցին Ռուբէն Սեւակը:

Կա՛յ ուրիշ պարագայ մը՝ չեմ գիտեր, թէ ասիկա [ցոյց տալով գիրքը] ծանօթ է ձեզի: Թանէր Աքչամի հեղինակութիւնը եղող գիրք մըն է: Թանէր հայութեան ի նպաստ որոշ դրական աշխատանք տարած է, Վահագն Տատրեանի հետ գործակցաբար:

Ուրեմն... Թանէր Աքչամի գիրքին անունը սա է՝ «Էրմէնի Մեսելեսի Հալ Օլմուշ Տուր» – «Հայկական Դատը Լուծուած է»: Ինչու չակերտի մէջ առնուած է «Դատը Լուծուած է»: Որովհետեւ Թալաաթը Մեծ Եղեռնէն՝ 24 Ապրիլէն յետոյ, հպարտութեամբ կը յայտարարէ. – «Հայկական» հարցը, դարեր շարունակ, Սուլթանները չկրցան լուծել... բայց ես լուծեցի զայն երկու ամիսէն»:

Այս գիրքին ամբողջ պատմութիւնը այս խօսքին վրայ հիմնուած է:

Բայց ուրիշ պարագայ մը կայ, կրկին Ռուբէն Սեւակի հետ առնչուած:

Լա՛ւ գիտէք, թէ թրքական արխիւներուն մօտեճալ և անոնց պարունակին ծանօթանալ անկարելի է:

Այս մարդը – գրողը ծանօթացած է այդ արխիւներուն:

Եւ ստուգած է թէ՛ այն ոճագործները որոնք Ռուբէն Սեւակն ու Դանիէլ Վարուժանը սպաննած էին և որոնց համար Կարօ Գեորգեան 1960-ական թ.ներուն իր գիր-

քին մէջ գրած էր ըսելով, որ այդ դահիճները յետոյ պատժուած-սպաննուած են Չանդըրիի տեղական իշխանութեան պատասխանատուին կողմէ - իր այս վարկածը սոյն գիրքով կը հերքուի: Աքչամի գիրքը կը վկայէ, որ ոճրագործները չեն սպաննուած: Իրողութիւնը բոլորովին ասոր հակառակն է: Որովհետեւ այդ մարդոց հրաման տուողը Թալաաթն է, ինք անձնապէս զբաղած է Ռուբէն Սեւակի սպանութեամբ: Եւ այդ ոճրագործները ազատ արձակուած են Թալաաթի միջոցաւ: Ողջ մնացած են և ղրկուած Սուրիական ճակատը [Ա. Աշխարհամարտին]: Հոն ղրկուած են կրկին՝ Թալաաթի հրամանով: Ուրեմն, Ռուբէն Սեւակի արժէքը գնահատողը ոչ թէ հայերը, այլ Թալաաթը եղած է:

... Վերջապէս՝ կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել Պրն. Վլատիմիր Կիրակոսեանին, որ 1972-ին երբ հոս եկայ ես, ուրախութիւնը ունեցայ ծանօթանալու իրեն, որ հրատարակած է Ռուբէն Սեւակի մասին գիրք մը:

Ասկէ բացի ուրիշ պարագայ մը կայ - ես կը նկատեմ, որ Ռուբէն Սեւակի հետ եղեռնի պատմութեան մէջ երկու հանգրուան կայ: Ալեքսանդր Թօփչեանէն առաջ և անկէ յետոյ: Ուրեմն. Ալեքսանդր Թօփչեանէն յետոյ, Ռուբէն Սեւակի սպանութիւնը, կեանքը, ամէն, ամէն բան, այսինքն վերածնունդը ստեղծեց Ալեքսանդր Թօփչեանը: Եւ մանաւանդ՝ իրեն կողքին՝ Անահիտ Թօփչեանը: Ես ձեզի պիտի յանձնարարեմ 1987-ին, Երեւանի հեռատեսիլէն ցուցադրուած Ռուբէն Սեւակի պատմութիւնը ցոյց տուող տեսաերիզը որ ես դիտելու առիթը ունեցայ - չեմ գիտեր՝ եթէ ձեր մէջէն զայն դիտող եղաւ, բայց պիտի յանձնարարէի, որ այդ երիզը դիտելու առիթը ունենար:

Ուրեմն, վերջին խօսք ըլլալով՝ ձեզի շնորհակալութիւն կը յայտնեմ ձեր ներկայութեան և համբերատար ունկնդրութեան համար:

Շնորհակալութիւն:

**TURKLERIN (SÖZDE) BILMEDIKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ
OSMANLI CENGÂVERİ TAYYIP ERDOĞAN-İN
AVRUPAYI ZAPTETMEK YOLUNDA YENİ
SALDIRILARI. TAYYIP ERDOĞAN 2 ARALIK
2009-DA İSVIÇRE HALKININ ÇOGUNLUGUNUN
YAPILAN REFERANDUMDA, «MINARELERE
HAYIR» DEMESİNE KARSİ ÇIKTI. VE
İSVIÇRELİLERİ İRKÇİ VE İSLAMA KARSİ OLMAKLA
İTHAM ETTİ.**

BU SÖZLERİ İLE TÜRKİYE BASBAKANI TAYYIP ERDOĞAN SON ZAMANLAR-
DA OYNADIGI TIYATRODAKI «DEMOKRAT» MASKESİNİ ATTI VE HAKIKİ YÜ-
ZÜNÜ, ZALİM VE SALDIRGAN OSMANLI CENGÂVERİ OLDUGUNU GÖSTERDİ.

İSTE TAYYIP ERDOĞANIN HAKIKİ YÜZÜ. BİR KAÇ SENE EVVEL TAYYIP
ERDOĞANIN SÖYLEDİKLERİ.

MINARELERİMİZ, BİZİM SÜNGÜLERİMİZ. KUBBELERİMİZ, BİZİM KAL-
KANLARIMIZ. CAMİLERİMİZ BİZİM KISLALARIMIZ. VE MÜMINLERİMİZ
BİZİM ASKERLERİMİZ. *1996 - TAYYIP ERDOĞAN*

* * *

BUGÜN AVRUPA HALKININ YÜZDE BESİ TÜRK VE MÜSLÜMAN.
FAKAT 2050 SENESİNDE, AVRUPA HALKININ ÇOGUNLUGU TÜRK VE
MÜSLÜMAN OLACAK.

BUNU SÖYLIYEN BİZ DEĞİLİZ.

YAHUDI TÜRKSEVER PROFÖSÖR BERNARD LEWIS ON SENE ÖNCE SÖY-
LEDİ BU SÖZLERİ.

ÇÜNKÜ YAHUDI PROFÖSÖR ÇOK İYİ BİLİR SİYONİSTLERİN PROGRAMINI.
ÇÜNKÜ SİYONİSTLERİN PROGRAMI:

BEYAZ İRKİ VE HİRİSTİYANLIĞI YOK ETMEK. BUNUN İÇİN TÜRKLERİ VE
MUSLUMANLARI ALET OLARAK KULLANIYORLAR. İSVIÇRE HALKININ Mİ-
NARELERE HAYIR DEMESİ: AVRUPA HİRİSTİYAN HALKINI UYANDIRABİLİR
VE SİYONİSTLERİN PROGRAMI BOZULUR.

ONUN İÇİN SİYONİSTLERİN ELİNDE OLAN DÜNYA YAYIN VE PROPAGAN-
DA SEBEKESİ İSVIÇREYE KARSİ SALDIRIYA GEÇTİ.

ARTIK İSVIÇREYE KARSİ NE HAKARETLER, NE İFTİRALAR VE BİLHASSA
NE TEHDİTLER.

BU YAYLIM ATEŞİNE FRANSIZ DIS ISLERI BAKANI YAHUDI BERNARD KOUCHNER DE KATILDI VE «İSVİÇRE HALKININ MINARELERE KARŞI ÇIKMASI: UTANC VERİCİ BİR KARARDIR» DEDI.

AVRUPALI YESİL BASLARIN ONDERİ ALMAN YAHUDISI VE PIÇ OLMAKLA İFTİHAR EDEN, ESKİ KIZIL DANY, ŞİMDİKİ YESİL BAS DANY (DANIEL COHN-BENDIT) DAHA İLERİ GİTTİ VE «AVRUPA BİRLİĞİ, İSVİÇREYİ CEZALANDIRMALIDIR» DEDI.

FAKAT EN ORJINAL VE TESİRLİ TEKLİFİ TÜRKİYE DIS ISLERI BAKANI AHMET DAVUTOĞLU YAPTI.

«TÜRKLER BUNDAN SONRA İSVİÇRE BANKALARI İLE ÇALIŞMASIN. VE TÜRKLER İSVİÇRE BANKALARINDAKİ PARALARINI ÇEKİNSİNLER» DEDI.

VE BU DA YETMİYORMUS GİBİ ANKARADAKİ İSVİÇRE BÜYÜK ELÇİLİĞİNİN ÖNÜNDE (TABİİ TÜRK HÜKÜMETİNİN EMRİ İLE) TÜRKLER PROTESTO GÖSTERİLERİ YAPTI.

VE BÜTÜN BUNLAR NIÇİN YAPILYOR? İSVİÇRE HALKI MINARELERE HAYIR DEMİŞ» DİYE.

DÜŞÜNÜN BİR KERE: O TÜRKİYEDEKİ HİRİSTİYAN DİN ADAMLARI BİÇAKLANARAK ÖLDÜRÜLÜYOR. HİRİSTİYAN DİN KİTAPLARI OKUYOR DİYEREK İNSANLAR KOYUN KESER GİBİ BOGAZLANIYOR.

VE BİN SENELİK VAN-DAKİ AHTAMAR ERMENİ KİLİSESİNE HAÇ KONMASINA BİLE MÜSAADE EDİLMİYOR.

VE DÜŞÜNÜN. BUGÜN DAHA AVRUPADA HALKIN YÜZDE BESİ TÜRK VE MÜSLÜMAN.

2050 SENESİNDE ONLAR ÇOGUNLUK OLURSA NELER VE NELER OLACAK.

HİRİSTİYANLARIN BUGÜNKÜ KARDEŞLİK VE HOSGÖRME İNANÇLARI: ONLARI TAMAMEN YOK OLMAYA DOĞRU GÖTURÜYOR.

1915-DE TÜRKLERİN KATLETTİKLERİ ERMENİ SAİR VE YAZAR RUPEN SEVAG-İN SÖYLEDİĞİ GİBİ

«KILIÇ DAHA ADİL-DİR HAÇTAN». EGER AVRUPALILAR BU GAMSIZ «HIRİSTİYAN» ZİHNİYETİ İLE DEVAM EDERLERSE, İSLAMLAR VE TÜRKLER 1915-DE ERMENİLERE YAPTIKLARI GİBİ AVRUPALILARI DA SOYKIRIMINA UGRATAÇAKLAR.

FAKAT HAKTIR AVRUPALILARA...

1915-DE TÜRKLERİN, ERMENİLERİ SOYKIRIMINA UGRATMASINA AVRUPALILAR ENGEL OLMADILAR.

BUNUN CEZASINI ÇEKECEKLER....

ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ [ԻԲՐ ԹԷ] ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՕՍՄԱՆԵԱՆ ԱԻԱԶԱԿ ՄՏԱՅՆՈՒԹԵԱՆ ԶԻՆՈՒՈՐԸ՝

ԹԱՅԻՊ ԷՐՏՈՂԱՆ-Ի ԵՒՐՈՊԱՆ ԳՐԱԻԵԼՈՒ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ
ԿԱՏԱՐԱԾ ՆՈՐ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ...:

2 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2009-ԻՆ ԷՐՏՈՂԱՆ, ԶՈՒԻՑԵՐԻՈՅ
ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ՝ ԻՐԵՆՑ ԵՐԿՐԻՆ ՄԷՋ ՄԻՆԱՐԷՆԵՐՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ՈՒ ԳՈՅՈՒԹԵԱՆ «ՈՉ» ԸՍԵԼՈՒՆ ԴԷՄ ԵԼԱԻ:

ԵՒ ԶՈՒԻՑԵՐԻԱՅԻՆԵՐԸ «ՑԵՂԱՊԱՁՏ ԵՒ ԻՍԼԱՄԻՆ ՀԱԿԱՌԱԿ»
ԸԼԼԱԼՈՒ «ՄԵՂՔ»ՈՎ ԱՄԲԱՍՏԱՆԵՑ:

Թուրքիոյ վարչապետ Թայիպ Էրտողան իր կատարած այս խօսքերով՝ վեր-
ջին շրջաններուն խաղացած թատրոնին մէջ գործածած «ժողովրդավար»ի
դիմակը վառ առաւ: Եւ իր իրական դէմքը՝ անգուլթ և նախայարձակ
Օսմանեան զինուորի մտայնութեան տէր ըլլալն ու մնալը ապացուցանեց:

Ահաւասիկ Թայիպ Էրտողանին իսկական դէմքը. ահա՛ քանի մը տարիներ
առաջ անոր ըսածները. «Մինարէները, մեր սուիներն են: Գմբէթները՝
մեր վահանները: Մզկիթները՝ մեր զօրանոցները, եւ հաւատացեալները՝
մեր զինուորները»:

1996-TAYYIP ERDOGAN

Այսօր Եւրոպայի մէջ, ժողովուրդին հինգ առ հարիւրը Թուրք և Իսլամ են:
Բայց 2050-թ.ին, Եւրոպական ժողովուրդին մեծամասնութիւնը... Թուրք
և Իսլամ պիտի ըլլայ: Այս խօսքերը ըսողը՝ մենք չենք:

Հրեայ ու թրքասէր Փրօֆ. Պեռնար Լեւիսը ըսած է, տասը տարիներ
առաջ, այս խօսքերը: Որովհետեւ, Հրեայ Փրօֆ.ը շատ լաւ գիտէ Սիոնիստ-
ներուն ծրագիրը: Որովհետեւ Սիոնիստներուն ծրագիրը ձերմակ ցեղը և
Քրիստոնէութիւնը բնաջնջել է: Այս պատճառաւ ալ անոնք, Թուրքերը և
Իսլամները իբր գործիք կը շահագործեն: Որովհետեւ, Զուիցերիացի ժողո-
վուրդին մինարէներու գոյութեան «Ոչ» ըսելը՝ Եւրոպացիներուն կրնայ
արթնցնել, և Սիոնիստներու ծրագիրը խանգարել:

Այս պատճառաւ Սիոնիստներու ձեռքը գտնուող լրատուութեան և «Բրո-
քականտ»ի ցանցը, համազարկ բացաւ Զուիցերիոյ դէմ:

Եւ Զուիցերիոյ դէմ ի՛նչ անարգանքներ, ի՛նչ զրպարտութիւններ և,
մանաւանդ՝ ի՛նչ սպառնալիքներ ըսես չկատարուեցան:

Այս համազարկին մասնակցեցաւ նաեւ, Ֆրանսայի ԱԳ Նախարար, ծա-

գումով չրեայ Պեոնար Բուշնէրը: Եւ Զուիցերիոյ ժողովուրդին «Մինարէ»ներու դէմ ելլելը՝ «Ամօթալի որոշում մը» որակեց:

Երոպայի «Կանանչ»ներուն ղեկավարը՝ Գերմանացի չրեայ, որ ապօրինի զուակ ըլլալուն համար կը հպարտանայ, [Նախկին կարմիր Տանի-նայտմ կանաչ Տանի կը կոչուի (Daniel Cohn-Benit-ը) աւելի առաջ գնաց և Երոպական Միութիւնէն պահանջեց, որ Զուիցերիան պատժուի:

Բայց ամէնէն ինքնատիպ և ազդեցիկ առաջարկը՝ Թուրքիոյ ԱԳ Նախարար Ահմէտ Տաուտօղլուն ըրաւ:

«Թուրքերը, ասկէ յետոյ, Զուիցերիական դրամատուններուն հետ պէտք է աշխատին: Թուրքերը Զուիցերիական դրամատուններու մէջ իրենց ունեցած գումարները ետ քաշելու են» ըսաւ:

Եւ այսքանն ալ չբաւեր կարծես: Անգարայի Զուիցերիական դեսպանատան առջեւ [բնական է՝ Թրքական կառավարութեան թելադրութեամբ] Թուրքերը ցոյցեր կատարեցին... Եւ այս բոլոր բաները ինչո՞ւ կատարուեցան... Բանի որ Զուիցերիոյ ժողովուրդը մինարէներու գոյութեան «Ոչ» ըսած էր:

Մտածեցէ՛ք անգամ մը... Ասոնք կը կատարուին այն պահուն՝ երբ Թուրքիոյ մէջ Քրիստոնէայ կրօնականները դաշունահարուելով կ'սպաննուին: «Քրիստոնէական կրօնական գիրքեր կարդալուն համար մարդիկ ոչխարներու նման կը մորթուին:

Եւ Վանի Ախթամար կղզիին վրայի հազարամեայ հայկական եկեղեցիին գմբէթին խաչ դնելն անգամ կ'արգիլուի:

Եւ մանաւանդ՝ մտածեցէք անգամ մը՝ եթէ այսօր, Երոպայի մէջ, ժողովուրդին հարիւրին հինգը միայն Թուրք և Իսլամ է. անոնք եթէ 2050-թ.ին մեծամասնութիւն կազմեն, ինչե՛ր, ինչե՛ր պիտի պատահին:

Քրիստոնէաներուն այսօրուան եղբայրականութեան և բարեացակամութեան բարոյականութիւնը, հանդուրժողութիւնը զիրենք ամբողջական բնաջնջման կրնայ տանիլ:

1915-թ.ին Թուրքերուն սպաննած հայ բանաստեղծ և գրող Ռուբէն Աւակին ըսածին պէս՝ «Թուրք աւելի արդար է Խաչէն»:

Եթէ Երոպացիները այս՝ «Քրիստոնէական» մտայնութեամբ շարունակե՛ն անտարբեր մնալ, Իսլամ Թուրքերը, 1915-թ.ին հայերուն դէմ կատարածնուն նման, Երոպացիներուն ալ ցեղասպանութեան կրնան ենթարկել:

Բայց, Երոպացիներն ալ, «Արժանի՛» են ասոր: Գիտենք որ Երոպացիները, 1915-թ.ին, Թուրքերուն կողմէ հայոց դէմ գործուող ցեղասպանութեան արգելք չեղա՛ն:

Ասոր պատիժը պիտի կրեն:

Յ. 2.



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՆՍՏՐԱԿՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ԵՐԶԱՆԱԿ
 ՀԻՔԱՆԱՆԱԿԱՅ ԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ



ՕՐԱՅՈՅՑ - ՈՒՂԵՑՈՅՑ

2010

ՊԻՏԻ ՀԱՄՆԻՆՔ ԳԵՐԵՎԱՐԵԱԼ ԱՐԱՐԱՏԻՆ



Սուրբ Կոնստանդին և զոր Բարձրաբերեղոս
 Հայ օրհորհորե Բերանի և զոր աս
 Սուրբ Լեւոն Մարտիրոս,
 Անտ անթի Եւթա զարդեր, Երանանի
 Քառասունը քրիստոս, քառասունը Փրկիչ,
 Քառասունը Բեռնիչ:

Մե. Բոջ քառասունը Մարտիրոսեան զոր
 Բողոք, Բարձրանի քառասունը իրան
 Շեւան, զարդերի և զոր քառասունը
 Մե. քառասունը անթի, անթի Լեւոն
 Հարս, Լեւոնեան
 Փոք անթի քառասունը
 Եւ սրբաբերեղոս Գրեղ Եւթաբերեղոս:

Մե. Մարտիրոս

Կարմիր Սուրբ
 Քառասունը անթի Եւթաբերեղոս

**Արամանահայ Գրական Շրջանակը
 Կը Շնորհաւորի**

Բռնագաւաթեայ Արեւմտահայաստանի ազատութեան ի խնդիր՝

ՊԱՅՔԱՐԻ ԶԵՐ ՆՈՐ ՏԱՐԻՆ



«ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԻՄՓԵՐԻԱԼԻԶՄ»Ը ԵՒ ՏԱԼԱՅԻ ԼԱՄԱՅԻ ԲՈՒՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Մեր Գ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

Ամերիկեւսիոնական իմփերիալիզմի քարոզչության ուղեղալուսացումէն ազատագրուած փոքրութի հայ մտաւորականներէն՝ խիզախ ճշմարտախօս Յ. Զիլինկիրեան (Վրէժ Ռուբէնեան), «Նայիրի»ի 8 Ապրիլ 2008 թուականագիր համարին մէջ, սնդրադարձած է նաեւ Թիպէթի մէջ այս օրերուն հրահրուող հակաչինական ամերիկեւսիոնական խոտվորիւններուն: Ան՝ առանց քաղքենիական կեղծ «համեստութիւն» խաղալու, ճշմարիտ ճշմարտասէրի «կոշտ» ճշմարտախօսութեամբ՝ ընթերցողին կը վերյիշեցնէ՝ թէ ինք նոյն թերթի 24 Օգոստոս 2007 թուականակիր համարին մէջ, կանխագուշակած էր «սիոնականներու գործակալ Տալայի Լամայի կողմէ «Զինասուսնի մէջ» սադրուելիք խոտվորիւնները: Եւ իրօք՝ այս օրերուն, իրականութիւն դարձած է այդ կանխագուշակութիւնը, եւ Արեւմուտքի ամերիկեւսիոնական մականին ենթակայ տէրութիւններուն կողմէ այդ խոտվորիւնները իբր պատրուակ կը գործածուին՝ չմասնակցելու Փեքինի մէջ 2008 թ. Օգոստոս 8-ին բացուելիք Ողիմպիական Խաղերուն... հարուածելու համար Ժողովրդային Զինասուսնին: (Այնպէս՝ ինչպէս Արաբական Լիկայի Դամասկոսի մէջ կայանալիք Գագաթնաժողովի նախօրեակին, ամերիկեւսիոնական իմփերիալիզմը կոպտօժէն ճնշեց իր մականին ենթակայ արաբանուն վեհասպետներուն վրայ, որպէսզի չմասնակցին Դամասկոսի Գագաթնաժողովին, Սուրիան հեղինակագրկելու եւ մեկուսացնելու դիտաւորութեամբ...):

Բայց, հայ ընթերցողին համար՝ սլոտի ըսէր ասպաքաղաքական մտածողութեան տէր եւ բնագանգական (մեթաֆիզիք) մտածելաեղանակին հետեւող մտաւորականը, «Ի՞նչ բանով կրնար հետաքրքրական ըլլալ Տալայի Լամայի մը պարագան, անոր հոգեւորակա՞ն թէ՛ գործակալ ըլլալու պարագան»...:

Ստորեւ՝ Յովհ. Զիլինկիրեանի գրիչէն երկու գրութիւններ կ'արտատպենք «Նայիրի»էն:



Ամերիկեւսիոնական իմփերիալիստներու օտարագգի (այս սլարագային՝ թիպէթցի) գործակալներու բացայայտումը, այդ գործակալական գործունէութեան ծրագրաւորման ու ֆինանսաւորման մեքանիզմներու եւ կառոյցներու բացայայտումը արդեօք, մեզի չօ՞գներ բացայայտելու նաեւ՝ այդ իմփերիալիստներուն ծառայող հայ գործակալները, եւ զանոնք ղեկավարող ու ֆինանսաւորող օտար կառոյցները, որոնք համարեայ միշտ նոյններն են՝ բոլոր «գունաւոր լեղաշրջումներ»ուն մէջ... ներստեալ՝

տասնամեակէ մը ի վեր առոնց թիրախ դարձած Հայաստանի մէջ, սկսած՝ 1999 թ. Հոկտ. 27-ի Ազգային Ժողովին մէջ գործադրուած նախճիրէն... մինչեւ՝ 2008 թ. Մարտ 1-2 օրերու արհեստի խոտովութիւնները, որոնք՝ բարեբախտաբար, վիժեցան ու Լեւոն Տէր Պետրոսեան չյաջողեցաւ Արեւմուտքի իմփերիալիստներու միջամտութիւնը հրաւիրել Հայաստան... բացի նաեւ չյաջողելէն՝ ընտրուիլ նախագահ:

Իբր թէ հոգեւոր պետ Տալայի Լամայի մը գործակալի գործունէութեան ներքին ծալքերուն բացայայտումը՝ ուրեմն, կը քօղազերծէ նաեւ՝ ընդհանուր գիծերով, «Գունաւոր լեղաշրջումներու» ամերիկեւսիոնական աւելի մեծ ծրագիրը, որ կը նկրտի ստեղծել ամերիկեւսիոնաբրիտանական Համաշխարհային Կառավարութիւն (world Government), եւ որ կը սպառնայ տիրակալել ողջ աշխարհի փոքր ու մեծ տէրութիւններուն, ներստեալ՝ Հայաստանին եւ Հայութեան: (Այս ծրագիրին գրեթէ ամբողջական փաստագրութիւնը կատարած է Garry Kah իր «On Route for Global OCCUPATION» վերնագիրը կրող գիրքին մէջ, գոր կարդալ կը յանձնարարենք մեր հասարակական գործիչներուն:

Աշխարհակալական՝ իմփերիալիստական
Ծար.-ը տեսնել ետեւի էջը

- Ես գիտեմ թի օր սոջաւորիկից սրբար
- Կը անգլեա սահմանա ու սահմանազիծ,
- Կակ ծիւծուանց կը կարքի կամար,
- Ես ես... ՄԱՍԻՍ կը անգլեան կրծքիւ:
- Իսկ երբե ոչ... ծիւծուան երբե ուսն անքի...,
- Այդ սարքը բնախ քակ բնախ փշրուան,
- Ես ՄԱՍԻՍ սարք կ'անտեան ուսնքիւ
- Ես ծիւծուանց սոջաւորից կը բնախ:

Եւգենի Եւրուշեղո

ՈՃԻՐԻ ՍԸ ՉԱՐՈՒՆԱԿՈՒՈՂ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ ԱՆԺԱՄԱՆՑԵԼԻ ԿԸ ԴԱՐՁՆԵՆ ՈՃԻՐԸ

Մ'իջազգային Հանրային Իրաւունքը *անժամանցելի* կը նկատէ Ցեղասպանութեան եւ Բռնահամարեան ոճիրները եւ կը մերժէ լսել՝ այդ ոճիրներուն դէմ հատուցում պահանջող դատերուն դէմ *վաղեմութեան* սմէն առարկութիւն, քանի որ այդ ոճիրները կ'ունենան *մնայուն հետեւանքներ...* շարունակուող վնասներ կը պատճառեն դատահայց կողմին:

Սրդարեւ, 7 Սեպտեմբեր 2007-ին, Ուաշինթընի Դաշնակցային Ատեանի դատարար մը՝ Ռոյս Լամպերթ, արձակեց վճիռ մը, որ Իրանի պետութիւնը կը դատապարտէ՝ 1983-ին, Լիբանանի մէջ ահաբեկումի ենթարկուած 241 ամերիկացի ծովայիններու ընտանիքներուն վճարելու 2,65 միլիարդ Ա.Մ. Տոլարի գումար մը, որպէս հատուցում, քանի որ Իրանի իշխանութիւնները նիւթական օժանդակութիւն տուած էին ահաբեկումի գործողութիւնը կազմակերպող Հըզպալլային... եւ՝ անցնող 24 տարիները *ժամանցումի* կամ *վաղեմութեան* առարկութեանէն չեն կրնար օգտուիլ, քանի որ այդ ահաբեկումները դատահայց ծնողներուն պատճառած էին *մնայուն տառապանքներ...*:

Իմփերիալիստական Ա.Մ.Ն-ի արդարադատութիւնը կրնա՞յ արդեօք՝ օր մը, ճշդել՝ թէ Թուրքիա ինչո՞վ կրնայ հատուցանել 1915 թուին 1.5 միլիոն արեւմտահայու կեանքին ու Սրբեմտահալաստանի կորուստին Տարագիր Հայութեան պատճառած մնայուն տառապանքը:

Գ. Տ.



«ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԻՄՓԵՐԻԱԼԻԶՄ»Ը ԵՒ ՏԱԼԱՅԻ ԼԱՄԱՅԻ ԲՈՒՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

տական» լոգունգներու չարաշահութեամբ («Մարդու իրաւունքներու», «Խղճի ազատութեան», «Անկախութեան», եւ այլն) այսինքն՝ հակադիր յղացքներու մէկտեղումով, որուն ախտաճանաչումը կը լենի քաղաքական *սքիզոֆրենիա*ի եզրակացութեան, որ թարգմանի՝ «դեմոկրատական իմփերիալիզմ»...: Իմփերիալիզմը կրնա՞յ «Դեմոկրատական» նկատուիլ: Բանականութիւնը կամ՝ առողջ մտածողութիւնը կը մերժէ դեմոկրատական որակել իմփերիալիզմը, աշխարհակալութիւնը: Սակայն, վատառողջ մտածողութիւնը, քաղաքական *սքիզոֆրենիա*է տատապող մտածողութիւնը կրնայ բարբառիլ «Դեմոկրատական իմփերիալիզմ»ի մասին:

Աւստրալիոյ Կոնֆֆիթ համալսարանին մէջ, քաղաքագիտութեան դպրոցի դոկտորականի թեկնածու Մայքըլ Պարքըր (Michael Barker) սաշտսպանած է իր թեզը, որուն վերնագիրն է՝ «Democratic Imperialism: Tibet, China and the National Endowment for Democracy»: Ան իր այս թեզին իմնատրումը կատարելու համար կը յիշէ բազմաթիւ փաստեր՝ ի հաստատումն Տալայի Լամայի գլխատրած իբր թէ կրօնական-աղանդատական (Պուտուայական) շարժումին իմփերիալիստական (CIA-ի եւ ամերիկեան National Endowment for Democracy-NED-ի կողմէ) ֆինանսատրամին... եզրակացնելով՝ թէ Տալայի Լամայի շարժումը, դեմոկրատիայի քօղին տակ, գործնականին մէջ, կը ծառայէ ամերիկեան իմփերիալիզմի ծրագրին: Այլ խօսքով, ան կը հաստատէ եւ կը փաստարկէ՝ թէ Տալայի Լամայի գլխատրած աղանդատական շարժումը, իրականութեան մէջ, դեմոկրատական վաւերական պահանջատիրութիւն չէ, այլ՝ ցուրտ-պատերազմեան շրջանէն ժառանգուած իմփերիալիստական ծրագրին ծառայող վարձկան շարժում մը պարզապէս, դեմոկրատականի դիմակով...: Ընդհակառակը, ատիկա այլատրումն է եւ այլանդակումը՝ Թիպէթի ժողովուրդին վաւերական պահանջատիրութեան, եւ կը վիժեցնէ անոր վաւերական պահանջատիրութեան դեմոկրատական հանգուցալուծումը՝ Չինաստանի պատկան իշխանութեանց հետ նախապէս ստորագրուած համաձայնութեան հիման վրայ: Արդարեւ, Չինական Յեղափոխութեան յաղթանակով, երբ Չինաստանի ժողովրդային Ազատագրական Բանակը՝ ողջ Չինաստանի հետ միասին, Թիպէթը եւս կ'ազատագրէր Բրիտանիոյ գաղութատիրութենէն, ազատագրուած երկրի լեղափոխական կառավարութիւնը՝ 1951-ին. Լը Հասսայի մէջ, Թիպէթի ժողովրդական իշխանութեան հետ կը ստորագրէր «Թիպէթի Ազատագրութեան Խաղաղ Մանապարհի Ծրագիր»ը: Այս կարեւոր Համաձայնագրով՝ բրիտանական գաղութարարներուն դէմ ինքնասաշտսպանութեան դէռ անկարող Թիպէթ, առժամեայ կարգով դէռ կը մնար ազատարար Չինաստանի կազմին մէջ, օգտուելու համար անոր յաղթական բանակին սաշտսպանութենէն, մինչեւ որ հասունանային Թիպէթի անկախութեան

«ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԻՄՓԵՐԻԱԼԻԶՄ»Ը ԵՒ ՏԱԼԱՅԻ ԼԱՄԱՅԻ ԲՈՒՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Մեր Գ. ՏԵՐՏԵՐԵԱՆ՝

նախապայմանները, որպեսզի թիպեր, հետագային, կարողանար հանգրուանել անկախության փուլին, խաղաղ ճանապարհով՝ Չինաստանի հետ համախոհաբար: Որպեսզի՝ թիպեր այս անգամ սլ կուլ չերթար ամերիկեան իմփերիալիզմին, որ դարանակալ կը սպասեր՝ բրիտանական գաղութարարները փոխարինելու առիթին, ինչ որ վերահաս վտանգ մը կը հանդիսանար՝ ոչ միայն թիպերի, այլ նաև Չինաստանի ազգային անվտանգության համար: Երկու կողմերու շահերը կը համընկնէին...:

Սակայն, հետագայ զարգացումները թոյլ չտուին 1951 թուին ստորագրուած այդ տիպար դեմոկրատական Համաձայնագրի խաղաղ գործադրութիւնը: Որովհետեւ, ինչպէս յայտնի է, ո՛չ ամերիկեան իմփերիալիզմը հեռու մնաց թիպերի մէջ միջամտելու փորձութենէն, եւ ո՛չ ալ՝ թիպերի կղերական ու աշխարհական «Լեզգայնասպաշտ» հակա-յեղափոխական ուժերը հաւատարիմ մնացին այդ Համաձայնագրի տրամադրութեանց ու սպայմաններուն: Այս վերջինները որդեգրեցին հակա-կոմունիստական, «Ազատ աշխարհական» ամերիկամէտ օրրիւնտացիան, գործակցելով ամերիկեան իմփերիալիզմին հետ... վտանգի տակ դնելով իրենց ժողովուրդին ազգային հիմնական շահերը, որոնք կը համընկնէին յեղափոխական Չինաստանի ժողովուրդին շահերուն հետ, օտար իմփերիալիստներու վերահաս վտանգին դիմաց...: (Ի դէպ՝ դժուար չէ տեսնել 1951 թ. Չին-թիպերեան եւ 1920 թ. Նոյ. 29-ի Ռուս-հայկական համաձայնութիւններու միջեւ զուգահեռ մը, որոշ փոքր տարբերութիւններով միայն, արեւելքի ժողովուրդի մը ազգայնամոլ ուժերուն արեւտամէտ (ամերիկամէտ կամ թրքամէտ) օրիանտացիայի արկածախնդրականութեան տեսակէտէն: 1920 թ. Նոյ. 29-ին յաջորդող Դեկտ. 2 թուականին, Հայաստանի հրաժարեալ կառավարութեան անունով Թուրքիոյ հետ Ալեքսանդրապոլի դաշնագրին ստորագրումը հետեւանքն էր զայդ ստորագրողներու որդեգրած արեւմտեան-թրքական օրիանտացիայի արկածախնդրութեան, որ իր անփառունակ վախճանին հասաւ 1921 թ. Փետրուար 18-ի արկածախնդրութեան վիժումով):

Տալայի Լամայի գլխատորած՝ կրօնական աղանդի դիմակ հագին... թիպերեան ազգայնամոլ, հակայեղափոխական շարժումին ղեկավարումն (remote control-ով) ու ֆինանսատրամը՝ ամերիկեան իմփերիալիզմի երկու գործակալութիւններուն միջոցով (CIA եւ NED), անհերքելի փաստերով եւ անառարկելի փաստարկումով կը հաստատէ Մայքըլ Պարքըր՝ իր վերեւ յիշուած թեզին մէջ: (Մայքըլ Պարքըրի փաստարկումին տուեալները փափաքողները կրնան կարդալ «Նայիրի»-ի 13 Մայիս 2008 թուականակիր համարին մեր տուած գրութիւնը):

Գ. Տ.

ՅՈՎՐԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ ԳՐԻՉԵՆ ԵՐԿՈՒ ՍԼԱՔ...

ԹՈՒՐՔԵՐՆ ԻՔՐ ԹԷ «ՑԵՂԱԽՈՒՄՔԷՆ՝ ՊԵՏՈՒԹԻՒՆ»

7 Մարտ 2009-ին, Պոլսոյ «Միլլիէթ» թերթին աշխատակից-յօդուածագիր Թահա Աքեօլի գրութեան մէջ, սա տեսակ վերտառութիւն մը կայ՝ «Ցեղախումբէն՝ Պետութիւն»:

Թահա Աքեօլ այս յօդուածին մէջ, իբր եզրակացութիւն, Օսմանեան վարչութիւնը կը գովաբանէ եւ ըսել կ'ուզէ թէ՝ «Օսմանցիներու շնորհիւ՝ ցեղախումբէն պետութիւն եղանք»:

Թահա Աքեօլին ըսածները շատ ճիշդ են: Եւ ձեռով մըն ալ իրականութեան մը խոստովանութիւնն է:

«Այսինքն՝ ցեղախումբ մըն էիք: Քանի մը դար յետոյ՝ պետութիւն եղաք»:

Բայց Թահա Աքեօլէն 150 տարիներ առաջ, Օսմանցի բանաստեղծ մը, մանաւանդ շատ հոչակատր բանաստեղծ մը, նոյն խօսքերը աւելի պերճիմաստ ձեռով ըսած էր:

Ռ՞Վ էր այս բանաստեղծը: Անպայման ծանօթ է ձեզի: Այս բանաստեղծը ծագումով Թուրք չէր:

Այսինքն՝ ձեր շատերուն եղածին նման [իբր թէ] Թուրք էր:

Այսինքն՝ Միջին Ասիայէն եկած ու Թաթարական ծագում չունէր:

«Օսմանցի» էր, այսինքն՝ սուրի սպառնալիքով իսլամացած Օսմանցի էր: ...Այն՝ [իբր թէ] Թուրք եղողներէն էր: Բայց Թուրքէ աւելի Թուրք եղաւ: Եւ ձերիններուն հայրենասիրութիւն սորվեցուց:

Ըսենք այլեւս անունը՝ Նամըք Քեմալ:

Այս Նամըք Քեմալը ձեր իսկական պատմութիւնը, մէկ նախադասութեամբ, շատ յստակօրէն ներկայացուց, ըսելով. «Ցեղախումբէ մը՝ աշխարհակալ պետութիւն մը ստեղծեցինք»:

Մենք ալ կ'ըսենք որ դուք, 11-րդ դարուն, Միջին Ասիայէն եկած վայրագ եւ արիւնարբու ցեղախումբ մ'ըլլալով, մտաք Անաթոլիոյ հողերը... բայց մինչեւ այսօր, կրկին այդ նոյն վայրագ եւ արիւնարբու ցեղախումբը մնացիք:

Երբեք իսկական պետութիւն մը չեղաք... եւ չէք կրնար ըլլալ:

Որովհետեւ այսօր [իբր թէ] Թուրքիա ըսուած այդ հողերը՝ ձեր Մայր Հայրենիքը չեն: Դուք այդ հողերուն վրայ օտարներ էք...:

Աշխարհակալ ցեղախումբ մը ըլլալով՝ մինչեւ Վիեննայի դռները յստաջացաք: Եւ քանի մը դար այդ հողերուն տիրութիւն ըրիք:

Եւ մինչեւ Վիեննա՝ այդ հողերուն անունը կը կոչուէր... «Օսմանեան Կայսրութիւն»:

Այսինքն [իբր թէ] Թուրքիա...:

...Բայց քանի մը դար յետոյ, նահանջել սկսաք...: Եւ ի վերջոյ, ձեր ձեռքին մնաց միայն Անաթոլիան:

Եւ 1915 թուին Անաթոլիոյ բնիկ ժողովուրդները եղող հայերն ու յոյները մաքրագործել սկսաք:

1920-ին ալ Իթթիհատականներուն շարունակութիւնը եղող եւ «Kuva-yi Milliyet» (Ազգային Ուժեր) կոչուող Մուսթաֆա Քեմալի ցեղախումբը՝ միջազգային գաղտնի ուժերուն թիկունքով, գողցուած Անաթոլիոյ հողերուն վրայ [իբր թէ] Թուրքիա մը կազմեց:

Եւ մինչեւ այսօր ալ, կրկին Միջազգային գաղտնի ուժերուն թիկունքով, այս Մուսթաֆա Քեմալին ցեղախումբը [իբր թէ] Թուրքիոյ գոյութիւնը կը շարունակէ...:

**

Այս զարհուրելի իրականութիւնը շատ հեռու չէ: Քանի մը ամիս առաջ ձեր Պաշտպանութեան նախարարը բացայայտօրէն խոստովանեցաւ. «Եթէ Հայերը եւ Յոյները չմաքրագործէինք՝ այսօրուան Թուրքիան չէինք կրնար մէջտեղ բերել»:

ՅՈՎՐԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ ԳՐԻՉԵՆ ԵՐԿՈՒ ՍԼԱՔ...

ԹՈՒՐՔԻՈՅ ԿՐՕՆԱՄՈԼ ՎԱՐՉԱՊԵՏ ԹԱՅՅԻՓ ԷՐՏՈՂԱՆԻՆ ԲԱՑ ՆԱՄԱԿ.— ԴՈՒՆ ՀԱՅԵՐԸ ԱՅՆՔ ԱՆ ՏԻՄԱՐ ԵՒ ԿՈՅՐ ԿԸ ԿԱՐԾԵ՞Ս

Վերջին օրերուն շտապով Ս'ոսկուա գացած էիր՝ Վրաստանը զինելով Օսթիայի վերջին ողբերգութեան առաջին պատասխանատուն Թուրքիան ըլլալուն՝ Ռուսերուն հակադէտութենէն վախցար, եւ Ս'ետվետելը հանդարտեցնելու համար Ս'ոսկուա գացիր:

...Եւ վերադառնալէ յետոյ, 15 Օգոստոս 2008-ին Պոտրումի մէջ, մամլոյ հաւաքոյթի մը ընթացքին, թրքական նոր ծրագիր մը առաջարկեցիր:

Աւելի ճիշդ՝ ծրագիր չէ, այլ նոր թրքական ծուղակ մը՝ [իբր թէ] յաղաղութեան մէջ ապրելու համար, Թուրքիոյ հետ դիւանագիտական կապեր չունեցող Հայաստանը Վրացիներէն, Ազերիներէն եւ Թուրքերէն կազմուած միութեան մը մէջ առնել առաջարկեցիր:

Դուն, հայերը, այնքան տխմար եւ կոյր կը կարծե՞ս:

1918-ին հայերը, Ռուսիայէն անջատելու համար՝ Ազատ Անկախ Հայաստան մը ստեղծեցիք:

Եւ 1920-ին ալ այս առիթէն օգտուելով, Քազիմ Քարապէքիի Փաշա կոչուած դահիճը, Ռուսերէն բաժնուելով մինակ մնացած Հայերուն վերջին հայրենի հողը եղող Հայաստանի վրայ յարձակեցաւ:

Եւ հայերը 1915-ին եղածին նման, Ք. Քարապէքիի աւազակներուն կողմէ, բոլորն ալ, սուրէ պիտի անցունէին:

Փա՛րք Աստուծոյ, որ Սովետական բանակները՝ հայերուն օգնութեան հասան:

Եւ թուրք ցեղասպանները ստիպուեցան նահանջել...:

«Պատմութիւնը՝ կրկնութիւն է», կ'ըսեն:

Թայյիփի Էդրտողան՝ 1918-ի թրքական ծուղակը այսօր կրկին հայերուն «կլլեցնե՞լ» կ'ուզես:

Բնական է՝ վերջին շրջաններուն Հայաստանի նախագահ Սերժ Սարգիսեանէն՝ Ապտիլլա Կիլը հայ-թուրք ֆութպոլի խաղերը դիտելու համար Հայաստան հրաիրելէն եւ թուրքերուն հետ առանց նախապայմանի բանակցելու առաջարկէն օգտուեցար՝ հայերուն նոր թրքական ծրագիրը ներկայացնելու համար:

Այսօրուան Հայաստանի վարիչները իբր դրացի երկիր թուրքերուն հետ յաղաղութեան մթնոլորտի մէջ ապրելու համար՝ ձեզի այս առաջարկներ կ'ընեն:

Բայց հայերը ո՛չ մէկ ատեն, Ռուսերէն անջատուելով, Վրացիներէն, Ազերիներէն եւ Թուրքերէն կազմուած միութեան մը մէջ կը մտնեն:

Հայերը շատ լաւ գիտեն թէ՝ «Հօտէն բաժնուող ոչխարը՝ գայլերուն ձեռքը կ'իյնայ»:

1920-ի Քազիմ Քարապէքիի պատճառած ողբերգութիւնը հայերը երբեք չեն կրնար մոռնալ:

Եւ դեռ երէկ, 16 Օգոստոս 2008-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգիսեանը Վրաստանի տագնապի առնչութեամբ Հայաստանի կեցուածքը շատ յստակօրէն բացայայտեց՝ «Ռուսիան մեր Ռուզմագիտական Դաշնակիցն է», ըսաւ:

...Եւ հայերը՝ թշնամիներէն շրջապատուած, այս շատ վտանգաւոր կացութենէն փրկուելու համար, իբր Հայաստանի Պետութիւն՝ ժամ առաջ, Ռուսական Դաշնութեանը հետ միանալու ստիպուած են:

ՕՍՏՈՒՆԿ

ԲԱՑԱՌԻԿ 1 ՅՈՒՆՈՒԱՐ 2010

Ան հաւա՛ւքն ունէր Մասիս լեռան
Բաջերու օրրա՛ն, գիոց գերեզմա՛ն,
Ինք ծե՛ր, սարը ծե՛ր...: Հոն դրկեց աղան.
«Գնա՛, հարցո՛ւր սարին, թերեւ յոգնեցան,
Մեծե՛մ դեռ շրթան մեր Մարկոթեան...»:
Տղան երգուրնցար. «Սա՛ր, ջանիդ դուրպան»:
Ու գնա՛ց, Նոյի աղաւնին էր ան...:

ՌՈՒԲԵՆ ՍԵԻՍԿ 1885 - 1915




Ծննդեան
125 - Ամեակ



1817 - 1900

Noah's descending from Mount ARARAT...
by: Hovhanness (Ivan) Ayyazovskii, 1889.
Oil-painting, 129x218, cm.





ԾՆՆԴԵԱՆ 125-ԱՄԵԱԿ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ - ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ

ԹՈՒՐՔԵՐԸ ՇԱՏ ԱՒԵԼԻ ԼԱՒ ՀԱՍԿՑԱԾ ԷԻՆ ԱՐԺԷՔԸ

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
(ՎՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ)

24 Ապրիլ 1915 թ.ի օրը, թուրքերուն ձերբակալած հայ մտաւորականներուն մէջ Ռուբէն Սեւակը չկար, ինչպէս որ Գրիգոր Զօհրապն ու Վարդգէսն ալ չձերբակալեցին այդ օր:

Ռուբէն Սեւակի, Զօհրապի եւ Վարդգէսի ձերբակալումը, շատ մեծ հակազդեցութիւն կրնար ստեղծել օտարներուն մօտ:

Այնպէս որ թուրքերը՝ Զօհրապի եւ Վարդգէսի ձերբակալութիւնը, աւելի ետքի ձգեցին. սպասեցին, որ 24 Ապրիլ 1915 թ.ի արձագանգներուն տարողութիւնը չափեն:

Ամերիկան կրնար հակազդել, օրինակի համար, հակառակ որ ամերիկեան դեսպանին՝ հրեայ Morgenthau-ին իրենց մարդը ըլլալը գիտէին, բայց, նորէն ալ, վախ մ'ունէին Ամերիկայէն. եւ, այդ պատճառաւ, զգոյշ էին:

Եւ հրեայ Morgenthau-ն իր պաշտօնը կատարեց: Ոչ մէկ ազդեցիկ միջամտութիւն եկաւ Ամերիկայի կողմէ՝ 24 Ապրիլ 1915 թ.ի Եղեռնին արգելք ըլլալու համար:

Նոյն մտահոգութիւններով է, որ թուրքերը Ռուբէն Սեւակը 24 Ապրիլ 1915 թ.ի օրը չձերբակալեցին: Ռուբէն Սեւակ 24 Ապրիլ 1915 թ.ին, թրքական բանակին մէջ կը պաշտօնավարէր, բժիշկ հարիւրապետի աստիճանով:

Ռուբէն Սեւակի սպայ հարիւրապետ ըլլալը թուրքերուն մտածել կու տար: Այս առթիւ կ'ուզենք մատնանշել, որ Ռուբէն Սեւակ



ԾՆՆԴԵԱՆ 125-ԱՄԵԱԿ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ - ՀԱՅՈՑ ԾԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ

ԹՈՒՐՔԵՐԸ ՇԱՏ ԱՒԵԼԻ ԼԱՒ ՀԱՍԿՑԱԾ ԷԻՆ ԱՐԺԷՔԸ

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
(ՎՐԷԺ ՌՈՒԲԷՆՅԱՆ)

միակ հայ հարիրապետ – բժիշկ – սպան էր, գոր սպաննեցին թուրքերը:

Յաւելուած՝ Ռուբէն Սեւակի կինը գերմանուհի էր, ազդեցիկ բրուսակաւ գիւնուորակաւ ընտանիքի մը դուստրը: Թուրքերը չէին գիտեր, թէ Ռուբէն Սեւակի գերմանացի կնոջ ընտանիքը ի՞նչ ազդեցութիւն կրնար գործել. եւ թուրքերը վախցաւ, որ Ռուբէն Սեւակի ձերբակալումով, իրենց 24 Ապրիլ 1915 թ.ի ամբողջ ծրագիրը կրնար խանգարուիլ. այս պատճառաւ է, որ ձերբակալութիւնը աւելի ետքի ձգեցին:

Եւ հոս պիտի նշենք, Ռուբէն Սեւակի անձնագոհութեան եւ հայրենասիրակաւ ոգիին բարձրութիւնը ապացուցանող ու շատ քիչերուն ծանօթ վկայութիւն մը:

Ռուբէն Սեւակի ընկերներէն, Եղեռնէն վերապրող Չիթունիի վկայութիւնն է ա՛ն:

24 Ապրիլ 1915 թ.ին յաջորդող սեւ օրերն են: Չիթունի, Պոլսոյ կեդրոնի թաղամասերէն *Պահչէքաքի*-ի անկիւնը կը հանդիպի Ռուբէն Սեւակի, եւ Ռուբէն Սեւակ Չիթունիին սա շատ պատմակաւ խօսքը կ'ընէ. «Մեզի ամօթ չէ՞, որ մենք դեռ հոս ենք»:

Քանի մը շաբաթ ետք, Ռուբէն Սեւակ կը ձերբակալուի եւ կ'աքսորուի Չանկըրը, իր մտաւորակաւ ընկերներուն՝ Դանիէլ Վարուժանի եւ Տիրան Քելէկեանի մօտ:



ԾՆՆԴԵԱՆ 125-ԱՄԵԱԿ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ - ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ

ԹՈՒՐԹԵՐԸ ՇԱՏ ԱՒԵԼԻ ԼԱՒ ՀԱՍԿՅԱԾ ԷԻՆ ԱՐԺԷՔԸ

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
(ՎՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ)





ԾՆՆԴԵԱՆ 125-ԱՄԵԱԿ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ - ՀԱՅՈՑ ԾԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ

ԹՈՒՐԹԵՐԸ ՇԱՏ ԱՒԵԼԻ ԼԱՒ ՀԱՍԿՑԱԾ ԷԻՆ ԱՐԺԷՔԸ

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
(ՎՐԵԺ ՌՈՒԲԷՆՆԵԱՆ)

Եւ Չանկըրըի մէջ է, որ կը սկսի եւ երկու ամիս յետոյ՝ 26 Օգոստոս 1915 թ.ին կ'աւարտի Ռուբէն Սեւակի արքայի հերոսական կեանքը, Դանիէլ Վարուժանի հետ մորթատուելով, նահատակութեամբ:

Ռուբէն Սեւակի կեանքին վերջին օրերը, հայկական դիցազներգութեան ամենէն տխուր էջերէն են:

Այսօր, Ռուբէն Սեւակ մեր հոգիներուն մէջ կ'ապրի, իր գլխուն կրելով հերոս նահատակի դափնին:

Եւ այս հերոս նահատակի դափնին, կը լուսաւորէ մեր հոգիները եւ ցոյց կու տայ մեզի անձնագրհոյութեան եւ հայրենասիրութեան լուսաւոր ուղին:



Ռուբէն Սեւակ նահատակուեցաւ թուրքերուն կողմէ՝ 26 Օգոստոս 1915 թ.ին:

1985-ին, Ռուբէն Սեւակի ծննդեան 100-ամեակին առթիւ մեր հրատարակած «Ռուբէն Սեւակ Եւ Փրցնելիք Ուղեղներ» գիրքին մէջ ալ, հայ գրող եւ գրականագէտներուն Ռուբէն Սեւակի հանդէպ ունեցած անհրաւ կեցուածքին մասին անելի սպառնիչ ձեւով արտայայտուած էինք:

Երբեմն կը մտածենք, թէ ինչո՞ւ, մենք՝ հայերս, ընդհանուր առմամբ, մեր արժէքները



ԾՆՆԴԵԱՆ 125-ԱՄԵԱԿ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ - ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ

ԹՈՒՐՔԵՐԸ ՇԱՏ ԱՒԵԼԻ ԼԱՒ ՀԱՍԿՑԱԾ ԷԻՆ ԱՐԺԷՔԸ

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
(ՎՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ)

գնահատել չենք գիտեր:

Ինչո՞ւ, իրարու հանդէպ, նախանձէ մղուած կեցուածք մը ունինք:

Ինչո՞ւ միաբան չենք ընդհանրապէս:

Արդեօ՞ք մեր ազգային նկարագիրն է սահկա:

Եւ ցաւով ըսենք, որ մեր ազգային անյաջողութիւններուն պատճառը մենք գտած ենք մեր արժէքները չգնահատելուն, մեր անմիաբանութեան եւ նախանձէ դրդուելով իրարու հանդէպ հակադիր ու նսեմացուցիչ կեցուածք ունենալուն մէջ:

Բայց, ուրիշ ազգ մը կայ, որ շատ ատի լաւ հասկցած էր Ռուրէն Սեւակին արժէքը:

Ո՞վ էր. գիտե՞ք... Թուրքերը:

Այո՛... Թուրքերը:

Մեր «Ռուրէն Սեւակ Եւ Փրցուելիք Ուղեղներ» գիրքին մէջ, հայերուն շատ ծանօթ, գերմանացի պատուելի Johannes Lepsius-ի 1919-ին հրատարակած «DEUTSCHLAND UND ARMENIEN 1914-1918 – SAMMLUNG DIPLOMATISCHER AKTENSTÜCKE» գիրքէն շատ կարեւոր մէկ վաւերաթուղթ մը հրատարակած էինք:

Johannes Lepsius-ի գիրքին 163-րդ էջին մէջի այս վաւերագիրը, Ռուրէն Սեւակի նահատակութեան վերաբերեալ, բացառիկ կարեւորութիւն ունեցող փաստաթուղթ մըն էր:

5-10-1915 թ.ին Պոլսոյ գերմանական դեսպանատունէն

Պերլին՝ Գերմանիոյ վարչապետին՝ ուղղուած այս նամակի հեղինակը, գերմանական դեսպանատան պատասխանատուներէն՝ Baron K. Von Neurath-ն էր, որ յետագային, Adolf Hitler-ի կտուաւարութեան կարեւոր նախարարներէն մէկը եղած էր եւ 1945-ին Նիւրեմպերկի մէջ, իբր պատերազմական ռմբագործ դատապարտուեցաւ:

Հայկական Տեղասպանութեան համար բացառիկ կարեւորութիւն ունեցող այս նամակին մէջ, Baron K. Von Neurath, Ռուբէն Սեւակի ձերբակալութենէն մինչեւ անոր նահատակութիւնը եղած եղելութիւններուն շուրջ, մանրամասնութիւններ կու տայ:

Բայց ամէնէն կարեւոր կէտը Baron K. Von Neurath-ի նամակին, հետեւեալն է.-

Ռուբէն Սեւակի կնոջ կողմէ իր ամուսինը ազատելու համար ըրած դիմումներուն կապակցութեամբ, թուրք իշխանութիւնները գերմանացիներուն տուած իրենց պատասխանին մէջ, Ռուբէն Սեւակի ազատ արձակումը կը մերժեն սա պատճառաբանութեամբ. «Ռուբէն Սեւակ կը նկատուի իբրեւ մէկը այն մտաւորականներէն, որուն զանգուածներու վրայ ունեցած ազդեցութենէն կը վախցուի»:

Այս նամակը կը հրատարակենք Փրոֆ. Վահագն Տատրեանի կողմէ գերմաներէնէ հայերէնի թարգմանութեամբ, իբր բացառիկ մէկ վաւերագիր Հայկական Տեղասպանութեան պատմութեան:

ԱՌ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

ԱՌ 1521 (Մուտքի թիւ՝

նախարարութեան)

111ը. (Ելքի թիւ՝ դեսպանատան)

Գերման Կայսերական Դեսպանատան

Բերա, 5 Հոկտ. 1915



Տէր և Տիկին Տոթթ. Առփէն և Եանն Սեանկ:

Բժիշկ Ռուբեն Չիլինկիրեան, որ այստեղի հայ շրջանակներու մէջ ծանօթ անձնատրութիւն մըն է, ուրիշ շատ մը հայերու հետ Ապրիլ 24-ին ձերբակալուեցաւ Անատոլու սքստրելու նպատակաւ: Նախապէս որոշուած էր, որ ան Անքարայի մօտ՝ Այաշ սքստրուի, տեղ մը, ուր կը պահուին եւ մասամբ ոստիկանական հսկողութեան տակ կը գտնուին ատլի ծանր կերպով մեղադրուողները: Դեսպանատան միջամտութեան շնորհիւ, ան Չանկըրըի (Անքարա) մէջ արգելակուեցաւ, ուր արգելակեալները կրնան ազատ կերպով ման գալ եւ իրենց արհեստները կիրարկել:

Տիկին Տոքթ. Չիլինկիրեան եւ մայրը՝ Տիկին Աբել, այնուհետեւ աշխատեցան ենթակայի վերադարձը՝ եւ ապա իր Գերմանիա հաստատուիլը ապահովել: Թուրք կառավարական պաշտօնեաները երկու առաջարկներն ալ մերժեցին, սակայն այն առարկութեամբ որ – ինչպէս կը հետեւի խնդրոյ առարկայ պաշտօնեաներու արտայայտութիւններէն – Տոքթ. Չիլինկիրեան կը նկատուի իբրեւ մէկը այն մտաւորականներէն, որուն զանգուածներու վրայ ունեցած ազդեցութենէն կը վախցուի: Տիկին Աբել դեսպանատան մէջ պնդեց, որ ասպիտակ պայմաններու տակ Գերմանիա ճամբորդելու արտօնութիւն կրնար տրուիլ Տոքթօրին: Երբ կայսերական դեսպանատունէն պաշտօնեայ մը Պետրիի հարցուց սակայն, թէ իրա՞ւ էր ասիկա, ան բացարձակ կերպով հերքեց այդպիսի արտայայտութիւն մը ունեցած ըլլալը:

Վերջապէս՝ երկու տիկինները փորձ մըն ալ ըրին Տոքթ. Չիլինկիրեանի Անքարա մնալու արտօնութիւն ձեռք ձգելու ուղղութեամբ՝ այն պահուն, երբ իրմէ Օգոստոս 26-ին, հեռագիր մը ստացան, որ կը ծանուցէր, թէ զինքը նոյն օրը Այաշ պիտի փոխադրէին:

Դեսպանատան գրատր դիմումին վրայ, ներքին գործոց նախարարութիւնը հեռագիրով հրահանգ տուաւ, որ վերոյիշեալը Չանկըրըի մէջ թողուն եւ եթէ ճամբայ հանուած է՝ զինքը հող վերադարձնեն:

Այս հեռագրին ի պատասխան՝ Օգոստոս 30-ին Չանկըրի կառավարիչը կը ծանուցէր, թէ Տոքթ. Չիլինկիրեանը ամսոյն 26-ին Չանկըրէն մեկնած, Գալէճիքի մօտերը ասպատակներու կողմէ յարձակումի ենթարկուած եւ սպաննուած էր, եւ թէ՛ 12 ասպատակներէն 4-ը իշխանութիւններու կողմէ ձերբակալուած էր (*):

Ասոր վրայ, կայսերական դեսպանատան ընծայած օգնութեամբ, որուն համար կայսերական դեսպանատունը ընդհանուր հիւպատոսարանի հետ շփման մէջ մտած էր, Տիկին Չիլինկիրեանը իր մօր՝ Տիկին Աբելի եւ երկու զաւակներուն հետ նախորդ ամսու 16-ին, առանց թուրք իշխանութիւններէն ներութիւն կրելու, Գերմանիա մեկնեցան:

Դեսպանատան դիմումնին վրայ ներքին գործոց նախարարութիւնը հրահանգ ուղարկեց ստուգելու համար մեռեալի մօտ գտնուած արժեքատր իրերը եւ առարկաները, եւ այրիին վերադարձնելու նպատակաւ «եռս որկելու» ինչ որ կարելի կ'ըլլար տակաւ ձեռք ձգել:

Երբ Տիկին Աբել իր ամուսնոյն որկած տեղեկութիւններուն մէջ կ'ակնարկէ որ դեսպանատունը «արոշ չափով» - ըստ իր ըմբռնումին - ոչ գոհացուցիչ կերպով օգնութիւն ընծայած է իրեն եւ դստեր, ան՝ աննկատ կը թողու այն պարագան, որ դեսպա-նատունը իր դստեր եւ փեսային համար միայն անպաշտօն սահմանափակումներով կրնար դիմումներ ընել թուրք

կառավարութեան մօտ, քանի որ երկուքն ալ թրքահպատակ էին: Այս ուղղութեամբ դեսպանատունը ոչ մէկ բան զանց առած է եւ մինչեւ իրենց մեկնումը, Տիկին Աբելու իր դուստրը, իրենց բոլոր գործառնութեանց մէջ թէ՛ խորհուրդով եւ թէ՛ գործով օգնութիւն ստացած են:

Փոխանորդաբար՝ Ֆրայհէր ՖՕՆ
ՆՈՅՐԱԹ

(*) Ֆրայհէր Ֆօն Նոյրաթի նամակ-տեղեկագիրին մինչեւ այս կէտը եղող մասը տեղ գտած է Լեփսիուսի գիրքին մէջ, իսկ անկէ անդին երկարող մասը, ուր Տիկին Չիլինկիրեան կ'ամբաստանէ գերման իշխանութիւնները, որ պէտք եղած միջամտութիւնը չեն ըրած (չեն ուզած ընել) իր ամուսինը ազատելու համար՝ պահուած է ծածուկ Lepsius-ի կողմէ: Չէ հրատարակուած:

Baron K. Von Neurath-ի ձեռամբ գրուած այս նամակին մէջ, թուրք կառավարութեան Ռուբէն Սեւակի մասին ըսածները, անժխտելի ապացոյց կը կազմեն, որ թուրքերը Ռուբէն Սեւակի արժէքը հայերէն շա՛տ անելի լաւ հասկցած էին:

Այն «մեծաարտի» թարգմանիչը եւ նմանները, որոնք մեզ ամբաստանեցին ըսելով, որ իբր թէ մենք քնքուշ երգերու բանաստեղծ Ռուբէն Սեւակը Յեղափոխական առաջնորդի մը վերածած ենք, թրքական այս հաստատումով շտուաչուն ապտակ մը ստացած պէտք է ըլլան՝ իրենց պատճառած վիրաւորանքին համար:



Ծարունակենք մեր ամբաստանութիւնները՝ Ռուբէն Սեւակի դէմ կատարուած անիրաւութիւններուն կասկակցութեամբ:

1.- Johannes Lepsius-ի 1919-ին հրատարակած վաւերաթուղթերու գիրքին մէջի Ռուբէն Սեւակի վերաբերեալ

նամակին մասին, 1919-էն մինչեւ 1985, ոչ մէկ հայ գրող, ոչ մէկ հայ պատմագէտ, ոչ մէկ հայ առաջնորդ չէ արտայայտուած:

2.- Johannes Lepsius-ի վաւերաթուղթերու գիրքին մէջի Ռուբէն Սեւակի վերաբերեալ նամակին մեր կողմէ 1985-ին հրատարակուելէն ետքն ալ, ոչ մէկ հայ գրող, ոչ մէկ հայ պատմագէտ, ոչ մէկ հայ առաջնորդ այս բացառիկ վաւերագրին մասին ոչ մէկ տող գրած է, ոչ մէկ ձեռով արտայայտուած է: Ի բացառեալ Ալեքսանդր Թովիչեանէն, որ 5-7-1987-ին, Երեւանի հեռատեսիլէն կատարած ելոյթով, լայնօրէն արտայայտուեցաւ այս նամակին մասին:

3.- Եւ աւելին. Johannes Lepsius-ի գիրքին մէջ հրատարակուած գերմանական վաւերագրին Ռուբէն Սեւակի վերաբերեալ եւ մասին ամբողջութեամբ հրատարակուած չըլլալը, փաստերով ապացուցած էինք մեր գիրքին մէջ:

Այս նամակին ամբողջութեամբ հրատարակուած չըլլալուն պատճառը այն էր, որ նոյն նամակին մէջ, Ռուբէն Սեւակի գերմանացի կինը գերմանացիները կ'ամբաստանէր, որ իր ամուսինը չեն ուզած ազատել:

Հայկական Յեղասպանութեան մէջ գերման պատասխանատուութիւնն ու մեղսակցութիւնը մէջտեղ հանող այս կարեւոր փաստաթուղթին մասին ալ, 1985-էն մինչեւ այսօր, ոչ մէկ հայ գրող, ոչ մէկ հայ պատմագէտ, ոչ մէկ հայ առաջնորդ տող մը չէ գրած, որեւէ ձեռով չէ արտայայտուած անոր շուրջ:

Արդեօք մեր գրողներուն, մեր պատմագէտներուն, մեր առաջնորդներուն, Հայկական Յեղասպանութեան մէջ թրքական պատասխանատուութենէն ալ անդին՝ գերմանական եւ մա՛նաւանդ Հրեայ-Սիոնիստ-Ֆարմատոնական պատասխանատուութեան ակունքները տանող, 1985-ին հրատարակած մեր գիրքին մէջի փաստերով եւ ամբաստանութիւններով չզբաղելուն պատճառը իրենց սօցիտութի՞ւնն է, թե՞ իրենց վախկոտութիւնը:

Ռուբէն Սեւակի դէմ կատարուած այս անիրաւութիւններուն համար, մենք մէ՛կ խօսք ունինք ըսելիք:

Ռուբէն Սեւակի ըսածին պէս՝

«Փրցնել եւ նետել պէտք է այս կարգի առաջնորդներուն ուղեղները»:



Եւ հիմա կ'ուզենք՝ իբր վերջաբան, լոյս ընծայել բացառիկ վաւերագիր մը, որ՝ կը կարծենք, թէ մինչեւ հիմա ո՛չ մէկուն կողմէ հրատարակուած է:

Այս վաւերագիրը՝ Ռուբէն Սեւակին իբր Հայ, իբր Յեղափոխական բանաստեղծ, իբր Յեղափոխական առաջնորդ իր մեծութիւնը փաստող թրքական վաւերագիր մըն է, որ մեզի տրամադրուեցաւ Ալեքսանդր Թոփչեանի միջոցաւ, Փարիզի Հայկական Վաւերաթուղթերու Կեդրոն-ի (G.R.D.A.) տնօրէն ժերար Պետրոսեանի կողմէ:

Թուրքերը 24 Ապրիլ 1915 թ.ին, հայերուն դէմ կատարած ցեղասպանութեան հետեւանքէն մտահոգ՝ վրդոված, պաշտպանողական գիրք մը հրատարակած են: 1916 թ.ին՝ նախ թրքերէն լեզուով, եւ 1917 թ.ին՝ ֆրանսերէն:

Փաստաթուղթերու գիրք մը՝ ապացուցելու համար, որ հայերը, իբր թէ երկար ժամանակներէ ի վեր, Յեղափոխութեան կը պատրաստուէին:

562 էջնոց այս մեծածաւալ գիրքին մէջ, հայ կուսակցութիւններուն, հայ կազմակերպութիւններուն եւ հայ եկեղեցիին իբր թէ յեղափոխա-դաւադրական միտումներուն գործադրութեան նախապատրաստութեանց պատմութիւնը կը տրուի մինչեւ յետին մանրամասնութիւններով, պատճէններով ու պատկերներով:

Նմանապէս այնտեղ ներկայացուած են հայ ֆետայիներու պատկերներ՝ իրենց զէնքերով: Այնտեղ կը տեսնէք, իբր թէ հայոց կողմէ մեռցուած թուրքերու դիակներու պատկերներ. իբր թէ

հայոց կողմէ քանդուած մզկիթներու նկարներ: Եւ դեռ՝ հայկական վաւերաթուղթեր, հայկական յեղափոխական քայլերգներ, եւ, վերջապէս, մէկ խօսքով՝ 562 էջ լեցուն գրութիւն, փաստելու համար, որ հայերն են, որ թուրքեր ջարդած են, եւ ոչ թէ թուրքերը ջարդած են հայերը:

Եւ այս ամբողջ 562 էջնոց հատորին մէջ, մէկ հատիկ հայերէն բանաստեղծութիւն մը դրուած է, իբր նմոյշ՝ «շատ վտանգաւոր» ու «դաւադրամիտ» բանաստեղծութեան մը, որ հայ երիտասարդութիւնը յեղափոխութեան կը մղէ:

Այս հայերէն բանաստեղծութիւնը, հայոց կողմէ փառաբանուած բանաստեղծներու, ինչպէս՝ Դանիէլ Վարուժանի, Սիւսանթոյի եւ ասոնց նման բանաստեղծներունը չէ, այլ՝ հայոց կողմէ արժէքը բաւարար չգնահատուած՝ հերոս նահատակ բանաստեղծ Ռուբէն Սեւակի «Վերջին Օրօր» բանաստեղծութիւնն է (սոյն քերթուածը տեսնել «Բացառիկ»-իս էջ 28 վրայ. այստեղ կու տանք բանաստեղծութեան ֆրանսերէնի թարգմանութիւնը. «Ծ.») որ ուղղակի վերցուած է թրքական հրատարակութենէն:

BERCEUSE

“Dors mon enfant, dors,
 Et n'entends pas gémir ton pauvre père blessé.
 Un déluge de sang a inondé ces lieux bénis,
 Mais garde-toi bien de les quitter.
 Aime toujours ton pays
 Et adore ta patrie
 Mais n'y vis jamais en esclave;
 Commande, domines!
 Si je ne suis pas aussi
 Tombée inanimée à côté de ton père,
 C'était, comme la louve de Rome,
 Pour élever un nouveau Romulus.
 Mes bras ont été liés, mes pieds ont été hachés,
 Et à la fin hélas ! on me coupa les seins !
 Le lait que tu as sucé n'était que du poison,
 Suce maintenant le sang de ma plaie, ô mon unique enfant!
 Je meurs ! ... que l'Arménie soit ta mère;
 Que cette épée brisée,
 Sentant encore le sang tout chaud de ton père,
 Soit pour toi mon souvenir !

(Extrait des “Massacres d'Arménie”)

Եւ հիմա, կրնանք պոռալ, մեր ձայնին ամբողջ ուժգնութեամբ, բոլոր անոնց երեսին, որ Ռուբէն Սեւակին համար «Յեղափոխական բանաստեղծ չէ, Յեղափոխական առաջնորդ չէ» ըսած էին։-

ԹՈՒՐԲԵՐԸ ԶԵՆԷ ԾԱՏ ԱԻԵԼԻ ԼԱԻ ՀԱՍԿՑԱԾ ԷԻՆ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԸ՝ ԻՐ ԹԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ, ԻՐ ԹԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԾ ԱՐԺԷՔԸ ԵՒ ԹՈՒՐԲԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԾ ՎՏԱՆԳԸ:

Յ. Չ.

Նիս - Ֆրանսա
(Հատուածներ)

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ ՄԵՐ ԿԱՏԱՐԱԾ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԵՆԷՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՅԻՍ 2009-ԻՆ,

ԵՐԵՒԱՆԻ ՀՐԱԶԵԱՅ ԱՃԱՌԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ ՄԵՐ ԿԱՏԱՐԱԾ ԵԼՈՅԹԻՆ ՎԵՐՋԱԻՈՐՈՒԹԵԱՆ, ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ ՄԸ ՄԵՋԻ ԱՆՍՊԱՍԵԼԻ ՀԱՐՑՈՒՄ ՄԸ ՈՒՂՂԵՑ՝
«Ի՞ՆՉ ԿԸ ՄՏԱԾԷՔ ԹՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ԲԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ»:

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՀԵՏԵԻԵԱԼԸ ԵՂԱԻ.-

ՀԱՅ ԱԶԳԸ,

ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ՀԵՏ ԻՐ ՀԱՐՑԵՐԸ ԶԷ ԼՈՒԾԱԾ:
ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ՀԵՏ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԻՃԱԿԻ ՄԷՋ Է:
ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԷՋ, ՍԱՀՄԱՆԻ ԲԱՑՄԱՆԸ ՄԱՍԻՆ ԽՕՍԻԼԸ ԱՆՀԵԹԵԹ Է:

ՀԵՏԵԻԵԱԼ ՕՐԸ, ՌՈՒԲԷՆ ՍԵԻԱԿԻ ԱՆՈՒԱՆ,
ԳՊՐՈՑԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ,
ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐՈՒՆ ՀԵՏ ՄԵՐ ԿԱՏԱՐԱԾ ՄՏԵՐՄԻԿ
ԽՕՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ,
Ի ՄԻՋԻ ԱՅԼՈՑ ՍԱՊԷՍ ԸՍԻՆՔ՝

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՅՍՕՐ ՇԱՏ ՄԵԾ ՎՏԱՆԳԻ ՄԸ ԵՆԹԱՐԿՈՒԱԾ Է՝ ԱՅՍ ՎՏԱՆԳԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒՐՈՊԱԿԱՆԱՑՄԱՆ ՎՏԱՆԳՆ Է:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ԿՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]

ԶՐՈՅՑ

«ՀՐԱԶԵԱՅ ԱՃԱՌԵԱՆ»

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՀԵՏ

ՎԼԱՏԻՄԻՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ.— Ուզում եմ բանաւոր ներկայացնել Յովհաննէս Զիլիկկիրեանը որ մեր Սփիւռքի նշանաւոր ազգային, գրական և հասարակական գործիչ է, պատմաբան է: Նրա աչքից չի վրիպում մեր ժողովրդի ոչ մի խնդիր: Նա պատրաստ արձագանգում է մեր ժողովուրդի բշնամիների ամէն մի սաղրիչ վերագրումի: Նա միշտ պատրաստ է հակահարուած տալու բոլոր չարախօսութիւններին: Նա ուժգին հակադարձում է հայ ժողովուրդի դէմ գործուած ցեղասպանութիւնը ուրացողներին:

Երեւի, թէ մեր ակադեմիայի գործող երկու ինստիտուտները ես չեմ վարանում դա ասել - հայագիտութեան և պատմութեան ինստիտուտները չեն անում այն գործը, ինչ որ՝ միայնակ անում է Ընկ. Յովհաննէս Զիլիկկիրեանը:

Դուք պատկերացնո՞ւմ էք: Թուրքիայում ինչքան խոշոր լրագրեր են լոյս տեսնում, ինչքան գրքեր են լոյս ընծայւում, որտեղ ժխտում է հայոց ցեղասպանութիւնը: Ոչ միայն ժխտում է, այլե՛ւ աւելի հայերին են մեղադրում թէ՛ թուրքերը չեն ոչնչացրել հայերին, այլ՝ հակառակն է: Այս կարգի ամէն մի սաղրանքի նիշտ և ուժգին պատասխանելը յաղթանակ է: Ուզում եմ ողջունել նրան և իր հետ Պրն. Աւագ-եանին... և հիմա ես հանդիմով հրաւիրում

եմ Ընկ. Զիլիկկիրեանին որ իր խօսքը սաի ներկաներուն: Դուք եւս, եթէ ունէք հարցեր, յետոյ կը ներկայացնէք որ նա պատասխանի: Խնդրեմ...:

Յ. ԶԻԼԻԿԿԻՐԵԱՆ.— Այստեղ, բոլորիդ առջեւ խօսիլը մեծ հաճոյք է ինծի հա-

մար: Գիտեմ որ դուք, բոլորդ երիտասարդներ՝ շատ հարցեր ունիք... զժուար է կեանքը... և ուրեմն, եթէ կը փափաքիք... կ'ուզեմ Ռուբէն Սեւակի մասին արտայայտուիլ:

Ուրեմն՝ Ռուբէն Սեւակ 1909-ին շրջանաւարտ ըլլալէ յետոյ, Պոլիսէն [Ստամպուլէն], Կոստանդնուպոլիսէն կը մեկնի Լոզան, Զուիցերիա:



Այնտեղ՝ Զուլիցերիա, բժշկական համալսարանի ուսանող է: Տարի մը յետոյ, այդ ուսանողական շրջանի սկիզբէն, բժշկական համալսարանի ուսանող կը դառնայ և կապ կը հաստատէ գերմանացի աղջկայ մը հետ (Գերմանիոյ էրֆուրտ քաղաքէն) ուր Գեղարուեստի դպրոց կը յանախէ: Գերմանուհի մըն է: Եւ կը սիրահարին (բնական է) փոխադարձաբար: Եւ սիրահար զոյգը մէկ անձ կ'ըլլայ:

Հիմա, այս՝ մէկ կողմ ձգեմք: Ուրեմն երբ Սեւակի հայրը այս մասին կ'իմանայ՝ կը դադրեցնէ պրամական յատկացումը իր տղուն և զայն հետ կը կանչէ: Այստեղ պարագայ մը կայ որ ցաւալի է ինծի համար - զայն նշելը այստեղ - : Ռուբէն Սեւակի մասին հրատարակուած գիրքերու մէջ նշուած է, թէ՛ դրամական այս յատկացումը դադրեցուած է Ռէթէոս Պէրպլէրեանի (նշանաւոր Պէրպլէրեան վարժարանի հիմնադիր), Պէրպլէրեան և Ռ. Սեւակի հօր մահերով: Մինչդեռ Սեւակի հայրը այդ օրերուն չէ մահացած: Հայրը 1921-ին մահացած է, Պոլսոյ մէջ [շրջակայքը աւելի]: Ուրեմն՝ ծնողքը եղբուքեան իրագրեկ ըլլալով և դժգոհ՝ կ'ըսեն... Մենք այլեւս զուակ չունինք...» այսքան ծանր խօսքը: Եւ դժուարութեան կը մատնուի Ռուբէն Սեւակ: Դուք, բոլորդ, ուսանող էք, բոլորդ ասպրած էք կամ կ'ասպրիք այդ պայմանները: Եւ յաւելուած՝ ուրիշ պարագայ մը կայ... Ռ. Սեւակի կեանքի այդ շրջաններուն, նւթականի յատկացումին դադրիլը կը զուգահիշուի 1907-ի համաշխարհային տագնապին, նման՝ 1930-ի տագնապին, կամ՝ ինչպէս այսօր... և Ռ. Սեւակ մեծ դժուարութեան կը մատնուի, և այդ շրջանին ահուելի կը սառուալի և դժուար տարիներ կ'անցընէ:

Մինչ այդ՝ երկրորդ պարագայ մը՝ տխուր էջ մը աւելի՝ երբ որ Գերմանացի աղջկան հայրն ու մայրը դպրոցի տնօրէնին կամ տնօրէնուհիին ճամբով կը տեղեկանան, որ իրենց աղջիկը կը կենակցի Արեւելցի տղու մը հետ - հայ կամ թուրք՝ իրենց համար կարեւոր չէ այդ - անմիջապէս իրենց աղջիկը, Ռուբէն Սեւակին սիրահարը իրենց քաղաքը կը կանչեն: Եւ այդ օրէն կը սկսի մղձաւանջ մը երկու սիրահարներուն միջեւ: Սիրական զոյգին ասպրումներուն, անոնց սառուալանքին մասին, զայն նկարագրող նամականիւն կայ որ լոյս ընծայուած է Ալեքսանդր Թօփչեանի կողմէ: Բացառիկ թղթակցութիւն է ան երկկողմանի, սիրոյ արտայայտութիւններով զեղուն: Երիտասարդները աւելի կը հասկնան այս ըսածներս - և կը յանձնարարեմ որ կարդաք այդ նամակները - հոս՝ գրատուները կը վաճառուի այդ նամականիւն: Բայց Ռուբէն Սեւակի համար պարզ սէր մը չէր իր զգացածը: Պիտի չկրնամ ըսել որ իրաւունք ունէր, բայց գիտէր, որ սէրը օրէնք չունի: Բոլորդ ալ երիտասարդ էք՝ գիտէք, թէ ինչ ըսել կ'ուզեմ: Եւ հակառակ հօրը նւթական յատկացումին դադրեցման, հակառակ բոլոր յորդորներուն և թելադրանք-խրատներուն, Ռուբէն կը շարունակէ իր կապը նամակներով, և յետոյ կ'երթայ Ֆրանկֆուրթ Ամստըր և իր սիրուհիին ընտանիքին կը ներկայանայ և անոր ծնողքին կ'ըսէ... Ձեր դասեր հանդէպ ունեցածս հարեւանցի բան մը չէ. այլ՝ խոր կապ մըն է ունեցածս: Ձեմ ուզեր որ թոյլատրէք ինծի ամուսնանալ հիմա...» , բայց, կ'աւելցնէ... Արտօնեցէք ինծի որ ամուսնանամ ձեր դասեր հետ միայն այն ատեն, երբ բժշկական սիփլոմաս ունենամ»:

Եւ 1916-ին Ռուբէն Սեւակ կը ստանայ բժշկական տիտղոսը: Եւ ես ուրախութիւնը ունեցայ գտնելու Սեւակի բժշկական ւսումնասիրեան աւարտաճառի թեզը Լոզանի մատենադարանին մէջ: Մինչեւ հիւսիս կը պահուի այդ թեզը այնտեղ, գրոյկի ձեւով:

Հետաքրքրական պարագայ մը կայ: Ձե՞ որ Ռուբէն Սեւակ խօսք տուած էր իր սիրուհիին ծնողաց, որ մինչեւ բժշկական վկայական ստանալը՝ ամուսնութիւն պիտի չկնքէ- ուստի իր բժշկական թեզ-գրոյկին վրայ արձանագրած է ձօն մը որ կ'ըսէ, բնական է՝ ֆրանսերէնով.— Այս թեզը կը ձօնեմ իմ ընտանիքիս. իր ընտանիքը սիրականին հայրն ու մայրն են—Արմին Ապել-նեբուն: Եւ այս ձեւով Ռուբէն Սեւակի սիրուհիին հայրն ու մայրը կ'արտօնեն, որ իրենց դուստրը ամուսնութիւն կնքէ իր սիրած երիտասարդին հետ:

Այդ սիրավէպին մէջ ուրիշ պարագայ մը կայ, հետաքրքրական: Շա՛տ հետաքրքրական պարագայ մը. Ռուբէն Սեւակի սիրուհին որ Եաննի Ապել կը կոչուի. ուրիշ էյր մը ունէր: Ան ալ կ'ուսանէր ժընեւի մէջ և կը կենակցէր ուրիշ երիտասարդի մը հետ որ, նոյնպէս՝ գերմանացի չէր: Ատոր ալ հայրն ու մայրը կ'ընդդիմանան: Ձեռն ուզեր որ իրենց դուստրը ամուսնութիւն կնքէ օտար տղու մը հետ: Բայց դժբախտութիւն մը կը պատահի—տանց ամուսնանալու զաւակ մը կ'ունենայ քոյրը Ռ. Սեւակի ապագայ կնոջ: Այսինքն՝ ասօրինի չաւակ մը: Որով, երբ կը ներկայանայ Ռու-

բէն Սեւակի և Եաննի Ապելի ամուսնութեան խնդիրը. կը կարծեմ որ ծնողքը, որպէսզի երկուորդ դժբախտութիւն մը կանխեն՝ կ'ընդունին իրենց դստեր և Ռուբէն Սեւակի ամուսնութիւնը:

Կ'ուզեմ նշել որ այն երիտասարդը որ Ռ. Սեւակի կնոջ քոջ հետ կը կենակցէր՝ հրեայ մըն էր: Եւ այս հրեան յետոյ կ'անհետանայ: Եւ աղջիկ-մայր իր զաւակին հետ կը մնայ ինչպէս որ էր:

Ուրեմն, Ռուբէն Սեւակի կեանքը այսպէս՝ տրամաբանօրէն կը սկսի իր ուսանող եղած շրջանէն և կը շարունակուի մինչեւ իր նահատակութիւնը:

Եւ հիմա՝ պիտի չուզեմ երկարել խօսքս: Խօսիլը արծաթ է իսկ լոնըլ՝ ոսկի: Ես ճիշտապէս եմ որ շատ անգամ նայելուդի է լոնը կարգ մը պարագաներուն, քան խօսիլը: Հիմա պիտի խնդրեմ ձեռն, որ դուք, եթէ Ռուբէն Սեւակի մասին տեղեկութիւն ունիք՝ հարց տաք, որ պատասխանեմ: Խնդրեմ: Այսպիսով պիտի տեղեկանամ Ռուբէն Սեւակի մասին ձեր ունեցած ծանօթութեան չափանիշը: Եթէ կարելի է: Եթէ չէ՛ գիտեք... վնաս չունի:

Վ. Պետրոսեան.- Մեր ուսանողները քիչ մը անակնկալի եկան...:

Յ. Զիլինկիրեան.- Հիմա, ե՛ս հարց տամ ձեզի [ընդհատեալու համար] Ռ. Սեւակի ուսանողութեան շրջանի, Պոլսոյ կեանքի մասին թէ նահատակութեան շրջանի մասին:



Նահատակ ըլլալը գիտե՞ք:

Պատասխան.- 1915-ին, ելեռնի օրերին, Սիամանթոյի, Կոմիտասի, Դանիէլ Վարուժանի հետ քարկոծուելով Ռուսէն Սեւակ սպանուեց:

Յ.Զ.- Կոմիտաս չսպաննուեցաւ: Խեղաքար վիճակով վերադարձաւ Թուրքիա:

Ըսեմ նաեւ՝ որ Կոմիտաս հղած է մկրտութեան կնիքներ:

Քեան կնիքները Ռուսէնի գաւազին: Ռուսէն երկու գաւազ ունէր՝ Լեւոն ծնած էր Լոզան, իսկ Շամիրամը՝ Պոլիս: 1915-ի Յունիսին Կոմիտաս, հայ ուրիշ մտաւորականներու հետ կ'աֆտրուի դէպի Չանդըրը կոչուած սպանդանոցը: Բայց Կոմիտաս ծանօթ էր շատ մը թուրք երեւելիներու, որոնց միջամտութեամբ աֆտրէ կը վերադառնայ Պոլիս: Եւ այդ միջոցին Ռ. Սեւակ դեռ Պոլիս էր: Եւ Բանկալիսի եկեղեցիին մէջ մկրտութեան արարողութիւնը կը կատարուի և Կոմիտաս կ'ըլլայ կնիքաւոր Սեւակի սպաննուած Լեւոնի: Կոմիտաս վարդապետ Գէորգեան: Գիտե՞ք Կոմիտաս Վարդապետի ազգանունը: Ի՞նչ էր:

-Նրա անունը Կոմիտաս էր:

- Սողոմոնեան:

Յ.Զ.- Ո՞վ ըսաւ Սողոմոնեան. խնդրեմ... ոտքի ելլէ... ճիշդ է ըսածը... շնորհակալութիւն:

Բայց իր մկրտութեան վկայագրին մէջ, Կոմիտասի ազգանունը Սողոմոնեան չէ գրուած, այլ՝ Գէորգեան: Ուրեմն Կոմիտաս, Գէորգեան նեմարանը ուսանած ըլլալուն ըստ, կամ հօրը անունը Գէորգ ըլլալուն պատճառով, Գէորգեան ստորագրած է:

Ուրեմն այսպէս... Ռուսէն Սեւակ իր գաւազները մկրտել տալէ երեք օր յետոյ կը հերքակալուի և կ'աֆտրուի: Այնպէս որ, Ռուսէն Սեւակ 24 Ապրիլին չէր ձերբախալուած, ինչպէս՝ հայ մտաւորականներ՝ Գրիգոր Զօհրապ, Վարդգէս և ուրիշներ... անի որ ստոնք երեսփոխան էին խորհրդարանի մէջ: Զօհրապ և Վարդգէս երկուսն ալ յետոյ ձերբակալուեցան և աֆտրուեցան դէպի Ասիան: Նոյնպէս՝ Ռուսէն Սեւակ երկուսն ալ ձերբակալուեցան: Թէեւ շատ մը հեղինակներ գրած են, որ Բ. Սեւակ 24 Ապրիլին ձերբակալուեցաւ:

Գիշեր մը, երկու թուրք ոստիկաններ կը ներկայանան Սեւակի բնակարանը և լ'ըսեն.

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ ՄԵՐ ԿԱՏԱՐԱԾ... (Շար. էջ 2-էն)

– Տօթօր Պէյ, քեզ հիւանդի մը պիտի տանին: Եւ Ռուբէնը կ'ստանայ ու կը տանին: Վերջին մեկնումը կ'ըլլայ այդ: Մնացեալը եղբունի պատմութիւնն է:

Կրկին երիտասարդական պատմութիւնն է սա մէկը-կ'ուզեմ՝ որ տեղեակ ըլլաւ:

Ռ. Սեւակ կ'ախորձի Չանդըրը:

Չանդըրը մէջ իր կեանքը մէկ ուրիշ ոլբերգութիւնն է: Անոր մէկ մասը ջանամ պատմել ձեզի.

Ռ. Սեւակ իբր բժիշկ մեծ համբաւ կ'ունենայ: Զեռէ-ձեռէ կը խլուի: Ասոնք խօսք-եմբարդութիւններ չեն, վկաներու գրութիւնները կան:

Մինչ այդ՝ իր բուժածներէն մէկը երիտասարդուհի մըն է: Աղջիկը կը բուժուի: Ճիշդ հոս է պարագան: Թուրք երեւելիի մը դուստրն է ան: Եւ բնութեան օրէնքով, երիտասարդուհին կը սիրահարի Ռուբէն Սեւակին: Աղջիկը իր զգացումին մասին կը խոստովանի իր հօր, որ շրջանի թուրք երեւելիներէն է ու գիտէ, թէ ինչ պիտի ըլլայ վախճանը Ռուբէնի և նմաններուն: Եւ կը յորդորէ Ռ. Սեւակին ըսելով.

– Դուք, բոլորդ, մահուան էք դատաւարտուած: Բայց ես ունիմ ուժը, որպէս այստեղի պատասխանատու, քեզ ազատելու: Բայց՝ մէկ պայմանով-կ'իսլամանաս և կ'ամուսնանաս աղջկանս հետ: Պայմանը այս է:

Ռուբէն կը պատասխանէ.

– Ես ամուսնացած եմ. երկու զաւակ ունիմ.

– Վնաս չունի: Ատիկա կարեւոր չէ,- կը հակադարձէ թուրքը: Մինչ Սեւակ «Կը մտածեմ»-ըսելով կը հեռանայ: Կ'երթայ ընկերներուն մօտ: Կը պատմէ անոնց եղբ-լութիւնը:

Բոլոր ընկերները կը յանձնարարեն իրեն.

– Առժամաբար ընդունէ թրքացու և դաւանափոխութեան ստաշարկը, և փրկէ կեանքը:

Բայց Ռուբէն Սեւակ կը հակադարձէ անոնց.

– Թրքացուը նուաստանալ է: Եթէ մենք դաւանանենք մեր Ազգին, հայ ժողովուրդը իր հաւատքը պիտի կորսնցնէ...:

Ռուբէն նախընտրեց մեռնիլ քան թրքացու:

Այսպէս կ'ստարտի Ռուբէն Սեւակի ողբերգական կեանքը 26 Օգոստոս 1915-ին, Դանիէլ Վարուժանի և ուրիշ երեք ընկերներու հետ:

Այս է Ռուբէն Սեւակի պատմութիւնը, համառօտ կերպով ձեզի ներկայացուած:

Շնորհակալութիւն:

Եթէ հարցեր կան՝ տուէք»:

Ուսանողուհի մը.- Ռուբէն Սեւակ քանի՞ զաւակ ունէր.

Պ.- Ուրեմն, Ռ. Սեւակ երկու երախայ ունէր: Մէկը ծնած է 1912-ին Լոզան, Զուրաբեան: Անունը՝ Լեւոն: Յաջորդած՝ ուրիշ անուն մըն ալ ունէր- Լեւոն-Վահագն Զիլինկիրեան: Լեւոն կ'ըսէին: Վահագնը չէին գործածեր: Այս մէկը լո՛կ անձնագրին մէջ գրուած էր:

Լեւոն անունը մեր՝ Ռուբինեան թագաւորներէն մէկուն կը պատկանի: Բայց այս պարագային՝ առնչութիւն չկայ:

Իր հայրը, Ռուբէն իր մանչ զաւակը այդպէս կոչած է ազգային զգացումէ մղուած: Ու նաեւ կը կարծեմ, որ Ռուբէնի մտերիմ ընկերներէն մէկը՝ գեղանկարիչ էր: Կը կոչուէր Լեւոն Ազնաւորեան: Հաւանաբար անոր սնունդով ուզած է անուանել իր մանչը: Լեւոն Ազնաւորեան իր՝ Ռուբէնի կերպարը նկարած է: Եւ այդ գեղանկարը

այժմ կախուած է Երեւանի Գրականութեան թանգարանի տնօրէն Բախչինեանի աշխատասենեակին մէջ: Զայն դիտելու հանոյքը ունեցած եմ:

Ռ. Սեւակ 1914-ին կը մեկնի Պոլիս, երբ կինը վեց ամիսով յղի էր: Ա. Աշխարհամարտէն մէկ կտու երկու ամիս առաջ: Եթէ մէկ ամիս ուշ համբայ ելած ըլլային, արդէն համբաները փակուած պիտի ըլլային. և Ռ. Սեւակի կեանքի գիծը բոլորովին ուրիշ ընթացք պիտի ունենար:

Ռ. Սեւակի երկրորդ զաւակը՝ Շամիրամ կը կոչուի: Աղջիկը Պոլիս ծնած է: Մկրտուած է Լեւոնի հետ միասին 1915-ի Յունիսի 22-ին: Կնէսհայրը եղած է Օսմանեան կայսրութեան թղթատարութեան այդ օրերու նախարար Ռսկան էֆէնտի Մարտիկեան:

Հարցում.— Ո՛վ և ինչպէս տէր եղաւ Ռ. Սեւակի գրական ժառանգութեան.—

Յ.Զ.— Ատիկա մէկ ուրիշ տխուր պատմութիւնն է Սեւակի: Արթիւր ուրիշ պատմութիւն է: Նկատելով որ Ռ. Սեւակ 1915-ի Յունիսի 23-ի գիշերը, իր բնակարանը ներկայացող գաղտնի ոստիկաններու կողմէ՛ ձերբակալուելով կը սարուի: Եւ Սեպտ. 8-ին Պոլսոյ-այն ատեն Պոլիսն էր Թուրքիոյ մայրաքաղաքը- Գերմանական դեսպանատունէն կը տեղեկացնեն Տիկ. Զիլինկիթեանին, որ իր ամուսինը սպաննուած է: Զանդըրըի մէջ: Եւ այդ լուրը ստանելէ անմիջապէս յետոյ, Տիկ. Սեւակ իր երկու զաւակները կ'առնէ և գնացով Զուիցերիա կը վերադառնայ: Եւ իր բնակարանը կը մնայ լնուած, միայնակ ու անապահով, պատերազմի ամբողջ ընթացքին:

Այդ շրջանին մեր հարազատները Սիլվիոյ ըսուած գիւղը-Պոլսէն 70 էլ. մեքք դէպի Արեւմուտք- կ'ապրէին: Եւ արգիլուած գօտի էր Պոլիսը, պատերազմի պատճառաւ: Յետոյ մեր հայրը՝ Ռուբէն Սեւակի եղբայրը կը յաջողի երթալ Պոլիս ու ինչ որ կար Ռուբէնի լնուած տան մէջ՝ իր բնակարանը կը փոխադրէ:

Մինչ այդ ես. 1945-6-թ.ներուն, Ռուբէն Սեւակի պատկանող բոլոր իրերը, ինչ որ կար, մինչեւ յետին թուղթի կտորը հաւաքեցի և իմ տունը փոխադրեցի: Եւ այսօր ուրախութիւնը ունիմ ըսելու, որ Նիսի մէջ ստեղծուած Ռուբէն Սեւակի Յիշատակի Տան մէջ կը գտնուին այդ մասունքները:

Այս մասին, եթէ կը թողասրէ՛ք՝ ուրիշ բան մը ըսելու ջանամ- ուրիշ դժբախտ պարագայ մը կայ: Ուրեմն, բոլոր ընտանիքներու մէջ, լաւն սլ կայ, վատն սլ կայ- և այդ շրջանին մեր հօրեղբօր զաւակներէն մէկը կար, որ մեր ընտանիքին Անտուակ Որդին էր: Ուրեմն այդ տղան, յրամի պահանջով Ռուբէն Սեւակի ձեռագիր տետրակները կը վաճառէ այն աստիճանի Պոլսոյ Առաջնորդ մտաւորականներուն (բարեբախտաբար): Անոնցմէ մէկուն անունը Թորոս Ազատեան էր, որուն կինը, մեծ հայուհի մը՝ Թորոս Ազատեանի կտակը կ'իրագործէ. և այդ ձեռագիրները կը դրկէ այստեղի (Երեւանի) Գրականութեան թանգարանը: Ուրեմն այս կերպով մեր այդ Անտուակ Որդին, հարազատը, փրկած է ձեռով մը այդ ժառանգը: Եթէ չծախէր այդ ձեռագիրները մէկու մը, արդեօք կրնայի՞նք փրկել զանոնք: Անոնք կրնային արքայնոց նետուիլ: Որով ան, երկու չարեաց փոքրագոյնը կատարած է, և ես կը նկատեմ, որ անոր ըրածը ոչ թէ չարագործութիւն, այլ բարեգործութիւն եղած է: Յետոյ՝ ուրիշ պարագայ մը՝ թոյլարեցէ՛ք որ շարունակեմ՝ տարիներ յետոյ տեղեկացայ, որ Ռուբէն Սեւակէն ձեռագիրներ կան հեռուոր Գանատայի մէջ, ընտանիքի մը մօտ: Եւ... կարն պատմեմ... Գացի Թորոնթօ. այդ երկու տետրակները գտայ, բերի ու դրի «Ռուբէն Սեւակի Յիշատակի Տուն»ի մէջ: Անոնք Ռ. Սեւակի առաջին, երիտասարդութեան շրջանի գրութիւններն են: Եւ այդ երկու տետրակները հրատարակուած են 1980-թ.ներուն... շատ հետաքրքրական են այդ գրութիւնները, Ռ. Սեւակի հեղինակութիւնը կազմող: Ի՞նչ է գրուած հոն-1909-թ.ին են գրուած այդ առաջին գրու-

թիւնները: Այնտեղ սապէս գրած է Ռուբէն Սեւակ.— Ասոց իմ առաջին գրութիւններն են, արձակ և ուսանաւոր: Առաջին բոթովումները իմ կեանքի. զուրկ որեւէ արժէքէ: Բայց՝ աւելցուած է հովը.— Բայց կը փնտռուին օր մը»: Եւ ես, 80 տարի յետոյ, գացի և փնտռեցի զանոց թորոնքօ ֆաղափին մէջ, Ռ. Սեւակի այդ մասունքները: Լաւ, ուրիշ հարցումներ եթէ... ունիք:

Հարցում.— Այդ ամէնից յետոյ, ցեղասպանութիւնից յետոյ, Հայ-Թրքական սահմանի բացման մասին ոնց էք վերաբերում:

Յ.Զ.— Ուրեմն՝ հայ ժողովուրդը այժմ, դեռ միջին աշուր, Թուրքիին հետ պատերազմի մէջ է: Իր հարցերը չէ լուծած: Դեռ պատերազմի մէջ է: Պատերազմի պայմաններու մէջ սահմանները պէտք է գոց մնան:

Վ. Պետրոսեան.— Բոլորս ձեզ հետ ենք...

Հարցում.— Պրն. Զիլինկիրեան. «Յիշատակի Տան Թանգարան»ի գործունէութեան մասին մի քիչ կարո՞ղ էք պատմել՝

Յ.Զ.— «Յիշատակի Տուն»ի մասին եթէ տեղեակ էք... ես ընկ. Վ. Պետրոսեանին տուած եմ գրեյկ մը, որմէ օրինակ մըն սպ հետս բերած եմ. որուն մէջ նշուած է այդ ամէնը: Ուրեմն՝ ան յարկաբաժին մըն է Ռուբէն Սեւակի «Յիշատակի Տուն»ի մէջ: Սուրբ տեղ մըն է ան ինծի համար: Թէեւ «Պոչ» չեն բոցեր այնտեղ այցելելու համար: Հայութեան կեցուածքն է այդ, մանաւանդ Սփիւռքի: Ուրեմն, այդ թանգարանին մէջ կայ 170-ի հասնող գեղանկարներ, միայն հայ նկարիչներու պատկանող, զանազան շրջաններէ, և մանաւանդ՝ կայ Ռուբէն Սեւակի արխիւը, բոլոր այդ ձեռագիր գրութիւնները: Մանաւանդ այն նամակ-գրութիւնները որոնք Ռ. Սեւակի կողմէ դրկուած են Զանգըրըէն: «Օրիկինալ»ները: Այդ բոլորը հրատարակելու ուրախութիւնը ունեցայ տարիներու ընթացքին, թերթի մէջ, բայց դժբախտաբար, ժողովուրդին մեծամասնութիւնը տեղեակ չէ այդ թուղթերէն: Ուրեմն այդ բացիկները, արարական տատերով թրքերէն գրուած են, որովհետեւ գրաքննութիւն կար, ուղարկուած են Պոլսէն իր կնոջ. և շատ բծախնդիր թրքական թղթատարութիւնը այդ բացիկները կնքած է գրելով.— Մեկնած է առանց հասցէ ձգելու»: Սա սպ ըսեմ, որ Թուրքիոյ թղթատարական ցանցը ստեղծողը եղած է Շամիրամի կնքահայրը եղող Ոսկան էֆէնտի Մարտիկեան: Որ մաս կը կազմէր Իթթիհատականներու կառավարութեան: Այսպէս՝ Ռ. Սեւակ կ'առաջնորդուի 26 Օգոստոս 1915-ին, Դանիէլ Վարուժանի և ուրիշ երեք անձնաւորութիւններու հետ դէպի Այաշ. և այդ օրէն մէկ օր առաջ Սեւակ կ'ուղարկէ վերջին գրութիւն մը, հեռագիր մը իր կնոջ, կրկին գրուած արաբատառ թրքերէնով որ կ'ըսէ.— Վաղը, Դանիէլ Վարուժանի հետ, կը մեկնինք Այաշ: [Ուրիշ սպանդանոց մը] նամակնիդ հոն ուղարկեցէք: Այս է վերջին հետքը Ռուբէն Սեւակէն: Անկէ ետք՝ ոչ մէկ հետք կը մնայ Ռուբէն Սեւակէն: Շնորհակալութիւն»:

Վլատիմիր Պետրոսեան.— Պիտի ասեմ, թէ այդ թանգարանը, Տունը ինչ է արել: Ուրեմն ընկ. Զիլինկիրեանը հրատարակել է մօտաւորապէս երեսուն գիրք՝ հայագիտական, հայ ժողովուրդի պատմութեան տարբեր հարցերի շուրջ: Եւ ամէնից կարեւորը՝ որ Յ. Զիլինկիրեանը հովանաւորում է Ռուբէն Սեւակի անուան դպրոցը որ գտնուում է Երեւանում: 15 տարի է դպրոցը կոչուում է Սեւակի անունով: Եւ ընկ. Զիլինկիրեան ամէն ինչով օգնում է որ այդ դպրոցի կուլեկտիւը արժանաւորապէս դաստիարակի երախաներին: Եւ շատ մեծ շնորհակալ գործ է արել: Ես կ'ուզեմ ասել, որ Ռ. Սեւակ այն մեծ գործիչներից էր, որ մեղադրում էր այլասերունդ մտաւորականներին, որոնք ազգի առաջնորդութիւնը ստանձնել են, բայց այդ ազգին չեն

ծառայում: Ռուբէն Սեւակը դէմ էր Երիտթուրքերի հետ գործակցութեան: Ռուբէն Սեւակը կոչ էր անում որ հայ ժողովուրդին հարկաւոր է նոր սերունդ, նոր առաջնորդներ. որպէսզի ժողովուրդըն հեռու պահուի փորձանքներից: Եւ ԸՆԿ. Զիլինկիրեանը Ռուբէն Սեւակի այս տեսութիւնը իր պատմագիտական ուսումնասիրութիւններում պաշտպանում է, զարգացնում և նպաստում է որպէսզի մեր գիր-գրականութիւնը, մեր քաղաքականութիւնը գնան, ընթանան այն հունով, ինչ որ գուշակել է Ռուբէն Սեւակը:

Տեսէ՛ք հարցրեցին Թուրք-Հայկական սահմանին բացման մասին: Մենք տարբեր բացատրութիւններ լսել էինք՝ դէմ և կողմ: Բայց հաւատացած եմ՝ մեզնից ոչ ոք այսպէս հաստատ պատասխան չէր լսել: Մենք թուրքերի հետ պատերազմական վիճակի մէջ ենք, և պատերազմող երկրների միջեւ եղած սահմանների բացման մասին ընթացող ամէն խօսակցութիւն աւելորդ է:

Մենք շատ առարկութիւններ լսել էինք Աւագ Խաչատրի հետ, բայց այսպիսի առարկութիւն անա, փիլիսոփայական, քաղաքական, դիւանագիտական գնահատական թրքական սահմանի բացման վերաբերեալ նոր ենք լսում: Եւ ես կ'ուզեցնայի որ դուք այս բոլորը լսւ իմանաք և այն ինչ որ ԸՆԿ. Զիլինկիրեանը այստեղ սասաց, դառնայ մեզ համար օրէնք: Եւ դա մեր կողմից տարածուի միւս հայերին: Որ իմանան, թէ ինչ կայ աշխարհում:

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑԶԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ ՀԵՏ ՄՐՏԲԱՅ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Հաղորդավարը.- Դպրոցի ողջ աշխատակազմը սրտատրոփ տպասում էր այդ հանդիպմանը, որ ի վերջոյ կայացաւ Ռուբէն Սեւակի Յիշատակի Տանը: Նրանք իրենց սրտի խօսքերը ուղղեցին դպրոցի բարերարին, հայրենանուէր գործիչին՝ Յովհաննէս Զիլինկիրեանին:

Հանդիպման ներկայ էին նաեւ Պատմաբան Վլատիմիր Պետրոսեանը և Յովհաննէս Զիլինկիրեանի փեսան՝ Պրն. Յակոբ Աւագեանը:

Տ ն օ ր է ն ու հ ի ձ ու ի ա Ղ ա գ ա ր ե ա ն .- Սիրելի պաշտօնակիցներ, ինչպէս գիտե՛ք՝ մէկ շաբաթ է արդէն Պրն. Զիլինկիրեանը գտնուում է Հայաստանում, Վեհափառի հրաւերով:



Նա եղաւ մեզ մօտ մէկ անգամ: Զկարողացաւ իրօք հանդիպել բոլորիս հետ: Բայց փոխանցեց իր ցանկութիւնը որ անպայման բոլորս տեսնէ: Եւ ամէն մէկս ինչ ցանկութիւն որ ունի, ինչ սրտի խօսք ունի, թէկուզ էդպէս՝ հարցազրոյցի նման հանդիպման ընթացքին իր մտքերն ու զգացումները արտայայտի:

Ես, բոլոր կողմերիւնի անունից, շնորհակալութիւն յայտնում եմ Պրն. Զիլինկիրեանին, որ այս 15 տարիների ընթացքում ցուցաբերել է հոգատար վերաբերմունք մեր նկատմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ ՄԵՐ ԿԱՏԱՐԱԾ... (Շար. էջ 3-էն)

Այժմ, մեծ սիրով, ուզում եմք լսել ձեզ:

Յովհ. Զիլինկիրեան.— Ուրեմն, բարբառիդ ալ տեսած եմ տեսաբարիզներուն մէջ, 15 տարիներէ ի վեր, որ Տիկ. Ղազարեանը կ'ուզարկէր, բոլոր ուսուցիչները... մեծ ուրախութեամբ հետեւած եմ, հեռուէ-հեռու... բայց այսօր անձամբ ձեզ տեսնելու ուրախութիւնը և երջանկութիւնը ունիմ, և կ'ուզեմ այստեղ անձնապէս շնորհաւորել նախ Տիկ. Ղազարեանը՝ կողմնակալը և ձեր բոլորը, որ Ռուբէն Սեւակեան ոգին կը փոխանցէք նոր սերունդներուն, որոնք մեր միակ յոյսը կը կազմեն: Հազար շնորհակալութիւն ձեզ՝ ձեր ներկայութեան, ձեր գործունէութեան... և կը մաւթեմ որ շարունակէք ինչ որ ըրած էք և դեռ կրնաք ընել: Խոստովանիմ, որ այս օճակին մէջ տեսայ աւելի շատ հայկական շունչ քան այլուր... մեծ շնորհակալութիւն ձեզի: Յաւելեալ՝ կարն բան մը ըսելու պիտի ջանամ Տիկ. Ղազարեանին... Ուրեմն բոլորս ալ, նախ առաջ Տիկ. Ղազարեանին և ձեր բոլորիդ աշխատութեամբ ջանանք, որ Ռուբէն Սեւակեան ոգին փոխանանք նոր սերունդներուն:

Բնականաբար գիտէք, որ ես ելքօրոքդին եմ Ռուբէն Սեւակի, և իմ կարողութեան չափերով կրնամ ողջ պահել Ռուբէն Սեւակեան ոգին: Բայց այստեղ պարագայ մը կայ. կ'ուզեմ շեշտել ատիկա- ես այս բանը կ'ընեմ ո՛չ անոր համար որ Ռուբէն Սեւակը հօրեղբայրս է, այլ՝ անոր համար որ Ռուբէն Սեւակին ներկայացուցած գաղափարականը, Ռուբէն Սեւակեան խո՛ւալը շատ կարեւոր կը նկատեմ հայկականութեան ասպագային համար... այս պատճառաւ է, որ ես ուրախ եմ տեսնելով այստեղ տարուող աշխատանքներուն արդիւնները, որոնց մասին Տիկ. Ղազարեանը կը սեղեկագրէր ինձի...: Եւ այսօրուան վիճակը որ 15 տարի առաջուան վիճակը չէ Հայաստանի մէջ՝ Ռ. Սեւակի տիպարը աւելի ծանօթ է հայ հասարակութեան՝ հոս և Սփյուռքի մէջ: Ուրեմն՝ մտղթանք մ'ունիմ... շատ դժուար կացութիւն մը կայ այժմ Հայաստանի և ամբողջ աշխարհի մէջ: Ապագան այնքան փայլուն չէ հոս և ամբողջ աշխարհի մէջ: Կրնան շատ փոստագաւոր վիճակներ ստեղծուիլ: Նոյնիսկ՝ Հայաստանի մէջ, ասոր հետեւանքները կրնան տեսնուիլ: Այնպէս որ, դժուար օրեր կը սպասեն ձեզ... խօսք մըն ալ ըսելու ջանամ... ուրեմն՝ գիտէք, թէ թշուարութեան մէջ վեհանձնութիւն փնտռել դժուար է... նախ իր կեանքը պիտի ապահովէ մարդս, յետոյ՝ հայկականութեան իր ծրագիր-նպատակը իրականացնելու պիտի ձգտի աշխատելով: Եւ այս դժուարութեան առջեւ պիտի կարենանք տոկալ: Ես պիտի մաւթեմ, որ այդպէս ըլլայ, և կը հաւատամ, որ այդպէս պիտի ըլլայ:

Ուրեմն՝ կրկին հազար շնորհակալութիւն ձեզի-ձեր տարած աշխատանքներուն, Ռուբէն Սեւակի ոգին վառ պահելու համար... որ պիտի տարուի Տիկ. Ղազարեանի առաջնորդութեամբ և ձեր բոլորիդ մասնակցութեամբ: Որուն համար կանխաւ շնորհակալութիւնս կը յայտնեմ ձեզի:

Տիկ. Ղազարեան.— *Պրն. Յակոբ Աւագեանին ձայն տանք...*

Յ. Աւագեան.— Ի՞նչ կրնամ ըսել, շնորհակալութիւն յայտնելէ ուրիշ, Տիկ. Ղազարեանին...

Յ. Զիլինկիրեան.— Եթէ թոյլատրէք... երկու խօսք եւս... բնական է՝ տարիքս գիտէք թէ ոչ... բոլոր մարդոց նման ես ալ վաղանձուկ եմ... Իմ փեսաս՝ Յակոբը իմ փոխանորդս է իմ... վերջնական մեկնումէս յետոյ: Ասիկա հրասպարակաւ կ'ուզեմ ըսել:

Տիկ. Ղազարեան.— *Ուրեմն, Պրն. Զիլինկիրեանի գործը, իր փեսան՝ Պրն. Աւագեանը պիտի շարունակի:*

Յ. Աւագեան.— Մլիասին պլտի աշխատինք շատ տարիներ: Շնորհակալութիւն:

Տիկ. Ղազարեան.— Վստահ եղէք, որ այս կողբկտիւր, հզօր մանկավարժական խորհուրդը, միշտ պատրաստ է, միշտ ցանկացած պահին ներդնել իր ամբողջ ուժը, կարողութիւնը որպէսզի պատշաճ մակարդակով ներկայանանք ցանկացած տեղ: Ես ինչու եմ գնահատում: Իրենց երեսին... չեմ ասել, որ գոհ եմ իրենցից:

Երէկուայ մեր հանդիպումը Պրն. Տատրեանին հետ: Մի քանի ուսուցիչներ կային... Պրն Տատրեանն էլ նկատեց, որ մի ամուր կոլեկտիւ է մերը, և կարողանում է իր աշխատանքները խրատել... Այնպէս որ, վստահեցնում եմ, որ մեր բոլոր ծրագրերը իրականացնում ենք էստեղ, Հայաստանում, և պատրաստ ենք ընդունել ձեր բոլոր հիւրերին ում որ կամեաւ... Դա ձեր, հարազատ օճախն է, ձեր հարազատ դպրոցն է, և դուք պէտք է ներկայացնէք... և մենք պէտք է ներկայացնենք:

Յ. Զիլինկիրեան.— Ուրեմն, Տիկինս, չըսելու համար ինձմէ աւելի՛ ինձի չափ կ'ոգեւորուի... տեսնելով այստեղ տարուած աշխատանքները, ձեր ուղարկած երիզները դիտելով: Ուրեմն երկու խօսք եւս աւելցնել կ'ուզեմ.— Այստեղ կը գտնուի անձ մը որ իմ գրականութեան նամբով, աշխատանքներուս գուգահեռ աշխատանք կը տանի, գաղափարակից ընկերս է, որ ընդհանրապէս գիտէ՛ շատ ատեն բուն աշխատանք տանողը կը մոռցուի, շուքի մէջ կը մնայ. այդ անձը այսօր մեր հով կը գտնուի, այդ անձը Պրն. Պետրոսեանն է: Կ'ուզեմ ձեր առջեւ շնորհակալութիւնս յայտնել իրեն, իր տարած աշխատանքներուն համար: Մանաւանդ՝ հայկական ոգին տարածելուն համար իր գրութիւններով և գիրքերով: Կ'ուզէի արդ, որ Պրն. Պետրոսեանը իր խօսքը ըսէր. գոնէ այսօր, որովհետեւ առջի օր մոռցանք իրեն խօսք տալ: Եթէ կարելի է Պրն. Պետրոսեան...

Վլատիմիր Պետրոսեան.— Եթէ գիտէ՛ շախմատ խաղալուն հեռուից աւելի լաւ ես նայում, չէ՞... եւ ուրեմն պլտի ասեմ՝ որ ես հեռուից նայում եմ Ընկ. Զիլինկիրեանին... բայց ասեմ թէ ինչու ես ընկեր Զիլինկիրեան եմ ասում և ոչ թէ Պարոն: Ձեմ յիշում՝ երկրորդ թէ երրորդ դասարանում էի, մեր ուսուցչուհին դերեր բաժանել էր՝ Գարն ու Գայլը: Ինձ տուել էր Գայլի դերը: Ես լաց եղայ— ես Գայլի դեր չեմ ուզի: Էդ ժամանակից Պարոն բաւը չեմ ընդունի: Ես հեռուից նայում եմ Պրն. Զիլինկիրեանին... այսօր Հայաստանում ամենանշուած դասը, խաւը ուսուցիչներն են:


Յ. Զիլինկիրեան.— Պարոնը հայկական մակդիր չէ: Կիլիկեան թագաւորութեան շրջանէն մնացած մէկ ազնուական տիտղոս է: Բայց, հարազատ դառնալու նամբու մէջ է:

Բայց, ի տարբերութիւն ընդհանուր... այդ վլնակլին... պէտք է ասեմ որ Սեւակի անունը կրող դպրոցին ուսուցիչները ինչ որ չափով — չէի ասի թէ շատ— բայց ինչ որ չափով այս դպրոցի պատերի մէջ լաւ են գգում շնորհիւ ձեզ: Եւ կ'ուզեմայի որ դուք անպայման իմանաք: Ես շատ ուրախ եմ, միշտ գալիս եմ այստեղ, լինում եմ նաեւ Երեւանի, նաեւ հանրապետութեան այլ դպրոցներում, գիտեմ դպրոցական կեանքը, ինքն մանկավարժ եմ կրթութեամբ, և հանդիպել եմ շատ բարերարների: Ձեր բարերարութիւնը ունի մեծ բովանդակութիւն: Դուք, նախ և առաջ, դպրոցի կողբկտիւրին, այս հիաստանց մանկավարժներին օգնում էք որպիսի նրանք երախային դաստիարակեն, հայկական կրթութիւն տան նրանց. Հայրենասիրութեամբ դաստիարակեն: Ես ուղղակի ուրախանում եմ երբ ամէն անգամին որ գալիս եմ էստեղ, էդ փոքր երախայից սկսեալ մինչեւ 12-րդ դասարան բոլորն Ռուբէն Սեւակ են արտասանում: Մենք չենք դիտում դա իբրեւ բանաստեղծ Ռուբէն Սեւակ: Դիտում ենք որպէս առնչութիւն հայկական ոգու հետ: Դա շատ կարեւոր է և էլի պլտի կրկնեմ,

որ դա արում է ձեր շնորհիւ: Ձեր գաղափարականը այստեղ նստած բոլոր մանկավարժները... ես համոզուած եմ որ բոլորը կրում են ձեր գաղափարը: Այլապէս՝ Ռուբէն Սեւակի դպրոցը մեր հանրապետութիւնում չէր ստանայ այն համբաւը, ինչ որ նրանք այսօր ունեն, շատ դպրոցների հետ համեմատած:

Ես հենց պլոտի ասեմ, որ Ընկ. Զիլինկիրեանը- ես երէկ կրկնեցի մեր համալսարանում և այսօր ուզում եմ ձեր մօտ էլ ասել՝ Ա.կադեմիայում երկու ինստիտուտ կայ՝ Պատմագիտութեան և Արեւելագիտութեան ինստիտուտներ: Հաւատացէ՛ք՝ էն-

տեղ ահագին գիտնականներ են հաւաքուած: Ոչ ոք այդ ինքստիտուտներում՝ երկուսը միասին, չեն կատարում այն գործը հայագիտութեան ասպարէզում ինչպէս անում է մի անձնաւորութիւն՝ Ընկ. Զիլինկիրեանը: Նրա այս թուրքերի «Իրր քէ չլմացած իրականութիւնները» բացայայտելը մեր արեւելագիտութեան ինստիտու-



տի սուրբ գործն է: Թուրքական մամուլը ինչ լուտանքներ էլ որ քափում է մեր ազգի հասցէին, մերոնք պարտաւոր են անմիջապէս արձագանգել: Չկայ այդ գործը: Ես երբեմն էլ տեղ աշխատող մեր ընկերներին ասում եմ՝ դուք չէ՞ք ամաչում. թուրքերը մեր մասին գրում են: Ո՞ւր է ձեր պատասխանը: Ինչո՞ւ չէք հրապարակում: Ամբողջ երկու ինստիտուտ չեն անում այն, ինչ անում է Զիլինկիրեանը: Դրա համար ես կարծում եմ, որ դուք երէկ ընդունել էք Տատրեանին, այսօր ասպարէզում շատ է երեւում, ուրեմն՝ Ռիչարտ Յովհաննէսեանը. թող նրանք չենդանան ինձնից, Ընկ. Զիլինկիրեանն էլ թող չենդանայ. ես պատմաբան եմ. բոլորի աշխատանքներին ծանօթ եմ, այն ինչ որ անում է Ընկ. Զիլինկիրեանը ես պլոտի ասեմ՝ միայն մի բառով... դա սխրանք է, իրական սխրանք:

Նրա գրածների մէջ ոչ մի հայտնաբերում չկայ: Ոչ մի ատելութիւն չկայ թուրքերի նկատմամբ: Մեզ հարկաւոր է փաստերով ապացուցել մեր ճշմարիտ լինելը: Եւ մեր ուսանողները Ընկ. Զիլինկիրեանին հարցրեցին... *Ինչ կարծիք ունէք հայ-թրքական սահմանի բացման կապակցութեամբ*: Նա ասաց, որ մեր հանդիպմանը չի վերաբերում հարցը. բայց կը պատասխանեմ: Եւ իւրովի պատասխանեց... Մեր և Թուրքերի միջեւ, Հայաստանի և Թուրքիայի միջեւ պատերազմը չի դադարել: Եթէ պատերազմը մեր միջեւ չի դադարել՝ ինչ խօսակցութիւն է գնում սահմանը բացելու մասին»:

Մենք բոլորս ֆենարկում ենք՝ սահմանը բացել-չբացելը: Մեզանից ամէն մէկը մի կարծիք է յայտնում: Բայց ոչ ոքից այսպիսի դիպուկ պատասխան ես չեմ լսել: Ոեւէ մէկի կողմից: Ուրեմն դուք պատկերացրէ՛ք, թէ Ընկ. Զիլինկիրեանը ինչպիսի խորութեամբ է պատկերացնում, հասկանում և մեզ է մատուցում մեր ժողովուրդի պատմութիւնը:

Ես ուղղակի, որպէս մանկավարժ, ձեզ նախանձում եմ, շատ բարի ձեռով, որ լծուել էք մի գործի, որի գաղափարական ակունքներին կանգնած է Յովհաննէս Զիլինկիրեանի նման մտածողը, վիլիստփան, պաուստրանը, գիտնականը, հասարակական գործիչը, որից յետոյ մենք կարող ենք աւելացնել այդ ընդհանուր բառը՝ բարերարը:

Հիմա, եթէ թոյլ կտաք ինձ՝ մի երկու րոպէ աւելացնել՝ մեր կողմին նստած է շատ համեստ Ընկ. Յակոբ Աւագեանը, որ Ընկ. Զիլինկիրեանը ներկայացրեց որպէս իր գործի շարունակողը: Ես համոզուած եմ, որ նրանք, միասին, դեռ երկար այդ գործը կը սանեն:

Բայց ուզում եմ ձեզ տեղեկացնել, որ մենք այսօր ունենք 16 թէ 17 երկիր որ ճանաչել են հայկական ցեղասպանութիւնը: Էդ երկրների մէջ է նաև Շուէցարիան: Մեր թերթերը գրեցին, որ Շուէցարիան ճանաչեց հայկական ցեղասպանութիւնը: Ուրիշ ոչինչ չեն ասում:

Ահա, մեր հիւրն է այսօր Յակոբ Աւագեանը, որ Շուէցարիայում ցեղասպանութիւնը պառլամենտում ճանաչելու գլխաւոր նախաձեռնողներից է: Յակոբի և իր Շուէցարիացի բարեկամների միջամտութեամբ, պառլամենտը ճանաչել է հայկ. ցեղասպանութիւնը:

Յակոբ Աւագեան.— Միայն ես չէի: Ուրիշ ընկերներ ալ կային: Պառլամենտին մէջ մէկը պէտք էր ներկայացնէր ցեղասպանութեան հարցը: Շատ ուրիշ ընկերներ աշխատեցան: Անհատական աշխատեց չէր երբեք: Մեզի օգնեց մանաւանդ ֆրանսացի երեսփոխան Ժան-Վոլ-Ֆուտրոն: Խեղճը վախճանեցաւ վերջերս: Ժընեւի եկեղեցիին առջեւ, հայասէր այս անձին ի պատիւ, յուշաճար մը դրուեցաւ:

Կ'ուզեմ յիշեցնել, որ Ռուբէն Սեւակի ծննդեան 125 ամեակն է մօտերս: Յոյսով եմ, որ պատշաճօրէն այն կը նշուի: Շնորհակալութիւն:

Տնօրէնուհի Տիկ. Ղազարեան.— Հիմա, կը ցանկանայինք լսել, մեր ուսուցիչներին: Իրենց և թէկուզ կառարած աշխատանքների մասին, ցանկութիւնների մասին: Դուք գիտէք մեր Ռուզանին մասին, որ Ռ. Սեւակի «Ջանգակներ» անունը կրող երգչախմբին ղեկավարն է: Վերջերս, Նախագահի կողմից, շնորհակալագրի և ոսկեմետաղի արժանացաւ մեր երգչախումբը:

Այստեղ, ի պատասխան իրեն ուղղուած բարեմաղթանքներուն՝ ներկայ ուսուցչական կազմին կողմէ, Յ. Զիլինկիրեան ցանկաց ունենալ Շամիրամ Սեւակի երկարակեցութիւնը:

Վ. Պետրոսեան.— «Նայիրի» թերթում երբ ես կարդում էի Յ. Զիլինկիրեանի հրապարակումները՝ ես ապշում էին մտածելով, թէ ինչպէս է նա հասցնում... վստահ եղէք, վստահ եղէք, որ ապագայում նա անպայման կրկին կ'այցելի մեզ:

ՄԱՐՕ ՄՈՎՍԻՍԵԱՆ.— «Նայիրի»-ի էջերը երբ բացում ենք, մենք անպայման կարդում ենք Պրն. Զիլինկիրեանի յօդուածները: Ձեր յօդուածները հիմնական մէկ նպատակ են հետապնդում— Հայրենիքը զօրացնել, պահպանել հայի տեսակը, և մենք ամէն ինչ աշխատում ենք անել այդ նպատակին հասնելու համար— և նաև, յինչո՞ւ չէ՝ կլիսում եմ ձեր մտահոգութիւնը որ հայու աշխարհը խառնակ է, և լաւ սպագայ չկայ աշխարհի համար, դրա համար մենք էլ, աւելի պիտի կառչենք մեր արմատներին, էլ աւելի սարածենք հայկականութեան տեսակը, մեր զաւակներին, երախաներին դպրոցում էլ աւելի աշխատենք պահպանել այդ գաղափարը հայրենասիրութեան: Եւ մենք, այս 15 տարիների ընթացքում երբ մի միջոցառում էինք անում, հաշուի էինք առնում որ հեռուից մեր ներկայացումը դիտում է Պրն. Զիլինկիրեանը: (→ էջ 5)

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ ՄԵՐ ԿԱՏԱՐԱԾ... (Շար. էջ 4-էն)

Եւ նա դժգոհ կը լինի այնտեղ, եթէ հայութեան համար ճիշդ բան չանենք: Ցանկանում ենք ձեզ արեւշատութիւն, երկար կեանք: Սեւակեան կենը ձեր մէջ է... որովհետեւ դուք այդ կէնը կրողն էք, մոսսորսկայն և հայրենասէրի կէնը կրողն էք... և այդ կէնը երկար կը գործի ի վառու մեր ժողովուրդի ու հայրենիքի, ի վառու մարդկութեան, որովհետեւ ձեզ յուզում են այդ բոլոր հարցերը մարդկութեան: Դուք բարութեան, արդարութեան, ճշմարտութեան մունետիկ մըն էք: Եւ ձեր յօդուածները կարդալով՝ ինչպէս դուք մի անգամ ասացիք՝ նոյնատիպ ենք մտածում: Ես գնահատում եմ ձեր մէջ անկեղծութիւնը, յանուն սրտարութեան : Դուք գրում էք ամէն ինչի մասին, սուանց հաշուի առնելու հեղինակութիւնները:

Եւ մի հարց եւս կ'ուզեմայի ձեզ տալ՝ դա կայ նաեւ Շահան Շահնուրի մօտ-Նարեկացուն ընդունում էք որպէս մեծ գրողի, ի՞նչ է ձեր կարծիքը. էդտեղ հայ և հայութեան մասին ի՞նչ կայ, բայց Նարեկացին արդէն համարում է աշխարհի մեծագոյն գրողներից մէկը...

Յ. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ.— Նարեկացիին մասին շատ բան ըսելու իրաւունք չունիմ նախ: Որովհետեւ բոլորիդ սրտին մէջ է Նարեկացին: Ամէնուն սիրելին է. մանաւանդ՝ մինչեւ Եղեռնի շրջանը՝ ամէն հայ կնոջ բարձին ներքեւ էր «Նարեկ»ը, իբր Սուրբ Գիրք: Որովհետեւ ինք իրապէս այնքան վայլուն, այնքան ճոխ ձեռով բացատրած է, տուած է Աղօթքը առ Աստուած ուղղուած: Այդ տեսակէտով՝ Նարեկացիին Սուրբ Գիրքը ինձի համար ապահովութիւն է: Նարեկը աշխարհի շատ լեզուներու բարգձմանուած ու գնահատուած է: Հայութիւնը այնքան ծանօթ չէ եւրոպայիին որքան «Նարեկ»ը: Բայց ատկա, ինչպէս որ դուք նկատեք էք՝ այսօր Նարեկացիին գերեզմանը չկայ: Նարեկացիին գիւղը չկայ: Նարեկացիին վանքը չկայ: Ես պիտի նախընտրեմ՝ Վարդանանցի հերոսներուն պէս մէկը ըլլար Նարեկացին, քան թէ՛ այդ հոյակապ, Աստուածային մատեանը գրողը: Կրցա՞յ բացատրել իմ մտածումը: Ռուբէն Սեւակի կիսանդրիին տակ գրուած է՝ «Թուրը աւելի արդար է Խաչէն»: Նարեկացիին մասին գաղափարս այս է: Որովհետեւ եթէ ան իր ձեռքը ուժ ունենար՝ կրնար ինքզինք պաշտպանել: Ատենօք ներկայ եղայ բանաստեղծութեան մը. Վարդապետ մը՝ Նիս ֆաղափին մէջ ըսաւ... Հայ ժողովուրդը, Պարսկաստանի սահմանին վրայ, եկող խուժաններուն դէմ Աւետարանը ցոյց կու տայ եղեր ինքնապաշտպանելու համար: Գիտե՞ք, թէ ինչ եղաւ հետեւանքը: Եթէ այդ Աւետարանին տեղ հայերը սուր մը ունենային իրենց ձեռքին՝ կը պաշտպանէին ինքզինքնին: Ա՛յս է Նարեկացիին մասին իմ կեցուածքը: Աւելցնեմ...

Գիտե՛ք, թէ Նարեկացին Վանի շրջանը ապրած է: Այսօր որո՞ւ ձեռքն է Նարեկի վանքը: Անոր հետեւն անգամ չկայ: Յասուկ առաքելութեամբ՝ թուրք զինուորները հոն գացեր են իմնայտուտկ կործանելու և անհետացնելու համար այդ Վանքը: Բուն Հայաստանը այսօր, ութսուն առ հարիւրով, թուրքերուն ձեռքն է:

Հայ-թրքական սահմանի բացուելու մասին կը խօսուի, երբ Թուրքը հայուն հայրենիքին 80 առ հարիւրը գրաւած է: Երբ որ Արեւմտահայութեան 80 առ հարիւրը ցեղապանութեան ենթարկուած է, բայց մենք այսօր, սահմանը բանալու մասին կը խօսինք:

Ինչպէ՛ս կարելի է այդ:

Բայց, սա մէկն ալ ըսեմ, որ այսօրուան իրականութեան չափով հարկ է իրաւաբաշտ ըլլալ: Մեր հայրենիքին 80 առ հարիւրը թուրքին ձեռքն է-կրնա՞նք անոնցմէ առնել գողցուած հայրենիքը: Այսօր Թուրքը զօրաւոր է իրեն կոնակ եղող Ամերիկացիին և անոր զինակիցներուն շնորհիւ: Բայց մենք հայրենիք մը ունինք այսօր, 30 հազար տառ. էլ մ.նոց: Ան կը համապատասխանէ Զուլցերիոյ, Պելլիֆայի ու անոնց նման երկիրներուն տարածքին: Մենք աշխատինք, որ զայն բարեբեր երկրի, հայրենիքի վերածենք: Անկախութենէն ի վեր, այս մէկը կը սպասէինք: Երբ 30 տարի յետոյ ես հոս եկայ՝ շատ յառաջացում տեսայ, ասոր կասկած չկայ: Բայց ուրիշ պարագայ մըն սլ տեսայ- վտանգ մը կայ հայութեան համար, մեծ վտանգ մը, շա՛տ մեծ: Այդ վտանգը ինչ է, գիտե՞ք- *Եւրոպականացման վտանգն է*: Առաջ բոլորս ալ կ'ուզէինք եւրոպացի ըլլալ, եւրոպացիի պէս «Քաղաքակիրթ» ըլլալ: Այսօր, վիճակը, երէկին բոլորովին հակառակն է: «Եւրոպականութիւն»ը մեզի համար մեծագոյն վտանգը կը կազմէ: Ես անձամբ այդպէս կը մտածեմ:

Երբ կը տեսնեմ հայրենի հեռուստատեսութենէն՝ հայկական Առաջին Ալիքին տիւրումները, կը համոզուիմ որ Եւրոպացիին, Ամերիկացիին ու իրենց նմաններուն նախուսելը քանդել է Հայաստանի, հայութեան ոգին: Այս է եղածը:

Լրագրող մը.— Այստեղ կայ մի հրաշալի կոլլեկտիւ: Ես հասկացայ, որ ինձ համար այստեղ բացայայտում է Ռուբէն Սեւակի աշխարհը: Այստեղ ես ճանաչեցի Ռ. Սեւակին իր բոլոր գծերով, մարդկային նկարագրով և որպէս բժիշկ... Եւ այդ ամէնը՝ շնորհիւ այս դպրոցի ոտնամուտով: Հաւանաբար ինձ օգնեցին նաեւ Յ. Զիլինկիրեան մարդու գործունէութիւնը. նրա գրած այն բոլոր յօդուածները որ ես կարդացած եմ «Նայիրի» թերթում, ինչպէս նաեւ այն հաստատիր գիրքը որ տարել եմ խմբագրութիւն և շատ աշխատել դրա վրայ: Ահաւասիկ ես, ինձ համարում եմ այս կոլլեկտիւի անդամ, որովհետեւ ինձ հարագատ է նա, և չկայ մի միջոցառում որուն ես չկարողանամ մասնակցել: Եւ ինչն է զարմանալին... Ես չեմ տեսնում կրկնութիւն: Այդ միջոցառումներին ես չեմ ձանձրանում: Ես նաեւ լրագրող եմ և շատ դպրոցներ եմ լինում, ես այնտեղ գնում եմ և արդէն ինձ թուում է, որ արդէն ես գիտեմ վերջաբանը, ինչ է վերջաբանը, ինչ պիտի լինի: Բայց այստեղ բոլորովին այլ է: Ամէն դէպքում՝ այստեղ մանկավարժները սյնքան հետաքրքիր վերջաբան են գտնում, այնքան հետաքրքիր լուծում են տալիս, որ դու անպայման ուզում ես տեսնել, թէ ինչ պիտի լինի վերջը: Եւ ինչն է կարեւորը: Այս դպրոցում երախան հայեցի դաստիարակութիւն է: ստանում առաջին իսկ տարիներին: Այնքան էլ հեշտ չէ Սեւակեան աշխարհ ներթափանցելը: Նրանք կարողանում են արտասանել և, կաթիլ-կաթիլ, Սեւակեան գաղափարները մտնում են արեւան մէջ. և դա շատ կարեւոր է: Ազգային նկարագիրը և հայեցի դաստիարակութիւնը մեր օրերի գերխնդիրն է»:

Տնօրէնուհի Ղուգարեան.— Հենց այդ առաջին քայլերը, այդ փոքրիկներին, Ընկի Պալստեան, դուք ո՞նց էք դիմաւորում մուտքը այդ փոքրիկներին. ո՞նց էք դիմաւորում և ո՞ւր էք բերում այդ երախաներին: Առաջին իրենց պահը երդման արարողութեան... էդտեղից սկսենք, այդ առաջին վայրկեանից: Ես կը խնդրէի այդ...

Տիկ. Պալստեան.— Ռուբէն Սեւակի այս կրթօճախում արդէն երկար տարիներ, գեղեցիկ աւանդոյթ է դարձել: Փոքրիկներին համար միջոցառում ենք ունենում: Մեծ սիրով ու ակնածանքով նրանք մուտք են գործում Ռուբէն Սեւակի թանգարան... առաջին անգամ զգում են, որ Ռուբէն Սեւակի սնունդն դպրոցի աշակերտ են, և կ'երդուեն հոն, որ իրենք պատուով պիտի կրեն Ռուբէն Սեւակի անունան դպրոցի կրթօճախի հաւատարիմ աշակերտ լինելու պատիւը:

Նրանք առաջին օրից գիտեն, թէ ով է Ռուբէն Սեւակ, և առաջին դասին իրենք կարողանում են իրենց չափով հասկանալ. թէ ո՛վ է Ռուբէն Սեւակը, աւելի պարզ-լած աւելի մտչելի լեզուով... և նոյնիսկ պատահում են դէպքեր, որ նոր դպրոց եկած երախան արդէն ճանաչում է Ռուբէն Սեւակ և կարողանում է անգամ սրտու-

ՍՐՏԱԳԻՆ ՈՂՋՈ՛ՅՆ

«ՆԱՅԻՐԻ» Ի

ՏԱՍՆԸ ՀԻՆԳ ԱՄԵԱԿԻՆ

Ողջո՛յն և շնորհաւորութիւններ՝ «Նայիրի»ին, արեւային և բարգաւաճ նոր ամեակներու մաղթանքով:

Կեանքի մեր օրերը կ'անցնին ապրուած մտահոգութիւններով, չենք զգար նոյնիսկ՝ եղանակներու յաջորդականութիւնը, տարւած իւրաքանչիւրին բերած տօնական, ընկերային թէ՛ ընտանեկան ուրախ ու տխուր օրերով, ու դեռ՝ երբ կը նորոգուինք կամ տրամուտինք հոգեպէս:

Յանկարծ օրացոյցի թերթիկը կը յայտնէ մեզի տարուան աւարտը...: Մենք կ'ըսենք՝ ի՛նչ շուտ անցաւ տարին: Կը խորատուլուինք մեր զգացումներուն մէջ, կը բանանք օրագրութեան տետրակը, կը կարդանք հոն ըրած մեր արձանագրութիւնները, վերաքաղով, անոնց դրական թէ՛ ժխտական յիշողութիւններով, կամ կ'ուրախանանք և կամ ալ, ամսոսանքով կը լեցուի մեր հոգին:

Տասնըհինգ տարիներ, տասնըհինգ անգամ 365 օրեր, որպէս Տնօրէն ու Խմբագիր, Ընկ. Ժիրայր նուիրումով և իմաստութեամբ գրած է իր առաջնորդող խօսքը, ազգային ու քաղաքական ուղեցոյցներով, արթուն պահելու համար իր ընթերցողները: Իր վարձքը ըլլայ կատար:

Մեր սերունդին համար, հայ թերթը եղած է ու կը մնայ, մեր հոգին ու միտքը հարստացնող, ազգային թէ՛ միջազգային հարցերուն հաղորդ պահող ազդակ:

Ներկայի գիտական պարզացումները, որքան ալ աշխարհը փոքրացնեն, ու լսելի և տեսանելի դարձնեն մեր հեռաքրքրութիւնները, անոնք սակայն չեն կրնար փոխարինել ընթերցումին տուած վայելքը: Երբ ամէն մէկ էջի ընթերցումէն ետք կը վերլուծենք մեր կարդացածը, ու ամոր մտքերը մերը կը դարձնենք ըստ մեր դատողութեան, կը կերտենք մեր հոգեբանական նկարագիրը:

Ամէն մարդ կրնայ, կեանքի արուեստագէտ մը ըլլայ, երբ ընտրած է իր կոչումին համապատասխանող ասպարէկը, ու հետեւողական աշխատանքով զայն հասցնել կատարեալին, Գեղեցիկին ու Օգտակարին:

Հրապարակագրութիւնը մարդկային, համամարդկային, գաղափարական, հայրենասիրական և գլխաւորը՝ պատգամող առաքելութիւն ունի, բոլոր ժայնմանակներու մէջ:

Ոյժ ու կորով կը մաղթեմ մեր բոլոր նուիրեալ հրապարակագիր-լրագրողներուն և յօդուածագիրներուն, որոնք մեզի կը պարգեւեն օրաթերթ, պարբերաթերթ թէ ամսաթերթ կարդալու գերագոյն հաճոյքը: Վա՛յ անոր, որ ինքզինք կը վրկէ այդ հաճոյքէն:

2010 Տարին կը փափաքիմ, որ բերէ խաղաղութիւն և բարօրութիւն մեզի, Հայաստանին ու Լիբանանին, ինաստուութիւն՝ մեր քաղաքական ղեկավարներուն, մանաւանդ՝ մեր հայրենի Իշխանութիւնը ունենայ չփախելու ինաստութիւնը, որ ամրապնդէ մեր սիրելի Մայր հայրենիքին ապահովութիւնն ու անկասկածները:

Աշխարհի քաղաքականութիւնը վարող մեծ պետութիւններն ալ ունենան բարոյական սկզբունքներ և հերոսներու արինով շահուած Արցախին շնորհեն իր Անկասկածութիւնը վայելելու արդար իրաւունքը:

Շնորհաւոր Նոր Տարի՝ համայն հայութեան:

Ի մասնաւորի՝ Ընկ. Ժ. Նայիրիին արեւշատութեան և յաջողութեան բիւր մաղթանք:

Բարի Տարի ու Արեւոտ շատ Օրեր բոլորիս և արտասահմանի հարապատներու:

ՄԱԲՐՈՒՀԻ
ԹԱԹՈՒԼԵԱՆ-ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

սանել որեւէ քառատող նրա մէկ բանաստեղծութիւնից, որը գրել է Ռուբէն Սեւակ: Եւ դա շատ ողջունելի է, որ ոչ միայն մեր ուսուցիչները դպրոցում են այդ աշխատանքը տանում, այլև՝ մենք ունենք ծնողներ որոնք նախկինում ունենում են աշակերտ և յետոյ բերելու են իրենց փոքրիկներին. և արդէն նրանց տանը հնչում է Ռուբէն Սեւակ, և երախան, արդէն դեռ դպրոց չեկած, լսում է Ռ. Սեւակի բանաստեղծութիւնները և մեծ սիրով է արամադրւում. որ մի օր պէտք է գայ այդ դպրոցը և բարձր պահի այդ դպրոցի պատիւը:

Ես ուզում եմ նաեւ խորին շնորհակալութիւն յայտնել ո՛չ միայն մեր բոլոր ուսուցիչների անունից, այլև՝ ծնողների անունից՝ Պրն. Յ. Զիլինկիրեանին: Քանի որ նա մեծ ուշադրութեամբ կարողանում է բոլոր հարցերը լուծել արժանի ձևով: Այն, որ մեր փոքրիկները միջոցառումներից յետոյ ձեր ուշադրութեան են արժանանում, դա դուք չէք կարող պատկերացնել, թէ ի՛նչ երախտագիտութեամբ, ինչ մեծ սիրով են նրանք դա ընդունում և ձեր անունը մեծ պատուով գրում են ու պահում»:

Ուսուցչուհի մը մաղթեց, որ ՀՀ-ի Գողների Միութեան Նախագահին կողմէ ներկայացուած ծրագիր-միջոցառումները իրականութեան վերածուին. ինչպէս՝ Երեւանի փողոցներէն մէկը Ռուբէն Սեւակի անունով կոչելը:

Յ. Զիլինկիրեան պատասխանեց.— Ուրիշ ծրագիրներ ալ կան...:

Տնօրէնուհի Ճ. Ղազարեան.— Յարգելի Պրն. Զիլինկիրեան՝ ուզում եմ յանձնել ձեզ, մեր կողիկտիւի կողմից, Արեւմտեան Հայաստանի քարտեաները և սրբապատկեր մը. Արցախեան ազատագրական պատերազմի նկարագրականը և դպրոցի երախտանքու կողմէ գծուած նկարներու ալպոմը... որպէս յուշանուէր»:

Տնօրէնուհին մաղթեց, որ յաջորդ տարի, Ռուբէն Սեւակի նահատակութեան տարեդարձի նշման առթիւ, Յովհաննէս և Իլմա Զիլինկիրեանները, Շամիրամ Սեւակ ու իրենց հարազատները այցելեն Հայաստան: [Շարունակելի]

TÜRKLERİN (SÖZDE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ
 ERMENİSTAN'DAN NİHAYET AKILLI BİR SES YÜKSELDİ.
 ERMENİSTAN ANAYASA HUKUKU BİRLİĞİ PARTİSİ
 DİREKTÖRÜ HAYG BABUKHANIYAN SU GERÇEKÇİ SÖZLERİ
 SÖYLEDDİ:

«ERMENİLER 20 YÜZYILDA TAM ÜÇKEZ TÜRK KOKENLİ ETNİK
 GURUPLAR TARAFINDAN SOYKIRIMINA MARUZ
 BIRAKILDILAR.....

ERMENİSTAN-IN ETRAFINI ÇEYRELEYEN 100 MİLYON
 TÜRK VE AZERİ, ERMENİSTAN'IN GÜVENLİĞİ İÇİN BÜYÜK
 BİR TEHDİT OLUSTURUYOR.

ERMENİLERİN NUKLEER SİLAH GELİSTİRME ZAMANI GELDİ....
 ABD, RUSYA VE AVRUPA'NIN ERMENİSTAN-IN GÜVENLİĞİNİ
 GARANTİ ALTINA ALACAK ADIMLAR ATMALARI GEREKİR»....

BUGÜN İFTİHARLA SÖYLYELİM Kİ BİZ ERMENİSTAN-DA PARTİ BASKANI HAYG BABU-
 KHANIYAN-IN SİMDİ SÖYLEDDİĞİ BU SÖZLERİ, TAM YIRMİBİR YIL ÖNCE, 1989-DA PARIS-DE
 YAYINLADIGIMIZ «SEHİT SAİR RUPEN SEVAG-İN İNANÇLARI» BAŞLIKLİ KİTAPIMIZDA ADETA
 AYNI KELİMELERLE YAZMISTIK ZATEN.....

İSTE 1989-DA BİZİM SÖYLEDDİĞİMİZ GERÇEKLER

BUGÜN, BÜYÜK SOYKIRIMDAN 75 SENELER SONRA, KUÇÜK ERMENİSTANIMIZ, ERMENİ-
 LERİN SON UMIDI, SAHTE ERMENİ LİDERLER TARAFINDAN TEHLİKEYE MARUZ BIRAKILIYOR.
 UNUTMAYALIM Kİ BUGÜN ERMENİSTAN BİR TİMSAHIN KORKUNÇ DİSLERİ ARASINDA DIR.
 BAKIN BUGÜNKİ ERMENİSTAN HARİTASINA. ÜÇ TARAFTAN TÜRKLER TARAFINDAN SARILMI-
 STIR. BATIDA SOYKIRIMCI TÜRKLERLE. DOĞUDA AZERİ TÜRKLERLE. GÜNEYDE İRANDAKİ
 AZERİ TÜRKLERLE.

VE TİMSAHIN KORKUNÇ DİSLİ AGZİ BİR GÜN KAPANABİLİR, VE EZER BÜTÜN ERMENİ-
 LERİ.... EGER (ALLAH SAKLASIN) RUS ORDUSU ÇEKİLECEK OLURSA.....

O-Ç-1989-PARİS

EVET BİZ BU GERÇEKLERİ 21 YIL ÖNCE YAZMISTIK..... FAKAT DİNLIYEN OLMADI....
 VE MAALESEF 1991-DE MANKAFA DİKKAFA ERMENİLER BINDIKLERİ DALI KESTİLER...
 GELİSMİS VE EMİN ELLERDE BULUNAN SOVYET ERMENİSTANI YIKTILAR. VE RUSLARI
 KOVDULAR...

VE SOVYET ERMENİSTANINI YIKAN, EMPEYALİSTLERİN USAGI LEVON DER BEDROSYAN
 CUMHURBASKANI OLDU.

VE İLK İSİ TÜRKLERLE KARDESLİK KURMAYA ÇALIŞMAK OLDU.

ÇOK SÜKÜR Kİ TÜRKLER, KARABAG MESELESİ DOLAYISI İLE AZERİLERİN SÖZLERİNİ DİN-
 LEDİLER.. VE LEVON DER BEDROSYANA YÜZ VERMEDİLER.....

VE KARABAG İÇİN ERMENİSTANA SAVAS İLAN EDEN AZERİLER, BAKU SUMGAYITTA HER

YERDE ERMENILERI SOYKIRIMINA UGRATMAYA BASLADILAR....

... VE NIHAYET GERÇEKLERİ GÖREN VAZGEN SARKISYAN GIBI YURTSEVER ERMENILER RUSLARIN YARDIMINI İSTEDILER. VE RUSLAR BÜTÜN TARİH BOYUNCA OLDUGU GIBI GELDILER VE ERMENILERİ KURTARDILAR....

BUGUN ERMENİSTAN (SÖZDE) BAGIMSIZ BIR DEVLET.

FAKAT ÇOK SUKÜR KI, TÜRKLERE KARSI, RUS ORDUSUNUN KORUMASI ALTINDA.

VE ALLAH KORUSUN RUSLARI....

EGER RUSYA ZAYIFLAR VE TEHLIKEYE DÜSERSE, (1918 RUS İHTILALINDE OLDUGU GIBI) TÜRKLER ERMENİSTANA HUCÜM EDERLER. (O ZAMAN GENE RUS KIZIL ORDUSU ERMENİLERİN YARDIMINA GELMİSTİ)....

BASKA YAZILARIMDA SÖYLEMİSTİK. YİNE TEKRAR EDELİM.

ERMENİSTAN BIR AN EVVEL RUSYA FEDERASYONUNA GIRMESİ LAZIMDIR.

YOKSA... ÜÇ TARAFTAN TÜRKLERLE ÇEVİRİLİ VE BUGÜN TİMSAGIN KORKUNÇ DİSLERİ ARASINDA BULUNAN ERMENİSTAN, TİMSAHIN KURBANİ OLUR... Յ. Չ.

ՈՉ ԵՒՍ Է ԳԷՈՐԳ ԽՌԼՈՐԵԱՆ

Ցուով խմացանք նախկին տարիահայ, ատեն մը հայրենադրակ, վերջին տարիներուն Մ. Նահանգներ արտագաղթած Գուկա. Գեորգ Տիգրան Խուրբանի մահը. որ պատահած է 31 Յունուար 2010-ին Կլէնտէյլի մէջ (Գալիֆորնիա):

Իրմով կը կորսնցնենք ներսուս մտաւորական, հոգեբան ու պատմագիտութեան դոկտոր մը, որ հեղինակ է բազմաթիւ իրատարակութիւններու և մենագրութիւններու, որոնցմէ կարելի է յիշել՝ «Հայ Ընկերային Իմաստասիրութեան Պատմութիւն», «Տէրունական Աղօթքի մեկնողութիւն», «Շիրակացիի Աշխարհահայեացքը», «Ենթակայի Վկաներ» ու վարդապետութեան Քննական Վերլուծութիւն»... և ուրիշ պատմագիտական և փիլիսոփայական երկասիրութիւններ:



Ելաւ առաջին հայրենադարձ ուսանողներէն: Հայաստանի մէջ տիրացաւ գիտական բարձր կոչումներու: Վարեց պատասխանատու պաշտօններ կրթական ու հասարակական մարզերու մէջ: Բայց ցաւալի հանգամանքներու բերումով Հայաստանէն արտագաղթեց երբ կրնար դեռ նկատելի ներդրում ունենալ հայրենի գիտա-կրթական ու բարձրագոյն կրթութեան ոլորտէն ներս:

Գ. Խուրբան պահեց, մինչեւ. հոս, բարեկամական կապ «Նայիրի»-ի հետ, որուն կ'աշխատակցէր պարբերաբար:

Իր համեմատաբար կանխահաս շիջումը ծանրակշիռ կորուստ կը կազմէ հայ պատմագիտական մտքին համար:

«Նայիրի» կը սգակցի իր վարձմի բարեկամին տիկնոջ և հարազատներուն:

ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ [ԻԲՐ ԹԷ] ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ
 ՀԱՅԱՍՏԱՆԵՆ ՎԵՐՋԱՊԷՍ ԽԵԼԱՑԻ ԶԱՅՆ ՄԸ ԲԱՐՁՐԱՑԱԻ...
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՌՈՐՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆ
 ՀԱՅԿ ՊԱՊՈՒԽԱՆԵԱՆԸ ՀԵՏԵԻԵԱԼ ՇԱՏ ԻՐԱՏԵՍ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ
 ԿԱՏԱՐԵՑ...-

«ՀԱՅԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐՈՒՆ ԵՐԵՔ ԱՆԳԱՄ ԹՐՔԱԿԱՆ ԾԱԳՈՒՄՈՎ
 ԽՄԲԱԿՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ ՍԱՐՔՈՒԱԾ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿՈՒԵՑԱՆ...
 ԱՅՍՕՐ ՀԱՅԱՍՏԱՆ ՇՐՋԱՊԱՏՈՒԱԾ Է 100 ՄԻԼԻՈՆ ԹՈՒՐՔԵՐՈՎ ԵՒ
 ԱԶԵՐԻՆԵՐՈՎ, ՈՐՈՆՔ ԿԸ ՍՊԱՌՆԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ:
 ԱՅԼԵՒՍ ԺԱՄԱՆԱԿԸ ԵԿԱԾ Է, ՈՐ
 ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՐԻՋԱՅԻՆ ԶԵՆՔ ԶԱՐԳԱՅՆԷ:
 ԱՄՆ, ՌՈՒՍԱՍՏԱՆ ԵՒ ԵՒՐՈՊԱ ՊԷՏՔ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ
 Ի ՆՊԱՍՏ ՄԻՋՈՑՆԵՐ ԶԵՌՔ ԱՌՆԵՆ»:

Այսօր հպարտութեամբ ըսենք, որ Հայաստանի մէջ Սահմանադրական Միաւորում կուսակցու-
 թեան տնօրէն՝ Հայկ Պապուխանեանին ներկայիս ըսած այս խօսքերը մենք, ծիշոյ 21 տարի առաջ՝
 1989-թ.ին, Փարիզ-Ֆրանսա մեր հրատարակած «Նահատակ Բանաստեղծ Ռուբէն Սեւակի
 Գաղափարական»-ը գիրքին մէջ, գրեթէ նոյն խօսքերով գրած էինք արդէն: ԱՅԱԻԱՍԻԿ, 1989-
 թ.ին ՄԵՐ ԸՍԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ...-

Այսօր, Մեծ եղեռնէն 75 տարիներ յետոյ, հայերուն վերջին յոյսը եղող մեր փոքր Հայաստանը,
 կեղծ առաջնորդներու կողմէ վտանգի ենթարկուած է:

Չմոռնանք որ Հայաստանը այսօր, Կոկորդիլոսի մը բերանին մէջ է: Նայեցէք այսօրուան Հա-
 յաստանի քարտէսը: Երեք կողմէ շրջապատուած է Թուրքերով. Արեւմուտքէն՝ ցեղասպան Թուր-
 քերով, Արեւելքէն՝ Ազերի Թուրքերով, Հարաւէն՝ Պարսկաստանի հիւսիսը գտնուող Ազերի Թուր-
 քերով:

Եւ այս Կոկորդիլոսին բերանը օր մը կրնայ գոցուիլ, ծզմելով ամբողջ հայութիւնը... Եթէ
 [Աստուած պահէ] Ռուսական բանակը հեռանայ...:

Յ.Զ. — 1989, Փարիզ»:

Այո... մենք այս խօսքերը 21 տարի առաջ ըսած էինք... բայց ձայն բարբառոյ յանապատի
 մնացին...:

Եւ դժբախտաբար 1991-թ.ին, անմիտ և սիւնդգլուխ հայերը՝ իրենց նստած ծառին ծիւղը
 կտրեցին...:

Եւ բարգաւաճ ու ապահով ձեռքերու մէջ գտնուող Սովետական Հայաստանը բանդեցին... և
 Ռուսերուն վռնտեցին:

Եւ Սովետական Հայաստանը բանդող, կայսերապաշտներուն կամակատար Լեւոն Տէր Պետրոս-
 եանը՝ Հանրապետութեան նախագահ եղաւ...:

Եւ Լեւոն Տէր Պետրոսեանին առաջին գործը եղաւ՝ Թուրքերուն հետ երկբայրական կասկեր հաս-
 տատելու աշխատիլ:

«Փառք Աստուծոյ» որ Թուրքերը՝ Արցախի հարցին պատճառաւ, Ազերիներուն թելադրանքներուն ենթարկուեցան ... և Լեւոն Տէր Պետրոսեանին «Շատ երես չտուին»:

Եւ Արցախի համար Հայաստանի դէմ պատերազմ հռչակող ազերիները՝ Պաքուի, Սոււկայիթի և այլուր եղող հայերուն ջարդել սկսան...:

Եւ վերջապէս՝ իրականութիւնները հասկցող Վազգէն Սարգսեանի նման հայրենասէր հայերը՝ Ռուսերէն օգնութիւն ուզեցին:

Եւ Ռուսերը, Պատմութեան մէջ միշտ եղածին նման, Եկան և հայերուն ազատեցին...:

Այսօր Հայաստան [իբր թէ] անկախ պետութիւն մըն է:

Բայց այսօր, բարեբախտաբար, Հայաստան Թուրքերուն դէմ, ռուսական բանակին պաշտպանութեան ներքեւ է...:

Եւ Աստուած պահէ Ռուսերը...

Եթէ Ռուսերը տկարանան և կամ վտանգի ենթարկուին՝ [1917-թ.ի Ռուսական Յեղափոխութենէն յետոյ եղածին նման] Թուրքերը Հայաստանի վրայ կը յարձակին:

Այն ատեն ալ Ռուսական Կարմիր բանակը հայերուն օգնութեան հասած էր...

Ասկէ առաջուան մեր գրովթիւններուն մէջ ալ ըսած էինք, հիմա կրկին ըսենք:

Հայաստան, ժամ մը առաջ՝ Ռուսաստանի Դաշնութեան մէջ պէտք է մտնէ զինակցելով...:

Այլապէս՝ երեք կողմէ Թուրքերու կողմէ շրջապատուած և այսօր Կոկորդիլոսի բերնին մէջ գտնուող Հայաստանը՝ կոկորդիլոսին զոհը կ'ըլլայ...:

Յ. Զ.

**ԽԱԶԻԿ ՊԱՊԻԿՆԱՆ - Ի ԱՆՈՒԱՆ
ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ՈՒ ԳՐԱԿԱՆ ՈՒԹԵԱՆ
ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ՈՒ ԿՐՕՆԻ
ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ**

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Վեհափառ Հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Աբամ Ա. Կաթողիկոսի նախաձեռնութեամբ և հայրական թելադրանքով՝ «Խաչիկ Պապիկեան Հիմնադրամ»ը հաստատեց լիբանանահայ վարժարաններու միջնակարգ և երկրորդական բաժանմունքներու աշակերտութեան հայագիտական հետաքրքրութիւններն ու շնորհները ֆաշաշերով Հայ լեզուի ու գրականութեան և Հայոց պատմութեան ու կրօնի չորս մրցանակներ: Այս առիթով Կաթողիկոսարանի Հայագիտական և Կրթական Գրասենեակը հրաւերներ յղեց լիբանանահայ միջնակարգ և երկրորդական բոլոր վարժարաններու տնօրէնութեանց, որոնք խանդավառութեամբ ընդառաջեցին հրաւերին:

Վերոնշեալ մրցանակներուն առաջինը՝ Հայ լեզուի և գրականութեան միջնակարգ և երկրորդական բաժիններու զոյգ մրցումները տեղի ունեցան Շաբաթ, 23 Յունուար 2010ին, Ա.զ.գ. Եղիշէ Մանուկեան Գողէնի մէջ: Ինչ կը վերաբերի Հայոց պատմութեան ու կրօնի զոյգ մրցումներուն, նախատեսուած է գանձակատարել ընթացիկ տարուան 13 Մարտին, նոյն վայրին մէջ:

Այս տարուան ընթացքին, նաեւ տեղի պիտի ունենայ Խաչիկ Պապիկեանի-ի անուան հայ երգի մրցանակը:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ ՄԵՐ ԿԱՏԱՐԱԾ ՌԻԽՏԱԳՆԱՑՈՒԹԵՆԷՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅՈՒԼԻՍ 2009-Թ.ԻՆ, ԵՐԵՒԱՆԻ Հ.Յ.Դ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԵՌԱՏԵՍԻԼԻ «ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» CANALE-ԷՆ, «ԹՐՔԱԿԱՆ ԳԱՂՏՆԻ ԹՂԹԱՊԱՆԱԿ»- «ՅԱՒԵՐԺԻ ԶԱՄԲՈՐԴԸ» ՎԵՐՏԱՌՈՒԹԵԱՄԲ, ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ ՇԱՏ ԿԱՐԵՒՈՐ ՅԱՅՏԱԳԻՐ ՄԸ ՑՈՒՑԱԴՐՈՒԵՑԱԻ:
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ [ԿՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ...

«ԵՐԿԻՐ-ՄԵԴԻԱ»
ՀԵՌԱՏԵՍԻԼԻ ԿԱՅԱՆԻՆ ՄԷԶ...
«ԹՐՔԱԿԱՆ ԳԱՂՏՆԻ
ԹՂԹԱՊԱՆԱԿ»Ը...
«ՅԱՒԵՐԺԻ ԶԱՄԲՈՐԴԸ ԵՒ
«ԲՈԼՈՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ
ԱՅՐՈՒԵՑԻՆ»
ՎԵՐՏԱՌՈՒԹԵԱՄԲ

(Յուլիս 2009 - Երեւան)

Հաղորդավար ՍԻՒԶԱՆ ՍԱՐԳՍԵԱՆ.-
Բարեւ ձեզ, յարգելի հեռուստադիտող-
ներ:

Այսօր, միասին թերթատելու ենք,
հերթական «Գաղտնի Թղթապանակ»ը:

Այս անգամ ներկայացնե-
լու ենք 1915-թ.ի հայոց ցե-
ղասպանութեան զոհերի՝
Ռուբէն Սեւակի՝ իրական
անուամբ Ռուբէն Զիլինկիր-
եանի առեղծուածներով լի
նրա կեանքը, ողբերգական
մահուան մանրամասները:

Դեռեւս քիչ ուսումնա-
սիրուած փաստաթուղթեր,
նամակներ, վկայութիւններ
մեզ, մի անգամ եւս յիշեցը-
նում են փաներորդ դարա-
սկիզբին տեղի ունեցած ու
ողբերգութեանը զոհ գացած հայ մտաւորականների նակատագիրը.



ՍԵՐԺ ՍՐԱՊԻՈՆԵԱՆ (գրականագէտ).- Ռուբէն Սեւակը ծնուել է 1885 թուա-
կանին Սիլիվրի գիւղաֆաղաֆում, որտեղ բարեբախտաբար բնակչութեան մեծ մա-
սը յոյներ էին և ոչ թուրքեր: Այլ կերպ ասաց՝ նրա մանկութիւնը առանձնապէս
թրքական իրականութեան մէջ չի անցել, և շփուել է աւելի շատ յոյն ընկերների
հետ և որտեղ, որի մէջ ձեւաւորուել էին այն հումանիստական գաղափարները, մար-
դասիրական գաղափարները որոնք, յետագայում, ի յայտ պիտի գային իր ստեղ-

ծագործութեան մէջ:

Նա, իր սկզբնական կրթութիւնը, իննց՝ Սիլիվրիի մէջ ստացել է. սպա տեղափոխուել է Պոլիս, և, նրա ուսումնասութեան լաւագոյն սուրիները եղել են 1900-1905 թուականները: Եւ 15-թ.ից 20 տարեկան հասակում բանաստեղծը աշակերտեց իր ժամանակի ամենախոշոր մանկավարժներից մէկին,



հայ գրականութեան մեծագոյն նուիրեալներից մէկին՝ Ռեթեոս Պերպերեանին...:

ՍՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ [«Սփիւռք» Կենտրոնի տնօրէն].- Խօսել Ռուբէն Սեւակի մասին՝ նշանակում է խօսել մեր բանաստեղծութեան մէջ մի գլխաւոր նամբարաժնի հասած գրական նոր մտածողութեան մուտքի մասին:



Ռուբէն Սեւակը իր ստեղծագործութեամբ բերեց Թրուպատուրի կերպարը. հաստատելով որ ինք, որպէս բանաստեղծ, սուաջին հերթին հերոս է, Թրուպատուր:

Թրուպատուր՝ որ բնութեան որձն է և իրեն շատ հարազատ է զգում բնութեան մէջ: Եւ որձ ասելով պիտի աւելի հասկանանք նուիրուածութիւնը բնութեանը: Բնութեան երգիչն է:

Հաղորդավար.- Ռուբէն Սեւակը փայլուն յառաջդիմութեամբ աւարտելով վարժարանը, մեկնում է Շուէցարիա և 1905 թուականի Աշնանից ուսանում Լոզանի բժշկական համալսարանում:

Սովորելու տարիներին նա ծանօթանում է Գերմանական բարձր դասի մի ընտանիքի դստեր՝ Եաննի Ապելի հետ:

Ս. ՍՐԱՊԻՈՆԵԱՆ.- Ռուբէն Սեւակի Եաննի Ապելի հետ սիրոյ պատմութիւնը լուսաւորչող է Ռուբէն Սեւակի կեանքում: Եաննի Ապելը խնամքով, գուրգուրանքով վերաբերում է իր ամուսնոյն, կամ սպազայ ամուսնոյն: Այս զգացումը հետագայում վերածուեց արտասովոր նուիրումի. ինչպէս մարդը կարող է նուիրուիլ իր մեծագոյն հաւատքին:

Այս մեծ սիրոյ պատմութիւնը դրսեւորում էր Սեւակի բանաստեղծութիւններում: Յատկապէս և.ս նկատի ունեմ «Գինով Սէր»ը Ռուբէն Սեւակի, որ զլուխ գործոց է համաշխարհային գրականութեան մակարդակում: Նաե՛ւ՝ «Ինչո՞ւ» բանաստեղծութիւնը որ այնքան մեծ, շատ հզօր պոռթկում է ... «Երթալ»ը՝ ստեղծագործութիւններ՝ որոնց ներքեւ կը ստորագրէր ուզածդ եւրոպացի խոշոր բանաստեղծ: Իսկ դրանք սնուած են իսկական կեանքից:

Հաղորդավար.— Եանի Ապելյի ուղղուած Ռուբէն Սեւակին նամակները ջերմ են, զգացմունքային: Ի՞նչ է գրում բանաստեղծը 1910 թուականի Յունուարի 27-ին:

— Ամենազօր նշանածս՝ Եաննիս: Հինգշաբթի իրիկունն է և ես Օրտինկայում եմ՝ համերգի: Երբ իրիկունն է և երաժշտութիւն կայ, ինձի համար աւելի մեծ հանոյ՛ք գոյութիւն չունի քան առնել գլուխս ձեռքերուս մէջ և երկարօրէն մտածել քու մեծ սիրոյդ մասին, որ կը պարուրէ զիս իր ոսկեղէն պատմուճանի մէջ: Ա՛խ, քու սէրդ Եաննի, քու սէրդ որ կը շոյէ, կը գրկէ, կը բուրէ և կը սպաննէ յաւերժօրէն, յաւերժօրէն:

ՎԼԱՏԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ [Գրականա-

գէտ].— Նա մի յօդուած ունի իր «Բժիշկի Գիրքէն Փրցուած էջեր»- որ այդպիսի վերնագրով ակնարկների, պատմուածքների, յօդուածների, նովելների մի շարք է: Մէկին վերնագիրն է՝ «Փոխան Հարսանիքի»: Այստեղ բարձրացնում է շատ հետաքրքիր մի հարց, Թէ այս նոյն հարսանիքները որ մեր ազգային հարուստները անում են... Աւելի լուր չէ՞, որ մի քիչ համեստ անեն և այդ մեծ, շոյլ ծախսերը մեր ազգային... հազար ու մի կարիք կայ... թող այդ կարիքներին ծառայեցնեն: Եւ իրենք տալիս են առաջին օրինակը: Հենց ժընեւում, շատ համեստ մի հայկական եկեղեցում. կարողանում են զուլս բերել իրենց պսակը:

Ս. ՍՐԱՊԻՆՆԵԱՆ.— Ահա, այս կնոջ հետ է ամուսնանում Ռուբէն Սեւակը. ընդունելով նաեւ կնոջ ազնուական հօր օրհնանքը, որը սկզբնական շրջանին դէմ էր «Բարբարոս» և մի «Անյայտ ցեղ»ի գաւակի կնութեան տալ իր դուստրը: Բայց երբ գրուցում է Ռուբէն Սեւակի հետ, Եաննի Ապելյի հայրը. Ֆրանս վոն Ապելը, ուղղակիօրէն գարմանում է նրա յմացութեան, արտասովոր կիրք շարժունակին. արտայայտած մտքերի իոր ու մարդասիրական որակներին: Եւ անմիջապէս համաձայնում են իր աղջիկը կնութեան տալ:

Հաղորդավար.— Ռուբէն Սեւակի և Եաննի Ապելյի անզուգական սէրն այնքան անկեղծ ու ազնուական էր, որ այժմս էլ, և սա վստահօրէն պիտի ասենք, տարիներ յետոյ՝ յուզելու է իւրաքանչիւր ընթերցող: Այդ մեծ սէրը իտէալական էր համարում ինքը՝ բանաստեղծը գրելով.— Ահա, թէ ինչ էր կարդում իր սիրեցեալը՝ Եաննի Ապելը իր նամակներից մէկում.— Եւ կարելի՞ է երազել սէր մը աւելի սիրատոջոր քան մերը, վէպ մը աւելի վիպային քան մերը, խորհուրդ մը աւելի խորհրդաւոր քան մերը, նուիրում մը աւելի նուիրական քան մերը: Եւ ըսել, որ մենք վէպ մը չենք...

Իսկապէս՝ Ռուբէնի և Եաննիի նամակները ռոմանթիկ, անմար սիրոյ մի վիպերգութիւն են. այդ նամակներով հարստացել են հայ գրականութեան էջերը: Զնայած, որ այդ ամէնը ողբերգական աւարտ են ունենում...:

Ս. ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Եաննի Ապելյի ուղղուած նամակներից մէկում, առաջին այդ սիրային խոստովանութիւնների շրջանում, երբ նրանք հանդիպում էին Եաննի Ապելյի ծնողներից դեռ գաղտնի, բարձունքի վրայ... այս մասին լուր է ասում

Ալեքսան Թօփչեանը... գեղարուեստական խորհուրդ է դրել... Սեւակ խոստանում է Եաննի Ապելին... սիրել անգամ «Մահից Յետոյ»... Աէրը մահուան խորհուրդ ունի: Եթէ մահը չլինի, սիրոյ խորհուրդը նրա համար կը լինի սովորական մի զգացում. ուրիշ ոչինչ:

[Խմբ. Այստեղ ցոյց կը տրուին տեսարաններ 1909-թ.ի Ատանայի ջարդէն]:

Հաղորդավար.— 1909-թ.ի Ապրիլին, Ատանայում թուրքերը կոտորեցին 30,000 հս-
յերի: Այրեցին ու ոչնչացրին մշակութային հին, մեծարժէք բազմաթիւ կառոյցներ:

Ռուբէն Սեւակին միայն լուրերը չէ որ հասել են: Նա Լոզանում տեսաւ ջարդերի ցուցադրուած լուսանկարները: Սեւակը ցնցուած էր Թուրք մարդասպանների անբնական յիռապոթոսիսներէն: Նա մեծապէս դառնացած էր հայութեան անօգնականութիւնից ու աշխարհի անտարբերութիւնից: Բանաստեղծը պիտի քաջականչէր, պիտի ողբար իր Ազգի ճակատագրի համար. «Լճու է՛ք զանգակ-
ներ: Աստուածն է մեռե՛ր: Գոյժ տուէ՛ք մահուան, զի Ազգը մեռաւ: Գոյժ տուէ՛ք հայուն, զի Ազգը մեռաւ: Զանգակներ... բարի զանգակներ...»

ՄԱՐԾ ՄՈՎՍԻՍԵԱՆ [Ռ. Սեւակի անուան գրական մրցանակակիր].— Երբ Սե-
ւակը նոյն իսկ ասեմք՝ Երլուրթերի իշխանութեան գլուխ անցնելից յետոյ երբ
հռչակուեցին «Եղբայրութիւն», «Հաւասարութիւն»... և այլն... լոզուեցները, շա-
տերը հաւատացին դրանց, այդ հռչակուած գաղափարներին. և այնպիսի խոշոր
մտաւորականներ, նոյնիսկ ինչպէս Գրիգոր Զօհրապն էր... հաւատացին... Իսկ
Ռուբէն Սեւակը չէր հաւատում, և հեռուից հեռու, գիւնուած այսպէս ասաց՝ ուզ-
մեք գում, «Այլասերում» յայտնի յօդուածում ասում էր՝ այո, թուրքին հետ սլտմ
է բարեկամութիւն անել, բայց... հարկ է զգուշանալ: Եւ ասում էր «Զանգակ-
ներ»ում... եթէ ուզում է ապրել Գառը. պէտք է ակոսները սրի... պիտի ակոսն
սրել գիտե՞նայ... որ Գայլն ու Գառը կարե՛նան կողմ-կողմի ապրել-Գայլը՝ Թուր-
քերը և Գառը՝ հայերը չեն կարող միատեղ ապրել...

Ս. ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Իսկապէս բանաստեղծութիւնը մարդկային հոգին յեղաբե-
կելու արժէք ունէր Ռուբէն Սեւակի համար: Եւ այս առումով պէտք է նշել, որ ինք
ոչ այնքան սպանեցու... իսկ կեանքին և մահուան խորհուրդը իր բանաստեղծու-
թեան մէջ գնում է որպէս Կարմիր Գիրք: Ըստ էութեան իր միակ ժողովածուն՝
եթէ մե՛նք վերջիշե՛լու ենք՝ ապա պէտք է ասել՝ ինքը փորձում է վերակերտել մարդ-
կային հոգին: Անբաւարարուածութեան զգացում ունի Ռուբէն Սեւակ անցեալի
դասական գրական արժէքներից, սուրի եւս՝ բանաստեղծական գանձարանից:

Հաղորդավար.— Հրանդ Նազարեանին գրած նամակում Ռուբէն Սեւակ հե-
տեւեալ միտքն է յայտնում.

— Հրանդս՝ եթէ բժիշկ եղած չըլլայի՝ ամենամեծ փափաքս էր՝ երկրագործ
ըլլալ: Ու նոյն իսկ դեռ հիմա, ամենավերջին փափաքս է՝ օր մը կարենալ գիւղ
հաշուիլ ու կեանքիս վերջին տարիները դաշտերուս ու հողերուս վրայ անցընել,
լուրեան ու բնութեան մէջ: Եկուր տես, որ մեր երիտասարդները չեն հասկնար
այս բաները: Եւրոպա նետուիլ կ'ուզեն իսկոյն: Մինչդեռ հոն, եօթ տարի ապրող
մը միայն կրնայ գիտնալ, թէ ինչ է հաղափակրթութիւնը, զարգացած կեանքը:
Ամէն բան հոն սուտ ու կեղծիք է, շարք ու ամօթ: Ասիկա իմ համոզումս է...:

Ս. ՍՐԱՊԻՈՆԵԱՆ.— Նա հրատարակեց մի գիրք, որի վերնագրին նման վեր-
նագիր համաշխարհային գրականութիւնը չի տեսել: Ռուբէն Սեւակը իր գիրքը
վերնագրեց «Կարմիր Գիրք»: Մեր իրականութիւնը ինքը արիւնոտ էր ու (→ էջ 3)

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ ՄԵՐ ԿԱՏԱՐԱԾ... (Շար. էջ 2-էն)

կարմիր: Եւ մեր գրականութիւնը ձեռք է բերում ըստ էութեան՝ կարմիր գոյն: Գրականութիւնը փոխում է իր գոյնը... և սա մեծագոյն ողբերգութիւն է հենց իր, մեր Գիր-Գրականութեան համար: Բայց հայ գրողը դատապարտուած էր գոյների մէջ ընտրելու միայն կարմիրը:

Այս դիտանկիւնից՝ Ռուբէն Սեւակը ըստ էութեան իր ժամանակին ամենաարագ արձագանգող բանաստեղծներից մէկն էր: Եւ այս դիտանկիւնից՝ սահպանուել է նրա նամակների մէջ այսպէս կոչուած վկայութիւններ, որոնք ցոյց են տալիս, թէ ինչքան զգայուն է եղել բանաստեղծի հոգին:

Հաղորդավար.— Քսանդրոս սմեայ երիտասարդը կանխազգում էր մօտեցող մահը: Մահուան ուրուականը հետապնդում էր բանաստեղծին՝ նրա ողջ ստեղծագործական կեանքում, որը դաժան նախախնամութեամբ՝ նահատակութեան մի նախապատրաստութիւն էր: Ահա, անհաւատալի փաստը.

– Կը ցանկամ, որ վերջնականապէս հայրենիք վերադառնալէ առաջ, երթամ գարուն մը, հաշուուած գարուններէն մէկը Վենետիկ անցընեմ, ապրիմ-ապրիլս զգամ. մեռնիլս կանխազգալէս առաջ»: Այս նամակը գրուած է 1911 Փետրուար 4-ին, Լոզանի մէջ:

Ս. ԴԱՆԻԷԼԵԱՆ.— Ես կ'ուզեցայի անսլայման Ռուբէն Սեւակի ստեղծագործութեան մէջ ընդգծել նաեւ մի երրորդ կարեւոր նախապայման-տիպար՝ Սիրերգակը:

Ամէնից նուիրական աշխարհը, որ նա ունէր՝ սէրն էր: Եւ սէրը բացայայտելու համար, Հայաստանն էլ կարծես նեղ եկաւ իրեն: Պոլիսն էլ նեղ եկաւ իրեն: Հայտնիին էլ նեղ եկաւ իրեն, և ինք բացուեց դէպի չքնաղ Ապէլը...

Հաղորդավար.— Թուում էր, թէ Արեւմուտում, Ռուբէն Սեւակի ու նրա ընտանիքի համար, բոլոր նախադրեալները կային լիարժէք ապրելու և երջանիկ լինելու համար: Յաջողութիւն, նուիրուածութիւն ու տաղանդ... ընտրած մասնագիտութեան մէջ... ներդաշնակ ընտանիք, իսկական մեծ սէր, ստեղծագործական վայլուն կեանք: Պակաս կարեւոր չէր նաեւ նիւթական բարեկեցիկ վիճակը: Այնուամենայնիւ, հեռուից անգամ զգացում էր կոտորածների մղձաւանջը: Եւ հայ մտաւորականութեան շատ ներկայացուցիչներ վերադառնում էին տուն:

. Այդպէս՝ 1914-թ.ին, Ռուբէն Սեւակն ընտանիքով վերադարձաւ Կոստանդնուպոլիս:

Ս. ՍՐԱՊԻՈՆԵԱՆ.— Նրանք երբ 1914-ին վերադարձան Պոլիս: Նորից մի տխուր վկայութիւն.— կիւնը որ սովոր էր Եւրոպական մարդկային կեանքի, հասարակական կեանքի դրսեւորումներով մարդկային որակին... կիւնը նկատում է տարօրինակ մի բան: Այստեղ, այս իրականութեան մէջ: Նա ուղղակիօրէն. հենց Պոլսոյ քարափը, շոգեմաւից իջնելուց յետոյ, [իսկ Ռուբէն Սեւակ այդ ստեղծ երկու երախաների հայր էր. ծնունդ էր նրա Լեւոն որդին, ծնունդ էր նրա Շամիրամ դուստրը 1914-ին] ձեռքը ծծկեր երախայ ունեցող կիւնը ուղղակիօրէն դիմում է Ռ. Սեւակին ասելով.— 'Խառնակ սա շոգեմաւով, Ռուբէն: Այս ստեղծը ինձ բնադուր չեկան: Չե՞ս տեսներ մարդիկը: Ոչ մէկ ժպիտ կայ անոնց դէմքերուն վրայ»: Ճշմարիտ, իրական վայելքների որակներին սովոր գերմանուհի աղջիկը զգում էր այն ներքին, թափուն վտանգը...:

Հաղորդավար.— Գրական աշխատանքի նոր՝ բուռն շրջան էր սկսել Ռուբէն Սեւակի համար: Նա իր հարազատ տարերքին մէջ էր: Արեւմտահայ արուեստագէտների միջավայրում:

Ա. Համաշխարհային պատերազմը սկսուելուց յետոյ, Սեւակը կանչուեց թրեական բանակ, Սպայի աստիճանով, որպէս զինուորական բժիշկ:

Մի հանդիպման մասին Մերուժան Պարսամեանը պատմում է.

– Առտու մը տեսայ զինք ձիու մը վրայ, զինուորական բժիշկի համազգեստով: Երբ տուն հասանք՝ իր անտիպ էերթուածներէն ու արձակներէն կարդաց: Մերթ Տիկին Զիլինկիրեանն էր. որ իր շքեղ կիսաստուերը կը պոլլոցներ սենեակին մէջ: Տախութիւն մը, երաժշտութիւն մը հոսեցնելով սամ մթնոլորտին մէջ:

Նոյն իրիկուն իսկ իմացայ, որ ձերբակալեր են զինք:

Վ.Ա.ՏԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ.— Ռուբէն Սեւակը շատ ցամաքայից բանաստեղծութիւններ ունի թուրք բռնակալութեան դէմ ուղղուած:

Օրինակ՝ նրան, յատկապէս նրան շատ մեծ վրդովմունք էր պատճառել սուաչին կոտորածը Երիտասարդ Թուրքերի, 1909-թ.ի Կիլիկիայի սպանդը:

Այս կոտորածների առիթով նա գրել է մի ամբողջ շարք բանաստեղծութիւններ՝ վրէժի, այդպէս՝ ցասման արուայայտութիւններ:

Մի բանաստեղծութիւնը յատկապէս՝ «Վրէժի Սերմնացանը» շատ է վրդովեցրել

թուրքերին: Յետագայում, այդ՝ 1915-թ.ի իրենց այդ վայրագութիւնները արդարացնելու համար հիմա էլ թուրքերը այդպիսի բաների են դիմում չէ՞- իրենց արդարացնելու համար Եւրոպայում նրանք գրքեր են տարածում. սպալոդոնորոշող տեղեկատուութիւն՝ թէ հայերն են մեղաւորը, վերջին հաշուով:



Գերմաներէն մի գիրք են հրատարակում Արեւմտահայ բանաստեղծների ստեղծագործութիւններից, թէ՛ ինչքան վրէժի կանչ, այդպէս էլ ցասում կայ թուրքերի նկատմամբ: Եւ բանաստեղծութիւններից մէկն էլ Ռուբէն Սեւակի այդ «Վրէժի Սերմնացան» բանաստեղծութիւնն է, որի մէջ նա բացայայտ վրէժի կոչ է անում այս քաղաքած անմեղ արիւնի համար:

ՄԱՐՕ ՄՈՎՍԻՍԵԱՆ.— Ռուբէն Սեւակին ախորեցին Զանդըրի: Նա բուժում էր հիւանդներին, ախորականներին ու տեղացի թուրքերին:

Եւ բոլորիս յայտնի է այստեղ... Հէնց Արապանի Իսմայիլ անունով մի թուրք պաշտօնեայի սղջիկը հիւանդանում է: Եւ Ռուբէն Սեւակին կանչում են իր մօտ որպէս բժիշկ՝ բժշկելու:

Աղջիկը սիրահարւում է Սեւակին, և այդ՝ պաշտօնեային միակ սղջիկն է, հիւանդը: Ու հայրը Ռուբէն Սեւակին ասում է, որ «ԴՈՒՔ, ՄԻԵԻՆՈՅՆՆ Է՛ ԲՈՒՂՈՐԴ ԷՒ ՊԻՏԻ ՍՊԱՆՈՒԷՔ», «ԵՒ ԵԹԷ ՄՍ.ՀՄԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒ-

ՆԻՍ, ԻՄ ԱՄԲՈՂՋ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ, ԱՂՋԿԱՆՍ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ, ՔԵՁ ԵՄ ՏԱ-
ԼԻՍ: ԿՆՈՒՔԵԱՆ ԱՌ
աղջկանս»:

Եւ երբ Ռուբէն
Սեւակը ասում է, որ
ինքը ամուսնացած է
և երկու երախայ ունի,
կսռսայանը պատաս-
խանում է.— *Խնդիր
չէ. մեզ մօտ կարող
ես կնոջդ էլ աշատեղ
բերել»:*

Սեւակի հետ աֆ-
սորուած Դանիէլ
Վարուժանն ու հայ
ուրիշ մասուորակա-
նքը, բոլորը խոր-
հուրդ են տալիս Ռուբէնին որ ընդունի առաջարկը: Բայց Ռ. Սեւակը միանշանակ
մերժում է ասելով.



— Ժողովուրդը մեզ է սպասում: Եթէ մենք մեր դաւանած գաղափարին դաւա-
նանք, ժողովուրդը ինչ կը սովորի մեզանից: Մեռնենք, որ Ազգը սալրի»:

Հաղորդաւար.— Բանաստեղծը հրաժարում է կրօնափոխ լինել: Անշուշտ՝
կեանքի գնով: Նա չի դաւանանում՝ իր հաւատին, իր Ազգին, իր Եաննիին որ արդ
երկու զաւակ էր պարգեւել: Նա հաւատարիմ է մնում նաեւ իր սիրոյն, և դարձ-
եալ կեանքի գնով: Քանի-քանի անգամ Եաննի Ապէլը դիմում Կ. Պոլսոյ Կայսե-
րական Գերմանիոյ դեսպանատան ու թրքական իշխանութիւններին, բարբարոս-
ներին պատժելու պահանջով: Այդ դիմումներից մէկում ահա, թէ ինչ ենք կար-
դում.— 12 հոգուց բաղկացած ուղջ աւազակների խումբը կախաւան հանուի դես-
պանատան վկաների՝ առջեւ: Սակայն Եաննիի ջանքերը զուր են անցնում: Քանի
որ բոլորը մէկտեղ էին նիւթել չարագործութիւնը»:

Օգոստոսի 26-ին, Հինգշաբթի առաւօտեան, հինգ հոգի երկու կտուրով ուղարկ-
ւում են Այաշ, որոնց մէջ էին Ռուբէն Սեւակն ու Դանիէլ Վարուժանը: Երեկոյ-
եան ժամը 12-ին, հասնում է նրանց սպանութեան լուրը: Իսկ մեկնելուց ընդ-
ամէնը 24 ժամ յետոյ, Կոստանդնուպոլսից հեռագիր է ստացում, որ դրանք
պէտք է ազատ արձակուեն:

Վ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ.— Գերմանացի Վանկէնհայմը- այդպիսի մի վկայութիւն է
պահպանուել- նրան շատ կտրուկ ասում է [Ռ. Սեւակի կնոջ].

— Թշուառական. ո՞վ է այդ հայը որին դու ճակատագիրդ ես կապել: Դու չգի-
տե՞ս, որ նրանք գնացին... ա՛յլեւս վերադարձ չկայ...»:

Ս. ՍԻՍՊԻՆՆԵԱՆ.— Նա պահանջում էր դահիճներից իր ամուսնոյն: «Ամու-
սինս ոչ մէկ վնաս պատճառած է Թուրքիոյ կառավարութեան և Թուրքիա երկ-
րին: Ան Թուրքիոյ ամենահաւատարիմ քաղաքացին է: Եւ անոր ծառայած բժիշկ-
ներէն մին է: Ինչո՞ւ ամուսինս անմեղ տեղը պիտի ձերբակալեն-դիմում է Գեր-
ման դեսպանութեան: Վերադարձուցէ՛ք ամուսինս: Ես գերմանահպատակ եմ և
ազնուականի դուստր»:

Իսկ երրորդ այցելութեան հիւպատոսը ծաղրում է իր իսկ երկրի ֆաղափացուն: Ծաղրում է այն կնոջը, որ համակ նուիրում է:

– Տիկին, հայու մը հետ –ընդ որում նա հայ բառը արտասանում է բաւական մեծ արգահատանքով–, հայուկի մը հետ ըլլալով, դուք դաւանանած էք Կայսերական Գերմանիոյ շահերին, և ձեր ամուսինը Թուրքիոյ դէմ յանցանք գործած ըլլալուն՝ իր արժանի պատիժը պիտի կրէ»:

Իսկ Ասլէլը չի յուսահատում: Նա սյարգապէս նետում է հիւպատոսի դէմքին քէ.– Ամուսինս ձերբակալուելէ առաջ երկու զաւակ ձգած է... երկուքն ալ պիտի մեծցնեմ մին Թուրքիոյ, միւսը՝ Գերմանիոյ դէմ»: Եւ նա հաւատարիմ մնաց իր խոստումին:

Մ. ՄՈՎՍԻՍԵԱՆ.– Նոյնիսկ Սեւակի սղան՝ Լեւոնը, Բ. Աշխարհամարտի տարիներին, Ֆրանսայի Դիմադրական Շարժման (Ռեզիստանս) բանակի կազմում կուում է Գերմանիոյ դէմ:

Ս. ՍՐԱՊԻՈՆԵԱՆ.– Իսկ աղջիկը՝ Շամիրամ, որ կենդանի է այսօր, 93 տարեկան, չխօսեց գերմաներէն, ո՛չ էլ թրքերէն: Նա ատելութիւն կը տածէ Գերման ցեղի նկատմամբ, և չի ընդունում Գերմանիոյ այդ ժամանակուայ ֆաղափականութիւնը:

Հաղորդավար.– Եաննի Սեւակը ամուսնու մահուան գոյժը լսելուց յետոյ էլ, չէր կորցրել յոյսը: 1915-թ.ի Նոյեմբերի չորսին, Գերմանական դեսպանատան թարգմանիչ Հայկ Թալէթէնեանին գրում է.– Կը տառապիմ: Աստուծոյ սիրոյն, ազնուութիւն ունեցէ՛ք երթալ տեսնելու Տիկ. Վարուժանը և իրեն հարցնելու. քէ ինչ եղած է Տօջիի աշխատութեան արդիւնքը ամուսինին մասին: Ինծի համար ատիկա մեծ կարեւորութիւն ունի, որովհետեւ դեռ ձեռքս ապացոյց մը չունիմ իմ Ռուրէնի մահուան մասին: Եւ կը յուսամ ստկարին...:

Վ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ.– Կիւնը այնքան բարձր առաքինութեան սէր կ'իւն է եղել՝ հենց որ լում է լուրը, առաջին հերթին վազում է կնոջ մօտ: Եւ երբ նրան տեսնելու համար են տալիս որ Սեւակը չկայ այլեւ... ասում է.– ծնողներին լուր չտան»: Առաջին առթիւ Սեւակի ծնողներին մասին է մտածում, որ նրանք չյուզուեն: Խեղճը յոյս է ունեցել, որ իր գերմանացիի ծագումով, ինչ որ վճռական բան կարող է սնել:

Ս. ՍՐԱՊԻՈՆԵԱՆ.– Երեսուն տարին բանաստեղծի մը համար շատ է. քէ՞ քիչ... ոեւէ մէկը չի կարող սսել: 30 տարին ոմանց համար շատ է, ոմանց՝ քիչ: Սեւակի սյարսագային հաստատապէս քիչ չէ. որովհետեւ դանդաղ զարգացման ու մեծ պոթկումների բանաստեղծ է: Որովհետեւ նրա առանձին երկերը, յատկապէս՝ «Ինչու», «Ձանգակներ», «Կարմիր Կարօտ»ը և նաեւ, ի հարկէ՝ «Երթալը», «Պոլսոյ Որովայնին Մէջ»ը և անպայման «Գիշերն իջաւ» բանաստեղծութիւնը որի մասին ես սասացի– այդ անյոյս ու լուռ իջնող գիշերը բերում էր սպրեւելու, վայելելու, երանելու և ֆարանալու երջանկութիւնը. և այս բոլորը զգացող բանաստեղծը, իր այս երգերով եթէ ուրիշ բան գրած չլիներ, յաւերժօրէն մնալու էր հայ գրականութեան անդատանում:

Ու քանի հեռանում ենք նրա ապրած ժամանակից, այնքան բիւրեղանում է իր այս կերպարը, այնքան աւելի տեսանելի են դառնում նրա բանաստեղծութիւնների լուսաւոր և ստուերոտ կողմերը: Եւ, այնուամենայնիւ, համոզում ես, որ լոյսը գերակշռում է ստուերին:

ԱԶՈՒՆԻԷՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՈՒԺԱՐԱՆԻՆ ...

Ծ Ն ՈՒ Ն Դ Ը

ՍԻՄՈՆ ԿՈՍՏԱՆԴԻՆԵԱՆ

4-1-2010-ի յառաջում, Ազունիէյի Հայ Ազգային Բուժարանի տնօրէն՝ Պրն. Տիգրան Պոյաճեան, հեռախօսով կը կասուի հետո: Կը պայմանաւորուինք որ նոյն օրը, կէսօրէ ետք, գտնուինք բուժարան, որ Սրբ. Ծննդեան տօնին առթիւ որոշուած խրախճանքի ոգեւորման դառնամ մասնակից ձեռնադաշնակովս, բուժարանէն ներս:

Ժամը 3-ին, բուժարանին փոխադրակառքը արդէն կը սպասէ զիս տանս առջեւ: Անոր ազնիւ վարիչը՝ Պրն. Սարգիս կը դիմաւորէ զիս: Կ'ուղղուինք Ազունիէ: Կամաց-կամաց կը հեռանանք քաղաքի խճողումէն, ալմուկէն, մուխէն ու ծուխէն: Որքան բարձրանանք լեռները, այնքան կը նուազին ալմուկ ու խճողում: Մեր մտքերը կը հասնարտին: Առանձնութիւնը ինքզինք կը սլարտադրէ որպէս մտերմիկ բարեկամ: Ի՛նչ լաւ զգացում, քաղաքի այդ խճողումէն ետք՝ առանձնանալ, հանդարտիլ լուծեան մէջ: մօտաւորապէս մէկ ժամ ետք, կը գտնուինք Ազունիէյի բուժարանին երկաթեայ մուտքին առջեւ:

Վարորդը ցուցամատի սլաքով շարժումով, ձեռքին ունեցած «Ռիմոնթ»ին միջոցաւ, կը բանայ դարսասին դուռը: Կը մտնենք ներս: Փոխադրակառքը կանգ կ'առնէ բուժարանի սահակին սենեակին առջեւ: Վարիչը կը յանձնէ անոր երկու տուփ սիկարէթ, ու կ'անցնինք ներս: -25 տարի սիկարէթ ծխեցի. բայց հիմա ալ չեմ ծխեր,- կ'ըսէ վարիչը աւելցնելով.- Բժիշկը արգելեց: Հակառակ անոր որ թոքերս նկարեցին, և արդիւնքը հայելիի սլէս մաքուր ելաւ: Բայց, իբր թէ, սրտիս երակները սիկարեթէն կը սնդանան: Երկու անգամ, բժշկական միջամտութեամբ, բացին սրտիս երակները»: -Լաւ կ'ընես չծխելուդ,- կ'ըսեմ,- աւելցնելով.- զգուշութիւնը լաւ բան է»:

Երկններանգ լուսագիծերով պատկերուած եղնիկներ կը զարդարեն հիւանդանոցին դարպասը: Գեղեցիկ ծառեր, ինամուած բոյսեր կը տեսնես ամէն կողմ: Կանգ կ'առնենք պահ մը բուժարանի ներքնամուտքի դրան առջեւ: Յուրտը մեզ կը դիմաւորէ երբ դուրս կուգանք փոխադրակառքէն: Կ'ուղղուինք ներս: Փայլուն սալայտակ, մաքուր պատեր: Կը զգաս որ բուժարանը վստահելի, սպահով ձեռքերու մէջ է: Պրն. Տնօրէնը գրասենեակն է: Զիս կը դիմաւորէ քարտուղարուհի մը խնդումներս: Քիչ ետք, հաստատութեան տնօրէնն ալ կը միանայ մեզի: Կը զրուցենք ծրագրուած միջոցառումին մասին: Օրիորդ մը կը մօտենայ ու կ'առաջարկէ.

- Սուրճ մը կրնամ հրամցնել ձեզի»: Մետաղեայ 500-նոց մը ձգելով սուրճի մեքենային մէջ: Կը զրուցենք գաւաթ մը սուրճի շուրջ:

- Ես ալ անցեալին արուեստասէր եղած եմ: Աւելի թատրոնով կը զբաղէի Համազայինին մէջ: Այսօր վեց տարի է որ այս բուժարանը տունս եղած է,- կ'ըսէ հիւրընկալ տիկինը: «Քաղաք երբեք չէ՞ք իջներ,- կը հարցնեմ.- Մէկը չունիմ հոն կ'ըսէ,- աւելցնելով, որ ելքայր մը և քոյր մըն ալ ունի Պէյրութ, և կը շարունակէ. - Բայց ես մէկու մը վրայ բեռ չեմ ուզեր ըլլալ, ու կը խօսի Ազունիէ-Պէյրութ երթեակի դժուարութեան մասին: Ժամը կ'ըլլայ հինգ: Կը շալկեմ ձեռնադաշնակս և կ'ուղղուիմ վերելակ, բարձրանալու համար 2-րդ յարկ, փոքր սրահ մը, ուր որոշուած է կատարել հաւաքը: Մուտքի-պատին վրայ կը կարդամ հայ բարերարներու անուններ՝ Լոս Անճելըսէն, Լիբանանէն և այլն: Կը նկատեմ տիրող մաքրութիւնը,

ամէնուրեք: Կարմիր փուշիկներով զարդարուած են սրահին պատերն ու սուսանայը: Կար լուսազարդ կաղանդի ծառ մը: Ներքեւը՝ մսուր մը, Ծնունդը խորհրդանշող: Քով-քովի դասուած 3 սեղաններ: Զգալի էր, որ ուզուած էր տօնական մթնոլորտ ստեղծել: Բուժարանին սլափապարեալները կը սկսին հասնիլ: Ոմանք՝ քալելով, ուրիշներ՝ սայլակի վրայ նստած: Տեղ կը գրաւեն շարուած աթոռներուն վրայ. հիւանդասպահուհիներ կ'օգնեն անկարներուն:

Արդէն սրահը լեցուն է: Ժամն է նուագի ունկնդրութեան: Կը սկսիմ նուագել: Ներկաներէն շատերու դէմքերը ծանօթ են ինծի: Պուրճ Համուտի և մերձակայ թաղերուն մէջ տարիներ հանդիպած եմ անոնց: Հիմա անոնք հոս են: Անոնցմէ ամէն մէկը աչքերուս նայելով կ'ուզէ ինծի պատմել իր կեանքի սլափապարեալները: Սակայն ժամը սլափապարեալ չէ այս մէկին համար: Հիմա նուագի, երգի ժամն է: Կատարումներու մէկ պահին վաթսուտի մօտ մարդ մը կը մօտենայ ինծի:

– Պարոն, – կ'ըսէ, – մի կարծեր որ այս հարցումովս կ'ուզեմ խառնուիլ քու անձնական կեանքիդ: Դուն ամուսնացած ես:

- Այո, – կը պատասխանեմ:
- Զաւակ ունի՞ս:
- Այո, մէկ տղայ... Աստուած տուաւ:
- Փառք Աստուծոյ: Նայէ սա վիճակիս: Ես չամուսնացայ ու մնացի անտէր, մինակ: Եթէ զաւակ ունենայի, գոնէ գաւաթ մը ջուր կուտար ինծի, – կ'ըսէ:
- Քիչ անդին հիւանդ մը այնքան ուժգին կը հազայ, որ կը զարմանաս թէ ինչպէս անոր աչքերը կը մնան իրենց ակնակապիճներէն ներս:

Տեսակ-տեսակ և առատ ուտեստեղէններ կը հրամցուին: «Գօթիյեօն»ի գլխարկներ ու սուլիչներ կը բաշխեն բոլորին: Ուրախ մթնոլորտ մը կը ստեղծուի հակառակ պարզուող բոլոր տխուր երեւոյթներուն:

Յիսուս մանուկը այդ օր կրկին ծնաւ Ազգային բուժարանին մէջ՝ Ազունիէ: Անոր հետ ծնան նոր յոյսեր. եղան բուժումի մաղթանքներ: Մեր լաւատեսութիւնը խթանուեցաւ հակառակ կեանքի բոլոր դժուարութիւններուն:

Մաղթենք, որ միշտ բարգաւաճին մեր ազգային, հայկական հաստատութիւնները, որոնք պիտի ծառայեն մեր գաղութին:

Անհատներ որքան ալ հարուստ ըլլան ու նոր ինքնաշարժեր և շէնքեր ունենան, պիտի կորսուին իբրեւ անհատներ մօտ կամ հեռու ասպազային:

Միայն մեր հայկական հաստատութիւնները, եկեղեցին, դպրոցները, գիրքը և... Յիսուս մանուկին մսուրը պիտի մնան մեր ժողովուրդին կողքին, որ անոնց ծառայեն:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ ՄԵՐ ԿԱՏԱՐԱԾ... (Շար. էջ 3-էն)

Հաղորդավար. – Ողբերգական այս վախճանի մասին անհնար է առանց յուզումի խօսել: Անհնար է նկարագրել 1915 թուականի հայ բանաստեղծների կրած տանջանքները մարդակերների նիրաններում:

Ռուբէն Սեւակ նահատակ հայ բանաստեղծների ամենակրտսերն էր: Վաղածամ մահը նրանից խլեց իր տաղանդը խորացնելու և հասունացնելու պատեհութիւնը: Եւ նա իր աչքերը փակեց վերջին խօսքը չասած:

ՄԵՆՔ, ԿԱՆԳՈՒՆ ԵՆՔ ... ՄԵՐ ԼԵՌՆԵՐՈՒՆ ՊԷՍ... (Շար. էջ 1-էն)

Քանի որ սուսջինը իր արժանի «Գնահատութիւն»ը չստացաւ: Հաշիւ ուզող չեղաւ Ցեղասպանէն: Աւելին՝ քաջալերեց նորերու գործուիլը: 1939-թ.ին Հիթլերն եղաւ խըրախուսողը իր էս. էս.— ները ըսելով.— ՋԱՐԴԵՑԷՔ ԼԵՀ-ԵՐՈՒՆ՝ ԱՆԽՆԱՅ: Ո՞Վ ԿԸ ՅԻՇԷ ԱՅՍՕՐ ՀԱՅԵՐԸ...»:

Նացի Ֆիւրիերին մերօրեայ ուշիւ աշակերտները եղան Ազերիները որոնք, 22 տարի առաջ, գործեցին իրենց տխրահուշակ ուսուցիչներուն՝ Թալաթի ու Հիթլերի անգործութեամբ, որոնք կոտորած էին միլիոնաւոր անմեղներ Ա. և Բ. Աշխարհամարտերու ընթացքին:

Եթէ Օսմանցի թուրքը չպատժուեցաւ՝ ինչո՞ւ հաշուետուութեան կանչուի իր կաթընեղբայր Ազերին:

Ինչո՞ւ Ազերին չգործէր Սումկայիթ և միւսները... չպահէ բռնագրաւեալ հողաւատներ Ղարաբաղէն... հրադադարը խախտելով հայ զինուորներ չսպաննէ սահմանագծին վրայ դեռ մինչեւ օրս: Չպահանջէ հայապատկան Լ. Ղարաբաղին վերադարձուիլը իրեն: Իսկ միւս կողմի իր հոգեղբայր Թուրքն ալ, Արեւմտահայաստանը մարսել է ետք, իր գործած Ցեղասպանութիւնն ալ սեպելով մոռացութեան տրուած. Արդար դատաւորի խստութեամբ պայման կը դնէ Հայուն առջեւ ըսելով.— Հայաստանի հետ սահմանը չենք բանար քանի դեռ Արցախը չէք վերադարձուցած Ազերիին: «Ցեղասպանութիւն» կը բարբանջէք: Աչք ունիք «Թուրքիոյ արեւելեան տարածքին վրայ...» Ինչպիսի՞ շնականութիւն, սինիզիմ» է սա, թուրքին լեզուագարութիւնը:

Ինչո՞ւ նորանոր ոճիւր ու բռնագրաւումներ չկատարուին, երբ այս կողմէն ալ մեր պետական սյրերէն ումանք կ'այրին ու կը մրրկին հաւատացնելու համար Ոճրագործին ու Յափշտակիչին, որ Հայը պահանջ չունի իրենցմէ, ո՛չ ալ հաշիւ կ'ուզէ երկու միլիոն հայերու թափած անմեղ արիւնին փոխան: Աչք չունի «Թրքապատկան» հողերուն վրայ...

Եւ վերջապէս՝ ինչո՞ւ, այս բոլորէ ետք, Հայը չկոչուի... «Ջարդարար, Բռնագրաւիչ, Ջրպարտիչ ու Ոխերիմ...» և ոճրապարտն ի՛նք չըլլայ անիրաւաբայ պայմաններ դնողը... մեր՝ Ջոհիս առջեւ:

Ո՛չ, հայրենակիցներ, Պարոնայք իշխանաւորներ, իրաւունք չունի՛ք հայութեան անունով այս աստիճան անյիշազար ու ներուղ ըլլալու: Հայը գիշելիք բան չունի այլեւս...

... ՈՉ ԻՍԿ ԿԱԹԻԼ ՄԸ ԱՐԻԻՆ ՈՒ ԹԻՉ ՄԸ ՀՈՂ:

Ընդհակառակն-Հայը է՛ ու կը մնայ պահանջատէր: Աւելի քան երբեք:

Ի հեճուկս մեզի պարտադրուած Եղեռն-Ներուն, Ցեղասպանութեան, Սումկայիթ-Ներուն, բռնագրաւումներուն և մեր դէմ գործուած հազար ու մէկ անիրաւութեանց...

Կանգուն է հայը, մերօրեայ աննուան Արցախը խորհրդանշող Ա. էջի սա վիթխարի յուշակոթող-ճկարին պէս:

ՄԱՐՕ ՆԱԶԱՐԲԷԿԵԱՆ... (Շար. էջ 1-էն)

Կանանց հարցը չի կարելի առանձնացնել ընդհանուր տնտեսական ու քաղաքական խնդիրների ամբողջությունից: Կանանց բախտի վրայ սովորում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ քաղաքական կարգը, սնանկությունը, հասարակական գաղափարները, աշխատանքի և կապիտալի փոխ-յարարբերությունը եւ այլն... այլ կերպ ասած՝ կնոջ անձը հաստատում է այդքանով, որքանով՝ զրան նախատում են պայմանները: Տիրում է քաղաքական ուժակցիան, կինը դառնում է ճնշելու և ստորացնելու սուարկայ: Յետոյ յուղթանակում են սուաջաւոր սոցիալիստական գաղափարները: Կինը ազատագրում է և զարգանալու հնարաւորութիւն ձեռք բերում:



Այս տարեկիցին յատկապէս վառ է արտայայտուում երկու գաղափարների՝ Սոցիալիստական և Կապիտալիստականի միջեւ եղած տարբերութիւնը, մեր և Յետադիմական Արեւմուտքի կանանց տարբերութիւնը:

Գերմանական Յաշիստները առաջ քաշել և իրականացնում են հետեւեալ լոզունգը... ԿԻՆԸ ԱՇԽԱՂՉՈՒՄ ԽՈՂԱՆՈՑԻ ՀԱՄԱՐ Է ՈՒ ԱՆԿՈՂՆՈՒ»:

Մեզ մօտ, յսղթանակող Սոցիալիզմը յայտարարել և իրականացնում է՝ «Կինը առաջաւոր գծում» լոզունգը, որ ոչ թէ գծազիր է, ապստրակտ գաղափար, այլ՝ կենդանի իրականութիւն, որը այնպէս, անսպասելի ու կուրացնող փայլով ապշեցրեց մեզ. Կանանց Տօնի նախօրեակին...

Կուրտնտեսականների Ա. համագումարի ժամանակ, կուրտնտեսութեան մէջ կնոջ դերի գնահատումով, կինը թռիչք կատարեց դէպի սուաջ և ցոյց տուեց, որ Սոցիալիզմի կառուցման գործում ինքը տղամարդուն արժանի գործընկեր է...

ՄԻԱՅՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԵՆ ՀՆԱՐԱՒՈՐ ԱՅՆ ՀՐԱՇՔՆԵՐԸ, որ կատարում է այժմ...

Կինը՝ գործում, հարուածային աշխատանքում առաջ է անցնում տղամարդուց: Կինը՝ առաջին շարքերում է Սոցիալիզմի համար պայքարի գործում:

... Ոչ վաղ անցեալում անիրաւական գոյութիւն պահպանող, առ ու ծախի առարկայ հանդիսացող կինը, այսօր ազատագրուած՝ նոր կեանք է արարում...

Այն ինչ այսօր կատարում է Խորհրդային Արեւելքում՝ արժանի է զարմանքի...

ԵՒ ԵՍ ԱՆՁԱՄԲ, 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ ԴՈՒՐՄ ԳԱԼՈՎ ԱՅԴ ՄԻՋԱՎԱՅՐԻՑ, ԵՍ ԱՌԱՋԻՆ ԿԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՐԵՒԵԼՔԻՑ, ԱՅԺՄ ԻՄ ԱՌՁԵՒԻ ԲԱՑՈՒԱԾ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՄԱՐՈՒՄ ԵՄ ՀՐԱՇՔ ՈՒ ԵՐԱԶ:

Ես չէի կարծում, չէի երազում, որ մինչեւ այս երջանիկ օրը, երբ Արեւելքի հազարաւոր, տասնեակ հազարաւոր կանայք, դեն նետելով իրենց վրայից դարաւոր կապանքները՝ «Ձաղբա»ների հետ միասին, կը մասնակցեն Սոցիալիզմի կառուցմանը ու վստահելի յենարան կը հանդիսանան մեր կուսակցութեան համար, մարդկութան լաւագոյն գաղափարախօսութեան կառուցման՝ Սոցիալիստական Պետութեան գործում:

Կեցցէ՛ որչ աշխարհի աշխատաւորուհիների միութեան և համերաշխութեան Օրը»:

Ս Տ Ա Ց Ա Ն Ք

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

«ԵՐԳՈՂ ՑԱԻԵՐ»

Պէյրուք - 2009

Ս Տ Ա Ց Ա Ն Ք

ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻԻՆ Յ. ՆԱԶԱՐԵԱՆ

«ԵՂԵՈՆԷՆ ՎԵՐԱՊՐՈՂԻ ՅՈՒՇԵՐ»

Կազմեց եւ յախարհեց

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

Հայէպ - 2009

TÜRKLERİN (SÖZDE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ

13 SUBAT 2010 TARİHLİ

ISTANBULDAKI «TARAF» GAZETESİ

1915 ERMENİ SOYKIRIMININ BAS SORUMLULARINDAN

İTTİHATÇI VE SELANIKLI DOKTOR NAZIM-IN GIZLI

OTURUMDA SÖYLEDIGI İNSANLIK DISI SÖZLERİNİ

YAYINLADI.

İSTE SELANIKLI DOKTOR NAZIMIN

1915 BASLARINDA ERMENİLER İÇİN

SÖYLEDIGI KORKUNÇ SÖZLER:

«ERMENİLER ÖLÜMCÜL BİR YARAYA BENZER.

ZAMANINDA DOKTOR MUAMELESİ

GORMEZSE MUHAKKAK ÖLDÜRÜR.

ERMENİ HALKINI TOPRAKLARIMIZDAN

KÖKTEN TEMİZLEMELİYİZ.

BİR KISI BİLE KURTULMAMALI

VE ERMENİ İSMİ UNUTULMALIDIR».

13 SUBAT 2010 TARİHİNDE, İSTANBULDA «TARAF» GAZETESİNDE, İN-SAN HAKLARI SAVUNUCUSU VE AVUKAT EREN KESKİN, BUGÜNE KADAR TÜRKİYEDEN ERMENİ SOYKIRIMI İÇİN YAYINLANAN EN KORKUNÇ GERÇEKLERİ AÇIKLADI.

VE İTTİHAT VE TERAKKI PARTİSİNİN KURUCULARINDAN SELANIKLI DOKTOR NAZIM-IN İSTANBULDA 1915 BASLARINDAKİ GİZLİ OTURUMDA SÖYLEDIGI VE «ERMENİLER İÇİN ÖLÜM KARARI OLAN» SU SÖZLERİNİ YAYINLADI. «ERMENİLER ÖLÜMCÜL BİR YARAYA BENZER. ZAMANINDA DOKTOR MUAMELESİ GORMEZSE MUHAKKAK ÖLDÜRÜR. ERMENİ HALKINI TOPRAKLARIMIZDAN KÖKTEN TEMİZLEMELİYİZ. BİR KISI BİLE KURTULMAMALI VE ERMENİ İSMİ UNUTULMALIDIR»....

* * *

İNSAN HAKLARI SAVUNUCUSU VE AVUKAT SAYIN EREN KESKİN-İ, DR. NAZIM-IN ERMENİLER İÇİN SÖYLEDIGI BU KORKUNÇ SÖZLERİNİ İSTANBULDA «TARAF» GAZETESİNDE YAYINLABİLDİĞİ İÇİN KALBTEN TEBRİK EDERİZ....

.... FAKAT DR. NAZIM-IN ERMENİ MİLLETİNİN SÖYKİRİMİNİN SUÇLUSU OLDUĞUNU BÜTÜN DUNYA... VE DIASPORA ERMENİLERİ DE BİLİRDİ ZATEN.....

ÇÜNKÜ 5 TEMMUZ 1919-DA İSTANBULDA OSMANLI ASKERİ MAHKEMESİ, ERMENİ MİLLETİNİN SOYKIRIMININ SUÇLULARI OLARAK : TALAT PASAYI , ENVER PASAYI, CEMAL PASAYI... VE OSMANLI MİLLİ EGİTİM BAKANI SELANIKLI DOKTOR NAZIM-İ GİYABEN ÖLÜME MAHKÜM ETMİSTİ. ÇÜNKÜ BUNLAR ALMANYAYA VE YURTDİSİNE KAÇMISLARDI.....

YALNIZ TÜRKİYE HALKI İÇİN BU GERÇEKLER «TABU» İDİ.

TÜRKİYEDE ERMENİ MESELESİ VE ERMENİ SOYKIRIMI HAKKINDA KONUSMAK YASAKTI. KONUSANLARI, TÜRKLÜGE HAKARET SÜÇÜ İLE CEZALANDIRILIRLARDI.

....FAKAT BUGÜN NASIL OLUYORDA BU MEVZUYU KONUSMAYA CESARET EDENLER OLUYOR...

TÜRKİYEYE DEMOKRASI MI GELDİ ?...

YOK CANIM.... TÜRK DEVLETİ, DÜN NE İSE BUGÜN DE AYNI SOYKIRIMCI DEVLET....

* * *

GERÇEKLERİ AÇIKLAMAYA ÇALISALIM....

BUNDAN EVVEL DE YAZMISTIK....

BUGÜN TÜRKİYEDE VUKU BÜLAN OLAYLARIN ASIL SEBEBİ ...

1915 ERMENİ SOYKIRIMI SAYESİNDE BATI ERMENİSTANI YUTAN BUGÜNKÜ ÜYDURMA DEVLET TÜRKİYENİN GEÇİRDİĞİ HAZIMSIZLIK KIRIZLERİDİR....

1915 ERMENİ SOYKIRIMINI : JÖN TÜRK DENİLEN SELANIKLI DÖNMELERDEN OLSAN İTTİHAT VE TERAKKİ PARTİSİ GÜRÜH-U PLANLADI VE GERÇEKLESTİRDİ...

... FAKAT İTTİHATÇILAR, ERMENİ SOYKIRIMINI GERÇEKLESTİRMEK İÇİN KÜRTLERİ CELLAT OLARAK KULLANDILAR....

.... VE MÜSTAFAYA KEMAL 1923-DE KÜRTLER SAYESİNDE İKTİDARA GELDİ....

FAKAT MUSTAFAYA KEMAL VE HEMPAKARI KÜRTLERE HIÇ BİR HAK TANIMADILAR.

BİLAKİS TÜRKLER 1923-DEN BUGÜNE KADAR KÜRTLERİ, ERMENİLERE YAPTIKLARI GİBİ SOYKIRIMINA UGRATMAYA ÇALISTILAR.

FAKAT, KÜRTLER ERMENİLER GİBİ KURBAN OLMİYA HAZIR «KUZU» BİR MİLLET DEĞİLLER....

VE 1923-DEN BUGÜNE KADAR KÜRTLER TÜRKLERE KARŞI SAVASTILAR.....

VE 1990-SENESİNDE İSRAEL SAYESİNDE KUZAY İRAKTA BİR KÜRT DEVLETİ KURDULAR.

.... VE SIRA ŞİMDİ 1915 -DE ERMENİ SOYKIRIMINDAN SONRA BOSANAN BATI ERMENİSTAN-A (DOĞU ANATOLYAYA) YERLEŞEN KÜRTLERİN BAĞIMSIZLIK İLAN ETMELERİNE GELDİ.

ŞİMDİ KÜRTLERİN HEDEFİ : BÜYÜK VE BAĞIMSIZ KÜRT DEVLETİNİ KURMAK.

... NETİCE OLARAK SÖYLİYELİM :

1923-DEN BUGÜNE KADAR TÜRKİYE DENİLEN ÜYDURMA DEVLETTE VUKU BULAN BÜTÜN KARGASALIKLARIN BÜTÜN KANLI OLAYLARIN ASIL SEBEBİ...

1915-DE TÜRKLER VE KÜRTLER TARAFINDAN, SOYKIRIMINA UGRATILAN ERMENİ MİLLETİNİN MİRASINI PAYLAŞMAK İÇİN TÜRKLER VE KÜRTLER ARASINDAKİ MİRAS KAVGASIDIR.

ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ [ԻԲՐ ԹԷ] ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՍԵԼԱՆԻԿՑԻ ՏՈՔԹՈՐ ՆԱԶԸՄ

{1870 - 1926}

13 ՓԵՏՐՈՒԱՐ 2010 ԹՈՒԱԿԻՐ ՊՈԼՍԱԿԱՆ «ԹԱՐԱՖ» ԹԵՐԹԸ, 1915-Ի ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԷՆ՝ ԻԹԹԻՀԱՏԱԿԱՆ ՏՈՔԹՈՐ ՆԱԶԸՄ-ԻՆ ԳՌՆՓԱԿ ՆԻՍՏԻ ՄԸ ԸՆԹԱՑՔԻՆ ԸՍԱԾ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԽՕՍՔԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՑ:

ԱՀԱՒԱՍԻԿ ՍԵԼԱՆԻԿՑԻ ՏՈՔԹՈՐ ՆԱԶԸՄԻՆ 1915-Ի ՍԿԻՋԲՆԵՐԸ, ՀԱՅՈՑ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐԱԾ ՍԱՐՍԱՓԱՋԴՈՒ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.-

«ՀԱՅԵՐԸ ՄԱՀԱՑՈՒ ՎԷՐՔԻ ՄԸ ԿԸ ՆՄԱՆԻՆ: ԵԹԷ ԱՏԵՆԻՆ ՋԳՈՒՇՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑ ՉԱՌՆԵՍ, Ի ՎԵՐՋՈՅ ԱՆ ԿԸ ՍՊԱՆՆԷ ՔԵՋ:

ՄԵՆՔ, ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՐՄԱՏԱՊԷՍ ՊԷՏՔ Է ՄԱՔՐԵՆՔ ՄԵՐ ՀՈՂԵՐՈՒՆ ՎՐԱՅԷՆ:

ՄԷԿ ՀՈԳԻ ԻՍԿ ՊԷՏՔ ՉԷ ՓՐԿՈՒԻ,

ԵՒ ՀԱՅԵՐՈՒ ԱՆՈՒՆԸ ՊԷՏՔ Է ՄՈՌՑՈՒԻ»:

13 Փետրուար 2010 -թ.ին, Պոլսոյ «Թարաֆ» թերթին մէջ, մարդու իրաւունքներու պաշտպան և փաստաբան Էրէն Քէսքին, մինչեւ այսօր Թուրքիոյ մէջ հայկական ցեղասպանութեան մասին հրատարակուած ամէնէն զարհուրելի իրականութիւնները հրապարակեց... Եւ իթթիհատ և Թերաքքի կուսակցութեան հիմնադիրներէն՝ Սելանիկցի բժիշկ Նազըմին Պոլսոյ մէջ, 1915-թ.ի սկիզբները, դոնփակ նիստի մը ընթացքին ըսած, հայոց վերաբերող ու «Մահավճիռ» մը ելող հետեւեալ խօսքերը յայտնաբերեց.- «ՀԱՅԵՐԸ ՄԱՀԱՑՈՒ ՎԷՐՔԻ ՄԸ ԿԸ ՆՄԱՆԻՆ: ԵԹԷ ԱՏԵՆԻՆ ՋԳՈՒՇՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑ ՉԱՌՆԵՍ՝ Ի ՎԵՐՋՈՅ ԱՆ ԿԸ ՍՊԱՆՆԷ ՔԵՋ:

ՄԵՆՔ, ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ, ԱՐՄԱՏԱՊԷՍ ՊԷՏՔ Է ՄԱՔՐԵՆՔ ՄԵՐ ՀՈՂԵՐՈՒՆ ՎՐԱՅԷՆ:
ՄԷԿ ՀՈԳԻ ԻՍԿ ՊԷՏՔ ՉԷ ՓՐԿՈՒԻ, ԵՒ ՀԱՅՈՑ ԱՆՈՒՆԸ ՊԷՏՔ Է ՄՈՌՑՈՒԻ»:



Մարդու իրաւունքներու պաշտպան և փաստաբան Էրէն Քէսքին-ը, Տօքթոր Նազըմ-ին հայոց մասին ըսած այս ահռելի խօսքերը Պոլսոյ «Թարաֆ» թերթին մէջ հրապարակելու յանդգնութիւնը ունեցած ըլլալուն համար, զինք սրտանց կը շնորհաւորենք:

Բայց Տօքթոր Նազըմ-ին հայ Ազգին ցեղասպանութեան յանցապարտներէն ըլլալը՝ ամբողջ աշխարհն ու նաեւ Սփիւռքահայութիւնը գիտէին արդէն...:

Որովհետեւ 5 Յուլիս 1919-ին, Պոլսոյ մէջ, Օսմանեան Զինուորական Դատարանը, հայ Ազգին ցեղասպանութեան պատասխանատուներ նկատելով Թալաթին, Էնվերին, Ճեմալին և նաեւ Օսմանեան կրթութեան նախարար Սելանիկցի Տօքթոր Նազըմ-ին՝ զանոնք, ի բացակայութեան, մահուան դատապարտած էր:

Որովհետեւ յանցապարտները Գերմանիա, արտասահման փախած էին...

... Այս իրականութիւնները՝ միայն Թուրքիոյ մէջ ապրող ժողովուրդներուն համար

«Tabou» էր, գիտնալը արգիլուած էր...:

Թուրքիոյ մէջ հայկական ճարտարական մասին, հայկական ցեղասպանութեան մասին խօսիլ կարելի չէր:

Որովհետեւ խօսողները, թրքութիւնը անարգած ըլլալու յանցանքով, ծանր պատիժներու կը դատապարտուէին:

Բայց ինչպէ՞ս կ'ըլլայ որ այսօր, այս նիւթին մասին արտայայտուելու համարձակութիւն ունեցողներ կան հոն: Թուրքիոյ մէջ ժողովրդավարութի՞ւն հաստատուեցաւ...:

Ո՛չ, ո՛չ՝ եղբայր... Թուրքիա կոչուած պետութիւնը ինչ որ էր երէկ, այսօր ալ նոյնն է:

Նոյն ցեղասպան պետութիւնն է:



Իրականութիւնները բացատրելու ջանանք:

[Ասկէ առաջ ալ, այս մասին գրած էինք]:

Այսօր, Թուրքիոյ մէջ կատարուած դէպքերուն բուն պատճառը՝

1915-ի ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ «ՇՆՈՐՉԻԻ», ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ «ԿԼԱԾ» ԱՅՍՈՐՈՒԱՆ ԸՆԾՈՒԹՅԱՆ ԹՈՒՐԻՔ ՊԵՏՈՒԹԵԱՆ «ԱՆՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ» ԵՆԹԱՐԿՈՒԱԾ ԸԼԼԱՆ Է»:

1915-ի հայկական ցեղասպանութիւնը՝ երիտթուրքեր կոչուած Սելանիկցի դաւանափոխներուն կազմած «Իթթիհատ վէ Թերաքքի» կուսակցութեան կառավարութիւնը ծրագրեց և իրականացուց:

Բայց Իթթիհատականները հայկական ցեղասպանութիւնը գործադրելու համար, Քիւրտերուն իբր դահիճ գործածեցին:

Աւելի ետք, Մուսթաֆա Քեմալն ալ՝ քիւրտերուն շնորհիւ, իշխանութեան գլուխ եկաւ...

Բայց Մուսթաֆա Քեմալ ու իր արբանեակները քիւրտերուն ոչ մէկ իրաւունքը ծանջցան:

Ընդհակառակն՝ Թուրքերը 1923-թ.էն մինչեւ այսօր, հայերուն ըրածնուն նման, քիւրտերուն ցեղասպանութեան ենթարկել ջանացին...

Բայց քիւրտերը, հայոց նման զոհաբերուելու պատրաստ գառնուկի պէս ազգ մը չեն...

Քիւրտերը՝ 1923-թ.էն մինչեւ այսօր, թուրքերուն դէմ պատերազմեցան... ու կը կռուին...

Եւ 1990-թ.ին, Իսրայէլի շնորհիւ, հիւսիսային Իրաքի մէջ, ինքնավար քրտական պետութիւն մը հիմնեցին...

Եւ հիմա կարգը, 1915-թ.ի հայկական ցեղասպանութենէն յետոյ, արեւելեան Անաթոլիա [Արեւմտեան Հայաստան] տեղաւորուող քիւրտերուն ինքնավարութիւն հռչակելուն եկաւ...

Եւ այսօր, քիւրտերուն բուն և վերջին նպատակը՝ Մեծ և Անկախ Քրտական Պետութիւն մը հիմնելն է...

Եւ իբր եզրակացութիւն ըսենք՝

1923-թ.էն մինչեւ այսօր, Թուրքիա կոչուած շինծու պետութեան մէջ կատարուած բոլոր խռովութիւններուն, բոլոր արիւնոտ բախումներուն բուն պատճառը...

1915-թ.ին Թուրքերու և Քիւրտերու կողմէ ցեղասպանութեան ենթարկուած հայ Ազգին ժառանգը ձեռք անցընելու համար, Թուրքերու և Քիւրտերու միջեւ ընթացող ԺԱՌԱՆԳԻ ԿՈՒՄԻՏԵ Է:

Ծե. Սոյն «Ակամայ պատասխան»ը մեր թղթածրարին մէջ կը մրափէր որոշ տոնէ մ'ի վեր:
Ան կրկնօրինակն է տեղական թերթի մը ղրկուած յօդուածին:

Նամակագիր-յօդուածագիրը այս օրինակը «Նայիրի»ին յղած էր այն ակնկալութեամբ, որ բուն հասցէատէրը եթէ, ինչ-ինչ պատճառներով, չուզէ լոյս ընծայել բնագիրը «Ակամայ Պատասխան»ին, մենք ըլլանք տեղ տուողը անոր պատճէնին:

Որով, աւելի քան եօթ ամիսներու սպասումէ ետք երբ նկատեցինք, որ բուն հասցէատէր թերթը իր «սուղ» էջերէն մէկուն մէջ չէ բարեհաճած տեղ տուաւ անոր (իրեն յատուկ շարժառիթով անշուշտ), այս մեծ ուշացումը սեպեցինք համազօր չկամութեան ու մերժումի: Ուստի որոշեցինք հրատարակութեան տալ մեր մօտ եղածը –բնագիրը– ինչպէս ցանկացեր է նամակագիր, մեր աշխատակից հեղինակը... և ուզելով յարգել մամուլի օրէնքն ու մտաւորական պարկեշտութեան կանոնը:

Վերապահութեամբ մը՝ սակայն-հասցէատէր թերթին անուան ճշումը զանց կ'ընենք...
ոնէ մէկուն տհաճութիւն չսպաննանք ու համար:

Ա.ԿԱՄԱՅ ՊԱՏԱՍԽԱՆ **ՊԷՅՐՈՒԹ**

... ԹԵՐԹԻ ՄԵԾԱՐԳՈՅ ԽՄԲԱԳԻՐ

Բոլորովին վերջերս, Պէյրութում ժիրայր Նայիրիի խմբագրութեամբ լոյս տեսնող «ՆԱՅԻՐԻ» թերթում [24-Մարտ 2009-թ.] կարդացի Սփիւռֆի յայտնի հասարակական, ազգային և մշակութային գործիչ՝ մեծարգոյ Յովհաննէս Զիլինկիրեանի յօդուածը, որտեղ կար նաև անդրադարձ 2006-թ. Երեւանում լոյս տեսած իմ «ԶՄՈՒԱ-ՆԱՆՔ...» աշխատութեան վերաբերեալ մի գրախօսականի մասին:

3. Զիլինկիրեանը գրել է. «Բայց մեզի ամէնէն աւելի ցաւ պատճառողը՝ հարեւան [Սփիւռֆի] հայկական օրաթերթի մը մէջ վերջերս լոյս տեսած [երեք օր շարունակ] գրութիւնն է: Ի՞նչ է եղածը:

2007-թ.ին Երեւանի մէջ, Վլատիմիր Պետրոսեանի հեղինակութեամբ լոյս տեսաւ, բոլոր հայրենասէրներու կողմէ երկար տոնէն ի վեր սպասուած գիրքը՝ Հայկական Պահանջատիրական Պայքարի վրիժառուններուն [երբեմնի կազմակերպութեան՝ «Հայկակ. Գաղտնի Բանակ»ին և ասոնց տուած նահատակներուն պատմութիւնը եղող գիրքը, որուն անունն է՝ «Զմոռանաճ»:

Այս գիրքը կարդացող բոլոր հայրենասէր հայերը, բառին իսկական իմաստով՝ սխանչացան: Մենք ալ, այս գիրքը մեր գրասրահին մէջ, կը պահենք լիք սրբազան մատեան: Եւ միշտ կը կարդանք մեր հերոս նահատակներուն պատմութիւնը:

Բայց կ'երեւի. թէ այս գիրքին մէջ գրուածները, իրենց լոյս տեսնելէն երեք տարի ետք, մէկու մը «Պոչի ցաւ» պատճառներ են, և Եւրոպա լոյս տեսնող օրաթերթի մը մէջ, 3 օր տեւողութեամբ, այս գիրքին մասին գրեր է:

Եւ ի՞նչ գրեր է: Եթէ վերնագիրը ըսենք՝ ամէն բան կը հասկցուի...-

«Զախաւեր հրատարակութիւն»... Միշտ կ'ըսենք. Հայուն բուն հակառակորդը հայը եղած է: Այս հայն ալ, անոնցմէ մէկն է կ'երեւի...»:

Անչափ շնորհակալութիւն եմ յայտնում մեծարգոյ Յովհաննէս Զիլինկիրեանին, այսպիսի գնահատականի համար:

Բայց, երբ ծանօթացայ «Հարեւան հայկական օրաթերթի»՝ Փարիզում լոյս տեսնող «Յաւաջ» թերթում 2009-թ. Մարտ ամսուայ վերջին տպագրուած Լ...ի հեղինակած վերոյիշեալ գրախօսութեանը, որոշեցի հարկ չհամարել իջնել նրա մակարդակին, չդատասխանել և բաւարարուել միայն մեծարգոյ Յովհաննէս Զիլինկիրեանի գնահատականով:

Սակայն ինձ համար բոլորովին անսպասելի կերպով նոյն գրախօսականը, առանց մեկնաբանութեան և աղբիւրը մատնանշելու, սրտատպել է վերոնշեալ լիբանանահայ թերթը [7-9 Ապրիլ 2009-թ.]:

Հենց այս հանգամանքն էլ ստիպեց ինձ այդ գրախօսականի վերաբերեալ յայտնել մէկ-երկու նկատառում. և յարգելով թերթի ընթերցողների ինքնասիրութիւնը, պահպանել խօսքի էթիկան, պարկեշտութեան սահմանները, ինչը, որ այնպէս խախտել է գրախօսականի հեղինակ-պարոնը:

Առաջին.– Պարտք եմ համարում հրապարակաւ իմ երախտագիտութիւնը յայտնել Տետեան հղբայրների՝ իմ գրքի տպագրութիւնը հովանաւորելու համար: «Զմոռանա՞նք...» գիրքը սպառուեց անսպասելի արագութեամբ և աշխարհի տարբեր երկրներում ապրող բազմաթիւ ընթերցողներ իրենց գոհունակութիւնը յայտնելիս, առանձնակի գովեստով են արտայայտուել Գրիգոր Տետեանի և նրա որդիների հասցէին:

Ասեմ նաեւ, որ Գրիգոր Տետեանի որդիներ՝ Յովսէփը, Սիմոնը և Մինասն աչքի են ընկնում իրենց պարկեշտութեամբ, հայրենասիրութեամբ և իրենց ուժերի ներածի չափով ոչ միայն օգնում են Արցախի և Ջալալօղլի հայութեանը, այլև նեցուկ են լինում հակառակորդ բերումով օտար ակերիներին յայտնուած հայ երիտասարդներին:

Ի գիտութիւն գրախօս-սարունի յայտնում եմ, որ նրա հեզմանով նշած «Մերունի հայորդին»՝ Գրիգոր Տետեանը նրանցից մէկն էր, որը օրեր շարունակ դեկավարում էր Եւրոպական սլաուոնի առջեւ կազմակերպուած բողոքի ցոյցը, որի ազդեցութեամբ էլ 1987-թ. Յունիսի 18-ին, այդ սլաուոնի ընդունեց «Հայկական հարցի ֆուլմիսկան լուծման մասին» բանաձեւը: Այս փաստն ապացուցող լուսանկարը տպագրուած է գրքի 7-րդ էջում:

Երկրորդ.– Ես նպատակ եմ ունեցել աշխատութիւնս բացառապէս նուիրել Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակի գործունէութեանը և պաշտպանել նրան ծառուած ու բացայայտ բոլոր տեսակի կեղծարարներից: Գաղտնի Բանակը լայն արձագանգ գտաւ բովանդակ Սփիւռքում, առաջ բերեց մեծ համակրանք: Գաղտնի Բանակն իր գործողութիւնները իրականացնում էր այն երկրներում, որոնք պաշտպանում էին Թուրքիային:

Գաղտնի Բանակը ձեռք բերած հեղինակութեամբ եռլին պլան էր մղում ծանօթ կուսակցութեանը որը, ի հակակշիռ Գաղտնի Բանակի, ստեղծեց իր գլխաւորութեամբ գործող «Հայկական ցեղասպանութեան արդարութեան մարտիկներ» կոչուող կազմակերպութիւնը: Այդ կազմակերպութեանը տրուել էր մէկ խնդիր՝ սնունդանարկել Գաղտնի Բանակը, ստուեր նետել նրա հեղինակութեան վրայ: Գուցէ՞ գրախօս-պարոնը բացատրի, թէ ում ստիպմամբ այդ կազմակերպութեան անուանումից հանուեցին «Հայկական ցեղասպանութեան» բառերը և սկսեց կոչուել «Արդարութեան մարտիկներ»: Այս կազմակերպութեան ստեղծումը նոյնպէս տուեալ կազմակերպութեան պատմութեան մութ էջերից մէկն է: Եւ որպէսզի դա չբացայայտուի, Կ.եան գործիչները ոչ մի միջոցի առջեւ չկանգնեցին Գաղտնի Բանակը վարկաբեկելու համար: Ահա, մի քանի փաստ:

Նրանք հերոս Գուրգեն Եանիկեանին յայտարարեցին «Հոգեկան հիւանդ», երբ վերջինս մերժեց իրրեւ տուեալ խմբաւորումին սյիտակով ներկայանալու ծանօթ կողմին առաջարկը:

ԱՆՁԱ կոչուած կազմակերպութիւնը եկեղեցիների միջազգային Խորհուրդի անուան տակ թափնուած մի կառոյց էր, որի նպատակն էր իրականացնել ցեղասպան երկրի ցանկութիւնը՝ որքան հնարաւոր է այդ տէրութեան հարեւան երկրներից հեռացնել հայկական բնակչութիւնը:

Սփիւռքում ապրող հայերը լաւ են յիշում այդ ԱՆՁԱ-ին, որի դեկավարն էր կու-

**ՎԵՐՋԱՊԷՄ ԱՄՆ-Ի ԳՈՆԿՐԷՍԻ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՐԾԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ԾԱՆՁՑԱԻ ԻՆՉ ՈՐ...
ՆԱԽ. ՈՒԻԼՍԸՆ ԸՆԴՈՒՆԱԾ ԷՐ ՄԷԿ ԴԱՐ ԱՌԱՋ**

Ա.Մ.Նահանգներու Գոնկրէսի Արտաքին Հարցերու Յանձնախումբը 22-ի դէմ 23 ձայնով ընդունեց բանաձեւ հաստատող, որ 1915-թ.ին Թուրքիա գործած է ցեղասպանութիւն հայութեան դէմ:

Նախ. Օսլամայի վարչութիւնը ամէն ճնշում գործադրած է որ այս բանաձեւն մերժուի: Բայց չէ յաջողած: Ան ոչ միայն մոռցեր է իր երէկի խոստումը, այլեւ՝ չի յիշեր... Պատմութեան իմացութեան մէջ տկար ըլլալով՝ համար արդեօք... որ իր մեծանունն նախորդներէն՝ Նախ. Վուտրօ Ուիլսըն ոչ միայն ճանչցած էր Հայկ. ցեղասպանութիւնը, այլ՝ խոստացած որ «Թրքական ջոկիր»ին պիտի սրտաքսէ Փոքր Ասիայէն և զայն դրկէ Կեդր. Ասիոյ տափաստանները «Ուրկէ եկաւ ան 11 - րդ դարէն սկսեալ»:

Թուրքիա, մեծապէս զայրացած իր «Ռազմավարական Դաշնակից» երկրի գոնկրէսականներու «Աստերախտ» ընթացքէն, իբր բողոքի նշան, Անգարայի մօտ ԱՄՆ-ի դեսպանը կանչած է «Տուն», պնդելով, որ... հայոց դէմ եղածը ցեղասպանութիւն չէր, այլ... շարդ:

Այս քուէարկութիւնը բարեյոյս նշան մըն է լո՛կ: Պաշտօնական դառնալու համար, բանաձեւը, ան վաւերացուելու է ԱՄՆ-ի Գոնկրէսի լիակատար նիստին կողմէ:

Ամենայն դէպս, եղելութիւնը Ծմարտութեան մը շատ ուշացած ճանաչումն է: Մ. Նահանգներէն առաջ, շուրջ երեսուն տէրութիւններ, գլխաւորութեամբ Ռուսիոյ և Ուրուկուէյի, արդէն ճանչցած են հայկական ցեղասպանութիւնը:

Պիտի պաշտօնականաճաճաճ՝ այս ճանաչումը: Կը սպասուի որ Թուրքիա, Իսրայէլ և ուրիշներ, ԱՄՆ-ի հրէական «Լոպի»ին հետ ձեռք-ձեռքի տուած, բանաձեւին օրէնքի ոյժ ստանալը խոչընդոտեն: Պիտի յաջողի՞ն:

Վարչ. էրտողան սուր քննադատութիւն ուղղած է Իսրայէլի, քննադատելով անոր [իբր թէ] «Հայանսպատ կեցուածք»ը: Թե՛լ Ասիին կը վերագրուի «Ուխտադրուծ» վերաբերում: Որպէս թէ Իսրայէլ «Վրէժ» կ'առնէ Թուրքիայէն որ, «Կազայի Պաղեստինցիներուն հանդէպ, Իսրայէլի գործած վայրագութիւնները դատապարտած է»:

սակցական յայտնի գործիչ Ջորջ Մարտիկեանը: Ի դէպ, սյս Մարտիկեանը 1953-թ.ին Կորէական պատերազմի ժամանակ, ստանձնել էր այնտեղ ամերիկացիների կողմից կոտոր թուրքական բանակի մատակարարման պարտականութիւնը:

Կոծկելով «Արդարութեան մարտիկների» ստեղծման գործում Արեւմտեան գաղտնի ծառայութիւնների դերակատարութիւնը, ծանօթ խմբաւորումին գործիչները սկսեցին վարկաբեկել Գաղտնի Բանակին, նրա ստեղծումը վերագրելով Սովետական պետականվտանգութեան կոմիտէին: Այս մասին իմ գրքում բերուած են համազօյ վաստեր, որոնց կրկնութիւնը շատ տեղ կը պահանջի:

Ժամանակին, երբ Գէորգ Անէմեանը գալիս էր Հայաստան. հանդիպել եմ նրան, քննարկել շատ հարցեր: Ինձ միշտ հետաքրքրել է Գաղտնի Բանակի և հայկ. այդ ծանօթ կազմակերպութեան գաղտնիարախօսութիւնների առնչութիւնը և այդ առումով էլ, գրքում մեծ տեղ եմ յատկացրել յրանց միջեւ. եղած հակասութիւններին, որոնք բացառապէս նրան օգտին չեն: Սրանով էլ պայմանաւորուած է հարցերի այն լայն ընդգրկու-

մը, և գրախօս-սյարոնն աւելորդ է համարում:

Եւ վերջապէս, ինչքան էլ որ յարգանք ունենամ գրախօս-պարոնի նկատմամբ, պէտք է նշեմ, որ նա նիւթին լիարժեքօրէն չտիրապետելու պատճառով անկարող է հղել քննարկել ու գնահատել ծանօթ Գաղտնի Բանակի գործունէութիւնը և յատկապէս նրա գաղափարախօսութիւնը:

Այս ամէնի պատճառով էլ, այն ամէնը, ինչ գրախօս-պարոնը գրում է Գաղտնի Բանակի մասին, վերցրել է ոչ միայն ծանօթ հատուածի կողմի գինանոցից, այլեւ՝ Հայոց պահանջատիրութեան նկատմամբ թշնամաբար տրամադրուած Արեւմուտքի ու սրա արքանեակ գաղտնի ծառայութիւնների խօսափող կազմող մամուլի հրապարակումներից:

Մեծարգոյ խմբագիր «Նայիրի»ի.

Խօսքս աւարտելուց առաջ ուզում եմ ձեր թերթի միջոցով ցաւակցել գրախօս-պարոնին, որը իմ աւելի քան 800 էջանոց գիրքը փակել է՝ «Ա.փստալով կորսնցուցած ժամանակին ու թափած աչքի լոյսին համար»:

Ի՛նչ սրած, ես էլ եմ ափսոսում, որ կորցրած ժամանակի համար գրախօս-պարոնին օգնել չեմ կարող, բայց յոյս ունեմ, որ նրա աչքի լոյսին վնաս չի տայ, եթէ լսի իմ անկեղծ խորհուրդը և կսրդայ ժամանակին այդ ծանօթ հատուածի նշանաւոր անդամներից մէկի և նրա հեղինակութիւնը բարձրացնելու համար շատ ջանքեր վատնած հայ նշանաւոր բանաստեղծ Աւետիք Իսահակեանի հետեւեալ խօսքերը. «Է՛՛ Լ ԱՆԴԱՄ ԶԵՆՔ ԱՅԴ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ: ՀԻՄԱ, Ի՞ՆՉ ԵՂԱՆՔ՝ ԴԱՐՁԱՆՔ ՀԱՅ»: Իմաստուն խորհուրդ է, որին հետեւելը՝ նաեւ պատուաբեր:

21-ը Յունիսի, 2009-թ.. Բաղա՛մ Երեւան

Յարգանքներով՝ ՎԼԱՏԻՄԻՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ

« Խ Ա Չ Ի Կ Պ Ա Պ Ի Կ Ե Ա Ն »

Հ Ի Մ Ն Ա Դ Ր Ա Մ

Հ Ա Յ Ե Ր Գ Ի Մ Ր Ց ՈՒ Մ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Խաչիկ Պապիկեան» հիմնադրամը, լիբանանահայ երիտասարդութեան մօտ գնահատելու համար հայ հարազատ երգն ու երաժշտութիւնը, հայ լեզուի ու գրականութեան և հայոց պատմութեան ու կրօնի մրցումներուն կողմին նաեւ պիտի կազմակերպէ հայ երգի մրցում մը:

Եթէ ունիս գեղեցիկ ձայն և 16-էն 30 տարեկան ես, մասնակցէ՛ «Խաչիկ Պապիկեան» հիմնադրամի ՀԱՅ ԵՐԳԻ ՄՐՑԱՆՔԻՆ, շահէ՛ 2000. 1500 և 1000 ամերիկեան տոլար, արժանացի՛ր բարոյական ու գործնական ֆաջալերանքի և գրաւէ՛ սրտերը հայ հարազատ երգի երկրպագուներուն:

Թեկնածուներուն նախագտման հանդիպումը տեղի պիտի ունենայ Կիրակի, 21 Մարտ 2010, կէսօրէ ետք ժամը 4:00-էն սկսեալ, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի «Կիլիկիա» թանգարանի սրահին մէջ:

Թեկնածուները պիտի մեկնաբանեն պարտադիր և ազատ երգ մը:

Թեկնածուներու սրճանագրութեան վերջին ժամկէտ՝ Շաբաթ, 20 Մարտ 2010, կէսօրուան ժամը 12:00:

Մանրամասնութեանց համար կը խնդրուի դիմել Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարան՝ Հայագիտական և Կրթական բաժանմունքի գրասենեակի ֆարտուղարութեան, ամէն օր՝ առաւօտեան ժամը 9:00-էն 12:00, բացի Կիրակի օրերէն:

« Խ Ա Չ Ի Կ Պ Ա Պ Ի Կ Ե Ա Ն »

Հ Ա Յ Ե Ր Գ Ի Մ Ր Ց Ա Ն Ք Ի Կ Ա Չ Մ Ա Կ Ե Ր Պ Ի Չ Մ Ա Ր Մ Ի Ն

Ա Հ Ա Ջ Ա Ն Գ , Ա Հ Ա Ջ Ա Ն Գ , Ա Հ Ա Ջ Ա Ն Գ

ՀԱՅ ԱՋԳԸ, 11-ՐԴ ԴԱՐԷՆ ՍԿՍԵԱԼ ՄԻՆՉԵԻ
1915-1923-Թ. ԹՈՒՐԹԵՐՈՒ ԿՈՂՄԷ ՏԵԻԱԲԱՐ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿՈՒԵՑԱԻ...:

ԲԱՅՑ ԱՅՍՕՐ «ՎԵՐՋԻՆ ՀԱՅԵՐԸ»,
ԿՐԿԻՆ ՇԱՏ ՄԵԾ ՎՏԱՆԳԻ ՄԸ ԵՆԹԱՐԿՈՒԱԾ ԵՆ՝
ՀԱՅՈՒ ՀՈԳԻՆ «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ»
ԵՆԹԱՐԿՈՒԵԼՈՒ ՎՏԱՆԳՆ Է ԱՆ:

1920-Թ.ԻՆ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆԱՑԱԾ
ՌՈՒՍԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ
ԲՆԱՋՆՋՈՒՄԷ ՓՐԿՈՒԱԾ ՓՈԹՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ,
ԱՅՍՕՐ [ԻԲՐ ԹԷ] ԱՋԱՏ ԵԻ ԱՆԿԱՄ Է:
ԲԱՅՑ «MONDIALISATION» -
ՀԱՄԱՇՌԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ- ԸՍՈՒԱԾ,
ԱՋԳԵՐԸ ԽԱՌՆԱԾԻՆ ՋԱՆԳՈՒԱԾՆԵՐՈՒ
ՎԵՐԱԾՈՂ «ԴԱՀԻՃԸ»,
ՀԱՅ ԱՋԳԻՆ ՀՈԳԻՆ «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ»
ԵՆԹԱՐԿԵԼ ՍԿՍԱԾ Է:

ՄԵՐ ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՉՕՆԵՆԹ՝
ՄԵՋԻ ԻՍԿԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԻՑ՝
ՏԻԿ. ՄԱՐԱԼ ՀԱՃԸՆԵԱՆԻՆ:
ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ԿՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]

Այսօր, կարգ մը իբր թէ լաւատես բայց միամիտ հայեր կ'ըսեն թէ՝

«Ինչպէ՞ս որ, եօթը դարերու ցեղասպանութեամբ, առ.անց պետութիւն մը ունենալու գոյատեւեցինք...

Ուրեմն՝ ասկէ յետոյ ալ, պիտի գոյատեւենք»:

Այս բարեմիտ հայերը կը մոռնան սակայն որ, մինչեւ 1915-թ., Արեւմտեան Հայաստանի հողերուն վրայ կ'ապրէինք:

Բայց այսօր, Արեւմտեան Հայաստանը չկայ:

Անոր տեղ «Սփիւռք» ըսուած և աշխարհի ամէն կողմերը ցրուած փոքր զանգուածներ կան որոնք, քանի մը տասնամեակներ յետոյ, միայն անունով հայ պիտի մնան:

Արդէն այսօր, Սփիւռքի մէջ հայերէն խօսողները՝ գրեթէ փոքրամասնութիւն կը կազմեն:

Իսկ հայերէն գրող և կարդացողներն ալ մատի վրայ կը համրուին (համեմատաբար):

Այդ պատճառաւ, կրկին ու կրկին կ'ըսենք՝ մեր վերջին յոյսը մեր ներկայի փոքր Հայաստանն է:

Եւ եթէ այսօր չօգնենք Հայաստանին, (հայրենաբնակները՝ նախ և առաջ), յետոյ շատ ուշ պիտի ըլլայ:

* *

Բայց այսօր, անհերքելի իրականութիւն մըն ալ կայ...

Այսօր «Աշխարհը» շատ փոխուած է:

Այսօրուան Աշխարհը՝ 20-րդ դարու սկիզբի աշխարհը չէ այլեւս:

Նոյնիսկ 50 տարի առաջուան աշխարհը չէ:

Ամէն բան, կայծակի արագութեամբ, կը փոխուի:

Եւ անվերջանալի տարածութիւն կարծուած Աշխարհը, այսօր շատ փոքրացած է:

50 տարիներ առաջ, իր գիւղէն հեռու եղող վայրը չճանչցող գիւղացին, այսօր, մէկ կոճակի վրայ կոխելով, Աշխարհի միւս ծայրը կրնայ տեսնել և գիտնալ հոն կատարուածը, և կապի մէջ մտնել այնտեղ եղողներուն հետ:

Այս փոքրացած Աշխարհի մէջ՝ ինչպէս որ Հայ Սփիւռքը ի վերջոյ ծուլման պիտի ենթարկուի և միջոց մը յետոյ ալ պիտի կորսուի, նոյնպէս՝ մեր փոքր Հայաստանն ալ՝ այսօրուան հաղորդակցութեան միջոցներուն հրաշքանման յառաջդիմութենէն օգտուող Աստուծոյ ընտրեալներուն քանդիչ ծրագիրներուն պատճառով, իր հայկական հոգին կրնայ կորսնցնել, այլասերիլ և ROBOT-ներու երկրի մը վերածուիլ:

*

Հայաստանին սպառնացող այս՝ այլասերման վտանգին դեմ ի՞նչ կրնանք ընել...

Այս մեծ վտանգին դեմ, 12 տարիներ առաջ՝ Մայիս 1998-թ.ին, «Նայիրի»-ի մեջ գրած էինք [Տես՝ «Էջ Նահատակ Եղած Ազգ Մը՝ Հայերը» հատորը, էջ՝ 475]... «Անիրաւուած և անարդարութեան ենթարկուած Հայ Ազգը, գլխաւոր պարտականութիւն մը ունի այսօր: Իր ամբողջական ուժերով վերստեղծել ու վերահրահրել հայութեան մէջ «Ազգային Ծունչը»:

Վտանգուած ազգերը «Վերջնական կորուստէ» փրկուելու համար,
«Ստիպուած են Ազգայնամուլ ըլլալ»: Կամայ-ակամայ:

Այո... Հայ Ազգն ալ, իր ապագայ սերունդներուն «Հայ»ու գոյութիւնը ապահովելու համար, ստիպուած է երբեմն, ծայրայեղութեան երթալու աստիճան՝ Ազգայնական ըլլալ»:

...« Իսկ հիմա՝ վերադառնանք ներկայի վիճակին:

Ինչպէ՞ս կարելի է Հայաստանի ժողովուրդին մէջ կրկին ներմուծել ազգային-հայրենասիրական «Ոգի»:

Բայց... իրատես ըլլանք:

Ծատ ծանօթ լոզունք է. «Թշուառութեան մէջ շատ դժուար է՝ վեհանձնութիւն գտնել»:

Այսօր, ամէն կարգի դժուարութիւններուն դեմ դնելով Հայաստան մնացած ու ապրող հայրենի ժողովուրդէն, յաւիտենապէս զոհողութիւն չենք կրնար սպասել:

Այս պատճառաւ, այսօրուան Հայաստանի կառավարութիւնը, իր գործունէութեամբ երաշխաւորելու է հայրենի ժողովուրդին ապահովութիւնը, և պարտի ստեղծել ապրուստի տանելի պայմաններ:

... Բոլոր պետութիւնները ունին իրենց Ազգային Ապահովութեան Խորհուրդները:

Նմանապէս՝ Հայաստանն ալ ունի իր Ազգային Ապահովութեան Խորհուրդը:

Եւ այս Ապահովութեան Խորհուրդին պարտականութիւնն է՝ ՃՇԴԵԼ ՀԱՅ ԱԶԳԻՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՇԱՀԵՐԸ:

Եւ ճիշդ հոս է [մեր համոզումով], Հայաստանի նոր Նախագահին կատարելիք ամենակարեւոր գործը... Ազգային Ապահովութեան Խորհուրդին անդամ ընտրել [կամ ընտրել տալ] այնպիսի անձեր, որոնց անցեալին և ներկայիս ունեցած գործունէութիւնները, զերծ են ամէն տարակոյս-կասկածէ: Որոնք ազգային գիտակցութիւն ունեցող, անբասիր հայրենասէր և ազգասէր անձեր կրնան ըլլալ:

Միայն այս կարգի անձնաւորութիւններէ կազմուած Հայկական Ազգային Ապահովութեան Խորհուրդ մը, Պատմութեան և ներկայի իրականութիւններու և փորձի լոյսին տակ, կրնայ ճշդիւ հայ ազգին բարձրագոյն շահերը:

Եւ միայն այս տեսակի անբասիր անձերէ բաղկացած Հայ Ազգային Ապահովութեան Խորհուրդ մը, կրնայ վստահութիւն, ապահովութիւն և յոյս ներշնչել հայ ժողովուրդին:

Եւ դեռ՝ այս տեսակի Ազգային Ապահովութեան Խորհուրդի մը «Յորդոր»-ներով է, որ ընդհանուր հայութեան մէջ կրնան վերստեղծուիլ՝ Հայրենասիրութիւն և Ազգասիրութիւն, նաեւ՝ Ոգի ու Շունչ:

Եւ այս մարզէ ներս, մեծագոյն պարտականութիւնը կը ծանրանայ ուսերուն հայ մտաւորականութեան, հայ գրողներուն, հայ ուսուցիչներուն և մանաւանդ՝ մամուլի, հեռատեսիլի և ռատիոյի պատասխանատուներուն ու աշխատակիցներուն, որոնք հայ ժողովուրդէն ներս գիտակցութիւն ստեղծելու մէջ մեծ դեր ունին, զանգուածներու վրայ մեծ ազդեցութիւն կը ներգործեն:

Հայ մտաւորական առաջնորդները, հայ ազգի համար գրեթէ ճգնաժամային այս շրջաններուն, իրաւունք չունին ՍՆԱՄԷՋ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ ՋԲԱՂԵԼՈՒ, երբ դեռ, մինչեւ այսօր մեր միլիոնաւոր նահատակներուն արիւնը գետին է ու չէ չորցած, և գողցուած Արեւմըտեան Հայաստանը թուրքերուն ձեռքին կը գտնուի: Հայաստանի և Սփիւռքի բոլոր հայ մտաւորական առաջնորդներ՝ միացէք նպատակի մը շուրջ՝

Հայ ժողովուրդին մէջ վերստեղծելու, իրականացնելու համար Ազգային և Հայրենասիրական վերածնունդը:

Մայիս 1998 - Յ. Չ.

**

Այս տողերը գրելէ տասներկու տարիներ յետոյ, այսօր ի՞նչ է Հայաստանի մէջ կացութիւնը...

Դժբախտաբար Հայաստանի մէջ այսօր, ո՛չ հայրենասիրական և ո՛չ ալ ազգասիրական ոգին վերակենդանացած է, պէտք եղած չափով... Եւ Սփիւռքը բաւարար տարողութեամբ չէ օգնած Հայաստանին... կամ՝ կը դժուարանայ ու կը յապաղի:

... Եւ Հայաստանի տնտեսական վիճակը՝ [քիչ մըն ալ աշխարհի տնտեսական ընդհանուր տագնապին պատճառաւ] շատ վատ է...:

Եւ «Mondialiste»ներուն Հայաստանի դէմ կատարած սպառնալիքներուն հետեւանքով, այսօր Հայաստանի մէջ կրօնական օտար աղանդները, միասեռականութիւնը, ամէն տեսակ ցոփութիւն ու յոռի բարքեր ազատօրէն կը

գործեն...

Եւ քաղաքական «Կուսակցութիւն»ներուն ու խմբակցութեանց թիւը գրեթէ հարիւրի հասած է:

Եւ ամէնէն կարելորը՝ Հայաստանի Պետութիւնը Թուրքիոյ հետ, առանց նախապայմանի բանակցելու համար, «Protocole» ստորագրած է:

* *

Այստեղ կ'ուզենք Աշխարհի վրայ կատարուած շատ մեծ հրաշքի մը մասին արտայայտուիլ:

Այս հրաշքը՝ «Չինական Հրաշք»ն է:

... Մինչեւ 1946 թուականները Չինացի ժողովուրդը, Անգլիոյ «Պոռնիկ Զաղաքականութեան» թմրեցուցիչներով թուլութեան մատնուած էր:

Եւ Չինաստանի մէջ, ամէն տարի, սովի պատճառաւ, միլիոնաւոր չինացիներ կը մահանային...:

Եւ վերջապէս՝ 1946-թ.ին, Չինաստանի մէջ, MAO TZETUNG-ի առաջնորդութեամբ, Ընկերվարական-Համայնավար Յեղափոխութիւնը յաղթանակեց եւ Չինացիները փրկուեցան թմրեցուցիչներէ և սովէ: Եւ Չինական աւանդական իմաստունութիւնը՝ Ընկերվարական-Սոցիալիստական վարչաձեւին շնորհիւ, վերածնաւ և Չինաստանը բարգաւաճ երկրի մը վերածուեցաւ...:

1977-թ.ին Չինաստանի մէջ, DENG XIAOPING իշխանութեան՝ եկաւ: Եւ ան Համայնավար-Ընկերվարական Չինաստանի մէջ շատ մեծ յեղաշրջում մը կատարեց:

DENG XIAOPING Չինաստանի մէջ, հաստատ պահելով իր Համայնավար-Ընկերվար իշխանութիւնը՝ տնտեսութեան մէջ արեւմտեան դրամատիրական (Capitaliste) դրութեան կարգ մը դրական կողմերն ալ ներմուծեց Ընկերվարական տնտեսական կառոյցին: Խոհեմաբար կատարուած այս մասնակի բարեփոխութիւնը կազմեց Չինաստանի մէջ այժմ կատարուած և շարունակուող հրաշքներուն մղիչ ուժը:

Արեւմտեան արտադրական շուկաները և գործարարները սկսան խուժել Չինաստան:

Որովհետեւ աշխատավարձերը շատ նուազ էին այնտեղ: Յետոյ՝ Արեւմտեան երկիրներուն մէջ եղած գործարդուները նոյնպէս չկային հոն, Ընկերվարական-Համայնավար կարգապահ վարչաձեւին պատճառաւ:

Եւ մանաւանդ՝ Չինացի գործաւոր-պաշտօնեանները, շատ աշխատասէր և համեստ էին:

Բնական է՝ այս հրաշքներուն մէջ իրենց մեծ դերը ունեցան աշխարհի հնագոյն և մեծ քաղաքակրթութեան տէր եղող Չին ժողովուրդին բնածին կարողութիւնները:

... Եւ այսօր մէկուկէս միլիարդի հասնող Չինաստանի բնակչութիւնը՝ Ընկերվար-Համայնավար վարչաձեւին շնորհիւ, ապահով և հանգիստ (→ էջ 3)

ԱՆԱԶԱՆԳ, ԱՆԱԶԱՆԳ, ԱՆԱԶԱՆԳ... (Շար. էջ 2-էն)


Կեանք մը կ'ապրի... առանց աֆիոնի և առանց սուլի...

Եւ Չինաստանի մէջ արտադրուած ամէն տեսակ ապրանքներ, աշխարհի բոլոր շուկաներուն վրայ կը ծախուին:

... Եւ այսօր, ըստ պաշտօնական լուրերուն և վիճակագրութեանց, 2009-թ.ին աշխարհի վրայ ամէնէն շատ արտածում կատարող երկիրը՝ Չինաստանն եղած է, 1200 ՄԻԼԻԱՌ ՏՈԼԱՐԻ ՓՈԽԱՐԺԷԶՈՎ: Եւ Չինաստանն է Ամերիկայի Մ. Նահանգներուն բազմահազար միլիառ տոլար փոխ տալով ԱՄՆ-ի դրամանիշը՝ տոլարը անկումէ փրկողը...:

Եւ վերջապէս՝ Չինաստան կը պատրաստուի, յառաջիկայ տարիներուն, դէպի Լուսին մարդաբնակ տիեզերանաւ արձակելու:

Այստեղ կը հրատարակենք՝ Չինաստանի մեծագոյն նաւահանգիստ՝ SHANGHAI-ի NEW YORK-անման և զայն մինչեւ իսկ գերազանցող քաղաքին նկարը:



Չինաստանի օրինակը մէջբերեցինք այստեղ որ մենք՝ հայերս քիչ մը «Դաս» առնենք վերածնած, բարգաւաճ, կարգապահ և լնկերվարական-Համայնավար Չինաստանէն: Վկայելու համար թէ՛ իր կամքին-ճակատագրին տէր դարձած տէրութիւն մը, որ ունի արդարաւոճ ու իմաստուն ղեկավարներ, «Հրաշք» կրնայ գործել:

Մենք կը հաւատանք, որ Արեւմտեան ժողովրդավարութիւն ըսուած վարչակարգը, իսկական թաւորոն մըն է:

Որովհետեւ Ամերիկայի նման՝ գրեթէ Արեւմտեան վարչակարգին ենթարկուած բոլոր երկիրներուն մէջ, ընդհանրապէս երկու մեծ կուսակցութիւններ են որ, կանոնաւոր հերթականութեամբ, իշխանութեան կուգան:

Բայց, ո՞ր կուսակցութիւնն ալ իշխանութեան ղեկը ստանձնէ, մազաչափ բան մը չի փոխուիր:

Որովհետև երկու կուսակցութիւններուն մէջ ալ, բուն ղեկավարները՝ «Աստուծոյ ընտրեալներ»ն են... կամ ասոնց կամակատարները:

Եւ այս ընտրեալներն են, որ իրենց յարմար տեսած կուսակցութիւնը և անձը ընտրել կու տան, իրենց ձեռքը եղող մեծ ուժին... Դրամին շնորհիւ:

Այստեղ կը հրատարակենք՝ Ֆրանսայի հայրենասէրներուն թերթը եղող «RIVAROL»ի մէջ, 19 Մարտ 2010-թ.ին լոյս տեսած գրութեան հատուած մը՝ ֆրանսերէնով, և տալով անոր հայերէն թարգմանութիւնը:

No 2944 - 19 MARS 2010 ≤ RIVAROL ≥

INFLUENCE

Il est quand même curieux que «Conseil Représentatif des Institutions Juives de France» se traduise par le sigle CRIF. Ce devrait être le CRIJF. Une lettre a disparu: le J. Est-ce une distraction? C'est peu vraisemblable de la part de gens qui ne laissent rien au hasard!

N'est-ce pas plutôt la volonté de suggérer-peut-être malicieusement-que ce «Conseil» est en réalité le seul conseil vraiment représentatif des institutions de la France? Alors, à quoi sert l'Assemblée nationale ?

Ստորեւ՝ թարգմանութիւնը:

ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ

Ամենայն դէպս հետաքրքրական է, որ Ֆրանսայի հրէական ներկայացուցչական հիմնարկներու Խորհուրդը կը թարգմանի «CRIF» սկզբնատառերով: Այս մէկը պէտք է ըլլայ CRIJF: Գիր մը անհետացած է... Ե.ն: Արդեօ՞ք մտացիր ըլլալու հետեւանքով: Շատ քիչ հաւանական է, հաւատալի, անձերու պարագային որոնք ոչ մէկ բան կը թողուն պատահականութեան...:

Արդեօ՞ք աւելի շատ թելադրելու կամքը չէ՝ գուցէ՝ չարամտօրէն՝ զգացընողը որ այս «Խորհուրդ»ը, իսկութեան մէջ, ներկայացուցչական միակ մարմինն է Ֆրանսայի հիմնարկներուն մէջ: Հետեւաբար, ինչ բանի կը ծառայէ Ազգային ժողովը (Խորհրդարան)»:

Այստեղ յատկապէս ըսել կ'ուզուի, թէ՛ «Ինչի՞ կը ծառայէ ֆրանսական Ազգային ժողովը, երբ ամէն բան հրէական կազմակերպութեան կողմէ կ'որոշուի»:

Այս հարցի կապակցութեամբ, հայերը հետաքրքրող Ամերիկայէն օրինակ մըն ալ տալ կ'ուզենք...

Այլեւս բոլորին քաջածանօթ է, որ շատ տասնամեակներէ ի վեր, Թրքական պետութիւնը, Ամերիկեան-Հրէական LOBY-ին միլիոններով տոլար կը վճարէ, որ Հայկական Յեղասպանութեան բանաձեւը՝ Ամերիկեան «ASSEMBLY»էն չանցնի:

* *

Այստեղ, իբր վերջաբան, կ'ուզենք վերոնշեալի շուրջ մեր տեսակէտը յայտնել...

Մենք հազար անգամ աւելի կը նախընտրենք Չինական Ընկերվարական-Համայնավար վարչաձեւը որ Չինացի ժողովուրդին բարօրութեան կը ծառայէ, քան թէ՛ Արեւմտեան (իբր թէ) ժողովրդավարութիւնը (DEMOCRATIE)ն որ ամէն բանէ առաջ կը ծառայէ «Աստուծոյ ընտրեալներ»ուն (և ասոնց խամաճիկ բուռ մը բազմամիլիառատերերու) աշխարհակալ ծրագիրներուն իրականացման...:

Եւ շատ պիտի ուզենք ու մաղթենք, որ Հայաստանի մէջ ալ, Չինական

TÜRKLERİN (SÖZDE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ
HASTA ADAM = BASBAKAN ERDOGAN
BASBAKAN RECEP TAYYIP ERDOGAN,
16 MART 2010 DA BBC- MUHABIRINE VERDİĞİ
DEMECTE:

*«AMERIKA ERMENİ SOYKIRIMINI KABUL EDERSE,
TÜRKIYEDEKİ YUZBIN ERMENİYİ SINIR DISI EDERİZ»
TEHDIDINI SAVURMUS.*

**BASBAKAN ERDOGAN, BU SÖZLERİYLE 1915 ERMENİ
SOYKIRIMCISI TALAT PASADAN FARKI OLMADIGINI,
AYNI VAHSI, KATLIAMCI VE SOYKIRIMCI
OSMANLI - TÜRK-UNÜN TEMSİLCİSİ OLDUGUNU
BUTÜN DÜNYA BASINI ÖNÜNDE İSPAT ETTİ.**

BİZ, BUNDAN EVVELKI YAZILARIMIZDA ERDOGAN-IN TEHLİKELİ BİR ADAM OLDUGU-
NU SÖYLEMİSTİK. VE 21 MART 2006 TARİHİNDE «NAİRİ»DE SUNLARI YAZMIŞTIK.

«TÜRKIYE BASBAKANI RECEP TAYYIP ERDOGAN MANTIGI OLMİYAN BİR ADAM. BU
MANTIKSIZ ADAM TÜRKIYENİN DE. DÜNYANIN DA BASINI BELAYA SOKABİLİR. DİKKAT
EDİN BU ADAMA.»

ONUN İÇİN DİYORUZ Kİ:
TAYYIP ERDOGAN HASTADIR.

* * *

FAKAT HASTA OLAN YALNIZ BASBAKAN ERDOGAN DEĞİL. BÜTÜN TÜRKIYE HASTADIR.
VE HASTALIK YENİ DEĞİL.

ASIRLARDAN BERİ DEVAM EDİYOR...

...19. YÜZYILDA OSMANLI İMPARATORLUGUNUN ADI «HASTA ADAM» İDİ.

ÇÜNKÜ OSMANLI İMPARATORLUGU ÇATIRDAMAYA, YIKILMAYA BASLAMISTI.

VE SON SENELERİNİ YASİYORDU...

.... 13. ASRIN SONLARINDA ORTA ASYADAN GELEKEREK ANATOLYAYA GİREN OSMANLI
ASİRETİ, SAMAN ALEVI GİBİ PARLAMIS, VE HUNHARLIKLA, VE TILKI GİBİ KURNAZ BİR
STRATEJİ İLE TA VIYANA KAPILARINA KADAR UZANAN BİR İMPARATORLUK KURMUSTU.

FAKAT SAMAN ALEVI ÇABUK SÖNER.

VE OSMANLILAR GELDİKLERİ ORTA ASYA STEPLERİNE SÜRÜLÜCEKTI.

FAKAT AVRUPALILAR VE RUSLAR ARASINDA OSMANLI MİRASINI PAYLASMAK KAVGASI
BASLADI.

VE AVRUPALILAR, OSMANLILARIN ANATOLYADA KALMASINA KARAR VERDILER. RUSLARIN AKDENIZE INMESINE MANI OLMAK IÇIN.

VE YINE AVRUPALILARIN KARARI ILE OSMANLILARIN ANATOLYADA KALABILMESI IÇIN, TARIHIN BILINDIGI TARİHLERDEN BERI ANATOLYANIN SAHIBI OLAN ERMENILER VE RUMLAR 1915 DEN 1923-E KADAR SOYKIRIMINA UGRATILDILAR.

VE ERMENILERIN VE RUMLARIN VATANLARININ ÜZERİNDE UYDURMA BIR TÜRK DEVLETI KURDULAR.....

..... ISTE TÜRKIYE DENILEN BU UCUBE DEVLETTE 1923-DEN BUGÜNE KADAR VUKU BULAN BUTUN TRAJIK OLAYLARIN ASIL SEBEBI, ERMENILERIN VE RUMLARIN VATANINI YUTAN TÜRKLERIN GEÇIRDIGI HAZIMSIZLIK KIRIZLERIDIR.

SIZ TÜRKLER, ERMENILERIN VE RUMLARIN VATANINI YUTMAYI, OKADAR ÇABUK HAZMEDECEGINIZI MI ZANNEDIYORDUNUZ ?

TÜRKIYE HASTADIR VE AGIR HASTADIR.

VE TÜRKLER BUGÜNE KADAR GERÇEKLESTIRDIKLERI SOYKIRIMLARININ GEZASINI ÇEKECEKTIR.

Յ. Չ.

«ՌԻԶԸՐՏ ԵՒ ԹԻՆԱ ԳԱՐՈՂԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

«Ռիչըրտ և Թինա Գարոլան» հրատարակչական հիմնադրամի դատակազմը կը յայտնէ, թէ բացուած է 2010-ի համար նոր գործեր ներկայացնելու շրջանը:

Հիմնադրամը կ'ընդունի Սփիւռեահայ երիտասարդ գրողներու գրական թէ ուսումնասիրական որեւէ նոր, անտիպ կամ գիրքի ձեւին տակ ցարդ չհրատարակուած գործեր, դատակազմին կողմէ գնահատուելու և ըստ այնմ հրատարակուելու համար:

Գրական, պատմական, բանասիրական, եկեղեցագիտական ու հայ մշակոյթի այլ կալուածները շօշափող հայերէն, թէ օտար լեզուներով գրուած գործերը պէտք է դատակազմին ներկայացուած ըլլան ամէնէն ուշը մինչեւ 30 Յունիս 2010:

Առաջուած գործերը պէտք է ըլլան մեքենագրուած և երեք օրինակով բազմագրուած: Անոնք պէտք է ներկայացուին A4 թուղթի չափով և բաղկանան նուազագոյնը 9 պրսկէ (144 էջ):

Դատակազմին կողմէ գնահատուած գործերը կ'արժանանան հրատարակութեան: «Ռիչըրտ և Թինա Գարոլան» հրատարակչական հիմնադրամի նախագահն է՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ: Դատակազմի անդամներն են՝ Գերշ. Տ. Վարուժան Արք. Հերկելեան, Գերպ. Տ. Գրիգոր Մ. Վրդ. Զիֆթեան [ատենադպիր], Դոկտ. Զաւէն Մսըրլեան [ատենապետ], տիար Պարոյր Աղլաշեան և տիար Սարգիս Կիրակոսեան:

ԴԻԻԱՆ՝ «Ռ. ԵՒ Թ. ԳԱՐՈՂԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԴԱՏԱԿԱԶՄԻ

Դատակազմի հասցէն. — Armenian Catholicosate of Cilicia

P.O.Box: 70 317 Antelias - Lebanon

E-mail: chancellor@armenianortodoxchurch.org

Fax: +961 4 410002

Ընկերվարական-Համայնավար ժողովրդավար վարչաձեւին նման իշխանութիւն մը, գործի գլուխ անցնի:

Որ մեր քիչ մը «Անկարգ» Հայ ժողովուրդը, անցեալ Խորհրդային-Ընկերվար-Համայնավար ժողովրդավար շրջանին եղածին նման, նոր և անկէ ալ ալի լաւ վերածնունդ մը իրականացնէ:

**ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝
 ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԵՐԵՍՓՈԽԱՆ
 ՇԱՆԹ ՉԻՆՉԻՆԵԱՆԻ ՀԵՏ**

**«ՄԵՆՔ, ԻԲՐԵԻ ՀԱՅ ԱԶԳ, ՈՒՐ ՈՐ ԱԼ ԳՏՆՈՒՍԾ ԵՆՔ,
 ՄԵՐ ԳԼԽԱԻՈՐ ՈՒԺԸ ԵՂԱԾ Է ՄԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ,
 ՈՒՍՈՒՄԸ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ»:**

Հարցում.— Պրն. Չինչինեան, արդէն մուտք գործած էք Լիբանանի խորհրդարան՝ որպէս երիտասարդ Հայ Պետական երեսփոխան: Ինչպիսի՞ն են Ձեր տարաորութիւնները և Ձեր համագործակցութիւնը քաղաքական տարբեր ուժերուն, նաեւ այլ խմբակցութիւններու հետ:

Պատասխան.— Սկզբնական որոշ խոչընդոտներէ ետք [կառավարութեան կազմութեան ուշացում և այլն], այսօրուան շարունակուող գործընթացները, Հայ երեսփոխաններէն և Հայ կուսակցութիւններէն կը պահանջեն. որ համագործակցին առաւելագոյն չափով: Միշտ է, որ բարեկամական անձնական յարաբերութիւնները կը շարունակուին՝ սակայն գործնական աւելի աշխոյժ քայլերու կը կարօտինք...: Մեր՝ «Հայկական Համախոհական Խմբակցութեան» հետ, Լիբանանի Հանրապետութեան Նախագահ Զօր. Միշել Սլէյմանին հետ հանդիպման ընթացքին, փոխանցեցինք մեր կարծիքը: Նոյնը կատարեցինք Վարչապետ Հարիրիին՝ ներկայացուցինք մեր հայկական համայնքին պահանջները: Սակայն, պէտք է որ Հայ 6 երեսփոխաններն ալ համագործակցին մեր գաղթօճախը շուրջ հարցերու բարելազող լուծման գծով:



Հ.— Ինչպէս որ նախապէս անդրադարձած էինք՝ այսօր, Լիբանանի պետական կառոյցներուն մէջ հայկական համայնքին յատկացուած պաշտօնները պէտք է գրասեն հայ երիտասարդ-երիտասարդուհիները և մասնագէտները: Նուաւել նա, «Ինթրա»-յի, «Միտըլ Իպօ»-ի նման միջազգային կառոյցներու բարձրագոյն պաշտօններ նաեւ պէտք է պատկանին ծագումով հայ, Լիբանանի քաղաքացիներուն: Ինչպիսի՞ն է Ձեր կարծիքը այս հարցերու մասին:

Պ.— Պետական պաշտօններուն համար՝ Լիբանանահայութեան վիճակը 3 հանգրուաններու կ'ուզեմ բաժնել: Առաջին հանգրուանը պէտք է որ մենք պատրաստենք:

Այդ պաշտօններուն յարմար և ատակ երիտասարդներ ունենալու ենք, տարբեր մասնագիտություններու տէր: Անոնց կենսագրական և աշխատանքային տուեալները պէտք է ունենանք, որ իրենց հետ կապուինք:

3-րդ հանգրուանին՝ պէտք է միասին աշխատիլ, բոլոր կուսակցություններու և կազմակերպություններու հետ՝ վեր դասելով համայնքին շահը սմէն նկատառումէ: Եթէ այս 3 քայլերը ճշգրիտ կերպով չառնենք, չեմ կարծեր որ մենք կրնանք գոհացուցիչ արդիւնքներու հասնիլ:

Հ.— *Լիբանանի Խորհրդարանական վերջին ընտրություններուն՝ ծագումով Լիբանանցի սփիռքահայեր, աշխարհի 3 ցամաքամասերէ՝ եկան Պէյրութ, քուէարկութեան: Առաւել եւս, շնորհիւ՝ շարք մը լրագրողներու ջանքերուն՝ Լիբանանահայ գաղթօճախին մասին հետաքրքրությունը բազմապատկուած է ամէնուրեք: Որպէս Պետական երեսփոխան՝ ինչպիսի՞ն են Ձեր կապերը, աշխատանքներն ու ծրագիրները այս կարեւոր մարզերուն հանդէպ:*

Պ.— Ծիշտ է, որ տարբեր գաղթօճախներէն հազարէ աւելի հայեր եկան քուէարկելու: Այն մեծ գումարները որ կը գանձուին՝ ծագումով Լիբանանցի հայերը արտասահմանէն բերելու և զանոնք մասնակցիլ տալու համար քուէարկութեան՝ միշտ չէ որ պիտի յաջողի...: Այն պարագային մանաւանդ՝ երբ իրենց գտնուած երկիրներուն մէջ իսկ քուէարկութեան իրատունքի օրէնքը անցնի՝ այդ գումարները պիտի դադրին տրամադրուելէ:

Վերջին Խորհրդարանական ընտրություններուն, զանգան երկիրներէ Լիբանան ժամանած հայերուն մասնակցությունը քուէարկութեան, յաճախ իրենց համար սնծանօթ թեկնածուներու՝ բուական անախորժություններու դուռ բացաւ՝ իրենց երկիրները վերադարձէն յետոյ:

Իսկ գալով քաղաքապետական յառաջիկայ ընտրություններուն՝ ապա ես կը կարծեմ, թէ ասոնք 6 ամիսէն մինչեւ մէկ տարի կրնան յետաձգուիլ: Հակառակ որ շատ մը ղեկավարներու, նեոարեալ Հանրապետութեան Նախագահին մօտ՝ տրամադրություն կայ որ ընտրությունները ժամանակին տեղի ունենան և չյետաձգուին: Սակայն մինչեւ այժմ, «Բաղադրություն»ն ու պատրաստությունը չկայ:

Հ.— *Այսօր, ո՞րն է հրատապ հարցը Լիբանանահայութեան, և զիստոր վտանգը որ կը սպառնայ:*

Պ.— Լիբանանի հայկական գաղթօճախին դիմակայած մեծագոյն մարտահրրաւերը կը վերաբերի երիտասարդութեան: Այսօր, դպրոցականներու 70առ հարիւրը, կեանքի դժուարին պայմաններուն հետեւանքով, կը ձգեն ուսումը, նախակրթարանը հազիւ սուրտած: Շատեր ալ սնկործութենէ կը տառապին կամ չնչին գումարով աշխատանքներ կը տանին: Ուրիշներ ինկած են թմրեցուցիչներու գործածութեան ճիրաններուն մէջ:

Հայ երիտասարդ-երիտասարդուհիները որոնք համալսարանական ուսման կը հետեւին [5-ի դէմ 1 յարաբերութեամբ՝ տղոց պարագային], իրենց կեանքի յարմար ընկերներ չեն գտներ և խառն ամուսնությունները շատցած են: Այնպէս որ, այն հայ ղեկավարները որոնք հայություն կը քարոզեն՝ պէտք է որ ուշադրություն դարձնեն նաեւ երիտասարդությունը յուզող հրատապ հարցերուն:

Հ.— *Վերջերս, Լիբանանի թէ Միջին Արեւելքի մէջ, շատցած են սպառնալիքներն ու յայտարարությունները պատերազմի և այլ արհաւիրքներու մասին: Ձեր կարծիքով, մօտիկ ժամանակներս, Լիբանանին ու լիբանանի հայութեան*

ԿԸ ՀԻՄՆԱԿԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ [ԻՐԻ ԹԷ] ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՀԻՒԱՆԴ ՄԱՐԴԸ = ԹՈՒՐՔԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏ ԷՐՏՈՂԱՆ

ԹՈՒՐՔԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏ ԷՐՏՈՂԱՆ 16 ՄԱՐՏ 2010-ԻՆ —

BBC-Ի ԹՂԹԱԿՑԻՆ ՏՈՒԱԾ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ...

«ԱՄԵՐԻԿԱՆ ԵԹԷ ԸՆԴՈՒՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ,

ՄԵՆՔ ԱԼ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ ԳՏՆՈՒՈՂ

100,000 [ՀԱՐԻԻՐ ՀԱԶԱՐ] ՀԱՅԵՐԸ ՍԱՀՄԱՆԵՆ

ԴՈՒՐՍ ԿԸ ՀԱՆԵՆՔ» ՍՊԱՌՆԱԼԻՔԸ ԿԱՏԱՐԵՐ Է:

ՎԱՐՉԱՊԵՏ ԷՐՏՈՂԱՆ ԻՐ ԱՅՍ ԽՕՍՔԵՐՈՎ, 1915-Թ.Ի

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԱՏԱՐՈՂ ԹԱԼԱԹ ՓԱՇԱՅԵՆ

ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԵՆԼԸ ԵՒ ՆՈՅՆ ՎԱՅՐԱԳ, ԶԱՐԴԱՐԱՐ ԵՒ

ՑԵՂԱՍՊԱՆ ՕՍՄԱՆՑԻ ԹՈՒՐՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ

ԸԼԼԱԼԸ, ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՄՈՒԼԻՆ ԱՌՋԵԻ,

ԱՊԱՑՈՒՑԱԾ ԵՂԱԻ:

Մենք, ասկէ առաջուան գրութիւններու մէջ, Էրտողան-ին վտանգաւոր մարդ մը ըլլալը ըսած էինք:

Եւ 21 Մարտ 2006-ին «Նայիրի»-ի մէջ սապէս գրած էինք.

«Թուրքիոյ Վարչապետ Էրտողանը տրամաբանութիւն չունեցող մարդ մըն է:

Այս անտրամաբան մարդը՝ թէ՛ Թուրքիոյ և թէ՛ աշխարհի գլուխը կրնայ փորձանքի են-

թարկել: Ուշադրութի՛ւն ըրէք այս մարդուն»:

Այդ պատճառաւ հիմա ալ կ'ըսենք, որ Վարչապետ Էրտողան հիւանդ է:

★ ★ ★

Բայց հիւանդ եղողը միայն Վարչապետ Էրտողանը չէ:

Թուրքիոյ պետութիւնը, իր ամբողջութեամբ՝ հիւանդ է:

Եւ այս հիւանդութիւնը նոր բան մը չէ:

Դարերէ ի վեր կը շարունակուի...

19-րդ դարուն Օսմանեան Կայսրութեան անունը՝ «Հիւանդ Մարդ» էր:

Որովհետեւ, Օսմանեան Կայսրութիւնը ծարձատիլ, փլչիլ սկսած էր...

Եւ իր վերջին տարիները կ'ապրէր...

... 13-րդ դարուն վերջաւորութեան, Միջին Ասիայէն գալով Անաթոլիա խուժող Օսմանեան ցեղախումբը յարդի խուրճի պէս բռնկելով, իր վայրագութեամբ և աղուէսային խորամանկ ռազմավարութեամբ, մինչեւ Վիէնայի դռներուն առջեւ հասնող կայսրութիւն մը կազմած էին:

Բայց, յարդի բոցը շուտ կը մարի:

Եւ Օսմանցիները պիտի բշուէին Միջին Ասիոյ տափաստանները, ուրկէ եկած էին անոնք:

Բայց եւրոպացիներու և Ռուսերու միջեւ Օսմանեան ժառանգը բաժանելու պայքար սկսաւ:

Եւ Երոպացիները, Օսմանցիներուն Անաթոլիա մնալը ուզեցին ու որոշեցին, որ Ռուսերուն Միջերկրական Մով իջնելուն արգելք ըլլան:

Եւ կրկին Երոպացիներուն որոշումով՝ Օսմանցիներուն Անաթոլիոյ մէջ մնալը ապահովելու համար, Պատմութեան գիտցուած թուականէն ի վեր Անաթոլիոյ տէրը եղող Հայերն և Յոյները, 1915-էն մինչեւ 1923 երկարող տարիներուն, ցեղասպանութեան ենթարկուեցան:

Եւ Հայերու և Յոյներու հայրենի հողերուն վրայ, շինծու թրքական պետութիւն մը ստեղծեցին:

Ահա, թէ ինչու և ինչպէս, Թուրքիա ըսուած այս ծիւաղ պետութեան մէջ, 1923-թ.էն մինչեւ այսօր կատարուած ողբերգական բոլոր դէպքերուն բուն պատճառը, Հայերուն և Յոյներուն հայրենիքը «Կլլող» Թուրքերուն անցուցած անմարսողութեան տազնապներն են:

Դո՛ւք, Թուրքե՛ր...

Հայերուն և Յոյներուն հայրենիքը «Կլլելը» կը կարծէիք, թէ այնքան շո՛ւտ պիտի կարենայիք մարսել...

Թուրքիա հիւանդ է՝ և շատ ծանր հիւանդ...

Եւ Թուրքերը, մինչեւ այսօր իրենց կատարած ցեղասպանութիւններուն պատիժը պիտի կրեն:

Յ. Չ.

որեւէ վտանգ կը սպառնայ՝

Պ.— Ես անձամբ կոխու պատերազմ չեմ տեսներ: Այդ վտանգը չկայ: Կարգ մը ուժեր այդպիսի լուրեր կը տարածեն՝ որովհետեւ իրենց գոյութիւնը երեւի՝ պատերազմի վրայ հիմնուած է...: Մենք, իբրեւ Հայ Ազգ, ուր որ ալ գտնուած ենք, մեր ուժը եղած է մեր աշխատանքը, ուսումը, երիտասարդութիւնը: Մենք պէտք է այս բոլորը պահենք և ասոնց վրայ հիմնուինք: Իսրա՛ճեալ կը կրկնեմ, որ Լիբանանի մէջ կոխու և ներքին բախումներու փափաք չկայ, Լիբանանի տարբեր համայնքներու և, մանաւանդ՝ քրիստոնէականներու մօտ:

Մենք, միաբանութեամբ ու համագործակցութեամբ, Լիբանանեան բանակի մշտարթուն վերահսկողութեան ներքեւ, կրնանք ձախողեցնել այդ փորձերը:

Հ.— Ինչո՞ւ խորհրդարանէն ներս, 18-21 տարեկանէն վեր քուէարկելու իրաւունքի օրինագիծին վաւերացումը յետաձգուեցաւ:

Պ.— Այս օրինագիծը պահանջողները Լիբանանի զանազան քաղաքական խմբակցութիւններն էին: Սակայն քրիստոնէայ խմբակցութիւնները, ըլլան 14 կամ 8 Մարտի, կը պահանջեն որ այդ ծրագիր-օրինագիծը ընդգրկէ նաեւ Լիբանանէն արտագաղթածներու քուէարկութեան իրաւունքը: Մանաւանդ որ, վերջերս վիճակագրական տուեալներ ցոյց տուած էին, թէ քրիստոնէականներուն ծննդաբերութիւններու աճը շուրջ 4,5 առ հարիւր է (հայերը՝ միայն 2.5 առ հարիւր), երբ մահմեդական համայնքի մօտ ծնունդներու աճը՝ 9 առ հարիւր է:

Կառավարութեան ներկայացուած օրինագիծը ամբողջական չըլլալուն պատճառով, անոր քննարկումը յետաձգուեցաւ անորոշ ժամանակով: Որոշ խմբակցութիւններ ուզեցին սեպ խրել քրիստոնէայ երիտասարդութեան և իրենց ղեկավարութեան միջեւ, որ անվստահութեան և յուսահատութեան մթնոլորտ ստեղծեն: Մենք կը յայտարարենք որ մեր երիտասարդներու իրաւունքին հետն ենք. սակայն միեւնոյն ժամանակ կը ցանկանք, որ օրէնքները ամբողջական և արդար ըլլան, հոգ չէ թէ նախագիծերու քննարկումները քիչ մը յետաձգուին:

Հարցազրոյցը վարեց՝ ՀՍՄՕ ՄՈՍԿՈՅԵԱՆ

ՍՓԻԻՌՔԸ Ո՞ՐՔԱՆՈՎ «ՆԵՐԿԱՅ» Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

ՊԱՐՈՅՐ ԱՂՊԱՇԵԱՆ

Խորհրդային կարգերու ժամանակ, սփիւռֆահայութեան մօտ կար դժգոհութիւն, նոյնիսկ՝ ընդվզում, որ իր մասին և իր ազգային կեանքի շուրջ, համարեա անծանօթ էր Հայաստանի ժողովուրդը, անտեղեակ էր անոր սուօրեայէն:

Ըսինք՝ համարեա, որովհետեւ Սփիւռֆահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէն, որոշ առումով այդ բացը կը գոցէր. սակայն, ստիկա ո՛չ բաւարար էր, ոչ ալ գոհացուցիչ, պատկերացում ունենալու սփիւռֆահայութեան ընդհանրական կեանքէն և ազգային գործունէութենէն:

Հսկառակ ուղղութեամբ՝ այսինքն Սփիւռքը Հայաստանին, համեմատաբար, շատ աւելիով հաղորդակից էր հայրենական մշակութային կեանքին և իրազեկ էր անոր իրագործումներէն ու նուաճումներէն, անմիջական կապեր ունենալով անոր մտաւորականութեան մեծ մասին հետ:

Այսօր, երբ Հայաստան անկախ հանրապետութիւն մըն է և ազատօրէն շարժելու ու գործելու լայն կարելիութիւններ ունի, հրատապ հարց է՝ Հայաստան ո՞րֆանով կը հետեւի Սփիւռքի այն կեանքին, որ առնչուած է մտաւորականութեան, հասարակական գործիչներուն, մշակութային ոլորտին, ազգային անցուդարձերուն և, սո հասարակ՝ սփիւռֆահայ գոյավիճակին:

Պատասխանը հեռու է ըլլալէ ֆաջալերական, այլեւ՝ գորշ ըլլալու լուրջ պատճառներ ունի, այնքան ստեճն որ չոր իրականութիւնները այս մէկը ցոյց կու տան և յոռետեսութիւն կը ներշնչեն, դժբախտաբար:

Շատ պիտի չխորանանք և ընդհանրացնենք այս երեւոյթը, բայց կ'արժէ կանգ առնել մասնաւորումի մը վրայ, որ կը վերաբերի հայ մտքի հեղինակներու տարած աշխատանքներուն ու ստեղծագործութեանց, հայ մասնուլի և անոր զինուորագրեալներու դերակատարութեան ու գրութեանց, հայ մշակութային կեանքի մէջ արձանագրուած ելոյթներուն, նորարարութիւններուն և յառաջդիմութեանց, գոնէ՝ ինչպէս որ անոնք կը դրսեւորուին:

Ճիշդ է, թէ այս առնչութեամբ կայ նաեւ այն տխուր իրավիճակը, ըստ որուն՝ հայրենի արդի իրականութեան մէջ ալ, վերոյիշեալ թուումներու պարագային սկսած է մարմնաւորուիլ վտանգաւոր անտարբերութիւն մը. սակայն, ստիկա երբեք չի նշանակեր, որ Սփիւռքի կեանքը պէտք է բացակայի կամ նուազի հայրենի ժողովուրդին մօտ, մտահոգիչ վիճ մը բանալու, այլեւ խորացնելու հաւանականութեամբ:

Խօսինք կարգ մը օրինակներով.

Հակառակ ընթերցողներու թիւի նահանջին, սփիւռֆահայ գրողներ յամառօրէն կը շարունակեն գիրք հրատարակել, նիւթական հազարումէկ դժուարութիւններով: Բարեբախտաբար սակայն, կարգ մը պարագաներու, որոշ հրատարակչականներ ու հիմնադրամներ կը ստանձնեն հայկական գիրքերու հրատարակման գործը:

Այս հրատարակութիւններէն ո՞րքան տեղեակ է հայրենի համապատասխան մտաւորականութիւնը, բացի այն պարագաներէն, երբ անհատական նախաձեռնութիւններով ու միջոցներով կ'առաքուին անոնք:

[Ի դէպ, երբ հայ գրողը իր գիրքը կը դրկէ պաշտօնական հաստատութեան մը (մակագրութեամբ), ինչպէս՝ Հայաստանի Գրողներու Միութեան, ստացման շնորհա-

կալագիրի մը յղումն իսկ կը զլացուի գրող հեղինակին, որ պիտի ուզէր ունենալ գէթ դոյզն ինքնագոհութիւն մը, գիրքը իր տեղ հասցուցած ըլլալու հանգստամըտութեամբ: Մինչդեռ, օտարներու մօտ, ասիկա ընդունուած տարրական քաղաքական վարական ձեւ մըն է]:

Բայց աստի, գրողներ երբ կը դիմեն Հայաստանի դեսպանատուներ (կամ ներկայացուցիչներու) խնդրելով, որ բարի ըլլան ստանձնելու այս «բեռ»ը ու զայն հասցնեն հասցէատէրերուն, կ'ստարկուի որ ինքնաթիռները անճնական սեփականութիւն [ոչ պետական] են, ուստի, պատասխանատուները կը պահանջեն գումարներ, իսկ համաձայնելու պարագային անգամ.— Ո՞վ այդ գիրքերը իր հասցէին հասցնելու պատասխանատուութիւնը պիտի ստանձնէ— կը յարեն անոնք:

Օտար դեսպանատուներ [ստիպուած ենք այս վկայութիւնը ընելու], իրենք, իրենց մշակութային կցորդներու միջոցով, այս աշխատանքը [կամ «բեռ»ը] յանձն կ'առնեն, որովհետեւ կը հաւատան այդ թանկագին սպարտականութեան նուիրականութեան, իսկ մերոնք... կը զլանան: Ամէն ինչի համար «Փող» ճարողներ արդեօ՞ք չեն կրնար, այսպիսի անհրաժեշտութեան մը համար, պիւտնէ ապահովել, երբեմն... միստումներու հաշույն:

Խօսիմք մամուլի մասին:

Հայրենի ընթերցասէր հասարակութեան լայն հատուածը ինչո՞ւ տեղեակ պիտի չըլլայ, թէ այս կամ այն նիւթին մասին, որ գերազանցապէս կը վերաբերի ազգային-հայրենական մեր գերխնդիրներուն ու հիմնահարցերուն, սփիւռֆահայ մտաւորականը, հրապարակագիրը կամ խմբագիրը ի՞նչ կը մտածէ, ինչպէ՞ս կը մեկնաբանէ, իր կիզակէտը ո՞ր կը կեդրոնացնէ:

Իսկ խնդրոյ առարկայ կողմեր, առաջին հերթին նորակազմ Սփիւռֆի նախարարութիւնը, արդեօք ո՞րքանով կը հետեւին սփիւռֆահայ մամուլի բովանդակութեան կամ հոն արածարժուած ու քննարկուած հարցերուն:

Պահ մը ենթադրենք, որ կը հետեւի [թէեւ շատ կը տարակուսիմք], այդ պարագային, ի՞նչ կ'ընէ, ինչպէ՞ս կը գնահատէ կամ ինչո՞վ կը փոխադարձէ:

Մենք տակաւին չհասկցանք որ, օրինակի համար, Սփիւռֆի նախարարութեան կապը սփիւռֆահայութեան հետ ո՞ր է: Եթէ կապը լոկ *փողաւոր* մարդիկն են ու *մեծահարուստ* այրերը, այդ պարագային կրնան փոխել իրենց անունը. իսկ եթէ հասարակութեան լայն խտրերն են, յայնժամ թող գործեն նաեւ այդ կոչումով և գործեն [կը մաղթենք] արդիւնաւետութեամբ:

Նոյն սրութեամբ կարելի է դնել կամ դիտարկել սփիւռֆահայութեան Մշակութային-հասարակական կեանքը, գէթ՝ յատկանշական կամ յիշարժան բաժինները անոր, որոնք մասամբ կամ լիովին սեփականութիւնը դարձնելով հայրենի ժողովուրդին, փոխադարձ յարաբերութեանց ու ծանօթութեանց, տրուած կ'ըլլայ որակ, կենդանութիւն, մտերմութիւն:

Միւս կողմէ, երբեմն ականջալուր կամ ակնդիր կը դառնանք հայրենական պարգեւներու կամ շքանշաններու տուչութեան սփիւռֆահայերու, ինչ որ խիստ դրական և ողջունելի սպարագայ մըն է: Սակայն, երբ ստոնք կ'ըլլան, մեղմ ըսած, պատահական եղանակներով ու սպարագայական առիթներով [չըսելու համար՝ ֆախանաբար], որոնք կը նսեմացնեն կամ կը ստուերեն այդ նուիրական

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ

Արեւմտահայ բանաստեղծութեան շքեղ հոյլին, — 1915-ի Եղեռնի նահատակ, — ներկայացուցիչներէն Ռուբէն Սեւակ իր կանխահաս տաղանդը կը յայտնաբերէր, երբ Պոլսոյ Պէրպէրեան վարժարանի աշակերտ էր, իր գրելու և գծելու շնորհներով: Ամէնէն առաջ իր տնօրէնին՝ մանկավարժ, դաստիարակ-գրագէտ Ռէթես Պէրպէրեանի ուշադրութիւնը գրաւելով Ռուբէն Սեւակ կ'արժանանար անոր քաջալերանքին: Պէրպէրեանի աշակերտ եղած օրերուն արդէն, իր գրած բանաստեղծութիւններով. «Բանաստեղծ» անունը շահած էր. ժողովրդականութիւն գտնելով անոնց ընթերցումներով: Արուեստագէտի խառնուածքը հոգեկան իր կերտուածքով բնատուր էր, երբ աշակերտական գրասեղաններէն ներքին մղումով բանաստեղծութիւններ կը գրէր կամ կը գծէր: Հակառակ, որ գծելու մէջ չշարունակեց իր ստեղծագործելու արարքը, բայց գիծը և պատկերաւոր մտածողութիւնը իր երանգներուն նրբութեամբ և թախիծով թափանցուած ու շաղուած մնացին Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւններուն մէջ: Անոնք յատկանշեցին իր իւրայատուկ փնտրութիւնը:



Բախտորոշ նշանակութիւն ունեցաւ Ռուբէն Սեւակի Պէրպէրեանի շրջանաւարտութեան տարին, ամալներջի հանդէսի առիթով ինքնագիր «Բաժանման խօսքեր» բանաստեղծութեան արտասանութիւնը: Հանդիսականներուն ջերմ գնահատանքը կ'ազդէր իր բանաստեղծական ուղին գտնելու: Զի շեղիր այդ ուղիէն: 1905-ին, Լոզան, բժշկական համալսարանի ուսանող եղած շրջանին իր մասնագիտական ուսման առընթեր՝ իր ներապրումները և երկրէն հասած «Կարմիր լուրերը» բանաստեղծութեամբ կ'արսայայտէ իռովայոյց ներաշխարհի մը բացայայտումով: Այդ ներաշխարհը մէկ կողմէ կ'ալեկոծուէր անձնական յոյզերուն ներշնչումներով, իսկ միւս կողմէ՝ մարդկային և ընկերային ցաւերու տանջանքներով և համազգային տագնապներով: Կեանքի բոլոր պահերուն բանաստեղծութիւնը իր հոգեկան սփոփանքը եղած է, որուն արտայայտութիւնը կը գտնենք հետեւեալ տողերուն մէջ. «Ինձ համար գրելը երգել է: Բոլոր միջիթարութիւնս սա երկաթի փոքրիկ գրչիս մէջն է: Ու մենաւոր ապաստանիս մէջ՝ ձմրան գիշերներ, ինձմէ երջանիկ մարդ չէ կարելի երեւակայել՝ ոտանաւորի մը աւարտումէն վերջ»:

Արեւմտահայ բանաստեղծութեան մէջ իր յատուկ տեղը նուաճած է իր լեզուական կառուցողականութեամբ, արուեստին հարազատութեան և վաւերականութեան դրոշմով, խորքին մարդկային և ցեղային խորունկ զգայնութիւններով: Առանց Ռուբէն Սեւակի բանաստեղծական ժառանգութեան՝ ամբողջական պիտի չըլլար արեւմտահայ բանաստեղծութեան համապատկերը: Անոր «Կիլիկեան եր-

գեր»ը բանաստեղծական պատկերաւոր վկայութիւնն են Կլիկեանն անդէտին և ողբերգութեան մասին, որ գեղարուեստական ներգորութեան արժէքով կը խօսին նաեւ այսօրուան ընթերցողներուն: Բայց անկախաբար իր բանաստեղծական արուեստին ազգային աժմէականութենէն, իբր հասարակական մտածող եւս Ռուբէն Սեւակ իր ազգային գաղափարախօսութեամբ ուղղութիւն կու տայ նոր մոլորանմաներու, ապաստումներու, հայրենալուսմաներու: Հայաստանը հայ բանաստեղծութեան մէջ որքան երգուած թեմա է արուեստի մակարդակ նուանածներու կողմին, անյոյզ բովանդակութեամբ շարահիւսուած երգերով: Ռուբէն Սեւակի «Հայաստան» բանաստեղծութիւնը խտացուած արուեստով և ապրուած խռովքով հայոց պատմութեան մէկ դաժան շրջանը կը պատկերացնէ: Ամբողջ մթնոլորտ մը կը վերապրեցնէ:

«Ո՞վ կու լայ այսպէս խշտեակիս շեմքին.

– Քո՛յր, դարիպն է, բա՛ց:

Կմա՞խք մը կ'անցնի դուրսէն լալագին.

– Սովն է, դուռդ բա՛ց:

Տապա՞րն է ջախջախ դրանս կուրծքին.

– Ջարդն է, դուռդ բա՛ց»:

Այս երիտասարդ ըմբոստ բանաստեղծին հասարակական ընդվզումներն ու պոռթկացող ցասումները աւելի շատ կը գտնուին իր նամակներուն և արձակ գրութիւններուն մէջ: Ուսանողական շրջանին գրուած նամակներէն մէկուն մէջ կը կարդանք. «Ե՞րբ այս ժողովուրդը պիտի սորվի մարդկօրէն կատղիլ: Ու իրա՛ւ: Մարդկօրէն կատղի՛լ, այս տարրական առաքինութիւնը կը թուի ի սպառ հեռացած ըլլալ հայուն սրտէն: Առէ՛ք մամուլը, հաւատացէ՛ք, այս վերջին ամիսներու ընթացքին եւրոպական մամուլը շա՛տ աւելի մօտէն շօշափեց հայուն վէրքը քան պոլսահայ մամուլը»:

Ինք՝ որպէս բանաստեղծ հեռաւոր Լոզանի փոքրուն թէ Պոլիս ապրած, գործած և ստեղծագործած կարն տարիներուն հայուն վէրքը խորապէս զգաց և ապրեցաւ, անոր առթած ցաւերէն շատերուն գեղարուեստական կառոյց տուաւ, բայց չըվարանեցաւ նաեւ անխնայ կերպով հարուածել բոլոր անոնք, – մտաւորական կամ դեկավար, – որոնք ազգին վէրքն ու ցաւը անտեսելով անտարբեր վերաբերում ցոյց կու տային, այլասերած մտայնութեամբ: Ռուբէն Սեւակի «Այլասերում» գրութիւնը ախտանաճանչման մատնանշումով խիզախ քննադատութեան այնպիսի սրութիւն ունի, որ բանաստեղծի կանխահաս տաղանդին հետ կ'արտայայտէ հասարակական մտածողութեան կանխահաս հասունութիւն և յեղափոխական միտք. «Ու կը պատահի մեզ ա՛յն, ինչ որ ոչ մէկ քաղաքակիրթ ազգի չէ պատահած: Մեր գիւղացի ու շուկայի դասակարգը աւելի՛ մտացի է, քան ա՛յն, որ մտաւորական կը (→ էջ 8)

սրարողութեան տուն տուող շարժառիթին էութիւնը, ապա՝ ի՞նչ իմաստ կ'ունենան անոնք և ինչի՞ կը ծառայեն:

Բացայայտ է, գաղտնի չէ որ, նման տուչութիւններու մեծ մասը կը կատարուին վերոյիշեալ տրամաբանութեամբ, ուր գերակշռողներն ալ ընդհանրապէս քակիտէրք են (որոնց մասին անօրով մը երկար պէտք է յամենալ), մինչ մտքի կրողներն ու մշակները հազուադէպ են (այս մասին ալ կ'արժէ խորանալ):

Անխուսափելի, այլեւ անյետաձգելի մեր բարձրաձայն մտորումները, արլեօֆ կրնա՞ն բան մը փոխել կամ արժանանալ ուշադրութեան և արձագանգի:

Շատալ լաւատես պէտք չէ ըլլալ...:

Ս Է Ր

ՅԱԿՈԲ ՏԵՐԵԱՆ

Պատանի տարիքին երբ սէր բառին համապարփակ իմաստը հեռու էր մեր հասկացողութենէն, երբ սիրոյ կայծերը տակաւին նոր կ'սկսէին փայլատակել մեր սրտերուն մէջ, սէրը միայն սեռային սիրոյ նշանակութիւնը ունէր մեզ համար:

Եւ իբրեւ պատանեկան այդ շրջանը բոլորող իւրաքանչիւր պարմանի պէս, մենք եւս՝ իրարու տարեկից ընկերներ, յաճախ իրար հետ կը խօսէինք մեր չգիտցած, նոր-նոր լսած կամ կէս-կատար սորված սեռային հարցերու վրայով, ինչ որ խիստ հետաքրքրական կը թուէր մեզի:

Սուկայն օր մը, մեր հեռուոր բարեկամին՝ Պրն. Սեդրակին հիւրաբար և շաբաթով մը մեր տան մէջ մնալն ու այդ առթիւ տեղի ունեցած ընտանեկան խօսակցութիւնները, պիտի դային լոյս սփռել մտքիս ու հասկացողութեանս վրայ:

Պրն. Սեդրակ համալսարանական ուսում ունեցող, զարգացած ու գիտակից անձ մըն էր. սրտով՝ բարի, հոգիով՝ խոնարհ, ուրիշներուն միշտ ցաւակից և ուրախութեան բաժնեկից եղող, շրջապատին միշտ օգնելու սրամաղրութեամբ, և իր գիտութեամբ այլոց օգտակար դառնալ սիրող անձ մը: Շրջան մը ուսուցչութիւն ըլլած էր, բայց յետոյ, նետուէր էր առեւտուրի ասպարէզ և բուսական յաջողութիւն գտած: Իսկ այդ օր՝ դարձեալ առեւտուրի գծով եկած էր Հալէպ և իջեւանած մեր տունը:

Յերեկներուն ան կը հետապնդէր իւր գործը, իսկ երեկոները՝ տնեցիներով, տաք թոնիրին շուրջ նստած, կ'ընթանային մերթ հաճելի և մերթ յուզիչ խօսակցութիւններ: Կը խօսէին անցեալէն, Այնթապի իրենց կեանքին և հոն իրենց ձգած կալուածներուն մասին: Ապա, զլոյցը կը կեդրոնանար Գաղթականութեան ընթացքին տեղի ունեցած հրէշային դէպքերու և անմարդկային արարքներուն շուրջ. ներկայ հայ ընտանիքներու անդամներուն և ամբողջ ազգին կրած թշուառութիւններուն և այլ նիւթերու վրայ:

Բոլոր խօսակցութիւններուն մէջ սակայն, անպայմանօրէն դաստիարակիչ եզրայանգում մը կ'ունենային Պրն. Սեդրակին մտածումները: Որպէս իմաստուն և իրատես մարդ՝ ան կը ջանար իւրաքանչիւր խօսակցութիւն բերել և կապել ուսանելի կէտի մը: Չէր ուզեր որ այդ զրոյցները ըլլային մտքերու պարզ և հարեւանցի փոխանակութիւն, այլ՝ կ'աշխատէր անպայման շինիչ և օգտակար դաս ու խորհուրդ մը հանել անոնց մէջէն:

Կը յիշեմ. մեր Կիրակնօրեայ-ի դպրոցի դասերէն մէկուն մէջ, կար գեղեցիկ պատուէր մը, որ կ'ըսէր. «Ինչ հաւաքականութեան մէջ որ գտնուիս, ջանայ կա՛մ օգտակար ըլլալ և կա՛մ օգտուիլ»:

Այս պատուէրը լի ու լի կը կատարուէր մեր խօսակցութիւններուն ընթացքին, քանի որ կար օգտակար եղող մը ու կային օգտուողներ:

Որքան մեծ ցաւով կը դիտեմ յաճախ, երիտասարդներ ու չսփառահասներ որոնք, իրարու քով գալու պարսպային, ո՛չ օգտակար դառնալու և ոչ ալ օգտուելու մասին կը մտածեն, այլ՝ իրենք զիրենք ուրախ պահելու միտումով, կատակներով ու դատարկ գոլարճախօսութիւններով կ'անցնեն իրենց ժամանակը:

Ես, որ փոքր տարիքէս սիրած եմ և, հակառակ 75-իս, տա՛կաւին կը սիրեմ ինձմէ տարեց մարդոց խօսքերը լսել, սորվիլ և օգտուիլ անոնց փորձառութենէն, այդ խօսակցութիւններուն կը հետեւէի մեծ հետաքրքրութեամբ և ուշի ուշով:

Հետաքրքրութիւնս չվրիպեցաւ Պրն. Սեդրակին տեսողութենէն: Ան տեսնելով իմ

Ս Է Ր

ՅԱԿՈՔ ՏԵՐԵԱՆ

շատ լարուած վիճակով հետեւիլս ընթացող խօսակցութիւններուն, ուզեց զիս ալ նկատի առած ըլլալ ու դառնալով ինծի ըսաւ. «Կը տեսնեմ, որ մեծ հետաքրքրութեամբ կը հետեւիս մեր խօսածներուն. այդ կը նշանակէ, թէ սորվելու փափաք ունիս: Քանի՞երորդ ես»:— Զորրորդ,— ըսի.

— Զեր դասարանին մէջ քանի՞ մանչ և քանի՞ աղջիկներ կան,— հարցուց:

Ըսի.— 4 մանչ և 1 աղջիկ:

— Կը սիրե՞ս քու ընկեր-ընկերուհիներդ:

Անակնկալ այս հարցումէն ապշած ու երկչոտած՝ պահ մը վարանեցայ պատասխանելու: Առաջիններուն համար համարձակ «Այո» մը կրնայի ըսել, սակայն երկրորդներուն համար... դժուարացայ: Ի՞նչ կը նշանակէր... ընկերուհիներդ սիրել...: Տհաս հասկացողութեանս պատճառաւ՝ տեսակ մը ամօթ զգացի: Բնական է, որ ինծի ուղղուած հարցումը ամենեւին չէր վերաբերեր իմ «Սիրելու» ըմբռնումին: Այդ մասին պիտի սորվէի աւելի ուշ:

Թէեւ «Այո» պատասխանեցի, բայց... կարկամելով ու շիկնած:

Պրն. Սեդրակ, շատ հաւանաբար կռահեց մտքէս ու հոգիէս անցածը: Սակայն, առանց որեւէ բան հասկցնելու, շարունակեց հարց սալ:

— Կը սիրե՞ս դպրոցը:

— «Այո» պատասխանեցի:

— Կը սիրե՞ս եկեղեցին:

— Այո,— ըսի և աւելցուցի. «Ամէն կիրակի շաբաթ կը հագուիմ հոն, որպէս դպիր»: Եւ հարց-պատասխանը երկարեցաւ:

— Ապրիս,— ըսաւ,— և աւելցուց:

— Կը սիրե՞ս հայրենիքդ՝ Հայաստանը:

— Այո:

— Կը սիրե՞ս Հայ Ազգը, քո՛ւ Ազգդ:

— Այո:

— Կը սիրե՞ս Մայրենի լեզուդ. Հայերէնը:

— Այո, շատ կը սիրեմ:

— Ո՞վ սորվեցուց քեզի այս բոլորը սիրել:

— Մեր ուսուցիչները,— ըսի փութով և աւելցուցի,— մանաւանդ՝ մեր տնօրէնը, Տէր Եղիշէ Քհնյ. Փանոսեանը, որ միշտ կը խօսի հայրենիքի գեղեցկութեան, Հայ ժողովուրդի քաջութեան, Հայ լեզուի քաղցրութեան, Հայ եկեղեցւոյ կարեւորութեան և դպրոցի անհրաժեշտութեան մասին:

— Լաւ դաստիարակ մը եղած պէտք է ըլլայ: Ուրախ եմ, որ այդպիսի ուսուցիչներ ունիս,— եղաւ պատասխանը, իսկ հետեւութիւնը...

— Հիմա կը հասկնամ, որ սիրել գիտես վեհ և նուիրական բաներ: Շատ ապրիս»:

Պրն. Սեդրակ այսքանով չգոհացաւ: Շարունակեց խրատել:

— Պէտք է զխանաս, որ բոլոր գործերու յաջողութեան բանալին սիրոյ մէջ է:

Օրինակ՝ եթէ դպրոցը չսիրես և առանց սիրելու երթաս հոն, բան չես սորվիր:

«Եթէ վաղը արհեստի երթաս և չսիրես այդ արհեստը, չես կրնար զայն սորվիլ:

«Իսկ երբ մեծնաս և դայ ժամանակը աշխատանքի, սորվածներդ գործադրութեան դնելու, ահա, այն ատեն, յայտնի պիտի ըլլայ աշխատելու եղանակդ, թէ ի՞նչպիսի սիրով կը կատարես աշխատած գործդ:

«Դուն քեզի համար ինչ տեսակի ասպարէզ որ ընտրես, կեանքի մէջ ըլլաս

Ս Է Ր

ՅԱԿՈԲ ՏԵՐԵԱՆ

արհեստաւոր թէ վաճառական, ուսուցիչ թէ գրող-խմբագիր, երկրաչափ թէ փաստաբան, բժիշկ թէ դեղագործ, եկեղեցական թէ քաղաքական գործիչ, այնքան ատեն որ սէր չես դներ աշխատանքիդ մէջ,

դուն չես կրնար արժեւորել կատարած գործդ:

«Պօղոս Առաքեալ կ'ըսէ:— «Եթէ մարդոց ու հրեշտակներու լեզուները խօսիմ՝ և սէր չունենամ, ես ձայն տուող պղինձի պէս եղած պիտի ըլլամ, կամ՝ զուր տեղ հնչող ծնծղաներու պէս: Իսկ եթէ իմաստունութիւն ունենամ ու հասկնամ բոլոր խորհուրդները, մեծ գիտութիւնը ու հաւատքը, մինչեւ լեզուները տեղափոխելու, բայց չունենամ սէր, կը նշանակէ թէ... ոչինչ եմ»: [Ա. Կորնթ, Ժ. Գ. 1-3]

«Ահաւասիկ, ասկից աւելի գեղեցիկ վկայութիւն չի կրնար ըլլալ սիրոյ մասին: Այնպէս որ, եթէ նոյնիսկ ուսումը շարունակես և քու բնատուր կարողութիւններդ ուսմամբ զարգացնելով կարենաս հասնիլ մարդկային մակարդակի ամենաբարձր գազաթներուն՝ դառնաս փրոֆեսօր կամ գիտնական, աստղագէտ թէ՞ փիլիսոփայ, և վերէն դիտես քեզմէ վար եղողները յոխորտանքով, այսինքն՝ Սէր չունենաս հանդէպ շրջապատիդ, չես կրնար արժեւորել ո՛չ դուն քեզ և ոչ կատարած գործդ:

«Առանց սիրոյ եղած որեւէ գործ կատարեալ չի կրնար ըլլալ:

«Ճշմարիտ սէրը քեզ կը դարձնէ խոնարհ, անկեղծ, անաչառ, հաւատարիմ, ծառայասէր և նուիրուող անձ:

«Ասոնք են սիրոյ յատկանիշները որոնցմով կերտուած կ'ըլլայ նկարագիրդ:

« Եւ ահա, այսպիսի նկարագրի տէր անձ մը ո՛չ միայն լաւագոյնս կրնայ ծառայել իր շրջապատին և իր Ազգին, իր ուղիղ և հաւատարիմ գործունէութեամբ, այլեւ՝ քաջութիւնը կ'ունենայ խօսելու ճշմարտութիւնը. երբ տեսնէ գործուիլը անիրաւութիւններու, անօրինութիւններու, գեղծարարութիւններու և դեռ՝ ամէն սոսակի թերութիւններ եկեղեցական, դպրոցական, միութենական և ազգային կեանքէ ներս: Պարկեշտ մարդը չի վարանիր քննադատելու, խօսելու և խրատելու, որպէսզի դադրին անօրինութիւնները և ազգին հաստատութիւններուն շահերը չվնասուին անիրաւ գործունէութիւններով»:

— Սակայն, Պրն. Սեդրակ,— մէջ մտաւ մայրս, և շարունակեց.— Չէ՞ որ կ'ըսեն, թէ «Շիտակ խօսող մարդուն գլուխը ծակ կ'ըլլայ»: — Այո. որոշ իրականութիւն մը կայ այդ խօսքին մէջ,— ըսաւ Պրն. Սեդրակ,— քանի որ շիտակ խօսողը լոյսին կը բերէ մարդոց սխալներն ու յանցանքները: Թէեւ, սա մէկն ալ ըսեմ՝ ցաւ ի սիրտ, որ միայն սորվիլ և ուղղուիլ սիրող անձերն են որ կ'օգտուին այդ շիտակ խօսքերէն: Ընդհանրապէս՝ մարդիկ չեն սիրեր տեսնել իրենց յանցանքը, չեն ուզեր ընդունիլ իրենց սխալը, անոր համար որ կա՛մ կարծրամիտ են, այսինքն՝ իրենց սխալը ընդունելու չափ ազնուութիւն չունին, կամ ալ կուրացած կ'ըլլան, ճշմարտութիւնը չկարենալ տեսնելու աստիճան, և դեռ՝ շահ մը կը հետապնդեն սխալ գործելու մէջ: Ահա, այս վերջիններուն հետապնդած շահերուն է, որ չի համապատասխաներ շիտակ խօսքը: Գոյնաւորութիւնը կը խոչընդոտէ իրենց շարագործելը: Ահա, այս պարագաներուն է, որ շիտակ խօսող մարդուն գլուխը ծակ կ'ըլլայ:

«Սակայն, գիտնալով մէկտեղ այդ բոլորը, ճշմարտութիւնը պէտք է խօսուի վասն Արդարութեան, որպէսզի սրբագրուին սխալները, ուղղուին յոռի լնթացք-

Ս Է Ր
ՅԱԿՈՔ ՏԵՐԵԱՆ

ները, շտկուին անիրաւ և անարդար գործունէութիւնն ինչպէս:

«Որքան ատեն որ այդ ճշմարիտ Սէրը կայ սրտիդ մէջ և դուն կը սիրես Մարդ-կութիւնը, կը սիրես քու Ազգը, քու Համայնքը, քու Բարեկամներդ՝ չես կրնար անտարբեր մնալ անոնց սխալներուն և յանցանքներուն նկատմամբ: Չես կրնար ըսել.— Ինձի ի՛նչ. ի՛նչ կ'ուզեն թող ընեն. ի՛նչ կ'ուզէ թող ըլլայ. Ե՞ս մնացի շիտակ խօսող: Ոեւէ մէկուն յանցանքը եթէ երեսին տաս, արդէն իսկ գէշ կ'ըլլաս հետը»... և այլն:

«Ասիկա թուլամորթ և անակզբունք մարդու խօսք է: Այդպիսիներ չեն կրնար որեւէ շինիչ գործ տեսնել իրենց կեանքին մէջ:

«Սէրը կը մղէ քեզ որ խրատես և ուղղես մտորածները, անօրէն և զարտուղի գործեր կատարողները, հաշտեցնես իրար հետ խռով ամուսինները. քոյրերն ու եղբայրները, կամ ընտանիքի այլ անդամները, և այլն:

«Ահա, ասոնք են, սիրոյ յատկանիչները:

«Պօղոս Առաքեալ նոյն գլուխը կը վերջացնէ ըսելով.— Հաւատք, յոյս և սէր: Ունեցի՛ր այս երեքը որոնց մեծագոյնը սէրն է»:

«Որով, մարդ հաւատք պէտք է ունենայ իր կատարած գործին նուիրականութեան վրայ:

«Յոյս ունենայ անոր յաջողութեան վրայ:

«Եւ համակ սէր դնէ այդ գործին մէջ:

«Ահա, այն ատեն միայն, կատարուած որեւէ գործ կ'ըլլայ ամբողջական և կատարեալ, և լրիւ ծառայել իր նպատակին»:

ԵՍ ՍՈՐՎԱԾ ԷՒ ՍԻՐՈՅ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԻՄԱՍՏԸ:

ՌՈՒՔԷՆ ՍԵՒԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ... (Շար. էջ 4-էն)

կոչուի. ընթերցողը աւելի ողջամիտ է, քան գրողը, առաջնորդուողը աւելի հեռատես է, քան ուղեղը... Մենք դեռ ապրիլ կ'ուզենք, մեզ հոգիի ու մարմնի բժիշկներ միայն պետք են: Մենք պիտի վրցնենք ու նետենք այդ ուղեղը»:

Ռուբէն Սեւակի տիպարը իր մտածումներուն և ստեղծագործութիւններուն մէջ իւրօրինակ է, ուսանելի բազմաթիւ երեսներով:

Անոր յիշատակը վառ կը մնայ ամէն բանէ առաջ իր ստեղծագործութիւններով, որոնք իրեքայաջորդ սերունդներու համար կը մնան թէ՛ ներշնչման, թէ՛ ուսումնասիրութեան առարկայ:

Իր յիշատակը այլապէս վառ կը մնայ նաեւ այլ մնայուն ձեւերով, որոնց հետամուտ եղած է իր եղբորորդին՝ ծանօթ ազգային և հրապարակագիր Պրն. Յովհաննէս Զիլինկիրեան: Ֆրանսայի Նիս քաղաքին մէջ, Ռուբէն Սեւակի Յիշատակի Տունը, որ թանգարանային արժէքով առինձնող գրաւորութիւն ունի և մեծապէս կը սպաւորէ աշխարհի տարբեր երկիրներէն և Հայաստանէ այցելածները, Պրն. Յովհաննէս Զիլինկիրեանի ձեռակերտն է, իր գերազանցօրէն բարձր արւեստի մթնոլորտով: Իր բարեբարութեամբ է. որ կը պահուի նաեւ Ռուբէն Սեւակի անուան միջնակարգ դպրոցը Հայաստանի մէջ, անկախութենէն ասոյին: Դարձեալ իր բարեբարութեամբ է, որ Լիբանանի մէջ Ռուբէն Սեւակի անուան գրադարանը հիմնուեցաւ. արդիական շէնդ կահաւորումով: Պատուաբեր ձեւերակ մը՝ բանաստեղծին անուան արժանի:

Ռուբէն Սեւակի յիշատակին յաւերժացումը Հայաստանի մէջ տւելի շօշափելի իրականութիւն պիտի դառնայ ա՛յն հայրենասիրական որոշումով. որ Նիսի Յիշատակի սեմնելի Տունը պիտի վերադառնայ Մայր հող՝ իբրեւ Տուն թանգարանը շիրիմ չունեցած նահատակ հայ մեծ բանաստեղծին և մտաւորականին...:

ՆԱՅԻՐԻ

NAÏRI

Թիի 309 ԵՐԵՎԱՆԻ 20 ԱՊՐԻԼ 2010 (ԺՁ. ՏԱՐԻ)

عدد رقم ۲۰-۲۰۹ نيسان ۲۰۱۰

ԶՐՈՅՑ ԸՆԹԵՐՅՈՂԻՍ ՆԵՏ

ԱՒԵՏԱԲԵՐ ԾՈՒԽ ՊԻՏԻ ԲԱՐՁՐԱՆԱՅ ՍՊԻՏԱԿ ՏՈՒՆ-Ի ԾԽՆԵԼՈՅՁԷՆ, ԳԷ՛Թ ԱՅՍ ԱՆԳԱՄ

ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻ

Մէկ հեղ եւս, անցկալից ու սրտատրոփ կը սպասենք տեսնելու, թէ Ապրիլ 24-ի նախօրէին, Նախ. Օպամա պիտի արտասանէ՞ սա... մոգական եզրը: Յանկալի այս բառը ան խոստացած էր հնչել տարիներ առաջ: Բայց յետոյ, ամէն առթիւ ալ, ուրացած և դրժած էր իր յանձնառութիւնը: Գրեթէ նոյնպէս վարուած էին իր տխրահռչակ նախորդները.

Այո: Աշխարհն գիտէ ու դե՛ռ լաւ կը յիշէ: Ծա՛տ աւելի՛ մենք, հայերս: Կրնա՞նք մոռնալ թէ ինչպէս այն օրերուն, երբ մօտիկ անցեալի Ծերակուտականը թեկնածու էր Սպիտակ Տուն-ի աթոռին, հանդիսատրապէս ան խոստացաւ մեզի որ ձուածել Պալատ մտնելէ քիչ ետք, պաշտօնապէս և բարձրագոյ պիտի ճանչնայ հայկ. ցեղասպանութիւնը, որ անցեալ դարի սկիզբներուն գործուած էր Երիտ-թուրքերուն կողմէ:

Հարկ չկայ, երբեք, նկարագրելու ոգեւորութեան այն մեծ ալիքը, որ բարձրացաւ – և դեռ կ'ուռճանայ ամէն Ապրիլ 24-ի նախօրէին, հայու-թեան հոծ զանգուածներէն ներս:

Ափսո՛ս սակայն, որ այդ հիսուած երազին ու շատ փայփայուած սին յոյսերուն: Եկան ու անցան շա՛տ Ապրիլներ: Առանց որ այդ չքնա՛ղ, հիասքանչ յանձնառութիւնը շուտով իրականութեան վերածուի: Ան մնաց մեռեալ տառ: Բայց մենք, հայերս, դեռ կը շարունակենք յուսալ և սպասել: Չէ՞ որ օտար մեծանուն հայասէրներ, բազում արդարամիտ քաղաքագէտներ, ինչպէս՝ Նորվեկիացի Ֆրիտիոֆ Նանսէն, Ֆրանսացի թունդ, խիզախ ընկերվարական Ժան Ժորէս, Պետական նշանաւոր գործիչ Անաթոլ Տը Ֆրանս որոնք, մեծ ու խոր կարեկցութեամբ լեցուած ի տես և ի լուր հայութեան ողբ ու կոծին, մեզ կոչած են «Խաբուելէ չյոգնող ժողովուրդ»:

Այսպէս անուանեցին մեզ ո՛չ թէ միամտութիւն վերագրելով մեզի, այլ՝ քանի որ հայութիւնը կը սեպէին դիւանագիտական նենգ ու ստոր խաղերու զոհ եղած, դարձուող ժողովուրդ: Այո: Զանի որ քիչ անգամ չէ, որ «Զաղաքակիրթ» ու «Արդարասէր» կարծուած-կոչուող Արեւմուտքը մեզի ոսկեփայլ խոստումներ շռայլելէ յետոյ, յուսաբեկութեան ժայռին է զարկած հայութիւնը, վայրագաբար:



Եւ մենք, ի հեճուկս շատ լեղի ու սահմուկեցուցիչ յուսախաբութիւններ կրելնուս, պատրանքներով սնուելէ չենք յոգնած: Այսօ՛ր եւս:

Մօտ անցեալին, Նախ. Օպամայի Թուրքիա այցի նախօրէին ըսուեցաւ, որ հայ-թրքական յարաբերութիւններու «Կճռոտ» հարցը ներառնուած է Սպիտակ Տան Պետին իր թուրք պաշտօնակիցին հետ ունենալիք խօսակցութեանց օրակարգին վրայ: Բայց, նոր յուսախաբութիւն արժեց մեզի այս մէկն ալ: Խօսք ու խոստում, տրուած հեռու անցեալին ու երէկ, ցնդեցան ընդմիջտ: Ոճիրը մնաց թաղուած: Դահիճը՝ անպատիժ: Թուրքը կը մնայ յիսորտ առ այսօր:

Իսկ նորագոյն պատրանաթափութիւնը կրեցինք դեռ մէկ քանի օր առաջ:

Օպամա-Էրտողան զրոյցը իր նախորդներուն նմանեցաւ: ԱՄՆ-ի Պետը ինքզինք քօղարկեց սին ու տարտամ մաղթանքներու ետեւ, որ մեզ ալ օրօ-

րէ: Հայ-թրքական յարաբերութիւններու մօտալուտ «Կարգաւորում» և կողմերու միջեւ իրարհասկացողութիւն իրականացնել յորդորեց: Եւ ցանկաց ու մաղթեց, որ սկսած երկխօսութիւնը յաջողի: Բայց ինք թաքնուեցաւ իր...



ՄԵՐ ԳՈՂԳՈԹԱՆԵՐԸ ՆԱԶՈՎՐԵՑԻ ԳՈՂԳՈԹԱՅԷՆ ԱԻԵԼԻ ՎՍԵՄ
ԵՆ: ՄԵՐ ԽԱԶՐ ՕԾԵԱԼԻ ԽԱԶԷՆ ԱԻԵԼԻ ԾԱՆՐԱԳՈՅՆՆ Է, ԻՍԿ ՄԵՐ
ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ ԳԵՐԱԳՈՅՆԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՆ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒՆ:

... ԵՒ ԴՈՒՔ, ՎԱՂԸ ՊԻՏԻ ՏԵՍՆԷՔ, ԱՐԵԻԵԼՔԻ ՀՈՐԻԶՈՆԻՆ
ՎՐԱՅ՝ ԾՆՈՒՆԴԸ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ:

Փ Ա Ր Ա Մ Ա Ջ

[Վերջին հյոյքը՝ կախադանի տակ խօսուած, 1915-թ.ին]



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Ո՞վ ԿՈՒԼԱՅ ԱՅՍՊԷՍ ԽՇՏԱԿԻՍ ՇԷՄԲԻՆ.
 - ՔՈՅՐ, ՂԱՐԻՊՆ Է, ԲԱ՛Ց...:
 ԿՄԱ՞ԽԻ ՄԸ Կ՛ԱՆՑՆԻ ԴՈՒՐՍԷՆ ԼԱԼԱԳԻՆ.
 - ՍՈՎՆ Է, ԴՈՒՌԴ ԲԱ՛Ց...:
 ՏԱՊԱ՞ՐՆ Է ՋԱԽՋԱԽ ԴՐԱՆԸՍ ԿՐԾԲԻՆ.
 - ՉԱՐԴՆ Է, ԴՈ՛ՒՌԴ ԲԱՑ...:
 ԹՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

մատին ետեւ: Չուզեց յիշել իր երեկի խոստումները: Սպիտակ Տուն մուտքի նախօրէին տրուածը: Այդ նեղացուցիչ թուող «բեռ»ը նետեց հայ-թուրք խօսակիցներուն վրայ: Երբ իր բարոյական պարտաւորութիւնը կը կազմէր, պարկեշտ միջնորդի դերը պիտի ըլլար՝ նեցուկ կենալ հայոց պահանջին: Խորհուրդ տալ Ուաշինկթընի «Ռազմավարական դաշնակից» Թուրքիոյ, որ ընէ արդար փոխհատուցում հայոց-արիւնի ու հողային-, եթէ իսկապէս կ'ուզուէր մնայուն և արդար խաղաղութիւն, բարի-դրացիական կապ հաստատել Փոքր Ասիոյ մէջ:

Օպամա խուսափեցաւ Արդարութեան հետ համերաշխելէ, իր Պոլիս այցի ընթացքին: Պետական Զարտուղար Տիկ. Զլինթընի օրինակով: Նոյն որձեւէգ ընթացքն ունեցաւ ան նաե՛ւ երեկ, Ուաշինկթընի մէջ: Երբ իրմէ կը սպասուէր որ ինք, առնուազն, ըլլար այնքան ուղղամիտ որքան եղաւ իր նախորդներէն՝ Վուտրօ Ռիլսըն:

Կարելի՞ է մոռնալ արդարեւ, սա բարելու Նախագահին յանձնառու դառնալը Ա. Աշխարհամարտի սկիզբին, ի տես գործուող հայկ. ցեղասպանութեան.- Ջէնքերը վար պիտի

չդնենք, մինչեւ որ Թուրքիոյ կողմէ
ճնշուած ազգերը գտնեն իրենց ազա-
տութիւնը: Հայոց դէմ գործուած ցե-
ղասպանութիւնը մեզ կը ստիպէ, որ
Եւրոպայի վրայէն ալեւնք այդ տգէտ
ու վատառողջ անազակախումբը: Ուշ
կամ կանուխ՝ Թուրքիա հաշիւ պիտի
տայ: Հայաստանին պէտք է տրուի իր
պատմական իրաւունքները, հողերը՝
ճախ և առաջ»- յուսադրած էր ան:
Եթէ Նախ. Օպամայի համար դժուար
էր «Բարի ու վեհանձն» Ուիլսընը-
օրին այս փաղաքուշ մակդիրով կը

կոչէին ԱՄՆ-ի նախագահը- վկայակոչել, Թուրքին ոճրագործութիւնը վերա-
հաստատելու համար, գէթ ան կրնար, Թուրքը իր ցեղակից-ազգակիցին
բերնով և ամենայն հաւաստութեամբ մեղադրել ու հայոց դէմ գործուած
եղեռնը հիմնաւորելու նպատակաւ վկայութեան կսնչել Օսմանի շառաւիղ-
ներուն կողմէ դեռ սիրուած, պաշտուած, իբր «Թուրքիոյ Հայր» սրբացուած
Մուստաֆա Զեմալը որ, 1919-թ.ին, Պոլսոյ Զին. Ատեան ներկայանալով ան-
ձամբ, վկայեց [ակնարկելով Երիտթուրքերուն և գլխաւորաբար՝ Թալաաթի,
Էնվերի ու Զեմալի].- Մեր հայրենակիցները գործեցին ահռելի ոճիրներ:
Կազմակերպեցին քսոր և կոտորած: Նորածինները այրեցին ողջ-ողջ:
Ծնողաց առջեւ բռնաբարեցին կանանց ու երիտասարդուհիներուն: Երա-
խաները բաժնեցին իրենց հայրերէն ու մայրերէն: Հազարներ նետեցին ծով
ու ըրին խեղդամահ... հայերուն ենթարկեցին ահռելի վիճակի... որուն նմա-
նը չէ տեսնուած ամբողջ Պատմութեան մէջ...»:

Թուրքերը կը յանդգնի՞ն ըսելու ժխտելով, որ «Արդի Թուրքիոյ Հիմնադի-
րը» սուտ կը խօսի և կեղծաւոր է... Աթաթուրքին վերագրուածն ալ կը
կազմէ զրպարտութիւն: Մերօրեայ թուրքը այս մէկը հերքելու չի համարձա-
կիր, բայց, միւս կողմէ ալ, սոյն անժխտելի իրողութիւնը կ'անգիտանայ: Կը
մնայ լուռ: Կը դառնայ «Պապանձումն Զաքարիայի»:

ՀՀ-ի Նախագահը լաւ է ըրած, այցելելով Նախ. Ուիլսընի պանթէոնը և,
յանուն երախտագէտ հայութեան, ծաղկեպսակ մատուցել այնտեղ:

Բայց արդեօ՞ք, խորհրդաւոր և գեր-յուզիչ այդ պահուն, Ուսշիկկթըն
գտնուող Նախ. Մերժ Սարգսեան ունեցաւ, գէթ մտովի, սրտաբաց զրոյց Մեծ
Մարդասէրին հետ, գանգատելով և ըսելով անոր.- Պրն. Նախագահ,
անսփոփ հոգիով ու սրտաբեկ՝ եկած եմ ըսելու, որ Ձեր կազմած ու
ստորագրած Սելրի դաշնագիրէն ուղիղ 95 տարի ետք, այդ փաստաթուղթը
դեռ չէ՛ գործադրուած: Կը մնայ մեռեալ տառ ու թուղթի կտոր:

«Առաջին պատճառն ու մեղաւորները Ձեզ յաջորդած ԱՄՆ-ի պաշտօնա-
տարներն են: Անոնց բարոյական պարտքն էր՝ իր անարտին հասցնել

Ո՛Վ Է ԵՂԵՐ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԷՆ
ԵՐԵՒԵԼԻ ԱՆՁՆԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ Հ-1 ՀԵՌԱՏԵՍԻԼԻ ԿԱՅԱՆԸ,
ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐՆԱԽԱԻՆ ՈՒ ԱՌԱՆՁԻՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԸ ՕԳՏԻՆ ԳՈՐԾՈՂ
ՔԱՐՈՋՉԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻ ՄԸ ՎԵՐԱԾՈՒԱԾ Է,
ՎԵՐՋԵՐՍ ԻՐ ԿԱՏԱՐԵԼ ՏՈՒԱԾ ՄԷԿ ՀԱՐՑԱԽՈՅՋԻՆ
ԱՐԴԻՒՆԸԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՑ:
«ՀԱՅՈՑ ԱՄԵՆԷՆ ԵՐԵՒԵԼԻ ԱՆՁՆԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՂՆ Է»... ԵՂԵՐ:

ԻՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ, Ո՞Վ Է ՆԺԴԵՂ: Ի՞ՆՉ
ԸՐԱԾ Է ՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ Ի ՆՊԱՍՏ:
ԻՐ ՄԱՍԻՆ ՄԵՐ ԳԻՏՑԱԾԸ ԸՍԵԼՈՒ ՋԱՆԱՆԸ...
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ 1921-Թ.Ի ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ
ԽՈՈՎՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԷՆ Է,
ՈՐՈՒՆ ՀԵՏԵԻԱՆՔՈՎ ՀԱՐԻՒՐԱԻՈՐ ՀԱՅԵՐ-
ՄԱՆԱԻԱՆԴ ՀԱՅ ՀԱՄԱՅՆԱԿԱՐՆԵՐ, ԲԼՈՒՐԻ ՄԸ
ԿԱՏԱՐԷՆ ՉՈՐ ՆԵՏՈՒԵՑԱՆ:
ՆԺԴԵՂ 1921-ԻՆ ՓԱԽՈՒՍՏ ԿՈՒ ՏԱՅ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ:
ՅԵՏՈՅ՝ ԱՄԵՐԻԿԱ:
...ԵՐԿՐՈՐԴ ԱԾԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ՝ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՋ ԿԸ
ՋԻՆԱԿՑԻ ՀԻԹԼԵՐԱԿԱՆ-ՖԱՇԱԿԱՆՆԵՐՈՒՆ,
ԵՒ ԻՐ ԿԱԶՄԱԾ «ՀԱՅԿԱԿԱՆ ՋՈԿԱՏ»ԻՆ ՀԵՏ
[ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԷ ԿԱԶՄՈՒԱԾ] ԿԸ ՆԵՐԳՐԱԻՈՒԻ
ՀԻԹԼԵՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԻՆ, ԿՈՒԻԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆՆԵՐՈՒՆ ԵՒ ԱՅԴ ԳԾՈՎ՝ Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԴԷՄ: ԱՀԱ, ԱՅՍ Է, ՄԵՐ ՃԱՆՉՑԱԾ ՆԺԴԵՂԸ...:
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ՎՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]

Այստեղ կը հրատարակենք, Փարիզի «Նոր Յառաջ»-ին մէջ, 10 Ապրիլ
2010-ին լոյս տեսած Հայաստանի Հ-1 Հեռատեսիլին կատարած «Քուէար-
կութեան», հարցախոյզին արդիւնքը:

NOR HARATCH Journal bilingue arméno-anglais
ՄՅԱՌԱԿ

Ա. տարի - Թիս 54, Գինը՝ 1,60 եվրո

1^{re} année - N° 54 | Prix unitaire : 1,50€

8 | ՆՈՐ ԵԱՌԱԿ | 2010, Ապրիլ 20

**Ո՞Վ Է ՀԱՅՈՑ ԱՄԵՆԷՆ ԵՐԵՒԵԼԻ
 ԱՆՁՆԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ**

Գարեգին Նժդեհ՝ 29014 ձայն,
 Վարդան Մամիկոնեան՝ 24942,
 Տիգրան Մեծ՝ 7922,
 Մեսրոպ Մաշտոց՝ 4164,
 Եղիշէ Զարենց՝ 3645,
 Գրիգոր Նարեկացի՝ 2041,
 Կոմիտաս վարդապետ՝ 1936,
 Վլիքթոր Համբարձումեան՝ 1788,
 Պապ Արշակունի՝ 1728,
 Լեւոն Ռուբինեան-Մեծագործ՝ 1191,
 Վազգէն Ա. կաթողիկոս՝ 1184,
 Արամ Խաչատրեան՝ 1054:

ԶՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՆ
 ԱՐԴԻՎՆՔՈՒՆ՝ ԴՈՒՐՍ
 ՄՆԱՅԻՆ ԶՕՐ. ԱՆԴՐԱՆԻԿԸ,
 ՍՏ. ԳՐ. ԼՈՒՍԱԻՈՐԻԶԸ,
 ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԸ

հարցախոյզը, Երոպայի մէջ [եւ գրեթէ ամէն կողմ] Սիոնիստներուն ձեռքը եղող լրատուական ցանցին կողմէ կատարուող «ENQUETE» կամ «SONDAGE» կոչուած խեղկատակ քարոզչութեան յաղերուն «Յար և նման»ն է:

Եւ այս քուէարկութեան մէջ, որոշ կուսակցութեան մը մտայնութեան յատուկ շատ յատկանշական կեցուածք մը չտեսնել անկարելի է.

«Դաշնակցական չեղողը՝ հայ չէ» լրզունքին հետեւողութեամբ՝ Զօր. Անդրանիկը որ այս կուսակցութեան անդամ չէր, ուրեմն՝ «Արժէք մը չունի»:

Շատ անգամ կը մտածենք թէ, ինչպէ՞ս կ'ըլլայ որ այս կուսակցութիւնը որ հիմնուած տարիներէն մինչեւ այսօր, իր ունեցած կարգ մը դրական գործունէութիւններու կողքին՝ Ազգ.ին պատճառած մեծ ու շատ վնասներուն համար չէ այպանուած:

Ընդհակառակը՝ այս կազմակերպութիւնը իր թերթերով, իր ակումբներով իր համակիրներով միշտ ներկայ է. Սփիւռքի և Հայաստանի մէջ:

Այս մասին մեր գաղափարը յայտնելու չանանք:

1.- Դաշնակցութիւնը սկզբունքով «Ազգասիրական» կուսակցութիւն մըն է:

Այս տեսակէտով, իր մէջ հայկական ոգի ունեցող անձը՝ բնական անդամն է գաղափարակիցն է այս կազմակերպութեան:

Բայց այս կուսակցութիւնը նոյն ատենին շատ կեդրոնաձիգ ու բռնաւոր կազմակերպութիւն մըն է:

Բոլոր որոշումները կ'առնուին Կեդրոնական Կոմիտէի մը կողմէ [Պիւրօ]:

Եւ «Պիւրօ»ին որոշումներուն ամէն ոք [զինուորական կարգապահութեամբ] հպատակելու ստիպուած են: Առանց առարկութեան, բաց խօսքով՝ ամբողջական համակերպութեամբ:

Այս կարգապահական սկզբունքը՝ կուսակցութեան համար մեծ առաւելութիւն մըն է: Բայց նոյն ատեն ալ, շատ խոցելի, տկար կէտն է:

... Հայուն օտար թշնամիները առաջին օրէն, շահագործեցին այս տկար կողմը, ու զանազան, զարմանազան միջոցներով, օգտուելով նաեւ որոշ ղեկավարներու միամտութենէն, նոյն առաջնորդներու ձեռքով ծուղակը ձգեցին հետեւորդները, ի վնաս հայութեան բարձրագոյն շահերուն:

1.- 1890-էն մինչեւ 1915-տարիները՝ ղեկավարներէն ոմանք ծուղակը ինկան Սիոնիստական, ֆարմատոնական Սելանիկցի Երիտթուրքերու կազմակերպութեան: Վկայ՝ Լ.Յ.Դ.- Իթթիհատ Վէ Թերաքքը [երիտթուրքական] համաձայնագիրը:

2.- 1915-էն մինչեւ 1920 տարիները, ղեկավարներու որոշ մաս մը, ծառայեցին Սիոնիստական-կայսերապաշտ պետութիւններուն:

3.- 1920-էն մինչեւ 1985-ները, որոշ ղեկավարներ ներգրաւուեցան Արեւմտեան հետախուզական կազմակերպութիւններու ցանցին: Եւ այժմ ալ, որոշ տեղեր, այդ ծառայական աշխատանքը կը շարունակուի:

1915-ի հայկական ցեղասպանութեան 95-րդ տարելիցի այս օրերուն, ստիպուած եղանք այս կուսակցութեան վարքագծին կարգ մը ժխտական երեսները բացայայտելու:

Որովհետեւ կազմակերպութեան խօսնակները դեռեւս այսօր, կը շարունակեն այլեւս «Դդումի համ տուող» մասալները իրենց թերթերուն և հեռատեսիլներուն միջոցաւ, և ուղղակի կամ անուղղակի կերպով սխալ վերագրումներ ընել իրենց կազմակերպութեան չյարողներուն կամ իրենց հետ

տարակարծիք եղողներուն հասցէին:

Այստեղ կ'ուզենք արտայայտուիլ Հ.Յ.Դ.ի պատկան թերթի մը մէջ վերջերս կատարուած անհրաւուրեան մը, վերաբերող՝ տիպարի մը, որ շատ սրտամօտ և հարազատ է մեզի: Մեզ շատ յուզող հարց մըն է այս:

Աթենքի Հ.Յ.Դ.ի Պաշտօնաթերթ «Ազատ Օր» թերթին մէջ, 16 Փետրուար 2010-ին [Ռուբէն Սեւակի ծննդեան 125-ամեակի օրը] գրութիւն մը լոյս կը տեսնէ, [իբր թէ] Ռուբէն Սեւակի յիշատակին նուիրուած գրութիւն մը:

Բայց այս գրութեան մէջ Ռուբէն Սեւակ կը ներկայացուի իբր «Խոստմնալից», երկրորդական բանաստեղծ մը:

Իսկ ամենէն կարեւորը՝ Ռուբէն Սեւակի Չանդըրըի մէջ ունեցած հերոսական կարճատեւ կեցութեան մասին ոչ մէկ տող, ոչ մէկ տեղեկութիւն կը հաղորդուի:

Այստեղ ալ կը հրատարակենք Աթենքի «Ազատ Օր» թերթին Ռուբէն Սեւակի մասին գրութեան վերնագիրը՝


«ԱՋԱՏ ՕՐ»

[Յուշատետր]

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

[ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ,

1885-1915].



ԱՋԱՏ ՕՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅԿՈՒՄԱՆ ԳԵՂԱՍՊԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՆՈՒՐԷՆ ՍԵՒԱԿ (ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, 1885-1915).
Հայ գրականութեան խոստմնալից տաղանդը, որուն կեանքի թելը ցեղասպանը կտրեց

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՈՍՏՄՆԱԼԻՑ ՏԱՂԱՆԴԸ, ՈՐՈՒՆ ԿԵԱՆՔԻ ԹԵԼԸ ՑԵՂԱՍՊԱՆԸ ԿՏՐԵՑ»

Դժբախտաբար, Ռուբէն Սեւակի դէմ կատարուած սա անհրաւուրեանը ո՛չ առաջինն է, ո՛չ ալ վերջինը... հաւանաբար:

Պալաքեան վարդապետն ալ 1922-թ-ին իր հեղինակած «Հայ Գողգոթան»-ի առաջին հատորին մէջ, նոյն անհրաւուրեանը գործած էր Ռուբէն Սեւակի դէմ:

Հակառակ այն իրողութեան որ Պալաքեան վարդապետ, Չանդըրըի մէջ, միասին գտնուած և ապրած է այդ՝ դժոխային օրերը, իր գիրքին մէջ ոչ մէկ տող գրած է Ռուբէն Սեւակի հերոսական կեցուածքի մասին:

Շատերուն ծանօթ է Պալաքեան վարդապետին հատուածական հակումները, իբր մեծամուլ և նախանց նկարագրի տէր անձ եղած ըլլալը:

Բարեբախտաբար, Չանդըրըէն վերապարած ու եղելութեանց ականատես եղած վկաներ, գրած են Ռ. Սեւակի ողբերգական և հերոսական վախճանի մասին:

Այստեղ կը հրատարակենք [կրկին ու կրկին] Թէոդիկի «Յուշարձան Նահատակ Մտաւորականութեան» գրքին մէջ լոյս տեսած, եղեռնէն վերապրող ականատեսի մը՝ Միքայէլ Շամտանճեանի մէկ վկայութիւնը, զայն վերցնելով «Չանդըրըէն Վերյիշումներ» գրութենէն, իբր «Նշխար»:

(→ էջ 3)

Ո՛Վ Է ԵՂԵՐ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԷՆ... (Շար. էջ 2-էն)



ԶԱՆՂԸՐԸԷՆ ՎԵՐՅԻՇՈՒՄՆԵՐ

1915ի Յունիսի վերջերը, առաջին կարաւանին մեկնելէն եւ. տասն եւէնը հոգիներու ալ Պոլիս վերադարձը արտօնուելէ յետոյ, Մէկու կէս ամիսի չափ, միասին ապրեցայ Աեւակին հետ: Ես ուրիշ վեց հոգիներու հետ միասին կ'ապրէի: Բոլոր ընկերներս ալ, առանց բացառութեան, մաս կը կազմէին Պոլիս վերադառնալու արտօնուածներուն, Աեւակ ալ. այդ օրերուն նոր հասած էր Չանդըրը, ուրննն անմիջապէս որոշեցինք մեր կենակցութիւնը:

Պոլսէն ծանօթ էր ինձի իր գիւլամազորդ եւ գուարթ հոգիին: Տօնական զուարթախոնութեամբը յեցուցած էր տուներնիս: Այդ ստոններուն, (յուզիսի սկիզբները) տակաւին չէէնք վրտիս առաջին կարաւանին վիճակուած բախտը, եւ անտեղեակ էինք տակաւին Քուրքին եղեռնի կամքին:

Իսլամին ծոմապահութիւնը սկսած էր արդէն, եւ ծայր տուած եղեռնի ապերասանութիւնը: Զարդերու չարաչուր զրոյցներ սկսած էին մեր ակամօղը հասնիլ: Այդ միջոցներուն էր, որ մը մեծ իրարանցումի մէջ տեսայ զինքը: Այն տեսակ խօսք մը տարածուած էր սքստրականներու մէջ, թէ մահմետականութիւն ընդունողը ազատ պիտի արծակուէր: Այդ ստոնները, առաջին կարաւանը մեկնած էր արդէն եւ եօթանասուն հոգիի չափ մնացած էինք: Ամբողջ երկու օր, խնդր աշխատեցաւ, համոզելու համար տկար հոգիները, որ մահը մահմետականացումէն աւելի աղէկ է, եւ զատ զատ երգում ընել տուաւ ամէն անոնց, որոնց հոգիի ուժին վրայ կասկած ունէր, թէ հաւանաբար պիտի մնան իրենց յոյս-հաւատքին:

* *

Հայարտութեամբ պիտի ըսենք, որ մեր կեանքին նպատակը ըրած ենք՝ Ռուբէն Սեւակի հանդէպ կատարուած անհրաւութիւններուն և սրբապղծութիւններուն դէմ պայքարիլը, զանոնք սրբագրել տալը, և Ռուբէն Սեւակի գաղափարականը և անձնագրհութեան ոգին՝ հայ ժողովուրդին մէջ աշխատիլ տարածելը...:

Ուստի ցաւալի է մեզ համար, այստեղ կրկին ու կրկին ըսելը թէ՛ թուրքերը շատ աւելի լաւ հասկցած էին Ռուբէն Սեւակի «Արժէք»ը և իրենց համար անոր ներկայացուցած «Վտանգը»: Այս մասին 1985-թ.ին մեր հրատարակած «Ռուբէն Սեւակ Եւ Փրցուելիք Ուղեղներ» գիրքին մէջ, առաջին անգամ ըլլալով նշեցինք J. LEPSIUS-ի գերմանական արխիւներուն հայկական ցեղասպանութեան վերաբերող վաւերագրերուն մէջ, Պոլսոյ Ոստիկանապետ-Ճիւաղ Պետրի Պէյին Ռուբէն Սեւակի համար գերմանացիներուն ըսածները...

« Ռուբէն Սեւակ կը նկատուի իբրեւ մէկը այն մտաւորականներէն, որուն զանգուածներուն վրայ ունեցած ազդեցութենէն կը վախցուի »:

Յունիս 1915- Պոլիս

Johannes Lepsius-ի այս գիրքը թարգմանուած է ֆրանսերէնի և հայերէնի: Բայց ո՛չ ֆրանսերէն և ո՛չ ալ հայերէն գիրքերուն մէջ, Ճիւաղ Պետրի Պէյին Ռուբէն Սեւակի մասին այս ըսածները պարունակող վաւերագիրը հրատարակուած է: Ինչո՞ւ արդեօք: Որովհետեւ Ռուբէն Սեւակ ծանօթ կուսակցութեան [Հ.Յ.Դ.] անդամ չէր:

* *


Թուրքերը 1917-թ.ին Պոլսոյ մէջ, իրենց գործած ցեղասպանութիւնը քողարկելու համար, ֆրանսերէն լեզուով գիրք մը հրատարակեցին՝ հայոց դէմ ուղղուած և զրպարտութիւններով լեցուն գիրք մը:

Այս 600 էջանոց թրքական գիրքին մէջ, միայն մէկ հայ բանաստեղծի մը մէկ հատիկ քերթուածը կայ:

Այս բանաստեղծը, ո՛չ հայերու կողմէ «Աստուածացուած» Դանիէլ Վա-

րուժանն է, ո՛չ ալ հայոց կողմէ «Պաշտուած» Սիամանթօն : Այլ՝ Ռուբէն Սեւակին «Վերջին Օրօր» բանաստեղծութիւնն է՝ թուրքերուն կողմէ ֆրանսերէնի թարգմանուած:

Այստեղ կը հրատարակենք կրկին, թուրքերու կողմէ լոյս ընծայուած գիրքին շապիկին նկարը: Եւ թուրքերուն կողմէ ֆրանսերէնի թարգմանուած Ռուբէն Սեւակի «Վերջին Օրօր» բանաստեղծութիւնը:



BERCEUSE

"Dors mon enfant, dors,
 Et n'entends pas gémir ton pauvre père blessé.
 Un déluge de sang a inondé ces lieux bénis,
 Mais garde-toi bien de les quitter.
 Aime toujours ton pays
 Et adore ta patrie
 Mais n'y vis jamais en esclave;
 Commande, domines!
 Si je ne suis pas aussi
 Tombée inanimée à côté de ton père,
 C'était, comme la louve de Rome,
 Pour élever un nouveau Romulus.
 Mes bras ont été liés, mes pieds ont été hachés.
 Et à la fin hélas! on me coupa les seins!
 Le lait que tu as sucé n'était que du poison.
 Sucé maintenant le sang de ma plaie, ô mon unique enfant!
 Je meurs!... que l'Arménie soit ta mère:
 Que cette épée brisée,
 Sentant encore le sang tout chaud de ton père,
 Soit pour toi mon souvenir!


(Extrait des " Massacres d'Arménie..)

Թրքական այս գիրքին մասին 1917-թ.էն մինչեւ այսօր, առաջին անգամ ըլլալով «Նայիրի»ի մէջ, մենք արտայայտուեցանք: Ինչո՞ւ արդեօք: Որովհետեւ Ռուբէն Սեւակ որոշ կուսակցութեան մը [Հ.Յ.Դ.] չէր յարեր:

**

«Վերջապէս Ապրիլ 2009-թ.ին, գերմանացի պատմագէտ Wolfgang Gust-ի կողմէ Ռուբէն Սեւակի մասին Գերմանական արխիւներուն մէջ գտնուած բոլոր վաւերաթուղթերը, ամբողջութեամբ և կատարելապէս հրատարակուեցան - ամբողջ 28 էջ կազմող գերմաներէն վաւերագրեր, Ռուբէն Սեւակի սպանութեան մասին:

Այստեղ կը հրատարակենք Wolfgang Gust-ի վաւերաթուղթերէն 3 էջեր, առ ի տեղեկութիւն: Wolfgang Gust-ի կողմէ (→էջ 4)



Armenocide

The Armenian Genocide during the First World War
Documents from State Archives
Der Völkermord an den Armeniern im Ersten Weltkrieg
Dokumente aus staatlichen Archiven

Ո՛Վ Է ԵՂԵՐ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԷՆ... (Ծար. էջ 3-էն)

Ռուբեն Սեւակի մասին հրատարակուած այս բացառիկ վաւերագրերուն անցումը եամբ, հայկական մամուլին մէջ ոչ մէկ գրութիւն լոյս տեսաւ: Ինչո՞ւ արդեօք: Որովհետեւ Ռուբեն Սեւակ կուսակցական [Լ.Յ.Դ.] չէ՞ր:

Wolfgang & Sigrid Gust (Hg.)

Der Völkermord an den Armeniern im Ersten Weltkrieg

Vorgeschichte und Ereignisse anhand von Dokumenten aus staatlichen und privaten Archiven.

(Vorwort)

Edition: Adana 1909. Emily Chorley, Wolfgang Gust, George Shirinian (Hg.)
Dokumente des deutschen Auswärtigen Amtes und des britischen Foreign Office.
(Einführung)

Erstveröffentlichung: April 2007

Edition: Der Genozid 1915/16. Wolfgang & Sigrid Gust (Hg.)
Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amtes. (Einführung)

Erstveröffentlichung: April 2007

Edition: Der Fall des Roupen Tschilinguirian 1915. Wolfgang Gust (Hg.)
Dokumente der deutsche Botschaft Konstantinopel. (Einführung)

Erstveröffentlichung: April 2009

Edition: Die Kaukasus-Kampagne. Wolfgang & Sigrid Gust (Hg.)
Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amtes. (Einführung)

Erstveröffentlichung: April 2003

Anhang: Revidierte Lepsius-Edition. Wolfgang Gust (Hg.)

(Vorwort)

Erstveröffentlichung: März 2000



Յունուար 2010-թին, Պոլսոյ մէջ, թուրք պատմագէտ Taner Akçam-ի հեղինակութեամբ հայկ

տարակուեցաւ:

Այս գիրքին մէջ, թուրք պատմագէտի մը կողմէ առաջին անգամ ըլլալով, Ռուբէն Սեւակի կեանքի մասին [և Չանդըրըի մէջ անոր սպանութեան մանրամասնութեանց ալ շուրջ] շատ վաւերագրական և բացառիկ իրատեսութեամբ գրուած 25 էջեր կան:

Այստեղ կը հրատարակենք Taner Akçam-ի գիրքին կողքի նկարը և Ռ. Սեւակի մասին գրութեան առաջին էջի նկարը:

Թրքերէն լեզուով Taner Akçam-ի

ԱՆԳԱՐԱ ԵՒ ՊԱՔՈՒ
 Ի՞ՆՉ ԿԸ ՀԱՍԿՆԱՆ
 ՀԱՅ-ԹՐԳԱԿԱՆ
 «ՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ
 ԿԱՐԳԱԻՈՐՈՒՄ» ԸՍԵԼՈՎ

Օսյամա-Սարգսեան հանդիպում-խօսակցութենէն ետք, Սպիտակ Տունը հաղորդագրութիւն մը լոյս ընծայեց, որով գոհունակութիւն կը յայտնուի Հայաստան-Թուրքիա «Յարաբերութիւններու կարգաւորման» ուղղութեամբ և երկուստեք եղած ջանքերուն արդիւնաւորւած ըլլալուն ի տես:

Ի՞նչ «Կարգաւորում» է այդ և ի՞նչ բանի շուրջ է, որ «Ջանկերը արդիւնաւորուած» են-որոնց արդիւնքը, ըստ քաղաքական տպաւորութիւններու՝ գոհ ձգած է Սպիտակ Տունը, Ազգայնական ու Թուրքիան միաժամանակ:

Յստակ ու որոշ բացատրութիւններ կը պակսին ասոր մասին: Կողմերու (Թուրք-Ազերի) ներկայացուցիչներուն կցկտուր խօսքերէն կարելի է հետեւցնել միայն, որ Անգարա արդէն... հանգստացած է: Քանի որ այս տարի եւս, Նախ. Օսյամա «Յերլասպանութիւն» ըսուած

Ռուբէն Սեւակի մասին գրած այս շատ հետաքրքրական ու բացառիկ գիրքին վերաբերեալ, հայկ. մամուլին մէջ ոչ մէկ գրութիւն լոյս տեսաւ:

Ինչո՞ւ արդեօք:

Որովհետեւ, նահատակ Ռուբէն Սեւակ, Դաշնակցական չէր:

«Անիծեալ» բառը բերան սխալի չառնէ:

Ազգայնական գոհ է, որ «Իր անխցելի մասն ելող Լեւոնային Ղարաբաղի Ազատագրում»ը իր հիմնական նպատակը կը շարունակէ մնալ: Ջայն պիտի իրականացնէ ուշ կամ կանուխ, Թուրքիոյ օգնութեամբ:

Անգարա գոհացած է, քանի որ Երեւան իր աչքերը հեռացուցած է «Գրաւեալ Արեւմտահայաստան»... կոչուածին վրայէն:

Թէ՛ Պաւու և թէ՛ Անգարա հրնուանքով իրենց ափերը կը շփեն այժմ, քանի որ, միասնաբար որոշած են «Ռեւել Ջիջում Չկասարել» հայոց: Իսկ Երեւանն ու Ատեփանակերտը յաւակնութիւն ու պահանջ չունին: Ուրեմն, այսուհետեւ կարելի կ'ըլլայ, «Հարուային Կովկասի մէջ, պայծառ սպազայ ստեղծել»...

Rupen Tschilinguirian

(auch geschrieben Roupun Tschilingirian, oder Tschilinghirian oder Tschilinkirian oder Tchilinkirian oder Tchilinguirian)

war einer der am 24./25. April 1915 in Konstantinopel verhafteten Armenier der intellektuellen Elite seines Volkes. Er war in erster Linie Arzt, schrieb nebenbei auch Gedichte und Prosa. Nach den Unterlagen des deutschen Auswärtigen Amts war er nicht Mitglied einer armenischen politischen Partei oder Gruppierung und hatte sich generell politisch nicht betätigt.

Tschilinguirian war seit 1910 verheiratet mit der Deutschen Heien Marianne geb. Apell, mit der er zwei Kinder hatte. Die Eltern der Frau Tschilinguirian -Apell lebten in Lausanne/Schweiz. Sein Schwiegervater hatte in der deutschen Armee gedient und war Leutnant der Reserve außer Diensten. Er hatte gute Beziehungen zu deutschen Diplomaten, über die er Druck zu machen versuchte, um das Schicksal von Rupen Tschilinguirian zu erkunden.

Rupen Schilinguirian war angeblich Ende August 1915 bei einer Reise von seinem Deportationsort Tschangri nach (möglicherweise) Angora von Wegelagerern überfallen und getötet worden. Informationen seiner Frau, daß er noch später lebend gesehen worden war, erwiesen sich nach Recherchen der deutschen Botschaft in Konstantinopel als falsch.

Nach den Informationen der deutschen Botschaft waren vier der zwölf Wegelagerer zwar festgenommen worden, doch über einen Prozeß oder irgendwelche Maßnahmen gegen sie geht aus den Akten der deutschen Botschaft nichts hervor.

Obgleich die ehemals deutsche Frau von Rupen Tschilinguirian als auch seine Schwiegereltern lange Zeit versuchten, Details über das genauere Schicksal Tschilinguirians herauszubekommen, blieben ihre Bemühungen erfolglos. Die Akten der deutschen Botschaft belegen, wie schwierig es selbst für die verbündeten Deutschen war, ein Einzelschicksal aufzuklären. Sie belegen allerdings auch, daß die deutschen Diplomaten keinen sonderlichen Druck auf die türkische Regierung ausübten.

Dr. Rupen Sevag Çilingiryan Cinayeti¹

“...bu gibilerin [katillerin – T.A.] devâm-ı mevkufiyeti de arzu edilmediğinden emsâli gibi evvela haklarında usûlen te’cîli ta’kibât kararını istihsâl etmek... sûretiyie meselenin halli muvâfıktır.”²

1915 Ermeni sürgün ve öldürülmeleri ētrafında yapılan tartışmaların merkezinde duran ana soru şöyle formüle edilebilir: İstanbul Hükümeti veya daha doğru deyişle İttihat ve Terakki Partisi, Ermenilerin imhasını hedefleyen bir politika izledi mi? Bir başka ifadeyle, Ermenilere yönelik, işlendiği artık herkesçe kabul edilen cinayetler, doğrudan İttihat ve Terakki Partisi tarafından mı örgütlendi? İttihat ve Terakki cinayetleri doğrudan örgütleyen değilse bile cinayetlerin işlenmesine karşı herhangi bir önleyici tedbir aldı mı?³ Bu makale, bu sorulara Ermeni entelektüeli Doktor Rupen Sevag Çilingiryan'ın öl-

- 1 Bu makalenin yazılabilmesi için elinde bulunan Dr. Çilingiryan'a ait tüm bilgi ve belgeleri benimle paylaşan sayın Hovhannes Çilingiryan'a teşekkürü bir borç bilirim.
- 2 BOA/DH.ŞFR., nr. 64/257, Dahiliye Nazırı Talat'tan 25/26 Mayıs (7/8 Haziran 1916) tarihli, Ankara Vilâyetine şifre telgraf.
- 3 İttihat ve Terakki Partisi'nin, Ermenilere yönelik sistemli bir imha politikası izlediği, sadece Osmanlı belgelerine bakılarak dahi gösterilebilir. Bu konuda bkz. Taner Akçam, *Ermeni Meselesi Hallolunmuştur*. İletişim Yayınları, İstanbul, 2008.

Օսմանթ. Taner Akçam-ի «1915-Նազըլարը» անունով հատորի մէջի մուրէնի Սեւակի վերաբերեալ մասերը, առանձին գիրքով պիտի հրատարակուին հայերէն և ֆրանսերէն լեզուներով:

ՀԱՅԵՐ, ՍՏԱՑԱ՞Ք ՏԱԻՈՒԹՕՂԼՈՒԻՆ ՊԱՏԳԱՄԸ

Կը ստացուի ուրեմն, որ, ըստ Ազերի ու Օսմանցի թուրքերուն և ասոնց Արևմուտքի հովանաւորներուն, «Հարաւային Կովկասի մէջ խաղաղութիւն և կայունութիւն կարելի է ստեղծել» այլեւս...

1.— Արցախը վերադարձնելով Ազրպէյճանին, 2.— Եթէ հայերը դադրին «Գրաւեալ Արևմտահայաստանի ազատագրում» հոլովելէ, և 3.— «Ճեղասպանութիւն»ը եթէ ընդմիջտ մոռացութեան տրուի, 4.— Հատուցման պահանջ չդրուի հեղուած հայկ. անմեղ արիւնին և մեր բռնագրաւում ու -իրացում հայկական տարածքներուն

և ինչքերուն վերաբերեալ:

«Այդ թուրքը անցեալի վերքեր են» — կ'ըսէ Թուրքիոյ ԱԳ Նախարար Տաւրթօղլու, անկցնելով.— Այդ թուրքի վրայէն պէտք է գիծ քաշել և զանոնք մոռնալ:

Եւ դե՛ռ կը յիշորուան եզրակացնելով.— Մեր դէ՛մ գտնուողները [Հայոց կ'ակնարկէ] անշուշտ ստացած են մեր այս պատգամը...»:

★ Այժմ, սպասենք ու տեսնենք, թէ ինչ պիտի պատասխանեն «Պահանջատէր» ու «Նահատակներու կտակին հաւատարիմ» Հայաստանն ու Սփիւրքը:

TÜRKLERİN (SÖZDE) BILMEDIKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ

ÇALINAN VATAN 1915 ERMENİ SOYKIRIMININ 95-YILI

TÜRKLER 1915-DE ERMENİ MİLLETİNİ
SOYKIRIMINA UGRATARAK,
5000 SENEDEN BERİ ERMENİLERİN VATANI OLAN BATI
ERMENİSTANI ÇALDILAR .
VE ÇALINAN ERMENİSTAN ÜZERİNDE BUGUNKU UYDURMA
UCUBE TÜRKİYİYİ KURDULAR.
ERMENİ MİLLETİNİN EN BÜYÜK DUSMANI
KİMDİR BİLİRMİSİNİZ ?
TÜRKLER Mİ ? EVET TÜRKLER.
FAKAT TÜRKLERİN CANAVAR VE KATLIAMCI OLDUGUNU
BÜTÜN DÜNYA BİLİR.

TÜRKLER, CANAVARLIKLARINI DAIMA YAPTIKLAR ... ERMENİ MİLLETİNİN EN BÜYÜK DUSMANI ERMENİ LİDERLERİDİR.

TASNAK DENİLEN BU LİDERLER 1908- HÜRRIYET SENELERİNDE İTTİHATÇI LİDERLERLE FARMASON KARDESLİĞİ KURDULAR. VE BU LİDERLER 1915-E KADAR TÜRKLERİN KARDESLİK SÖZLERİNE İNANDILAR.

VE BU ERMENİ LİDERLERİNİN TÜRKLERİN KARDESLİK SÖZLERİNE APTALCA İNANMALARINDAN DOLAYI TÜRKLER 1915-DE BİRİNCİ DÜNYA SAVASININ KARKASALIGINDAN İSTİFADE EDEREK ERMENİ MİLLETİNİ SOYKIRIMINA UGRATTILAR VE BOSALAN BATI ERMENİSTAN-IN SAHİBİ OLDULAR....

BU GÜNLERDE TÜRKİYE DENİLEN SAFSATA DEVLETTE, ERMENİLER HAKKINDA ÇOK KONUSULUYOR.

VE BAZI VİCDANLI TÜRKLER. ERMENİLERİN 1915-DE MARUZ KALDIKLA SOYKIRIMI İÇİN ÇOK İNSANCIL YAZILAR. YAYINLIYORLAR... KENDİLERİNE TESEKKÜR EDERİZ....

* * *

FAKAT KİMSE GERÇEĞİ SOYLEMİYOR.

KİMSE DEMİYOR Kİ, OSMANLI DENİLEN ASİRET 13, ASIRDA, ORTA ASYEDAN GELEREK KORKUNÇ VAHSETLE ÖNCE ANATOLYAYI ZAPTETMİŞ, VE BİR KAÇ YÜZYIL ZARFINDA VIYANA KAPILARINA KADAR İLERLEMİŞLERDİ.

... FAKAT BİR MÜDDET SONRA BALKAN MİLLETLERİ RUSLARIN DESTEĞİYLE OSMANLILARI KOVMUŞLAR VE 1912 DE DE BULGARLAR İSTANBUL KAPILARINA KADAR (BUGÜNKÜ ÇATALCAYA KADAR) YAKLASMİŞLARDI...

VE ISTANBULU ZAPTETMEK BULGARLAR İÇİN ÇOK KOLAYDI.

ISTE BURDA IMPERYALIST DEVLETLER MÜDAHALE ETTİLER. VE OSMANLILARIN GELDİKLERİ ORTA ASYAYA GERİ DÖNMELERİNE MANİ OLDULAR.

OSMANILARIN YERİNE RUSLAR GELMESİN DİYE.

ISTE ERMENİLERİN ÖLÜM HÜKMÜNÜ IMPERYALİSTLER BU KARARLA VERMİS OLDULAR.

OSMANLI İMPARATORLUGUNDA ESİR MİLLETLER. MACARLAR, SIRPLAR, YUNANLILAR, BULGARLAR, ARNAVUTLAR VE ARAPLAR, BUTÜN BU MİLLETLER HÜRİYETLERİNE KAVUSTULAR VE KENDİ TOPRAKLARI ÜZERİNDE BİRER DEVLET KURDULAR.

VE YIKILAN OSMANLI İMPARATORLUGUNDA YALNIZ BİR TEK MİLLET KURBAN OLDU.

ERMENİLER, IMPERYALİSTLERİN KURBANİ OLDULAR.

RUSLAR AKDENİZE İNMESİN DİYE, IMPERYALİSTLER. TÜRKLERİN ELİYLE 1915-DE ERMENİLERİ SOYKIRIMINA UGRATTILAR.

VE BOSALAN ERMENİLERİN TOPRAKLARINDA, NEBİÇİM BİR PIÇ OLDUGU BELLİ OLMİYAN BUGÜNKÜ TÜRKİYİYİ KURDULAR.

* * *

ERMENİ MİLLETİNİN DÜSMANI ERMENİ (TASNAK) LİDERLERİDİR DEMİSTİK.

EVET ÇOK DOĞRU....

95 SENEDEN BERİ BU LİDERLERİN EMRİ İLE HER 24 NİSANDA, ERMENİLER 1915-DE BİR BUÇUK MİLYON ERMENİ TÜRKLER TARAFINDAN SOYKIRIMINA UGRATILDI DİYEREK AGLARLAR.

FAKAT, TÜRKLER ERMENİ MİLLETİNİ NİÇİN SOYKIRIMINA UGRATTILAR ?

BATI ERMENİSTANA SAHİP OLMAK İÇİN.

OSMANLILAR, SİRBİSTANDAN, YUNANİSTANDAN, BULGARİSTANDAN, ARABİSTANDAN KOVULDUKLARI GİBİ, ERMENİSTANDAN DA KOVULUCAKLAR VE OSMANLI İMPARATORLUGU TAMAMEN YIKILCAKTI.

İMPERYALİST 1915-DE ERMENİLERİ SOYKIRIMINA UGRATARAK BOSALAN ERMENİSTAN TOPRAKLARINDA OSMANLILARA YENİ BİR VATAN HEDİYE ETTİLER.

İSTE ERMENİLER HER 24 NİSANDA SATILMIS ERMENİ LİDERLERİN EMRİ İLE YALNIZ «BİR BUÇUK MİLYON ERMENİ ÖLDÜRÜLDÜ» DİYE AGLARLAR....

ÖLENLERİ YERİNE, YENİ NESİLLER GELİR.

FAKAT ÇALINAN VATAN GERİ GELMEZ.

ONUN İÇİN, ERMENİLER BİR BUÇUK MİLYON ERMENİ ÖLDÜ DİYE AGLIYACAKLARINA, DAHA ZİYADE ÇALINAN BATI ERMENİSTAN İÇİN AGLAMALARI LAZIMDIR.

ՑԱԻԱԿՑՈՒԹԻՒՆ

Սահակ Գաբրիելյանի մահուան տիուր առթիւ, «Նայիրի» կը ցաւակցի հանգուցեալի ընտանիքին ու հարստատներուն, մասնաւորաբար իր զաւակներուն՝ Ռազմիկին ու Սարգիին:

ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ [ԻԲՐ ԹԷ] ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

**ԳՈՂՑՈՒԱԾ ՀԱՅՐԵՆԻՔԸ -
1915-Թ.Ի ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
95-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ**

ԹՈՒՐՔԵՐԸ 1915-Թ.ԻՆ ՀԱՅԵՐԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՎ,
5000 ՏԱՐԻՆԵՐԷ Ի ՎԵՐ ՀԱՅԵՐՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԵՂՈՂ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԳՈՂՑԱՆ:

ԵՒ ԳՈՂՑՈՒԱԾ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՂԵՐՈՒՆ ՎՐԱՅ,
ԱՅՍՕՐՈՒԱՆ ՇԻՆԾՈՒ ԵՒ ՃԻՒԱՂ ԹՈՒՐՔԻԱՆ ՍՏԵՂԾԵՑԻՆ:
ՀԱՅ ԱԶԳԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ԹՇՆԱՄԻՆ Ո՞Վ Է... ԳԻՏԵ՞Ք... ԹՈՒՐՔԵՐԸ:
ԲԱՅՑ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ Ի՛ՆՉ ԳԱԶԱՆ ԵՒ ԶԱՐԴԱՐԱՐ ԸԼԼԱԼԸ ԱՄԲՈՂՋ
ԱՇԽԱՐՀՆ ԳԻՏԷ...

**ԱՅԴ ՊԱՏՃԱՌԱԻՒՄ ԹՈՒՐՔԵՐԸ ԻՐԵՆՑ ԳԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ
ՅԱՐԱՏԵԻ ԳՈՐԾԱԴՐԵՑԻՆ:**

Հայ Ազգին թշնամիներուն մեղսակիցներ եղան այն հայ [Դաշնակ] ղեկավարները որոնք,
1908-ին «Hürriyet»ի տարիներուն իթթիհատական ղեկավարներուն հետ մասոնական
«եղբայրութիւն» հաստատեցին:

Եւ այս ղեկավարները մինչեւ 1915, թուրքերուն «եղբայրութիւն»ի խօսքերուն հաւա-
տացին:

Եւ այս հայ որոշ ղեկավարներուն, թուրքերուն «եղբայրութիւն»ի մասին խօսքերուն
միամտաբար հաւատացած ըլլալնէն օգտուելով, թուրքերը 1915-ին, Առաջին Աշխարհա-
մարտին խառնակութիւններն ալ պատեհ առիթ սեպելով, Հայ Ազգը ցեղասպանութեան են-
թարկեցին... և պարսպուած Արեւմտեան Հայաստանին տէրը դարձան...:

Այս օրերուն թուրքիա ըսուած խառնակ երկրին մէջ, հայոց մասին շատ խօսիլ սկսած
են:

Եւ կարգ մը խղճամիտ թուրքեր, 1915-ին հայոց ենթարկուած ցեղասպանութեան մասին
շատ մարդկային, յուզիչ գրութիւններ կը հրատարակեն: Մենք իրենց շնորհակալութիւն կը
յայտենք:



Բայց, ոչ մէկը բուն իրականութիւնը կ'ըսէ:

Մէկը չըսեր, որ Օսմանցի ըսուած ցեղախումբը, 13-րդ դարու վերջաւորութեան, Կեդ-
րոնական Ասիայէն գալով, ահռելի վայրագութեամբ նախ Անաթոլիան գրաւեցին: Յետոյ,
քանի մը դարերու ընթացքին, մինչեւ Վիէննայի դռները հասան...:

... Բայց միջոց մը յետոյ, Ռուսերուն օգնութեամբ, Պալքանեան Ազգերը Օսմանցիներուն
վնտեցին:

Եւ 1912-թ.ին Պուլկարները պատերազմելով, մինչեւ Պուլսոյ շրջակայքը հասան:
Մերօրեայ [Չաթալճայա ըսուած և Պուլսոյ մաս կազմող մէկ թաղամասը]:

Եւ 'Պուլկարներուն համար 'Պուլիսը գրաւելը շատ դիւրին բան սըն էր...

... Ահա, այն օրերուն, կայսերապաշտ պետութիւնները միջամտեցին...

Եւ Օսմանցիներուն իրենց մեկնակէտը՝ մինչեւ Ասիա վերադառնալուն արգելք եղան, «Օսմանցիներուն տեղը՝ Ռուսերը չգան» ըսելով...:

Կայսերապաշտները իրենց այս որոշումով, հայ Ազգին մահուան վճիռը տուած եղան:

Օսմանեան կայսրութեան մաս կազմող բոլոր գերի ազգերը՝ չունգարները, Սերպերը, Յոյները, Պուլկարները, Ալպանացիները, Արաբները-բոլորը ազատութեան տիրացան: Եւ իրենց հողերուն վրայ մէյ-մէկ պետութիւն հիմնեցին:

Եւ կործանած Օսմանեան կայսրութեան մէջ, միայն մէկ ազգ զոհուեցաւ՝ չայերը, որոնք կայսերապաշտներուն զոհը եղան:

Որպէսզի Ռուսերը Միջերկրական Ծով չիջնան պատրուակով, Գաղութարար-Կայսերապաշտները 1915-թ.ին, Թուրքերուն ձեռամբ, չայ Ազգը ցեղասպանութեան ենթարկել տուին:

... Եւ ինչ տեսակի ապօրինի արարած մը ըլլալին յայտնի չեղող Թուրքերուն մէջտեղ բերին:

★ ★ ★

Չայ Ազգին մեծագոյն թշնամիին շարքին կը դասուին, որպէս մեղսակից, այն հայ ղեկավարները որոնք, իրենց ազգավնաս ընթացքով, դիւրացուցին [կամայ-ակամայ] հայութեան դէմ ծրագրուած դաւերու գործադրութիւնը:

95 տարիներէ ի վեր, մասնաւորապէս այս ղեկավարներուն յանձնարարութեամբ, հայերը ամէն տարի 24 Ապրիլին, «Թուրքերը 1915-ին մէկուկէս միլիոն հայեր ցեղասպանութեան ենթարկեցին» ըսելով կուլան...:

Բայց Թուրքերը չայ Ազգը ինչո՞ւ ցեղասպանութեան ենթարկեցին:

Արեւմտեան չայաստանին տէրը դառնալու համար:

Օսմանցիները, ինչպէս որ Սերպիայէն, Յունաստանէն, Պուլկարիայէն և արաբական երկիրներէն վնասուեցան, նոյնպէս ալ Արեւմտեան չայաստանէն պիտի վնասուէին: Եւ Օսմանեան կայսրութիւնը ամբողջութեամբ պիտի կործանէր:

Կայսերապաշտները 1915-թ.ին, հայերը ցեղասպանութեան ենթարկել տալով, պարպուած հայկական հողերուն վրայ Օսմանցիներուն նոր հայրենիք մը նուիրեցին:

★ ★ ★

Չայերը ամէն տարի՝ 24 Ապրիլին, անառժան, ատեն մը օտարի ծառայութեան մտած ծանօթ ղեկավարներու հետեւողութեամբ, Մէկուկէս միլիոն հայեր սպաննուեցան» ըսելով կուլան:

Մեռնողներուն տեղ նոր սերունդներ կուգան: Բայց գողցուած հայերնիքը ետ չի գար:

Այդ պատճառաւ հայերը «Մէկուկէս միլիոն հայեր սպաննուեցան» ըսելով լալու տեղ, աւելի ծիշդ ըրած պիտի ըլլան եթէ ողբան ու մեղադրեն.— Թուրքերը մեր հայրենիքը, Արեւմտեան չայաստանը գողցան»:

Թ. 2.

ԱՊԱՔԻՆՈՒՄԻ ՄԱՂԹԱՆՔ

Ցաւով իմացանք, որ մեր հարազատներէն՝ Յակոբ Տօնիկեան, Զահլէի մօտերը ունեցած է ինքնաշարժի արկած մը և լիտիաւրուած հիւանդանոց, ուր անհրաժեշտ ինամբ ստացած է բուժելու համար ոսկրաբեկութիւնը:

«Նայիրի» արագ ապափնուում կը մաղթէ իրեն:

Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն


Ռուբէն Սեւակի գաղափարականը և անձնագրհուբեան ոգին հայ ժողովուրդին մէջ տարածելու նպատակաւ, NICE-ի «Ռուբէն Սեւակի Յիշատակի Տուն»ը 1915 թուականի Հայոց Ցեղասպանութեան 95-ամեակին ձօնուած չորս պատմական սկաւառակներ հրատարակած է:


Այս չորս տեսակաւառակները սիրով կը նուիրուին՝ ունենալ փափաքող եկեղեցիներուն, մշակութային միութիւններուն, դպրոցներուն և միօրեայ վարժարաններուն:

Դիմումները ուղարկել հետեւեալ հասցէին՝

REVUE HEBDOMADAIRE «NAIRI»

B. O. BOX. 113-5186 BEYROUTH - LIBAN





Այս տեսերիզը կը ձօնուի Ուսումնական բաճառուհի
 Ուորեն Սեւակի 125-ամեակին
 Ուորեն Սեւակի Յիշատակի Տան կողմէ



S. M. M. M.

ՌՈՒՐԵՆ ՍԵՎԱԿ

1885 - 1915

Մկրտէ, 23 Ապրիլ, 1994

Հ.Կ.Բ.Մ.Ի. Սահակեան - Ե. Սկրտիչեան-Գոլժե՛ն ԱԶ

Նախատակ Բանաստեղծ Ուորեն Սեւակի անուան
 Մատենադարանի բացման յանդիսութիւն

Բարձր հովանաւորութեամբ
 Ե.Ս.Օ.Տ.Տ. Գաղտեղն Բ. Մարտիրոսով
 Մեծի Տանն Կիլիկիոյ

Բարերախոհութեամբ
 Ուորեն Սեւակի Յիշատակի Տան, ՄԻԱ (Ֆրանսա)


Տրամադրելի են հետևեալ սկաւտակները.-

1.- DVD- 1985-թ.ին. Նիսի մէջ. Ռուբէն Սեւակի 110-ամեակի հանդիսութիւնը, նախագահութեամբ՝ Անդրանիկ Ծառուկեանի:

2.- DVD- 1987-ին, Երեւանի հեռուստատեսիլէն Ռուբէն Սեւակի մասին յայտագիր, Ալեքսանդր և Անահիտ Թօփչեաններու կատարողութեամբ:

3.- DVD- 1994-թ.ին. Պէյրուքի Սահակեան Գոլէնի մէջ, Ռուբէն Սեւակի անուան մատենադարանի բացման հանդիսութիւն, Բարձր Հովանաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի, Մեծի Տանն Կիլիկիոյ:

4.- DVD- 2006-թ.ին, 91 տարիներէ իվեր առաջին անգամ ըլլալով՝ Ուխտագնացութիւն դէպի Չանդըրը և Այաշ:



ՏԻԵԶԵՐԱԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՏԻԵԶԵՐԱՀԱՄԱԼՍԱՐԱՆ
COSMOPHILOSOPHIC COSMO-UNIVERSITY

ՀԵՏԱԶՕՏԵԼ, ՕԾԵԼ, ՎԵՐԾԱՆԵԼ, ԺԻՐ, ԶԱՐԱԳԱԼԱ,
ՀՐԻԻԺԱԿ, ԾԱՄ, ԲԵԶ

1.- [ՀԵՏԱԶՕՏԵԼ] ՀԱՅ-ԱՐԻԱԿԱՆ ՏԻԵԶԵՐԱԻՄԱՍՏԱՆՇԱՆԱԳՐԱՅԻՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆ
Է [ՀՐԱՏՈՒԵՐԿՆՔՈՒՄ+ՏԻԵԶԵՐԱԿԱՆ+ԱՐԵԻԸ+ԶՕՐԱՑԵԱԼ+ՄԿԻԶԲԷՆ ՎԵՐԶ+ՏԻԵԶԵՐ-
ՔՈՒՄ+ԵՐԿՆԱՅԻՆ+ԼՈՅՍ Է]: ԱՅՍ ԲԱՌԸ ՏՈՒԱԾ ԵՒ ԿԱՌՈՒՑՈՒԱԾ Է ՀԵՏ, ՏԱ, ԱԶԱՏԵԼ,
YANI 1915 ERMENİ SOYKIRIMININ KARARINI VEREN, OSMANLI DEVLETİNDE İKTİDARDA OLAN İTTİHAT VE TERAKKİ PARTİSİ HÜKÜMETİNİN DAHİLİYE VEKİLİ TÂLAT PASA İDİ.

FAKAT ANATOLYA ŞEHİR VE KASABALARINDA VE SÜRGÜNE GİTMEK İÇİN YOLA ÇIKARILAN ZAVALLI ERMENİ KAFİLELERİNİN ÜZERİNE HÜCUM EDEREK ERMENİLERİ ÖLDÜRENLER, BÜYÜK ÇOĞUNLUKLA KÜRTLER İDİ.

ANATOLYA TOPRAKLARINDA 1915-DE ÖLDÜRÜLEN ERMENİLERİN MALLARINA, MÜLK-

LEKİNE EL KUTANLAK BUTUK ÇÜĞUNLUKLA KÜRTLER İDİ.

BATI ERMENİSTAN DENİLEN DOĞU ANATOLYA İLLERİNDE 1915 DE ÖLDÜRÜLEN ERMENİLERİN YERİNE YERLESENLER TAMAMEN KÜRTLER İDİ. BU GERÇEĞİ BİLEN BUGÜNKÜ TÜRK DEVLETİNİN İDARECİLERİ, ÇOK TEHLİKELİ OLMIYA BAŞLIYAN KÜRTLERE KARŞI ERMENİ KOZUNU OYNAMAYA ÇALISIYOR. VE BİR MÜDDETTEN BERİ TÜRKLER ERMENİLERE KARŞI ÇOK DOSTÇA DENİLEBİLEN BİR SİYASET UYGULAMAYA BAŞLADILAR. DIYASPORLA ERMENİLERİNİN KENDİ ÖZ VATANLARI OLAN DOĞU ANATOLYAYI ZİYARET ETMELERİNİ TÜRKLER MUHTELİP SEKİLDE TESVİK EDİYORLAR. BİN BİR KİLİSE SEHİRİ, ERMENİLERİN TARİHİ BASKENTİ ANI HARABELERİNİ TÜRKLER (SOZUM ONA) OHARİYORLAR. VAN GÖLÜNDEKİ AHTAMAR ADA SINDAKİ ERMENİ KİLİSESİNİ, İSTANBULLU ERMENİ MİMARLARI RESTORE ETMİYE BAŞLADILAR. TÜRKİYE RASBAKANI TAYYİP ERDOĞAN ERMENİSTAN BASKANI KOÇARYANA RESMİ BİR MEKTUB GÖNDEREREK ANLAŞMA GÖRÜŞMELERİ YAPMAYI ÖNERİYOR. BİR MÜDDETTEN BERİ DE TÜRK VE ERMENİ HÜKÜMETLERİ ARASINDA GİZLİ GÖRÜŞMELER YAPILDIĞI SÖYLENTİLERİ DOLASIYOR. TÜRKLERİN ERMENİLERE KARŞI SON DOSTLUK GÖSTERİSİNDE 2006 EUROVISION SARKI YARISMASINDA ERMENİSTANI TEMSİL EDEN ERMENİ SARKICI ANDRE-YE TÜRKLERİN ON PUAN VERMELERİ. TÜRKLERİN, ERMENİLERE KARŞI UYGULADIKLARI BU DOSTLUK POLİTİKASININ ASIL SEBEBİ, KÜRTLERE KARŞI ERMENİLERİ DEVREYE SOKMAK. YANI DOĞU ANATOLYA ERMENİ TOPRAKLARINDA BİR KÜRDİSTAN DEVLETİ KURMAK İSTİYEN KÜRTLERE KARŞI ERMENİLERİ KISKIRTMAK. VE TÜRK-KÜRT MÜCADELESİNİ, KÜRT-ERMENİ MÜCADELESİNE ÇEVİRMEK. TÜRKLERİN BU SİNSİ SİYASETİ YÜRÜR MÜ ACABA. ? BİLEMEYİZ, TABİATİYLE TÜRKLER, KÜRTLERİN DOĞU ANATOLYADA BİR KÜRT DEVLETİ KURMALARINA ENGEL OLMAK İÇİN HER ÇAREYE BASVURACAKLAR. FAKAT EN SONUNDA KÜRTLER GALİP GELECEKTİR. ÇÜNKÜ BATI ERMENİSTAN DENİLEN DOĞU ANATOLYA TOPRAKLARINDA YASİYAN HALKIN BUGÜN BÜYÜK ÇÜĞUNLUĞU KÜRTLER. VE BUGÜNKÜ DÜNYA GERÇEKLERİNE GÖRE, BİR MEMLEKETİN SAHİBİ, O MEMLEKETTE YASİYAN HALKTIR. ONUN İÇİN DİYORUZ Kİ DOĞU ANATOLYADA YASİYAN KÜRTLER, EN SONUNDA ORDA BİR KÜRT DEVLETİ KURACAKLARDIR.

Յ. Չ.

Ո՞Վ Է ՀԱՅՈՒՆ ԲՈՒՆ ԹՇՆԱՄԻՆ... (Շար. էջ 3-էն)

«...Ուղղակի ապացույցներ-կարդում ենք Լ. Միքայելեանի վերոնշյալ յօդուածում- մեր տրամադրութեան տակ դեռես չունենք... մինչդեռ, եթէ ի մի բերենք տարբեր մարդկանց առանձին վկայութիւնները, օրինակ՝ Խ. Ստամբուլցեանի և այլոց հաստատումները Ժ. Լիպարիտեանի և ԼՏՊ-ի մասնութեան... բանտարկութիւնից ազատուելուց յետոյ «Փարիզի որոշ շրջանները այցելելու մասին... ապա կը ստեղծուի բաւական յստակ ու ամբողջական պատկեր»]:

**

«Գոյոս Արմենիի» ներկայ հրապարակումներից յետոյ ո՛չ անձամբ ԼՏՊ-ն, ո՛չ ՀՀԾական ու ՀՀԾամերձ մամուլը հերքման ո՛չ մի փորձ չեն արել: Որեւէ երկրում նման հրապարակումներ յայտնուէին՝ մեծ աղմուկ կը բարձրանար: Բայց ո՛չ Հայաստանում, ո՛չ անգամ Սփիւռքում: Հայը դարերով վարժուե՞լ է դաւաճանների գոյութեանը: Անխուսափելի, միանգամայն «Հասկանալի», միանգամայն «Բնական» գոյութեանը: Աւելի եւս՝ «Բնական», երբ ազգուրաց դաւաճաններին շրջասպառում են յաճախ ահռելի զանգուածներ-չմոռանանք ՀՀ նախագահի վերջին ընտրութիւններում ԼՏՊ-ն ստացաւ աւելի քան 350 հազար ձայն: Անհնար է անբուժելի Լեւոնասպաշտութեամբ տառապողներին հասկացնելը, որ իրենց անփոխարինելի կուռքը օտարերկրեայ յատուկ ծառայութիւնների կամակատար է: Եթէ դա յօրինուածք համարենք, անհասկանալի կը մնայ՝ ի՞նչն էր դրդում նրան և նրա ՀՀԾական զինակիցներին իշխանութիւն նուաճելու առաջին օրուանից առ այսօր յամառօրէն պահանջել Արցախի զոհաբերում Ադրբեջանին, սկսելով ազատագրուած տարածքներից: Եւ ընդհանրապէս, ինչն՞ է են ձգտում թուրքադրբեջան հարեւանների հետ յարաբերութիւններ հաստատել միակողմանի զիջումներով ու ի վնաս Հայաստանի և հայ ժողովրդի: Բայց խնդիրը չի սպառում ՊԱԿ-ի և ԿՀԿ-ի հետ նրա առնչութիւններով: Հետաքրքիր է, օրինակ, թէ ե՞րբ է սկսուել և ինչքա՞ն կը տեւի Իսրայէլի դրօշի տակ նրա սպարը, որի մի հատուածի [այդ. անգամ անթասակ] ականատեսը Երեւանի Ազատութեան հրապարակում հաւաքուած ժողովուրդն էր:

Լուս Աճճելը, Օգոստոս 2010, ՍՏԵՓԱՆ ԹՕՓՉԵԱՆ

**

ԱՄՆ-ի ծանօթ հետախուզութեան լծակից Լեւոնի մասին վերը նշուած իրականութիւնները, իսկական բոլոր հայրենասէր հայերուն ծանօթ էին:

Բայց ինչպէ՞ս կարելի է բացատրել, որ Հայաստանի 2008 նախագահական ընտրութիւններուն ԱՄՆ-ի հանրայայտ հետախուզութեան գործակալ նկատուածը 350000 [Երեքհարիւր յիսուն հազար]է աւելի քուէ ստացաւ:

Այս դժուար հաւատալի երեւոյթին մասին, 18 Մարտ 2008 թուակիր «Նայիրի»ի մէջ բաւական ընդարձակ արտայայտուած էինք:

Այո՛, Լեւոն 350000 քուէ ստացած էր: Մեծամասնութիւնը անոր քուէ տուողներուն, Ամերիկայէն ուղարկուած «Կանաչ դրամներ»ու հմայնքին ենթարկուած պատեհապաշտ հայե՞ր էին արդեօք:

Բայց Լեւոնին քուէ չտուող եռասպտիկ թիւով հայեր կային: Եւ այս հայրենասէր հայերը գիտնալով իրականութիւնները, իբր Ամերիկացիներուն, Թուրքերուն և Սիոնիստներուն ուղղակի կամ կողմնակի միջոցներով ծառայութեան կոչուածին սլաոժուիլը պահանջելու էին... Մեր 18 Մարտ 2008 թուակիր գրութեան «Միտք բանին» այս էր:

Դժբախտաբար մինչեւ այսօր, մեր ակնկալութիւն-նախատեսութիւնը չիրականացաւ:

Այս կացութիւնը կ'ապացուցանէ՞, որ հայ ժողովուրդին մէջ հայրենասիրական ոգին սկսած է տկարանալ ու նահանջել:

25 Յունուար 1997 թուակիր «Նայիրի»ի մեր գրութեան մէջ, Լեւոնը նկատելով ԱՄՆ-ի ծանօթ Սպասարկութեան լծակից-գործակատար, թուրքերուն հետ «Եղբայրացման» քաղաքականութիւն վարելու կողմնակից, հրաւարակած էինք



նկար մը, շատ պերճախօս, ուր կը տեսնուէր Լեւոնը Պոլսոյ մէջ, թուրք և հրեայ ծանօթ անձերու հետ, սիրալիբ հանդիպում մը ունենալու սպահուն:

(→ էջ 5)

ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ (ԻԲՐ ԹԷ) ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՎԱՆԻ ԱԽԹԱՄԱՐ ԿՂՋԻՆ ՎՐԱՅ ԳՏՆՈՒՈՂ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԷՋ

ԹՐՔԱԿԱՆ ՄԵԾ ԹԱՏՐՈՆ

19 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2010-ԻՆ, ՎԱՆԻ ԱԽԹԱՄԱՐ ԿՂՋԻՆ ՎՐԱՅ ԳՏՆՈՒՈՂ ՊԱՏՄԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԷՋ, ԹՐՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՄԱՆՈՎ ՈՒ «ՍՈՒՐԲ ԽԱՉ» ՏՕՆԻՆ ԱՌԹԻԻ, ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ԿԱՏԱՐՈՒԻ:

ՄԷԿ ՔԱՐՈՎ՝ ԻՆԸ ԹՌՉՈՒՆ

ՄԷԿ ՔԱՐՈՎ 9 ԹՌՉՈՒՆ ԿԱՐԵԼԻ՞ Է ՈՐՍԱԼ:

ԱՂՈՒԵՍԻ ՆՄԱՆ ԽՈՐԱՄԱՆԿ ԹՈՒՐՔԵՐԸ ԿՐՆԱՆ ՈՐՍԱԼ:

ԱԽԹԱՄԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԷՋ ԿԱՏԱՐՈՒԵԼԻՔ ԱՐԱՐՈՂՈՒԹԵՆԵՆ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ՔԱՂԵԼԻՔ ՕԳՈՒՏՆԵՐԸ ՆՇԵԼՈՒ ՋԱՆԱՆՔ...:

1. — Թուրքիոյ մէջ ժողովրդավարութիւն կայ պիտի ըսուի.
2. — Թուրքիոյ հայերը իրենց պատմական եկեղեցիներուն մէջ ազատօրէն արարողութիւն կը կատարեն:
3. — Թուրքիան այլեւս մարդասիրական երկիր մըն է:
4. — Թուրքիան Մարդու իրաւունքները կը յարգէ:
5. — Ախթամար կղզիի այս արարողութեան ներկայ գտնուելու համար, Արտասահմանէն մեծ թիւով հայեր պիտի ժամանեն:
6. — Այս հայ զբօսաշրջիկները՝ Թուրքիոյ և մասնաւորապէս Վանի թուրք ժողովուրդին, ամէն տեսակէտով՝ շատ օգտակար պիտի ըլլան:
7. — Եւրոպան ալ այլեւս պիտի հասկնայ, որ Թուրքիան անցեալի վայրագ Թուրքիան չէ:
8. — Թուրքիոյ եւրոպական Միութեան մաս կազմելուն պիտի նպաստէ:
9. — Ի՞նչ է արդեօք իններորդը...

Վերը նշուած ձեւով՝ Աղթամարի եկեղեցիին մէջ 19 Սեպտեմբեր 2010-ին կատարուելիք հայկական եկեղեցական արարողութիւնը, շատ տեսակէտով Թուրքիոյ օգտակար պիտի ըլլայ...:

Բայց Ախթամար կղզիին վրայ թրքական թատրոնի մը բեմադրութեամբ, Թուրքերուն հետապնդած բուն նպատակին մասին ոչ մէկը կ'արտայայտուի...:

Թուրքերուն ներկայի բուն և մեծագոյն խնդիրը՝ հայերը չեն:

Թուրքերը 1915-թ.ին, չայ Ազգը ցեղասպանութեան ենթարկեցին, և հայոց հայրենիքը՝ Արեւմտեան Հայաստանը գողցան:

Թուրքերը՝ չայ Ազգը ցեղասպանութեան ենթարկելով, հայկական հարցին վերջ տուին:

Ահաւասիկ՝ խնդիրը այստեղ կ'սկսի:

Թուրքերը՝ Արեւմտեան Հայաստանին տէր դարձան...: Բայց այս հողերուն վրայ, 1915-թ.ի ցեղասպանութենէն յետոյ, Թուրքերուն հայկական ցեղասպանութեան մէջ մեղսակիցները և վարձկան դահիճները ելող քիւրտեր տեղաւորուեցան...:

Այսօր, Արեւմտեան Հայաստանի մէջ, հայեր չկան...:

Բայց այս հողերուն վրայ, Կարսէն մինչեւ Վան ու ամէն կողմ, ամբողջութեամբ քիւրտեր տեղաւորուած են:

Եւ քիւրտերը այսօր գործնապէս (DI FACTO) Արեւմտեան չայաստան հաստատուած ժողովուրդ մը ըլլալով, Թուրքերուն դէմ, 1923-թ.էն մինչեւ այսօր, ինքնիշխանութեան համար կը պատերազմին:

Եւ Թուրքերը՝ ինքնավարութեան համար պայքարող այս քիւրտերուն, շա՛տ անիրաւաբար՝ «P.K.K.-ական ահաբեկիչ» կ'ամբաստանեն:

Իսկ այս Թուրք-Քիւրտ պատերազմին աւարտը Թուրքերուն համար նպաստաւոր պիտի չըլլայ: Քանի որ այսօր Թուրքերը, 1915-թ.ին հայերուն դէմ ըրածնուն նման՝ չեն կրնար Քիւրտերուն ցեղասպանութեան ենթարկել:

Որովհետեւ Քիւրտերը, հայերու նման ողջակէզ ըլլալու պատրաստ ազգ մը չեն...

Ընդհակառակն՝ Քիւրտերը, Թուրքերուն նման ռազմիկ և վայրագ ազգ մըն են:

Եւ ասկէ առաջ ալ, շատ առիթներով գրած էինք, թէ՛

Այս Թուրք-Քիւրտ պատերազմը, իրականութեան մէջ, հայոց հայրենիքը բաժանելու համար Թուրքերուն ու Քիւրտերուն միջեւ և 1923-էն մինչեւ այսօր տեւող ժառանգ-աւարի բաժանման պատերազմ մըն է...:

Եւ այս պատերազմի մասին մեր համոզումը հետեւեալն է...

Ի վերջոյ, հայոց հայրենիքին վրայ տեղաւորուող քիւրտերը, յաղթական սիտի ելլեն:

Քանի որ այդ «Հողերուն» վրայ այսօր բնակող Քիւրտերը, այդ հողերուն իրողական տէրերն են:

2.

Ո՞Վ Է ՀԱՅՈՒՆ ԲՈՒՆ ԹՇՆԱՄԻՆ... (Ծար. էջ 4-էն)

Նկարը՝ ծախէն աջ՝ Գորշ Գայլեր կուսակցութեան նախագահ Ալփասլան Թիւրքէշի տղան՝ Թուրքուլ Թիւրքէշ (որ փոխ-Նախագահութիւնը կը վարէ այժմ՝ կուսակցութեան), ծագումով հրեայ, թրքական խորհրդարանի անդամ, մեծահարուստ Ճէֆի Զամհի, և պետական անձնաւորութիւն մը Հայաստանէն - [Նախկին ՀՀ-ի Ազգային ժողովի անդամ, այժմ հանգուցեալ] Թելման Տէր Պետրոսեան (եղբայրը L.S.Պ.ին):

Նկարը վերցուած է թրքական մամուլէն, որուն հետեւեալ ծանօթագրութիւնը կ'արժէ խորհրդածութեան նիւթ ընել. «...Կողմերը ծանրացան երկխօսութեան յարատեւման, տնտեսական յարաբերութիւնները խորացնելու և քաղաքական շրջանակներուն միջեւ իրարհասկացողութիւնը ապահովելու վրայ...»:

25-1-1997 «Նայիրի»

Այսօր ալ կը հրատարակենք 1993-թ.ին Փարիզի մէջ, Լեւոն Տէր Պետրոսեանի [Ալփասլան Թիւրքէշի հետ] ունեցած ուրիշ մէկ ցնցիչ նկարը՝ որուն մասին ալ պիտի արտայայտուինք մեր յաջորդ գրութեան մէջ:



ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ԱՅՍ ԱՓԷՆ ԴԷՊԻ... ՄԻՒՍԸ ՏԱՆՈՂ ՈՒՂԻՆ...

Հայ-Ռուսական պաշտպանական դաշինքը, որ կ'երաշխաւորէ Հայկ. Հանրապետութեան տարածքին և բնակչութեան անձեռնմխելիութիւնը և անուղղակի կը տարածուի նաեւ Արցախի վրայ, ունի պատմական բնոյթ ու կը ներկայացնէ կենսական կարեւորութիւն հայութեան համար:

Անով կը դառնայ անխոցելի մեր Արցախը, իր ինքնիշխանութիւնն ու բոլորութիւնը՝ խաղաղ ու ապահով պայմաններու մէջ:

Ռազմական-պաշտպանական վերանորոգուած Ուխտը ի զօրու է մինչեւ 2044:

Դաշնագրին մէջ ընդգծուած է, որ Հայաստանը թիրախ ունեցող ամէն սպառնալիք ու թշնամական յաւակնութիւն պիտի շարունակէ նկատուիլ, այսուհետեւ եւս, ուղղուած Ռուսիոյ... և հաւաքական անխափանութեան պայմանագրի ստորագիր երկիրներուն:

Հայկական Հանրապետութեան ամբողջականութեան, գոյութեան ու խաղաղ պայմաններու մէջ զարգացման երաշխաւոր դարձան նաեւ «Հաւաքական Անվտանգութեան Կազմակերպութիւն»-ի անդամ երկիրները:

Աւելին՝ վերանորոգ այս դաշինքը և յասկապէս Հայ-Ռուսական ռազմավարական գործակցութիւնը կը դառնայ նոր ու անխորտակ հիմք Հայկական Պաշտպանութեան ընթացումին, աւելի ուժական և ազդու պայմաններու մէջ: Ինչ որ, մեր ժողովուրդին կը դարձնէ, առաւել ինքնավստահ և յուսալից իր ապագային նկատմամբ:

Ողջունելի այդ դաշինքով վերստին գործնական ոյժ կը ստանայ ծանօթ սուսցուածքը, որ շատ տասնամեակներ կապոյտ ու անվրդով պահեց հայուն երկինքը, քանի որ... «Արաքս գետին Արեւմտեան ափէն դէպի Արեւելք տանող ուղին, այսուհետեւ ալ Մոսկուայէն կ'անցնի...» ի մեծ դժբախտութիւն հայութիւնը շիւ աչքով դիտող հին ու նոր նենգամիտ դաւադիրներուն:

ԹՈՒՐԷՐՈՒՆ ԿԻՐԱՐԿԱԾ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԻՐԵՆՑ ՆԵՐԿԱՅԻ ԳԼԽԱՒՈՐ ՀԱՐԾԸ ԵՂՈՂ ԶՐՏԱԿԱՆ ԽՆԴՐԻՆ ՀԱՆԴԷՊ

Անհերքելի իրականութիւն մըն է, որ 1915-ի հայկական ցեղասպանութեան մէջ թուրքերը՝ քիւրտերուն դահիճի պարտականութիւն կատարել տուին: Այսինքն՝ 1915-ի հայկական ցեղասպանութեան որոշումը տուողը՝ Օսմանեան պետութեան մէջ իշխանութիւնը ձեռք անցուցած «Իթթիհատ Վէ Թերաքքի» կուսակցութեան կառավարութեան քրքին գործոց նախարար Թալաթ ֆաշան էր:

Բայց Անաթոլիոյ քաղաքներուն և գիւղաքաղաքներուն մէջ, աքսորի համար ծամբայ հանուած խեղճ հայերու կարաւաններուն վրայ յարձակելով՝ զանոնք սպանողները՝ մեծամասնութեամբ իւրտեր էին:

1915-ին Անաթոլիոյ հողերուն վրայ սպանուած հայերուն հարստութիւնները սեփականացնողները, մեծամասնութեամբ քիւրտեր էին: Արեւմտեան չայաստան կոչուող Արեւելեան Անաթոլիոյ նահանգներուն մէջ, 1915-ին սպանուած հայերուն հողերուն վրայ տեղաւորուողները՝ ամբողջութեամբ քիւրտեր էին:

Այս իրականութիւնները գիտող այսօրուան թրքական պետութեան ղեկավարները, շատ վտանգաւոր ըլլալ սկսող քրտական հարցին դէմ, հայկական «քարտ»ը խաղալ կը ջանան: Եւ թուրքերը, ատենէ մը ի վեր, հայերուն դէմ շատ բարեացակամ քաղաքականութիւն մը վարել սկսան:

Թուրքերը, վերջին շրջաններուն, Ափիւղի հայերուն իրենց հայրենիքը եղող Արեւմտեան Անաթոլիոյ այցելութիւնը՝ զանազան ձեւերով քաջալերել սկսան: Կազարումէի եկեղեցիներու քաղաք, հայոց պատմական մայրաքաղաքը եղող Անի՝ թուրքերը վերջերս (իբր թէ) նորոգել սկսան:

Վանայ լիճին վրայ գտնուող Այսթամար կղզիին մէջի հայկական եկեղեցին, պոլսահայ ծարտարապետները վերանորոգել սկսան: Թուրքիոյ վարչապետ TAYYIP ERDOGAN չայաստանի նախագահ Զոյարեանին պաշտօնական նամակ մը կ'ուղարկէ և համաձայնելու համար բանակցութիւններու սկսիլ կ'առաջարկէ: Թուրքերուն, հայոց դէմ վերջին «Բարեկամական» արտայայտութիւնը՝ 2006-ի Eurovision-ի երգի մրցումին, թուրքերուն կողմէ չայաստանը ներկայացնող հայ երգիչ Անտէյին 10 էտ տուած ըլլալին է:

Թուրքերուն հայոց դէմ գործադրած այս «Բարեկամական» քաղաքականութեան բուն պատճառը՝ հայերը քիւրտերուն դէմ հանելու հեռանկարն է: Այսինքն՝ Արեւելեան Անաթոլիոյ հայկական հողերուն վրայ քրտական պետութիւն մը ստեղծել ուզող քիւրտերուն դէմ հայերը գրգռել:

Եւ թուրք-քրտական պայքարը՝ քիւրտ-հայկական պայքարի վերածել: Թուրքերուն այս նենգամիտ քաղաքականութիւնը կը յաջողի՝ արդեօք: Չենք կրնար գիտնալ: Շատ բնական է որ թուրքերը, քիւրտերուն Արեւելեան Անաթոլիոյ մէջ քրտական պետութիւն մը ստեղծելուն արգելք ըլլալու համար, բոլոր միջոցներու պիտի դիմեն:

Բայց, ի վերջոյ, քիւրտերը յաղթական պիտի ելլեն: Որովհետեւ Արեւմտեան չայաստան կոչուող Արեւելեան Անաթոլիոյ հողերուն վրայ այսօր ապրող ժողովուրդին մեծամասնութիւնը քիւրտերն են: Եւ այսօրուան Աշխարհի քաղաքական իրավիճակներուն համեմատ՝ երկրի մը տէրը՝ այդ երկրին հողերուն վրայ ապրող ժողովուրդն է:

Այդ պատճառաւ կ'ըսենք, որ Արեւելեան Անաթոլիոյ մէջ ապրող քիւրտերը, ի վերջոյ այդտեղ քրտական պետութիւն մը պիտի հիմնեն...:

ԴՈՒՔ, ՆԱԽԱԽՆԱՍՈՒԹԵԱՆ ԿԸ ՀԱԻԱՏԱ՞Ք...
 ... ՄԵՆՔ ԱԼ ՉԵՆՔ ՀԱԻԱՏԱՐ,
 ԿԱՄ... ՇԱՏ ՔԻՉ...

... ԲԱՅՑ ԿԸ ՊԱՏԱՀԻ, ՈՐ ՊԱՀ ՄԸ
 ԽՈՐՀԻՆՔ...

ԵՒ ՀԱՅ ԱԶԳԻՆ ՎԵՐՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՆ ԿՐԱԾ ՄԵԾ
 ՉԱՐԻՔՆԵՐՆ ՈՒ ԻՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ
 ՈՒԹՍՈՒՆ ԱՌ ՀԱՐԻԻՐԸ ԿՈՐՍՆՑՈՒՑԱԾ ԸԼԼԱԼԸ
 ՄՏԱԲԵՐԵՆՔ...

ԱՐԴԵՕ՞Ք, ՀԱՅ ԱԶԳԸ,
 ԱՆԻԾՈՒԱԾ ԱԶԳ ՄԸՆ Է:

ԱՅՈ...

ՀԱՅ ԱԶԳԸ ԱՆՊԱՅՄԱՂ
 ԱՆԻԾՈՒԱԾ ԱԶԳ ՄԸ ԸԼԼԱԼՈՒ Է...
 ՈՐՈՎԶԵՏԵԻ ՀԱՅԵՐԸ՝ 1071-Ի ՄԱՆԱԶԿԵՐՏ-Ի
 ՊԱՏԵՐԱԶՄԻՆ, ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
 ԲԻԻԶԱՆԴԱՑԻՆԵՐԷՆ ՀԵՌԱՆԱԼՈԿ, ԿԱՄԱՅ-
 ԱԿԱՄԱՅ... ԻՍԼԱՄ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ՕԳՆԵՑԻՆ...
 ԵՒ ԹՈՒՐՔԵՐԸ 1071-Թ.ԻՆ, ՄԱՆԱԶԿԵՐՏԻ ՄԷՋ,
 ՄԱՍԱՄԲ ԱԼ ՀԱՅՈՑ ՕԳՆՈՒԹԵԱՄԲ,
 ԲԻԻԶԱՆԴԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ՋԱԽՋԱԽԵՑԻՆ:
 ԵՒ ԱՆԿԷ ՅԵՏՈՑ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԱՌՋԵԻ
 ԲԱՑՈՒԵՑԱԻ ԱՆԱԹՈԼԻՈՑ ԴՈՆԵՐԸ:

ՈՒՐԵՄՆ ՀԱՅԵՐԸ, ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ
 ԴԱԻԱՃԱՆԱԾ ԸԼԼԱԼՆՈՒՆ ՊԱՏՃԱՌԱԻ,
 ԱՍՏՈՒԾՈՑ ԿՈՂՄԷ ԱՆԻԾՈՒԱԾ ԱԶԳ ՄԸՆ ԵՆ:
 ԱԻԵԼԻ ՃԻՇԴ՝ ՀԱՅԵՐՈՒ ՄԵԾ ՀԱՏՈՒԱԾ ՄԸ,
 ՍԽԱԼ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՈԿ, ԻՐԵՆՑ ԻՍԿԱԿԱՆ
 ԲԱՐԵԿԱՄԸ ԵՒ ԹՇՆԱՄԻՆ ՉՃԱՆՉՆԱԼՈԿ,
 ԹՈՒՐՔԻՆ ՀԵՏ [ՄԻՆՉԵԻ ԵՏՔ ԱԼ] ԳՈՐԾԱԿՑԱԾ
 ԸԼԼԱԼՆՈՒՆ ՊԱՏՃԱՌԱԻ, ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՆԹԱՐԿՈՒԵՑԱՆ, ԵՒ ԻՐԵՆՑ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ
 ՄԵԾ ՄԱՍԸ ԿՈՐՍՆՑՈՒՑԻՆ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
 [ԿՐԷՔ ՈՒԲԷՆԵԱՆ]

Եւ հայոց մէջ կայ հատուած մը որ, մինչեւ այսօր, սոյն իրականութիւնը չէ հասկցած:

Եւ ասոնք Թուրքերուն հետ բարեկամութիւն հաստատելու կարելիութեան կը հաւատան մինչեւ այսօր: Աւելի ճիշդ՝ իրենց անձնական կամ հատուածական շահերուն համար, անցեալը մոռնալով, կրկին Թուրքերուն հետ բարեկամական քաղաքականութիւն վարել կ'աշխատին:

... Եւ Թուրքերուն հետ բարեկամական քաղաքականութիւն ու յարաբերութիւններ մշակելու-վարելու կարելիութեան հաւատացողներուն ռահվիրան կը նկատուի [շատերու կարծիքով] Արեւմուտքի Ժանօթ Մասնայատուկ Սպասարկութեան հետ առնչուող Լ. Տ. Պետրոսեանը:

«Նորանկախ» Հայաստանի Ա. Նախագահը սակայն, դահիճ թուրքերուն հետ բարեկամական քաղաքականութիւն վարելու իր մտադրութեան գործադրութեան մէջ գործակից մ'ունի, որ նախկին Պոլսեցի, թրքախօս [եւ իբր թէ] հայ մըն է, որ Եւրոպա հաստատուած է 1980-ական թ.ներէն ի վեր:

Եւ այս թրքախօս [իբր թէ] հայուն կինը, Լեւոնի կողակիցին նման՝ ծագումով հրեայ մըն է:

Այս թրքախօս անձին մասին «Նայիրի»ի մէջ, Լեւոնին վերաբերող մեր գրութիւններով, բաւական երկար արտայայտուած ենք: Եւ Պոլիս լոյս տեսնող լրագիրներու մէջ, խնդրոյ առարկայ հայ, թուրք և հրեայ քաղաքական անձնաւորութիւններուն նկարները հրատարակուած են:

... Այս անձին համար է որ կ'ըսուէր, թէ այն պարագային երբ Լեւոն յաջողէր Թուրքերուն հետ դիւանագիտական կապ ու գործակցութիւն հաստատել՝ ինք Հայաստանի դեսպանը պիտի ըլլար Անգարայի մօտ...:

Այս անձը իր հովանաւորին Երեւանի իշխանութենէն հեռացուելէն յետոյ ալ, Արեւմուտքի Ժանօթ հետախուզական Կեդրոնին ճնշումներով, Հայաստանի իշխանութիւններուն վրայ շարունակեց ազդել, որ ասոնք, թուրքերուն հետ, բարեկամական կապեր հաստատեն:

Եւ Հայաստանի կառավարութիւնը [չենք գիտեր... ի՛նչ հեռանկարներով] ընդունեց Թուրքերուն հետ բանակցիլ...:

Եւ 10 Հոկտեմբեր 2009-ին ZÜRICH-ի [Զուրիցերիոյ] մէջ ՀՀ-ի կառավարութիւնը Թուրքիոյ հետ ստորագրեց «Փրոթօքոլներ» կոչուած համաձայնագիր մը, որ, մեր համոզումով, հայոց առջեւ լարուած ծուղակ մըն էր, վնասաբեր ու շատ նուաստացուցիչ:

Դժբախտաբար հայերը, ստորագրելէ յետոյ սոյն համաձայնագիրը, նոր միայն հասկցան որ եղածը, պարզապէս, թրքական քարոզչութեան ծառայող թատրոն մըն էր ...և այս փրոթօքոլները, միջոց մը յետոյ, մեռեալ համաձայնագրի վերածուեցան... բարեբախտաբար:

Բայց մեզի համար, ամէնէն ավելի հետաքրքրականը այն է, որ այս համաձայնագրի ստորագրութեան մէջ մեծ դեր ունեցած է այս թրքախօս [իբր

թէ] հայը...: Ան է որ, իր Պոլսցի խամաճիկներով, Նիսի հայ համայնքէն ներս, տարիներէ ի վեր, թրքասիրական քարոզչութիւն կ'ընէ:

Իսկ ամէնէն կարելորը՝ իր աշխատանքները վերջերս կեդրոնացուցած է տեղւոյն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին Մայր Աթոռէն անջատելու նենգ նպատակի իրականացման վրայ:

Եւ դժբախտաբար, Նիսի պոլսահայ համայնքի որոշ անդամներ, իրենց «Տխմար» կոլսեցիի միամտութեամբ, կուրօրէն զոհ կ'երթան այս թրքախօս [իբր թէ] հայուն և իր խամաճիկներուն խաղերուն...

[Այս մասին կը յանձնարարենք կարդալ «Նայիրի»ի 25 Մայիս 2010 թուականին մէջ մեր «Նիսի մէջ հայկական փոթորիկ» վերնագրով գրութիւնը]:

* *

Այս թրքախօս հայը, որ մինչեւ 2009-թ-ը՝ «Բրոթոքոլ»ներու ստորագրութեան օրերուն, Ալփասլան Թիւրքէշի հետ իր ունեցած շատ սերտ բարեկամական կապերուն ու նաեւ Լեւոնին հետ գործակցաբար Թուրք-Հայկական բարեկամութիւն ստեղծելու գծով տարած աշխատանքներուն շուրջ, ֆրանսահայ մամուլի մէջ երբեք չէր արտայայտուած և միշտ լուռ մնացած, 10 Հոկտեմբեր 2009-ին, Zürich-ի մէջ, «Փրոթոքոլ»ներու ստորագրումէն քիչ յետոյ, Նիս լոյս տեսնող և իր խամաճիկներուն հրատարակած եռամսեայ ֆրանսերէն թերթին մէջ, 6 էջ յատկացուց Թուրք-Հայ բարեկամութիւն ստեղծելու համար Լեւոն Տէր Պետրոսեանի և Ալփասլան Թիւրքէշի տարած միացեալ աշխատանքին, ու նաեւ՝ Սերժ Սարգսեանի և Ապտուլահ Կիլի միջեւ վերջերս սկսած «Ֆուտպոլային դիւանագիտութիւն»ին, լոյս ընծայելով երկար, շարան-շարան գրութիւններ, այդ խաղ-աշխատանքներուն մասին, ցանկալով ասոնց կատարեալ յաջողութիւն:

Այստեղ կը հրատարակենք Թուրք-Հայ «Բարեկամութեան» ծանօթ ողբերգա-երգիծական թաւորերկէն մէկ քանի մը նկարներ:



ՆԿԱՐԻՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ ՖՐԱՆՍԵՐԷՆ ԲՆԱԳՐԷՆ ՎԵՐՅՈՒԱԾ...

Պատմական այս հանդիպումին որ տեղի ունեցավ 1993-թ.ին Փարիզի մէջ, ներկայ էին Տուրոուլ Թիրքէշ (Ալփասլան Թիրքէշի տղան) և ֆրանսայի մօտ Թուրքիոյ դեսպան Թանսուկ Պլետան: «Աստուած զինք պահէ» - ըսավ Լ. Տ. Պետրոսեան (Սկարի աջին) Թիրքէշին (Սկարի կեդրոնը), երբ այս վերջինը իրեն ներկայացուց իր որդին՝ Տուրոուլը:

1993-թ.ին Փարիզի մէջ՝ Լետոն Տէր Պետրոսեան Ալփասլան Թիրքէշ և Թուրքիոյ դեսպանը Թանսուկ Պլետա:



Պուրսայի մէջ՝ Սերժ Սարգսեան և Ապտուլլա Կիլ, միատեղ կը մեկնին դէպի մարզադաշտ:



Պուրսայի մէջ, Ապտուլլա Կիլ և Սերժ Սարգսեան, «Մաչ»-էն յետոյ տեղի ունեցած ընդունելութեան ընթացքին:

Բայց, Հայ և Թուրք «Բարեկամութիւն»ը գովաբանող 6 էջնոց Սկարագարոյ այս գրութեան մէջ, մեզ ամէնէն շատ տպաւորողն և նոյնիսկ ապշեցնողը, Ալփասլան Թիրքէշի հայերու մասին ըսածներն են. (→էջ 3)


Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ռուբէն Սեւակի գաղափարականը և անձնագործողութեան ոգին հայ ժողովուրդին մէջ տարածելու նպատակաւ, NICE-ի «Ռուբէն Սեւակի Յիշատակի Տուն»ը 1915 թուականի Հայոց Ցեղասպանութեան 95-ամեակին ձօնուած չորս պատմական սկաւառակներ հրապարակած է:

Այս չորս տեսասկաւառակները սիրով կը նուիրուին՝ ունենալ փափաքող եկեղեցիներուն, մշակութային միութիւններուն, դպրոցներուն և միօրեայ վարժարաններուն:

Դիմումները ուղարկել հետեւեալ հասցէին՝

REVUE HEBDOMADAIRE «NAIRI»
B. O. BOX. 113-5186 BEYROUTH - LIBAN
Email: nairi2002@hotmail.com





Այս տեսերիզը կը ձօնուի նահատակ բանաստեղծ Ռուբեն Սեւակի 125-ամեակին Ռուբեն Սեւակի Յիշատակի Տան կողմէ



ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ

1885 - 1915

Պկրոս, 23 Ապրիլ 1994

Գ.Կ.Մ.Ի. Սահակեան - Լ. Մկրտչեան Գոլճի մէջ

Նահատակ բանաստեղծ Ռուբեն Սեւակի անուան Մատենադարանի քացման հանդիսութիւն

Բարձր հովանաւորութեամբ
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաղնիկիմ, Բ. Կարողիկոսի
Սեօի Տանն Կիլիկիոյ

Բարերարութեամբ
Ռուբեն Սեւակի Յիշատակի Տան, Նիս (Ֆրանսա)


Տրամադրելի են հետեւեալ սկաւառակները.-

1.- DVD- 1985-թ.ին, Նիսի մէջ, Ռուբէն Սեւակի 110-ամեակի հանդիսութիւնը, ճախագահութեամբ՝ Անդրանիկ Ծառուկեանի:

2.- DVD- 1987-ին, Երեւանի հեռուստատեսիլէն Ռուբէն Սեւակի մասին յայտագիր, Ալեքսանդր և Անահիտ Թօփչեաններու կատարողութեամբ:

3.- DVD- 1994-թ.ին, Պէյրութի Սահակեան Գոլէճի մէջ, Ռուբէն Սեւակի անուան մատենադարանի բացման հանդիսութիւն, Բարձր Հովանաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի, Սեծի Տանն Կիլիկիոյ:

4.- DVD- 2006-թ.ին, 91 տարիներէ ի վեր առաջին անգամ ըլլալով՝ Ուխտագնացութիւն դէպի Չանղըրը և Այաշ:



ԴՈՒՔ, ՆԱԽԱՆԱՄՈՒԹԵԱՆ ԿԸ ՀԱԻԱՏԱՊԸ..... (Շար. էջ 2-էն)

Այստեղ կը մեջբերենք Ալփասլան Թիւրքէշի մեզ [մանաւանդ] ցնցած հետեւեալ խօսքերը.

«Գիտէի՞ր, որ Մանազկերտի սլաւերազմը շահեցանք հայերուն հետ, միասնաբար»:

Այստեղ կը հրատարակենք, ֆրանսերէն լեզուով լոյս տեսնող եռամսեայ թերթին մէջ, Թիւրքէշի ըսածները, նախ՝ ֆրանսերէն բնագրով, յետոյ՝ թարգմանաբար:

LES QUESTIONS DE TÜRKES

En février 1993, il se rend à Ankara où il rencontre le leader du MHP dans un bureau situé dans le quartier d'Esat. Türkés l'écoute et dit : «Nous menons une vie commune depuis 600 ans avec les Arméniens. Ensemble, nous avons composé des chants, inventé des mets. Nous sommes mariés entre nous. Sais-tu que la guerre de Mantzikert a été remportée ensemble avec les Arméniens? As-tu une idée des actes d'héroïsme des Arméniens lors de la prise d'Istanbul? Connais-tu le contenu du firman par lequel Mehmet le Conquérant a fondé le Patriarcat arménien ? Sais-tu les noms des soldats arméniens qui ont combattu aux côtés d'Atatürk aux Dardanelles ? Savais-tu qu'Atatürk avait chargé un linguiste arménien, Agop Martayan, de créer l'alphabet que nous utilisons aujourd'hui et qu'il lui avait personnellement donné le patronyme de Dilaçar ? Savais-tu que c'est un calligraphe arménien qui a conçu la signature d'Atatürk ?».

1993-ALPASLAN TÜRKES

ԹԻՒՐՔԷՇԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ

Փետրուար 1993-ին կ'երթայ Անգարա, ուր ան MHP-կուսակցութեան ղեկավարին կը հանդիպի էսաթ Թաղի մէջ: Թիւրքէշ կը լսէ զինք և կ'ըսէ. — Հայերուն հետ մենք հասարակաց կեանք մը կ'ապրինք 600 տարիներէ ի վեր: Միասին հնարած ենք երգեր ու ճաշատեսակներ: Մեր միջեւ ամուսնութիւններ կ'ընկած են: Գիտե՞ս, որ Մանազկերտի սլաւերազմը շահած ենք միասին, հայոց հետ: Գաղափար մը ունի՞ս Աթամպուլի գրաւման ատեն հայերու ցուցաբերած հերոսութեան մասին: Գիտե՞ս բովանդակութիւնը այն «Ֆերման»ին [հրովարտակ] որով Մեհմետ Աշխարհակալը հիմնեց հայոց Պատրիարքութիւնը: Գիտե՞ս անունները այն հայ զինուորներուն որոնք կուռեցան Աթաթիւրքի կողքին Տարտանիլի մէջ: Գիտէի՞ր, որ Աթաթիւրք յանձնարարեց հայ լեզուագէտ Յակոբ Մարթայեանին որ հնարէ այբուբեն մը զոր կը գործածենք մինչեւ այսօր, և այդ գիտարարը Մուստաֆա Քեմալի կողմէ ստացաւ «Տիլաչան» — լեզու բացող — տիտղոս: Եւ դեռ՝ գիտէի՞ր, որ հայ գեղագրող մը եղաւ Աթաթիւրքի ստորագրութիւնը գծողը»:

1993-Ալփասլան Թիւրքէշ:

Այո՛, Ալփասլան Թուրքեշին խօսքերը շատ ցնցիչ են...

Բայց անոր ըսածները նորութիւն մը չեն իսկական, հայրենասէր հայերուն համար...

Մենք, 25 տարիներէ ի վեր, մեր գրութիւններով կը սպասուենք Թուրքերուն հետ գործակցած, թուրքերուն ծառայող կարգ մը հայ առաջնորդները:

Եւ մանաւանդ՝ կը նզովենք ալ մեր Պոլսոյ Պատրիարքութիւնը, Պոլիսը և Պոլսոյ մէջ Թուրքերուն գործակալները եղած հայ առաջնորդները...:

Այո՛... Պոլիսը, «Հա՛յ Պոլիսը» «Մե՛ր Պոլիսը» հայոց դրախտն էր... իբր թէ...: Բայց, ի վերջոյ... Պոլիսը հայոց գերեզմանափորը եղաւ...:

* *

Այստեղ օգտակար կը նկատենք թուրքերուն հետ հայուն գործակցութեան դէմ իրօ՛ք նզովագիր մը կազմող, 1985-թ.ին լոյս տեսած «Ռուբէն Սեւակ Եւ Փրցուելիք Ուղեղներ» վերնագրով մեր գիրքին յառաջաբանը հրատարակելը:

ՅԱՌԱՋԱԲԱՆ

«Գառնուկի պէս անզէն ցեղ մը ամէ՛ն օր, ամէն օր կը յօշոտուի: Իսկ մեր գամբռները խելօքցեր, փիլիսոփայացեր, քաղաքակրթուեր են, սիւնգերական եղբայրակցութեան մը խօսքերը կ'ընեն մեզի, ու կ'երագեն այն հեռաւոր օրուան՝ ուր գայլ ու գառնուկ մէկտեղ կ'արածուին...»:

1911-ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ «ԱՅԼԱՍԵՐՈՒՄ»

«Բժիշկի գիրքէն փրցուած էջեր» ու շարքէն:

* *

Երբ կը կարդանք հերոս-նահատակ, բանաստեղծ Ռուբէն Սեւակի վերի տողերը, իր մարգարէական նախատեսութիւնը մեր այն ատենուան առաջնորդներուն թուրք և հայ եղբայրութեան վրայ յենող սխալ քաղաքականութեան մասին, մեր սրտի ցաւը կը կրկնապատկուի:

Ռուբէն Սեւակի ծննդեան 100-ամեակի այս օրերուն, մենք կ'ողբանք անոր կանխահաս կորուստը:

Մենք կ'ողբանք Ռուբէն Սեւակի նահատակութեամբ, Հայ Ազգին կրած մեծ կորուստը: Եւ կ'ողբանք, այն ատենուան Հայ առաջնորդներուն սխալ քաղաքականութեան զոհ գացած միլիոնաւոր Հայերու կորուստը:

70 տարիներ անցան այն սոսկալի թուականէն, որ Մեծ Եղեռն կը կոչենք:

24 Ապրիլ 1915-ը միլիոնաւոր Հայերու նահատակութեան տարեդարձն է, բայց միեւնոյն ատեն՝ պատմութեան գիւղցուած թուականներէն ի վեր իր Հայրենի հողերուն վրայ ապրող Հայուն Հայրենիքին մեծ մասին գողցուելուն տարեդարձն է:

(→ էջ 4)

TÜRKLERİN (SÖZDE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ

TÜRKLERİN YENİ BİR TIYATROSU ERMENİ SOYKIRIMI ALMAN PLANI IMIS

SON GÜNLERDE TÜRKLER, ERMENİ SOYKIRIMININ SORUMLULUGUNU ÜZERLERİNDEN ATMAK İÇİN YENİ BİR SENARYO ORTAYA ÇIKARDILAR.

BERNAR LEWIS GIBI TÜRK USAGI BİR TARİHÇİ OLAN PR. FEROZ AHMAD DEMIS KI :
«ERMENİ TEHCIRI (NAMI DİGER ERMENİ SOYKIRIMI) BÜYÜK OLASILIKLA BİR ALMAN PLANIDIR».

PR. FEROZ AHMAD VERDİĞİ UZUN BİR DEMEÇTE DİYOR KI :

«BİRİNCİ DÜNYA SAVASINDA OSMANLI ORDUSU TAMAMEN ALMANLARIN KONTROLU ALTINDA İDİ. HER SEYE BERLİN'DE KARAR VERİLİYORDU. İSTANBULDA DEĞİL. OSMANLI ASKERİN ALMAN KONTROLÜ ALTINDAYDI. HATTA OSMANLI MALİYESİ BİLE.

DONANMAYI ALMANLAR KONTROL EDİYORDU. HER OSMANLI ORDUSUNUN BİR ALMAN KURMAY BASKANI VARDI. ENVER PASANIN YANINDA DA BİR ALMAN GENELKURMAY BASKANI VARDI».

PR. FEROZ AHMAD-IN SÖYLEDİKLERİ, BİZ ERMENİLER İÇİN YENİLİK DEĞİL.

FAKAT YENİLİK OLAN ALMANLARIN SUÇLU OLDUGUNUN TÜRKLER TARAFINDAN SÖYLENMESİ.....

ÇÜNKÜ BUGÜNE KADAR TÜRKLER ERMENİ SOYKIRIMINI İNKAR EDİYORLARDI.

FAKAT SON ZAMANLARDA AMERİKA DAHİL BİR ÇOK DEVLET ERMENİ SOYKIRIMININ TÜRKLER TARAFINDAN YAPILDIGINI KABUL ETME YOLUNA GIRINCE, TÜRKLER «BİZİM KABAHAATİMİZ YOK, ASIL SUÇLULAR ALMANLARDIR» DEMİYE BAŞLADILAR. HUKÜKÇÜLAR ÇOK İYİ BİLİR, SUÇLULARIN, SUÇLARINI İNKÂR REFLEKSİNİ.

«BEN YAPMADIM, O YAPTI».

TÜRKLER BU TIYATROYU, 1975-LERDE ASALA FEDAYİLERİNİN, SOYKIRIMCI TÜRKİYENİN DIPLOMATLARINI CEZALANDIRDIGI ZAMAN DA AYNEEN OYNAMISLARDI.

VE TÜRK GAZETELERİ : ERMENİ SOYKIRIMININ ASIL SORUMLULARI : ALMANLARDIR DİYE YAZDILAR.....

TÜRKLER, DAIMA ZOR DURUMDA KALINCA ALMAN SUÇLULUGUNU ORTAYA ATARLAR. VE MUVAFFAK DA OLURLAR.....

.... VE BİR MÜDDET TÜRKLERE KARSİ SOYKIRIMI İTHAMLARI DURUR.....

ÇÜNKÜ ALMANYANIN SUÇU ORTAYA ÇIKARSA, O ZAMAN ASIL SUÇLULARIN, DÜNYA PARA BABALARININ VE SELANIKLI DÖNMELERİN YAPTIKLARI DA GÜN İSİGİNA ÇIKAR, VE.....

«ÇOK KARİSTİRMA, ALTINDAN «SOKOLA» ÇIKAR MISALI» GERÇEKLER AYDINLANIR.

....ZATEN ERMENİ SOYKIRIMINDA, ALMANLARIN SUÇLULUGU HAKKINDA DAHA 1915-DE AVRUPADA YAZARLAR KİTAPLAR YAYINLAMISLARDI. ARNOLD TOYNBEE, VISCOUNT BRYCE,

... VE BİLHASSA FRANSADA RENÉ PINON-UN YAZDIGI KİTABIN İSMİNİ VERELİM :

«METHODE ALLEMANDE, TRAVAIL TURC».

1915 ERMENİ SOYKIRIMININ BAS SUÇLUSU TALAT PASA-YA, 1919-DA İSTANBULDA

TÜRK ORFI IDARE ASKERI MAHKEMESININ VERDIGI IDAM KARARINI YERINE GETIREN SOGOMON TEHLIRYANIN 3-6-1921 DE BERLINDEKI MAHKEMESINDE, TEHLIRYANIN AVUKATI DR. NIEMEYER-IN SÖYLEDIKLERI ÇOK MUHIMDIR.

«... TÜRKLER, ERMENI TEHCIRI İÇİN SÖYLE DER: «ALMANLARIN MÜSAADESI OLMADAN ERMENI TEHCIRININ YAPILMASI İMKANSIZDIR. ÇÜNKÜ ALMANLAR ÇOK KUVVETLİDİR».

BU BAKIMDAN HER YERDE ERMENI MEZALIMI İÇİN, ALMANLARI SUÇLU BULURLAR. VE ÇOK BÜYÜK SAYIDA YAYINLAR VAR. AMERİKADA, FRANSADA VE DOĞU-DA. ALMANLAR İÇİN DERLER KI : «TÜRKİYEDE ASIL TALÂT-LAR : ALMANLARDIR».

* * *

1921-DE, EGER BİZ ERMENİLER BİRLİK OLUP BU GERÇEKLERİN AYDINLANMASI İÇİN MÜCADELE ETSEYDİK, 1923-DE BUGÜNKÜ TÜRKİYE KURULAMAZDI.

VE ERMENİLER DE BUGÜNKÜ ZAVALLI DURUMA DÜSMEZLERDİ. Յ. Չ.

ԴՈՒՔ, ՆԱԽԱՆԱՍՈՒԹԵԱՆ ԿԸ ՀԱՒԱՏԱՊԸ..... (Շար. էջ 3-էն)

Արեւմտեան պետութիւններու աղուէսային քաղաքականութեամբ առաջնորդուած վայրենի թուրքին 100 տարուան պատրաստութեան արդիւնքն է 24 Ապրիլ 1915-ը: Եւ մենք տեսական կուլանք, որ թուրքերը մեզ ջարդած են:

Բայց մենք ի՞նչ ըրած ենք այդ 100 տարուան ընթացքին, որ... չջարդուինք և մեր Հայրենի հողերուն վրայ Ազգ ըլլալով կարենանք ապրիլ:

Ամէն ազգ իր ճակատագիրը իր ձեռքերովը կը կերտէ, իր առաջնորդներուն ձեռքերովը:

24 Ապրիլ 1915-ի տանող վերջին 100 տարուան ընթացքին, Արեւմտեան Հայաստանի մեր առաջնորդները, մեծամասնութեամբ, ազգասիրութեան կեղծ դիմակի տակ, միայն և միայն ծառայեցին թուրքին, և թուրքին ուժ տուող Արեւմտեան պետութիւններուն շահերուն:

Այս կեղծ ազգասէրներու շարքը կ'սկսի Պէզճեան և Տատեաններու նման ամիրաներով, և աւելի ետք՝ իբր թէ Երոպայի ազատութեան գաղափարներով մէջտեղ ելլող Գրիգոր Օտեաններու խմբակով, շարունակելով Ներսէս Վարժապետեան և Օրմանեան պատրիարքներով, և իր գագաթնակէտին կը հասնի, Գրիգոր Զօհրապի և իր նմաններուն միշտ ջատագոված թուրքին հետ եղբայրութեան քաղաքականութեամբ:

Այս բոլոր անճնաւորութիւններն ալ, երեսութապէս մեծ հայրենասէրներին և ազգին շահուն կը ծառայէին: Բայց, բոլորն ալ, հասարակաց գիծ մը ունէին՝ «Գործակցիլ թուրքին հետ»։ «Ծառայել թուրքին»-կ'ըսէին, մոռնալով որ թուրքը գրաւող ուժն էր, որ իւրացուցած էր Հայուն Հայրենիքը:

Ինչպէս որ Օսմանցի թուրքը ամէն կողմ թալանելով, մինչեւ Վիեննայի դռները գացած էր և հոն, ժողովուրդներու միացեալ պայքարի ուժովը ետ մղուած, և անկէ ետք ալ քայլ առ քայլ վնասուած էր մինչեւ Պոլսոյ դռները, այնպէս ալ, Պոլսէն, Անաթոլիայէն և Հայաստանէն վնասուիլը պետք էր վայրենի թուրքին, մինչեւ իր որջը, այն տեղը ուրկէ եկած էր 7 դար (→էջ 5)

ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ [ԻԲՐ ԹԷ] ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

**ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԲԵՄԱԴՐԱԾ ՆՈՐ ԹԱՏՐՈՆԸ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԸ
ԾՐԱԳՐԵՐ ԵՆ:**

**ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐՈՒՆ ԹՈՒՐՔԵՐԸ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆԸ
ԻՐԵՆՑ ՎՐԱՑԷՆ ՆԵՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ,
ՆՈՐ ԲԵՄԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԸ ՍԿՍԱՆ:**

**BERNAR LEWIS-Ի ՆՄԱՆ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԾԱՌԱՆ
ԵՂՈՂ ՊԱՏՄԱԲԱՆ PROF. FERUZ AHMAD-Ը
ԸՍԵՐ Է,**

**որ «ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ
[ԱԻԵԼԻ ԾԻՅԴ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ], ՄԵԾ
ՀԱԻԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ՝ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ՄԸՆ Է»:**

PROF. FERUZ AHMADը, իր կատարած երկար ելոյթին մէջ սասչս կ'ըսէ.—

«Առաջին համաշխարհային պատերազմին, Օսմանեան բանակը բոլորովին գերմանացիներուն հակակշռին ենթարկուած էր:

Օսմանեան բոլոր հարցերը՝ Պերլինի մէջ կ'որոշուէին: Եւ ոչ թէ Պոլսոյ մէջ: Օսմանեան զինուորական ուժերը գերմանացիներու կողմէ կը ղեկավարուէին:

Նոյնիսկ Օսմանեան Գանձի տնտեսութիւնը... Նաւատորմը գերմանացիները կը հակակշռէին: Եւ ամէն մէկ Օսմանեան բանակին մէջ գերմանական սայաակոյտի նախագահ մը կար: Եւ նոյնիսկ Էնվէր Փաշայի բովը գերմանական սայաակոյտի նախագահ մը կը կենար»....

PROF. Feroz Ahmad-ին ըսածները, մեզի՝ հայերուն համար նորութիւն մը չեն:

Բայց նորութիւն եղողը՝ հայկական ցեղասպանութեան մէջ թուրքերուն, գերմանացիները պատասխանատու նկատելն է:

Որովհետեւ մինչեւ այսօր, թուրքերը հայկական ցեղասպանութիւնը կ'ուրանան:

Բայց, վերջին շրջաններուն, Ամերիկայի և ուրիշ շատ երկիրներու կողմէ հայկական ցեղասպանութեան թուրքերուն կողմէ կատարուած ըլլալու փաստի ընդունման «Վտանգ»ին սայառնալիք-հաւանականութիւնը մէջտեղ ելաւ:

— Թուրքերը՝ «Մենք յանցաւոր չենք, բուն յանցաւորները՝ գերմանացիներն են» ըսել սկսան: Իրաւագէտները շատ լաւ գիտեն՝ չարագործներուն յանցաւորի բնազդային կեցուածքը՝

«Ես չըրի: Ան ըրաւ»:

Թուրքերը, այս թատրոնը՝ 1975-թ.ներուն ալ խաղալ սկսած էին:

Երբ ԱՍԱԼԱՅԻ հերոսները ցեղասպան Թուրքիոյ դիւանագէտները ահաբեկել սկսան, Թուրքերը, յանցանքը գերմանացիներուն վրայ նետեցին:

Եւ թրքական թերթերը այդ տարիներուն «Հայկական ցեղասպանութեան բուն պատասխանատուները՝ Գերմանացիներն են» գրեցին:

... Թուրքերը միշտ, դժուար կացութեան մատուցելու սպարագային, իրենց յանցանքը Գերմանացիներուն վրայ կը նետեն...

... Եւ Թուրքերուն դէմ՝ «Յեղասպանութիւն» ամբաստանութիւնները կը դադրին:

Որովհետեւ, եթէ Գերմանական պատասխանատուութիւնը մէջտեղ ելլէ, այն ատեն բուն սպատասխանատուներուն, Միջազգային Դրամատիրութեան ծանօթ ղեկավարներուն, Սելանիկցի դաւանափոխներուն խաղացած դերն ալ երեւան կ'ելլէ:

Եւ «Շատ մի խառներ, տակէն... «Շոգոլա կ'ելլէ»...

Եւ իրականութիւնները կը սպարզօփն...

... Արդէն, հայկական ցեղասպանութեան մէջ Գերմանական սպատասխանատուութեան մասին, դեռ 1915-ին եւրոպացի պատմագէտները գիրքեր հրատարակած էին...: ARNOLD TOYNBEE-ին, VISCOUNT BRYCE-ին և մանաւանդ RENE PINON-ին գրած գիրքին անունը նշենք.

«METHODE ALLEMANDE, TRAVAIL TURC»

1915-ի հայկական ցեղասպանութեան առաջնակարգ պատասխանատու Թալաթ փաշայի դէմ Պոլսոյ Թրքական զինուորական դատարանին տուած [1919-ին] մահաժամհուր գործադրող Սողոմոն Թէհլիրեանի փաստաբանին՝ գերմանացի DR. NIEMEYER-ին, 3-6-1921-ին, Պերլինի դատարանին առջեւ ըսածները բացառիկ կարեւորութիւն ունին:

«... Թուրքերը հայկական տեղահանութեան համար սապէս կ'ըսեն՝

«Գերմանական հրամանը չեղած՝ հայկական տեղահանութիւնը կատարելը անկարելի էր: Որովհետեւ Գերմանացիները շատ զօրաւոր են...»:

«... Այս տեսակէտով ամէն կողմ մեզ՝ գերմանացիներս պատասխանատու կը նկատեն հայկական ջարդերուն համար...»:

Եւ շատ մեծ թիւով հրատարակութիւններ կան Ամերիկայի, Ֆրանսայի և Արեւելքի մէջ, որոնք կ'ակնարկեն ըսելով՝ «Գերմանացիներն էին իրական Թալաթները Թուրքիոյ մէջ»:



1921-ին եթէ մենք՝ բոլոր հայերս միանայինք, ուժեղ ծակատ մը կազմէինք և այս իրականութիւններուն մէջտեղ ելլելուն համար պայքարէինք՝

1923-ին այսօրուան Թուրքիան չէր ստեղծուեր...:

Եւ հայերն ալ այսօրուան [գրեթէ] թշուառ և դժուար վիճակին չէին մատնուեր:

Ն Ա Մ Ա Կ 3 1 6
ԳՐԵՑ՝ ԱՐՄԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Է՛հ, հիմա ալ գնա՛ պարէ- ինչ- պէս կ'արտասանէինք մեր նախակրթարանի նստարաններէն- առանց իսկապէս թափանցելու անոր իմաստին: Այժմ, կը հասկը- նանք - ամբողջ ամառը երգեցինք, հիմա ալ պիտի պարենք...

Դպրոցական տարեշրջան մըն ալ բոլորեցինք - գրեթէ անձայն - պալէ պարելու պէս - երգահանդէսներու թոհուրոհի մէջ կորսուած...

Տակաւին կ'սպասեմ մեր բոլոր բարձրագոյն և աւարտական դասարաններու պատասխանատուներէն, որ մի քանի տողով ու նկարով մը ներկայացնեն գերագանցիկ աշակերտները - որ շրջանակները գիտնան, թէ ի՞նչ ուղեղներ ունեցանք, որոնք մեր ապագայի յոյսերն են: Կասկած չկայ, որ այդ շրջանաւարտներէն ոմանք .նիւթականի տագնապ ունին շարունակելու իրենց ուսումը: Ի՞նչ միջոցներ ձեռք առնուեցան- նախ անոնց համար որ նիւթականի կարիքը ունին և յետոյ այն համալսարանաւարտներուն որոնք անգործ են - և որոնց գործ հայթայթեն պատկան մարմիններ:

Տարիներ առաջ - առաջարկած էի, որ մեր առաջնորդարանին կից գրասենեակ մը ստեղծուի - նման ծրագիր մը յաջողցնելու համար: Ծշուկ մ'իսկ չլսուեցաւ: Այժմ, նոյն ծրագիրը կ'առաջարկեմ մեր երեսփոխանական գրասենեակին, որ վստահ եմ, թէ անելի ձեռնհաս է: Հայ երիտասարդութեան արտագաղթը կասեցնելու միակ ձեւն է: Մեր երեսփոխաններն ու նախարարները նոյն ճամբաներէն անցած են, և ուրեմն գիտեն, թէ... բանը ինչումն է: Յաջողութիւն:

*

* * *

Թուրքերուն ուղղելիք շատ հարցումներ կան - որոնց դիմաց անոնք պիտի անճրկին: Կ'արժէ, որ նման ցանկ մը պատրաստեն լաւատեղեակները և դրկեն ՄԱԿ-ին և Աճգարա ու աշխարհի բոլոր թրքական Հիւպատոսարաններուն:

Տարիներ առաջ, Թուրքիոյ նախագահներէն մին, գիրք մը լոյս ընծայեց, պարզապէս փաստելու համար աշխարհի մեծագոյն... սուտը, թէ թուրքերը բնիկներն են ներկայիս իրենց բնակած երկրին մէջ: Չեմ գիտեր, թէ այս գլուխ գործոցը օտար լեզուներու ալ թարգմանուեցա՞ւ, թէ՞ մնաց տեղւոյն վրայ, խաւարամիտ ընթերցողներուն միտքը... լուսաւորելու: Թուրք անաչառ [թերեւս գոյութիւն ունի] պաւստաբան մը ի՞նչ մտածեց - ի՛նք գիտէ միայն: Յայտնի չէ, թէ օրին թուրք քննադատներ գտնուեցա՞ն, որոնք մի քանի մեղմ յօդուածներ գրեցին այս մասին:



Ն Ա Մ Ա Ա Յ Յ 1 6

ԳՐԵՑ՝ ԱՐՄԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Բայց՝ ճշմարտութիւնը անհերքելի է:

«Նոր Յառաջ», 20-8-10-ի թիւով տպած է հիմաւորց քարտէս մը, Ն.Ք. 440 թուակիր, ուր ցոյց կը տրուի Armenia անունը - շատ յստակօրէն, երկիր մը որ կը գտնուի ներկայ Սուրիոյ հիւսիսը:

«Նոր Յառաջ»ի տղաքը, հանդիպում մը կ'ունենան պատմաբան Արտակ Մովսիսեանի հետ, Մեծն Տիգրանի ծննդեան 2150-ամեակի առիթով: Բանախօսութեան ընթացքին, Պրն. Արտակ Մովսիսեան, միջազգային ճանաչում ստացած 15 քարտէսներ կը ներկայացնէ, ուր յստակօրէն պատկերուած է Հայաստանը:

Տանք մի քանի ամփոփ քաղուածքներ-

- Առաջին քարտէսը, որուն կրկնօրինակը կը գտնուի բրիտանական թանգարանին մէջ, կը յիշէ եօթը երկիրներ, որոնց մէջ է Հայաստանը:

- Միւս քարտէսը համաշխարհային պատմագրութեան հայր՝ Հերոդոտոսի քարտէսն է, Ք.Ա. 5-րդ դար- [մեր գիրերու գիւտէն մօտ 8 դար առաջ]: Ուր կ'երեւի «Հայաստան» անունը:

- Ք.Ա. 3-րդ և երկրորդ դարերու քարտէսը՝ ուր դարձեալ յիշուած է Հայաստանը:

- Առաջին Դարու աշխարհագէտ Ստրաբոնի քարտէսին վրայ յստակօրէն կ'երեւի Հայաստանը, Սել, Միջերկրականի և Կասպից Ծովերու միջեւ:

- Ք.Յ. Ա. և Բ. դարուն գծուած Պտղամէնոսի քարտէսին վրայ կը յիշուի Փոքր Հայքը- Սել և Միջերկրական ծովերու միջեւ:

**

Հայացուած բառեր...

Արտաժամ - overtime

Գաղտնաբար - password

Գեր-հանրախանութ- supermarket, Տարանկիւն - Rhombus, (Geometrie-ի մէջ- Երկրաչափութիւն)

**

Լիբանան առատութեան և... սթանութեան երկիրն է: Ամէնացայտուն օրինակը Liban Post- ն է- որ այսօր դրոշմաթուղթ ծախելէ զատ կը կատարէ 40-50 տարբեր ծառայութիւններ - ի ... շահ քաղաքացիներուն: Նամակ մը դրկելը մօտ... 700 և 25 առ հարիւր աւելի է- ԱՄՆ. 1 Եւրոպա - քան այդ երկիրներէն Իեգի դրկուածները: Վերջերս դէպք մը պատահեցաւ ինծի, թղթատարութեան մը սրահին մէջ: Կարդանք:

- Օրիորդ, կը փափաքիմ այս փրքը Լոնտոն դրկել:

- Կը վճարե՞ք... սա գումարը...

- Օրիորդ, սխալմունք մը կայ: Ձեր գինը ԱՄՆ-ի համար է:

- Օրիորդը պահ մը կը կենայ-աթողը ետ տանելով - և առանց դէմքը դարձնելու բարձրաձայն կ'աղաղակէ:

- Զէ՛ր - Լոնտոն Ամերիկայի՞ մէջ է թէ Անգլիոյ:

- Անգլիո՛յ...» Զէր իր մեծաւորն է... որ աշխարհագրութեան մէջ գերազանցիկ ըլլալու է:

Եւ գործողութիւնը կ'աւարտի Լոնտոնի սակով: Վստահ եմ, որ փրքը Լոնտոնի բարեկամիս՝ Ա. Կիւզէլեանին պիտի հասնի: Առայժմ՝ ցը:

ԴՈՒՔ ՆԱԽԱՆԱՍՈՒԹԵԱՆ ԿԸ ՀԱԻԱՏԱ՞Ք..... (Շար. էջ 4-էն)

առաջ, ըսել է՝ մինչ և այն տեղը ուրկէ եկած էր, Միջին Ասիոյ խորերը: Եւ թուրքը իր հոգեվարքի այդ տարիներուն, իրեն գործակից Հայ Գուիզլինքներ, Հայ Լավալներ, Հայ Բեթէններ գտաւ: Եւ մենք այս Հայ Գուիզլինքները, Հայ Լավալները, Հայ Բեթէնները մինչեւ այսօր, Սփիւռքի մէջ, հայրենասէրներ կը կոչենք:

Այս Հայ առաջնորդները «Հայ և թուրք եղբայրութիւն» կը քարոզէին:

Բնական է, ամէնէն դիւրին ճամբան էր, առաջնորդի մը համար, գործակցիլ գրաւող ուժ եղող թուրքին հետ, և անոր արտօնութեամբ և անոր թոյլատրած չափով հայրենասիրութիւն խաղալ, առանց զոհողութեան, առանց պայքարի, առանց արիւնի, ընդհակառակը՝ անձնական փառասիրութեան և անձնական շահերուն առաւելագոյնը վայելելով՝ Ամիրա ըլլալով, Փաշա ըլլալով, Վարչապետի խորհրդական ըլլալով, «Մէպուս» ըլլալով, Նախարար ըլլալով:

Այս կեղծ ազգասիրութեամբ, այս ինքնախաբութեամբ ալ մեր առաջնորդները հասան 24 Ապրիլ 1915-ին: Միայն «**Թուրքը մեզ ջարդեց**» ըսելով լալը, օգուտ չունի: «**Ինչո՞ւ ջարդուեցանք**»՝ այս մէկը հասկնալ պէտք է: Հիւանդութեան մը մինչեւ որ ախտաճանաչումը չըլլայ, դարմանը չի գտնուիր: Եթէ հասկնանք՝ «**Անցեալը**» և «**Ապագան**» շահած կ'ըլլանք: Քաղաքականութեան առաջին պայմանը՝ թշնամին և բարեկամը ճանչնալու իրատեսութեան մէջ կը կայանայ:

«**Ո՞վ էր հայուն թշնամին**», «**Ո՞վ էր Հայուն բարեկամը**»:

Դարերով ո՞վ չարչարեց Հայ, Յոյն և Պալքանեան քրիստոնեայ ժողովուրդները: Եւ ո՞վ ազատեց Արեւելեան Հայաստանը, Յունաստանը և Պալքանեան քրիստոնեայ ժողովուրդները:

Այս պարզ իրականութիւնը տեսնելու համար մեծ քաղաքագէտ, մեծ դիւանագէտ ըլլալու պէտք չկար:

Բայց այս պարզ իրականութիւնը տեսնելու համար շատ կարելոր յատկանիշ մը պէտք էր, «Պատուաւոր ըլլալ», «Հոգին թշնամիին ծախած չըլլալ»: Առաջնորդ մը՝ հայրենասէ՞ր է, թէ՞ հայրենադաւ- այս է հարցը:

Այս գիրքին մէջ պիտի գտնէք հայու երկու տիպարներ: Մէկը՝ Պատրիարք, միւսը՝ բանաստեղծ: Պատրիարքը՝ թուրքին կողմէ մեռցուելու վախէն, իր հոգին կը ծախէ թուրքին: Բանաստեղծը՝ հոգին չծախելու համար թուրքին, ուզելով մեռնելու կ'երթայ:

Այս գիրքը՝ կեղծ ազգասէր առաջնորդներուն պատճառ եղած մեծ աղէտին մեզի առթած սրտի ցաւով է գրուած:

Այս գիրքը՝ Սփիւռքի կեղծ ազգասէր առաջնորդներուն Մայր Հայրենիքին պատճառելիք վտանգներու մտահոգութեամբ է գրուած:

Մաղթենք, որ «Պատմութիւնը կրկնութիւն է» – ըսուած կարգախօսը, Հայ Ազգին համար չիրականանայ:

Այ կը բաւէ, Հայ Ազգին քաջած տառապանքը:

15 Ապրիլ 1985

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ԲԱՌԱՍՈՒՆՔԻՆ ԱՌԻԹՈՎ՝

ՍՐՏԻ ԽՕՍՔ

ՀԱՄԵՍՏՈՒԹԵԱՆ ՈՒ ՊԱՐԿԵՇՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ՝
«ԹԱՆԹ» ԱՆԺԷԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՊԱՐՈՅՐ ԱՂՊԱՇԵԱՆ

Եթէ սյիտի անդրադառնանք ու խօսինք ՌԱԿԻ ու ԹՄՄԻ երկարամեայ ղեկավար Փրոֆ. Բարունակ Թովմասեանի մասին կամ սյիտի մտաբերեցնք զինք, կարելի՞ է, նոյնհետայն, չյիշել անոր կողակից՝ Անժէլ Թովմասեանը, իր բարի, ազնիւ, հիւրասէր ու բարեացակամ բնաւորութեամբ:

Չեմ յիշեր, ինչպէ՞ս և ե՞րբ, զինք նանչնալով, կոչած էինք՝ «Թանթ» Անժէլ. հաւանաբար, նկատի ունենալով իր հաղորդական, մտերմիկ և անկեղծ հարազատութիւնը՝ իր երգիքին տակ թէ այլուր:

Իր սիրեցեալ ամուսնոյն բարեշուք ու բարեյուշ ներկայութիւնն էր «Թանթ» Անժէլը, սակայն առանց խառնուելու կամ միջամուխ ըլլալու անոր ազգային-կուսակցական-միութենական բազմազբաղ ու բազմաշերտ գործունէութեանց:

Մայրայեղօրէն համեստ էր ու հեզ, առանց մեծամտութիւնը ունենալու, թէ ազգային մեծ ղեկավարի մը կեանքի ընկերն էր, որ լայնատարած հեղինակութիւն մըն էր Սփիւռքի մէջ ու Հայաստանէն ներս:

Երբեք յաւակնութիւնը չէր ունեցած «Ամենագէտ» մը ըլլալու, իր շրջանակէն ներս դառնալու «Տիրող» դէմք մը կամ մաս կազմելու, այսպէս ըսած՝ «Հակադիր» կողմերու խաչերուն:

Հաւատաւոր զինուոր մըն էր, սլարզ շարքայինի իրաւունքներով, սլարտականութեանց խոր գիտակցութեամբ, յանձնարարութիւններ ստանձնելու բծախնդրութեամբ ու զանոնք կատարելու սլարկեշտութեամբ:

Լուսարձակներէ հեռու գործող էր, ամենայն հաւատարմութեամբ, պարտանանաչութեամբ ու նուիրուածութեամբ, միշտ օգտակար ու հանրանպաստ գործ մը կատարելու ջանադրութեամբ, յանախ, իր ինքնութիւնն իսկ... ծածկելով:

Թովմասեաններու բնակարանը բաց էր բոլորին առջեւ, ընկերային թէ գաղափարական հանդիպումներու ընթացքին, ուր «Թանթ» Անժէլը կը հանդիսանար «Մղիչ ուժ»ը, իր բացառիկ հիւրասիրութեամբ ու ժպտեցողութեամբ, որովհետեւ կը սիրէր այդ դերակատարութեան մէջ գտնուիլ և այդ մթնոլորտով ապրիլ ու գոհացնել ներկաները, սակայն՝ առանց ցուցադրականութեան:

Մտերմիկ թէ սլաշտօնական խորհրդակցութիւններու ընթացքին, խիստ փափկանըկատ էր, մնալով «Կարեւոր հարցերու» քննարկումէն հեռու, հետեւաբար՝ հիւրասիրական իր բաժինը ընելէ ետք, սուսիկ-փուսիկ կը հեռանար... հրապարակէն. սակայն, մերթ ընդ մերթ, գլուխը ցցելով դրան արանքէն, կը հարցնէր.

– Բարօ, բանի մը պէտք ունի՞՞ք... եթէ այո... ինձի լուր տուր:

Այդպէս էր հեզահամբոյր «Թանթ» Անժէլը, զոր ամէն ոք կը սիրէր ու կը յարգէր, անոր մէջ տեսնելով խոնարհութեան մեծութիւն մը, որ ճիշդ կը համընկնէր Փրոֆ.ին ղեկավարական մեծութեան հետ:

«Թանթ» Անժէլը գիտնալով որ Փրոֆ.ին հոգսու ու հետեւելու նախախնամական սլարտականութիւն մըն ալ ունէր, իւրաքանչիւր նամբորդութեան ընթացքին, սլաշտօնական թէ անձնական, «Պահապան Հրեշտակ»ի դեր կը վերցնէր, առանց խաչածելու անոր կուսակցասպետի գործերը, այցելութիւններն կամ հանդիպումները:

Փրոֆ.ին մեկնումէն ետք (1991), վստահաբար «Միևուևար» մնաց «Թանթ» Անժէլը, բայց անոր գոյութիւնը և յիշատակը սլահեց մինչեւ իր շիջումը, ի վերջոյ՝ անդէնակսնին մէջ միանալով անոր:

Մենք սյիտի չմոռնանք «Թանթ» Անժէլը, իր բարեմասնութիւններով և առաքինութիւններով:

Պէյրուք Լիբանան